ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2013

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Եկեղեցու անդամների թիվը հասնում է 15 միլիոնի:

Լիաժամկետ միսիոներների թիվը կտրուկ աճ է ապրում, գերազանցելով 80000-ը:

ՏՈՒԱՆԴԻՐԵԼ Է ԵՎԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Գաղաադի բալասանը, Էննի Հենրի

«Բալասան չկա՞յ Գաղաադում» (Յերեմիա 8.22): . . .Սերը բալասան է, որն ապաքինում է բերում հոգուն:
. . . Որդին՝ Ինքը Տեր Հիսուս Քրիստոսը, տվեց Իր կյանքը, որպեսզի մենք ունենանք հավերժական կյանք, այնքան մեծ էր Նրա սերը Իր Հոր և մեր հանդեպ» (Thomas S. Monson, "A Doorway Called Love," Ensign, *Nov. 1987, 66):*

Բովանդակություն Նոյեմբեր 2013

Հատոր 14 Համար 4

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Բարի գալուստ համաժողով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Գերագույն համաժողով. Ամրացնել հավատքը և վկայությունը
Երեց Ռոբերտ Դ. Հեյյս

9 Եղեք հեզ ու սրտով խոնարհ
Երեց Ուլիսես Սոարես

12 Գիտե՞նք արդյոք ինչ ունենք
Քերոլ Մ. Սթեֆենս

15 Առաջ նայեք և հավատացեք
Երեց Էդվարդ Դյուբ

17 Երկնքի պատուհանները
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

21 Եկե՛ք, միացեք մեզ
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

25 Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

26 Հոգևոր պաշտպանության բանալին
Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

29 Կանանց բարոյական ուժը
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

33 Արագացնել խաղի Տիրոջ ռազմավարական ծրագիրը
Երեց Ս. Գիֆորդ Նիլսեն

35 Փոքր և հասարակ բաներ
Երեց Առնուլֆո Վալենզուելա

37 Կամենու՞մ ես առողջ լինել
Երեց Տիմոթի Ջ. Դայչես

40 Ինչպես կոտրված անոթը
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

43 Ձեր վստահությունը դրեք Տիրոջ վրա
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

46 Հավատո հանգանակներում պարունակվող վարդապետությունները և սկզբունքները
Երեց Լ. Թոմ Փերի

49 Այլևս օտար չեք
Եպիսկոպոս Ջեռալդ Կոսե

52 Կանչված Նրա կողմից՝ հայտարարելու Նրա խոսքը
Երեց Ռենդի Դ. Ֆանկ

55 Դուք կարող եք անել դա հիմա:
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

58 Կապեք նրանց վերքերը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

61 Ճշմարիտ հովիվներ
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

69 Իմ թոռներին
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

72 Ուրիշ աստվածներ չունենաս
Երեց Դալլին Հ. Օուքս

76 Եղեք դարձի եկած
Բոնիի Լ. Օսկարսոն

79 Տոկալու ուժը
Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ

82 Անձնական զորություն՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

85 «Քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողիլ եւ քեզ անտես չեմ անիլ»
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

88 Երեմիայի ողբերը. Զգուշացեք գերությունից
Երեց Քվենթին Լ. Քուք

92 Զորություն Քահանայությունում
Երեց Նիլ Լ. Անդերսեն

96 Ուսուցանել Աստծո զորությամբ և իշխանությամբ
Դեյվիդ Մ. Մակքոնկի

99 Անընդհատ ամուր բռնած
Երեց Քեվին Ս. Համիլտոն

102 Վերև նայեք
Երեց Աղրիան Օչոա

104 Ավելի մոտենալԱստծուն
Երեց Տերենս Մ. Վինսոն

106 Հավերժական որոշումներ
Երեց Ռասսել Մ. Նելսոն

110 Մինչև նոր հանդիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

111 Ուխտերը պահելու զորությունը, ուրախությունը և սերը
Լինդա Ք. Բրրթրն

115 Մենք ուրախանալու մեծ պատճառ ունենք
Քերոլ Մ. Սթեֆենս

118 Հայցեք ձեր ուխտերի օրհնությունները
Լինդա Շ. Ռիվս

121 Մենք երբեք միայնակ չենք քայլում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

64 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

124 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

125 Համաժողովի պատմությունների ցուցիչ

126 Եկեղեցու նորությունները

183-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք. Երեց Քենթ Ֆ. Ռիչարդս: Փակող աղոթք. Մեթյու Օ. Ռիչարդսոն: Երաժշտություն. Թաբերնաքլ երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մերֆի, երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն. "How Wondrous and Great," *Hymns,* no. 267; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3; "Israel, Israel, God Is Calling," *Hymns,* no. 7, arr. Wilberg, unpublished; "There Is Sunshine in My Soul," *Hymns,* no. 227; "Keep the Commandments," *Children's Songbook,* 146, arr. Murphy, unpublished; "Come, Ye Thankful People," *Hymns,* no. 94, arr. Wilberg, pub. Oxford:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք. Երեց Փոլ Վ. Ջոնսոն: Փակող աղոթք. Քերոլ Ֆ. Մակքոնկի: Երաժշտություն. ընտանեկան երգչախումբ Յուտայի Ռոյ, Քեյնսվիլ, Հուփեր և Վեստ Հեյվն ցցերից, խմբավար՝ Ջեյն Ֆելստեդ, երգեհոնահար՝ Լինդա Մարգեթս. "On This Day of Joy and Gladness," *Hymns,* no. 64, arr. Fjeldsted/Margetts, unpublished; "I Know That My Savior Loves Me," 2010 Children's Sacrament Meeting Presentation, by Bell and Creamer, arr. Fjeldsted/Margetts, unpublished; "Press Forward, Saints," *Hymns,* no. 81; "Love at Home," *Hymns,* no. 294, arr. Fjeldsted/Margetts, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք. Երեց Փոլ Ի. Քոլիքեր: Փակող աղոթք. Երեց Վորլթեր Ֆ. Գոնզալես: Երաժշտություն. Սիարոնյան Քահանայության երգչախումբ Յուտայի Մյուրեյի ցցերից, խմբավար՝ Քելի Դեհան, երգեհոնահար՝ Ռիչարդ Էլիոթ. "Sing Praise to Him," *Hymns,* no. 70, arr. Kempton, unpublished; "Like Ten Thousand Legions Marching," *Hymns,* no. 253, arr. Elliott, unpublished; "Do What Is Right," *Hymns,* no. 237; "God of Our Fathers, Whose Almighty Hand," *Hymns,* no. 78, arr. Huff, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացող աղոթք. Չերիլ Ա. Էսփլին: Փակող աղոթք. Երեց Ֆրանսիսկո Վինաս: Երաժշտություն. Թաբերնաքլ երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ. "Sweet Is the Work," *Hymns,* no. 147; "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66; "Master, the Tempest Is Raging," *Hymns,* no. 105, arr. Wilberg, unpublished; "Put Your Shoulder to the Wheel," *Hymns,* no. 252; "O Divine Redeemer," by Gounod; "We Thank Thee, O God, for a Prophet," *Hymns,* no. 19, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացող աղոթք. Դեյվիդ Լ. Բեք: Փակող աղոթք. Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստա: Երաժշտություն. Թաբերնաքլ երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մերֆի, երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "They, the Builders of the Nation," *Hymns,* no. 36, arr. Wilberg, pub. by Jackman; "When He Comes Again," *Children's Songbook,* 82–83, arr. Murphy, unpublished; "Called to Serve," *Hymns,* no. 249; "Abide with Me; 'Tis Eventide," *Hymns,* no. 165, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ, 28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Լինդա Կ. Բըրթըն: Բացող աղոթք. Լառեյն Սվենսեն: Փակող աղոթք. Անա Դե Ագոստինի: Երաժշտություն. Սփոփող Միության երգչախումբ Պրովոյին Միսիոներների Ուսուցման Կենտրոնից, խմբավար՝ Էմիլի Վեդլի, երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "Go Forth with Faith," *Hymns,* no. 263; "As Sisters in Zion," *Hymns,* no. 309, arr. Sally DeFord, unpublished; "I'll Go Where You Want Me to Go," *Hymns,* no. 270, descant arr. Wadley, unpublished; "More Holiness Give Me," *Hymns,* no. 131, arr. Lyon, pub. by Jackman:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Սովորաբար համաժողովից երկու ամիս անց աուդիոձայնագրությունները մատչելի են բաշխման կենտրոններում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկարը՝ Քոդի Բելլի:
Ետևում. Լուսանկարը՝ Քոդի Բելլի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ
Գերագույն համաժողովի տեսարանները լուսանկարել են. Սոլթ Լեյք Սիթի՝ Վելդեն Ս. Անդերսեն, Քոդի Բել, Ռենդի Քոլյեր, Վեստոն Քոլտոն, Սքոթ Դեյվիս, Քրեյգ Դայմոնդ, Լոյդ Էլդրիջ, Քոլին Քինգ, Ջոն Լուք, Լեսլի Նիլսոն, Մեթյու Ռեյեր, Քրիստինա Սմիթ և Բայրոն Վորներ; Արայջան, Պանամա՝ Հոսե Պերիա; Բրասիլիա, Բրազիլիա՝ Թոմե Միքյերա; Քավիթ, Ֆիլիպիններ՝ Դանիլո Սոլետա; Քոլվիլ, Տեխաս, ԱՄՆ՝ Մարք Մեբրի; Ֆոզ դո Իգուասու, Բրազիլիա՝ Լինկոլն Պարմեզան դե Մելո; Գվատեմալա Սիթի, Գվատեմալա՝ Դոն Սըրլ; Լիմա, Պերու՝ Ստեֆանի Նավարետ; Լոնդոն, Անգլիա՝ Պրեստոն Ջուդի; Լայըն, Ֆրանսիա՝ Քերոլին Քարթեր; Պանամա Սիթի, Պանամա՝ Հոսե Պերիա; Հռոմ, Իտալիա՝ Մասիմո Քրիսցիոնե; Սանտյագո, Չիլի՝ Քրիսչեն Ֆ. Կաստրո Մարին:

ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՀԱՏՈՐ 14 ՀԱՄԱՐ 4
ԼԻԱՀՈՆԱ 10791 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն

Խորհրդատուներ. Շեյն Մ. Բոուեն, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Քրիսթոֆել Գոլդեն Կրտս., Էնթոնի Դ. Փերքինս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար, Լառեն Փորթեր Գանթ

Հրատարակման օգնական. Մելիսա Ջենտեսո

Գրողներ և խմբագրողներ. Սյուզան Բարեթ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդման, Լորի Ֆուլլեր, Գարի Հ. Գարֆ, Ջեսիֆեր Գրեյս Ջոնս, Մայքլ Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջեսեթ Էնդրյուս, Ֆեյ Փ. Անդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Նեյթ Ֆինս, Քերի Լին Ս. Հերին, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Բրեդ Թիլր

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Քեվին Ս. Բենքս, Քոննի Բոթորփ Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Բրայըն Վ. Գիջի, Դենիզ Քըրբի, Գիննի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիսչենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.orgstore.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թաիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարող են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
November 2013 Vol. 14 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Այրինգ, Հենրի Բ., 25, 58, 69
Անդերսեն, Նիլ Լ., 92
Բալլարդ, Մ. Ռասսել, 43
Բեդնար, Դեյվիդ Ա., 17
Բըրթըն, Լինդա Ք., 111
Դայչես, Թիմոթի Կրտս., 37
Դյուբ, Էդվարդս, 15
Կոսե, Ջեռալդ, 49
Համիլթոն, Քեվին Ս., 99
Հեյլս, Ռոբերտ Դ., 6
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 3940
Մակ-Քոնկի, Դեյվիդ Մ., 96
Մեյնզ, Ռիչարդ Ջ., 79
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 61, 85, 110, 121
Նելսոն, Ռասսել Մ., 106
Նիլսեն, Ս. Գիֆորդ, 33
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 21, 55
Ռիվս, Լինդա Ս., 118
Սթեֆենս, Քերոլ Մ., 12, 115
Սոարես, Ուլիսես, 9
Սքոթ, Ռիչարդ Գ., 82
Վալենզուելա, Առնուլֆո, 35
Վինսոն, Տերենս Մ., 104
Փաքեր, Բոյդ Ք., 26
Փերի, Լ. Թոմ, 46
Քուք, Քվենթին Լ., 88
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 29
Օչոա, Ադրիան, 102
Օսկարսոն, Բոննի Լ., 76
Օքս, Դալլին Հ., 72
Ֆանկ, Ռենդի Դ., 52

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ակտիվացում, 12, 21, 35
Աղոթք, 121
Ամուսնություն, 69, 72, 106
Ապաշխարություն, 26, 52, 55, 82, 118
Արարողություններ, 92, 115
Արդարակեցություն, 79
Բժշկում, 37
Գերագույն համաժողով, 6, 110
Գերություն, 88
Գթություն, 58
Դարձ, 76
Դեպրեսիա, 3940
Եկեղեցու աճ, 4
Եկեղեցու ժողովներ, 15, 99
Եկեղեցու կոչումներ, 15, 69
Եկեղեցու ղեկավարները, 25
Երախտագիտություն, 85
Երկնային Հայր, 69
Երջանկություն, 69, 85
Զոհաբերություն, 76
Զորություն, 92, 96
Ընկերակցություն, 21, 49
Ընտանիք, 29, 69, 72, 88, 106
Ընտրություն, 106
Ինքնատիրապետում, 9
Իսրայելի տուն, 88
Լրատվամիջոցներ, 102
Խաղաղություն, 26
Ծառայություն, 12, 58, 61, 82, 96, 111
Կանայք, 29
Կարեկցանք, 3940
Կրոնական ազատություն, 88
Հաղորդություն, 99, 118
Հանգստության, 99
Հավատո Հանգանակներ, 46
Հավատք, 15, 21, 43, 104
Հիսուս Քրիստոս, 9, 15, 37, 82, 102, 111
Հիսուս Քրիստոսի Քավությունը, 52, 55, 69, 82, 118
Հրաշքներ, 43
Զախորդություն, 3940, 67, 79, 85, 104, 118, 121
Մահկանացու մարմին, 106
Մայրություն, 29, 72
Մարգարեներ, 6
Մաքրաբարոյություն, 29, 72
Միասնություն, 15, 49
Միսիոներական աշխատանք, 4, 43, 45, 43, 52
Միսիոներներ, 33
Մորմոնի Գիրք, 82
Նախապատրաստություն, 102
Ներում, 37
Ոգեշնչում, 8, 58
Ուխտեր, 12, 82, 110, 111, 115, 118
Ուսուցանել, 109
Պատկանել, 21
Պատվիրաններ, 72
Ջոզեֆ Սմիթ, 96, 102
Սեր, 12, 45, 43, 49, 69, 104, 111, 121
Սուրբ Հոգի, 96
Սուրբ գրություններ, 26
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 46, 96, 121
Վերջին օրեր, 26
Վկայություն, 76, 79, 102
Տաճարներ, 17, 115, 118
Տասանորդ, 17
Տնային ուսուցում, 61
Տոկունություն, 39, 40, 79, 85, 99
Փրկության ծրագիր, 72
Քահանայություն, 46, 58, 92, 115
Օրհնություններ, 17
Հեզություն, 9

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարի գալուստ համաժողով

Իմ աղոթքն է, որ մենք լցվենք Տիրոջ Հոգով, մինչ կլսենք և կսովորենք:

Որքան լավ է, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, կրկին անգամ հանդիպելը: Ավելի քան 183 տարի առաջ Եկեղեցին կազմակերպվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից Տիրոջ ղեկավարության ներքո: 1830թ. ապրիլի 6-ի այդ ժողովին ներկա էր Եկեղեցու վեց անդամ:[1]

Ես ուրախ եմ հայտարարելու, որ երկու շաբաթ առաջ Եկեղեցու անդամների թիվը հասավ 15 միլիոնի: Եկեղեցին շարունակում է կայուն աճ ապրել և փոխել ավելի ու ավելի շատ մարդկանց կյանքեր ամեն տարի: Այն տարածվում է երկրի երեսին, մինչ մեր միսիոներների բանակը փնտրում է նրանց, ովքեր որոնում են ճշմարտությունը:

Գրեթե մեկ տարի է անցել այն պահից, երբ ես հայտարարեցի միսիոներական ծառայության տարիքային պահանջի նվազեցման մասին: Այդ ժամանակից ի վեր լիաժամկետ միսիոներների թիվն աճել է 58,500-ից՝ 2012թ. հոկտեմբերին, մինչև 80,333-ի՝ այսօր: Ինչպիսի ահռելի և ոգեշնչող արձագանքի ականատեսը մենք եղանք:

Սուրբ գրություններում չկա ավելի առնչվող հայտարարություն, ավելի կապող պարտականություն, ավելի ուղղակի ուսուցում, քան հարություն առած Տիրոջ տված պատգամը, երբ Նա հայտնվեց Գալիլեայում Իր տասնմեկ աշակերտներին. «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը»:[2] Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Նրանից հետո, երբ ամեն ինչ ասված է, ամենամեծ և ամենակարևոր պարտականությունը ավետարանը քարոզելն է»:[3] Այսօր ձեզանից ոմանք դեռ կհիշեն Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի խոսքերը, որոնք ծանոթ են թվում մեր ականջին. «Յուրաքանչյուր անդամ միսիոներ է»:[4]

Նրանց խոսքերին ես ավելացնում եմ իմը: Այժմ ժամանակն է, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին, տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ: Նա պատրաստել է մեզ համար միջոցներ՝ կիսվելու ավետարանով բազմազան եղանակներով, և Նա կաջակցի մեզ մեր

ջանքերում, եթե մենք հավատքով գործենք՝ Նրա աշխատանքն իրականացնելու համար:

Օգնելու համար պահպանել մեր ընդմիշտ աճող միսիոներական ուժերը, ես խնդրել եմ մեր անդամներին անցյալում ներդրում կատարել իրենց ուժերի սահմաններում իրենց ծխերի միսիոներական ֆոնդին կամ Եկեղեցու ընդհանուր միսիոներական ֆոնդին: Այդ խնդրանքի



արձագանքը մեծապես գոհացնող է եղել և օգնել է աջակցել հազարավոր միսիոներների, ում հանգամանքները թույլ չեն տվել ինքնուրույն ապահովել իրենց: Ես շնորհակալ եմ ձեր առատաձեռն ներդրումների համար: Օգնության կարիքը դեռ առկա է, և մենք կարող ենք շարունակել աջակցել նրանց, ովքեր ունեն ծառայելու մեծ ցանկություն, սակայն չունեն դա անելու սեփական միջոցներ:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք եկել ենք այստեղ ուսուցում և ոգեշնչում ստանալու: Ավետարանական բազմազան թեմաներին վերաբերող շատ ուղերձներ կհնչեն գալիք երկու օրերի ընթացքում: Այն տղամարդիկ և կանայք, ովքեր կխոսեն ձեզ հետ, փնտրել են երկնային օգնություն՝ իրենց ուղերձի համար:

Իմ աղոթքն է, որ մենք լցվենք Տիրոջ Հոգով, մինչ կլսենք և կսովորենք: Մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թեև մի քանի տասնյակ մարդ էր ներկա այն օրը, երբ Եկեղեցին կազմակերպվեց, միայն վեցն էին պաշտոնապես թվարկված որպես կազմակերպող անդամներ:
2. Մատթեոս 28.19:
3. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ*. (2007), 330:
4. David O. McKay, in Conference Report, Apr. 1959, 122.

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորում

Գերագույն համաժողով. Ամրացնել հավատքը և վկայությունը

Օ՜, որքան մեծ է գերագույն համաժողովի մեր կարիքը: Համաժողովների միջոցով մեր հավատքն ամրանում է և մեր վկայությունները խորանում են:

Ծնորհակալություն, Նախագահ Մոնսոն, ձեր ուսուցանման, Քրիստոսանման ծառայության օրինակի և մեզ ոգևորելու համար, որ լինենք միսիոներներ: Մենք միշտ աղոթում ենք Ձեզ համար:

Մեր տնտեսությունում Փրկիչ Հիսուս Քրիստոսը կոչել է Սրբերի հավաքը «*իմ* գերագույն համաժողով»:[1]

Որտեղ էլ որ մենք լինենք այս աշխարհում, ինչպես էլ ստանանք այս նյութերը, ես վկայում եմ, որ մենք հավաքվել ենք *Նրա* համաժողովին: Ես վկայում եմ նաև, որ մենք կլսենք Նրա խոսքը, քանզի Նա ասել է. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[2]

Համաժողովները միշտ եղել են Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու մասը: Ադամը հավաքեց իր սերունդներին և մարգարեացավ գալիք բաների մասին: Մովսեսը հավաքեց Իսրայելի զավակներին և ուսուցանեց նրանց իր ստացած պատվիրանները: Փրկիչն ուսուցանեց բազմություններին, որ հավաքվել էին և Սուրբ Հոգում, և Ամերիկյան մայր ցամաքում: Պետրոսը հավաքեց հավատացյալներին Երուսաղեմում: Այս վերջին օրերի առաջին գերագույն համաժողովը կայացավ Եկեղեցու կազմավորումից երկու ամիս անց, և համաժողովները շարունակվում են կայանալ մինչ օրս:

Այս համաժողովները միշտ Տիրոջ ղեկավարության տակ են և առաջնորդվում են Սուրբ Հոգով:[3] Մեզ չի հանձնարարվում որոշակի թեմա: Շաբաթների և ամիսների ընթացքում, հաճախ անքուն գիշերների արդյունքում, մենք սպասում ենք Տիրոջը: Ծոմի, աղոթքի, ուսումնասիրության և խորհելու միջոցով մենք իմանում ենք, թե ինչ ուղերձ է *Նա* ցանկանում, որ մենք հղենք:

Ոմանք կարող են հարցնել. «Ինչո՞ւ ոգեշնչումը ավելի հեշտ և արագ չի գալիս»: Տերն ուսուցանել է Օլիվեր Քաուդերիին. «Դու պետք է քննես այն քո մտքում. հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է»:[4] Համաժողովի ուղերձները գալիս են մեզ Սուրբ Հոգու միջոցով աղոթքով նախապատրաստվելու միջոցով:

Այս սկզբունքը ճշմարիտ է Եկեղեցու բոլոր անդամների համար, երբ մենք պատրաստվում ենք մասնակցելու ծխի, ցցի կամ գերագույն համաժողովներին: Մենք ուսումնասիրում ենք մեր մտքում, թե ինչի կարիք ունենք և ինչ ենք ցանկանում Երկնային Հորից, և մենք աղոթում ենք, որպեսզի հասկանանք և կիրառենք այն, ինչ մեզ ուսուցանում են: Երբ մոտենում է համաժողովի ժամանակը, մենք զոհաբերում ենք այլ միջոցառումներ՝ «մի կողմ դնելով այս աշխարհի բաները, և ավելի լավ բաների ձգտելով»:[5] Այնուհետև մենք հավաքվում ենք մեր ընտանիքներով՝ լսելու Տիրոջ խոսքը, ինչպես անում էր Բենիամին թագավորի ժողովուրդը:[6]

Երեխաները և երիտասարդները սիրում են ներգրավված լինել: Մենք լուրջ սխալ ենք կատարում, եթե ենթադրում ենք, որ համաժողովը վեր է նրանց ինտելեկտից և հոգևոր զգայունությունից: Եկեղեցու երիտասարդ անդամներին ես խոստանում եմ՝ եթե դուք լսեք, դուք ուժգնությամբ կզգաք Հոգին ձեր մեջ: Տերը կասի ձեզ, թե ինչ է ուզում, որ անեք ձեր կյանքում:

Համաժողովների ժամանակ մենք կարող ենք ստանալ Տիրոջ խոսքը ուղղված հենց ձեզ: Մի անդամ վկայել է. «Երբ ես լսեցի ձեր ուղերձը, ես ապշեցի: . . . Ձեր ելույթը անձնական հայտնություն էր Տիրոջից անմիջապես իմ ընտանիքին: Ես երբեք իմ հոգում չէի զգացել Հոգու նման ամուր արտահայտում, ինչպես այդ րոպեներին, երբ Սուրբ Հոգին ուղղակիորեն խոսեց ինձ հետ»:

Մեկ այլ անդամ ասել է. «Ես երբեք նախկինում այդքան խորը չէի զգացել, որ ելույթն ուղղված լիներ հենց ինձ»:

Սա հնարավոր է, որովհետև Սուրբ Հոգին հասցնում է Տիրոջ

խոսքը մեր սրտերին այնպիսի արտահայտություններով, որոնք մենք կարող ենք հասկանալ։[7] Երբ ես համաժողովի ժամանակ գրառումներ եմ անում, ես միշտ չեմ գրում ճշգրտորեն այն, ինչ ասում է խոսնակը. ես գրի եմ առնում անձնականացված ուղղորդումը, որը Հոգին տալիս է ինձ։

Այն, ինչ *ասվում* է, այդքան կարևոր չէ, որքան այն, ինչ մենք *լսում* ենք և *զգում*։[8] Այդ պատճառով ենք մենք ջանում լսել համաժողովը այնպիսի մթնոլորտում, որտեղ Հոգու ցածր մեղմ ձայնը կարող է հստակ լսվել, զգացվել և հասկացվել։

Օ՜, որքան շատ է մեզ հարկավոր գերագույն համաժողովը։ Համաժողովների միջոցով մեր հավատքն ամրանում է և մեր վկայությունները խորանում են։ Եվ երբ մենք դարձի ենք գալիս, մենք ամրացնում ենք միմյանց, որպեսզի ամուր կանգնենք այս վերջին օրերի կատաղի գրոհների պայմաններում։[9]

Վերջին տասնամյակներում Եկեղեցին մեծապես պաշտպանված է եղել սաստիկ անհասկացողություններից և հալածանքներից, որոնք կրել են վաղ օրերի Սրբերը։ Միշտ այդպես չի լինելու։ Աշխարհը հեռանում է Տիրոջից ավելի արագ և ավելի հեռու, քան երբևէ նախկինում։ Թշնամին ազատ է արձակվել երկրի վրա։ Մենք տեսնում ենք, լսում ենք, կարդում ենք, ուսումնասիրում ենք և կիսվում ենք մարգարեների խոսքերով, որպեսզի նախազգուշացված և պաշտպանված լինենք։ Օրինակ, «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» տրվեց դեռ նրանից առաջ, երբ մենք սկսեցինք տեսնել այն դժվարությունները, որոնք ունեն ընտանիքներն այսօր։ «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների Վկայությունը» պատրաստ էր արդեն այն ժամանակ, երբ մենք ունեինք դրա կարիքն առավել շատ։

Մենք, հնարավոր է, չիմանանք բոլոր այն պատճառները, որոնցով մարգարեները և համաժողովի խոսնակները որոշակի թեմաներով են խոսում համաժողովին, սակայն Տերը գիտի։ Նախագահ Հարոլդ Բ. Լին ուսուցանել է. «Միակ

ապահովությունը, որը մենք ունենք որպես այս եկեղեցու անդամներ, դա . . . լսելն է Տիրոջ խոսքերին և պատվիրաններին, որոնք Տերը տալիս է Իր մարգարեի միջոցով։ Կլինեն բաներ, որոնք համբերություն և հավատք են պահանջում։ Ձեզ կարող է դուր չգալ այն, ինչ գալիս է Եկեղեցու իշխանության կողմից։ Շատ դեպքերում դա կարող է հակասել ձեր [անձնական] տեսակետներին։ Դա կարող է հակասել ձեր հասարակական տեսակետներին։ Դա կարող է խանգարել ձեր հասարակական կյանքի որոշ բնագավառներին։ Սակայն, եթե դուք լսեք այդ բաներին այնպես, կարծես այն գալիս է հենց Տիրոջ բերանից, համբերությամբ և հավատքով, խոստումն այն է, որ «դժոխքի դարբասները չեն հաղթի քեզ, . . . և Տեր Աստված կցրի խավարի ուժերը քո առաջից և երկիքները կցնցվեն քո բարիքի համար և նրա անվան փառքով» (ՎԱՌ 21.6)»։[10]

Ինչպե՞ս Նախագահ Լին գիտեր, թե ինչի ենք մենք հանդիպելու մեր օրերում։ Նա գիտեր, որովհետև մարգարե էր, տեսանող և հայտնող։ Եվ եթե մենք լսենք և հնազանդվենք մարգարեներին այժմ, ներառյալ նրանց, ովքեր խոսում են հենց այս համաժողովին, մենք կուժեղանանք և պաշտպանված կլինենք։

Գերագույն համաժողովի մեծագույն օրհնությունները գալիս են, երբ համաժողովն ավարտվում է։ Հիշեք սուրբ գրություններում հաճախ կրկնվող ուղին. մենք հավաքվում ենք լսելու Տիրոջ խոսքը և վերադառնում ենք մեր տները՝ դրանցով ապրելու համար։

Նրանից հետո, երբ Բենիամին թագավորն ուսուցանեց իր ժողովրդին, «նա արձակեց բազմությունը, և նրանք վերադարձան իրենց սեփական տները՝ ամեն ոք ըստ իր ընտանիքի»։[11] Իր օրերում Լիմքի թագավորը արեց նույնը։[12] Մարդկանց ուսուցանելուց և սպասավորելուց հետո Բաունթիֆուլ տաճարում, Փրկիչը կոչ արեց մարդկանց. «Գնացեք ձեր տները, և խորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի, և հարցրեք Հորը իմ անունով, որպեսզի դուք կարողանաք հասկանալ, և պատրաստել ձեր մտքերը էգուցվա համար, և ես գալու եմ ձեզ մոտ կրկին»։[13]

Մենք ընդունում ենք Փրկչի հրավերը, երբ խորհում և աղոթում ենք, որպեսզի հասկանանք այն, ինչ ուսուցանվել է, ապա գնալով և կատարելով Նրա կամքը։ Հիշեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի խոսքերը. «Ես որոշում եմ կայացրել, որ երբ գնամ տուն այս [գերագույն] համաժողովից հետո, . . . կլինեն շատ ու շատ բնագավառներ իմ կյանքում, որոնցում ես կարող եմ կատարելագործվել։ Ես կազմել եմ այդ բաների մտավոր ցուցակը և ակնկալում եմ անմիջապես սկսել աշխատել դրանց վրա»։[14] Նախագահ Մոնսոնը վերջերս ասել է. «Ես խրախուսում եմ ձեզ . . . կարդալ ելույթները և խորհել դրանց մեջ պարունակվող ուղերձների մասին։ Իմ անձնական կյանքում ես հասկացել եմ, որ ավելին եմ քաղում այս ոգեշնչված քարոզներից, երբ ուսումնասիրում եմ դրանք ավելի մեծ խորությամբ»։[15]

Սուրբ գրություններն անհատապես և ընտանիքով ուսումնասիրելու կոչ անելուց բացի, Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք կանոնավոր ուսումնասիրենք և կիրառենք այն, ինչ սովորել ենք գերագույն համաժողովին։ Ես վկայում եմ, որ նրանք, ովքեր ապավինում են Տիրոջը և լսում նրա խորհուրդը հավատքով, կստանան մեծ ուժ՝ օրհնելու իրենց և իրենց ընտանիքները սերունդներ շարունակ։

Երկնային Հայրը տվել է ճանապարհը։ Այս համաժողովին

Եկեղեցու 97 տոկոսը կարող է լսել այս ուղերձները իրենց մայրենի լեզվով: Միլիոնավոր անդամներ 197 երկրներում կդիտեն այս համաժողովը 95 լեզուներով: Միայն երկու կամ երեք օր անց ուղերձները կհայտնվեն LDS.org-ում անգլերեն լեզվով, իսկ մեկ շաբաթվա ընթացքում դրանք մատչելի կլինեն 52 լեզուներով: Այսօր մենք ստանում ենք Եկեղեցու տպագիր ամսագրերը գերագույն համաժողովից հետո երեք շաբաթ անց: Այլևս մենք չպետք է ամիսներ սպասենք, որպեսզի ելույթները հասնեն փոստով: Համակարգչով, հեռախոսով և էլեկտրոնային այլ սարքերով մենք կարող ենք կարդալ, լսել և դիտել մարգարեների ուսմունքները և կիսվել դրանցով: Ցանկացած պահի, ցանկացած վայրում մենք կարող ենք խորացնել մեր գիտելիքը, ամրացնել մեր հավատքը և վկայությունը, պաշտպանել մեր ընտանիքներին և տանել նրանց անվտանգ դեպի տուն:

Այս համաժողովի ուղերձները կընդգրկվեն նաև երիտասարդների առցանց ուսումնական ծրագրի մեջ: Ծնողներ, դուք կարող եք գտնել երիտասարդների համար նախատեսված դասերը LDS.org-ում: Տեսեք, թե ինչ են սովորում ձեր երեխաները, և դարձրեք դա ձեր ուսումնասիրության, ընտանեկան քննարկումների, ընտանեկան երեկոների, ընտանեկան խորհուրդների և ձեր երեխաներից յուրաքանչյուրի հետ առանձնազրույցների առարկան:

Ես խրախուսում եմ բոլոր անդամներին օգտագործել Եկեղեցու վեբկայքերի և շարժական սարքերի ծրագրային ռեսուրսները: Դրանք շարունակ կատարելագործվում են, որպեսզի ավելի հեշտ դառնան օգտագործման մեջ և ավելի շատ համապատասխանեն մեր կյանքին: LDS.org-ում դուք կգտնեք նյութեր, որոնք կօգնեն ձեզ ուսումնասիրել ավետարանը, ամրացնել ձեր տունը և ընտանիքը և ծառայել ձեր կոչումներում: Դուք կարող եք նաև գտնել ձեր նախնիներին, ովքեր տաճարային ծեսերի կարիքն ունեն, և ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ փրկության աշխատանքում, ներառյալ՝ ավետարանով կիսվելու հարցում: Ծնողները կարող են նախաձեռնություն ցուցաբերել, պատրաստելով իրենց երեխաներին մկրտությանը, քահանայությանը, լիաժամեկտ միսիաներին և տաճարին: Նրանք կարող են օգնել մեզ քայլել տաճարային ծեսերի և ուխտերի ուղիղ և նեղ ճանապարհով և արժանանալ հավերժական կյանքի օրհնությանը:

Վերջին ապրիլյան համաժողովի քահանայության գերագույն ժողովին ես պատմեցի, թե ինչպես էր հայրս նկարում զինված ասպետ, որպեսզի ուսուցաներ ինձ Աստծո սպառազինության և հոգևոր պաշտպանության մասին, որ այն բերում էր:

Այդ նիստից հետո մի հայր պատմեց իր ընտանիքին, թե ինչ էր սովորել: Ոգեշնչված, նրա փոքր տղա Ջեյսոնը զննեց LDS.org կայքը, որպեսզի լսեր ուղերձը: Մի քանի օր անց ընտանեկան երեկոյին նա կիսվեց այդ դասով իր եղբայրների և քույրերի հետ: Ահա նա:

Համաժողովի հասարակ ուղերձ, ոգեշնչված Տիրոջ կողմից, ստացված երեխայի կողմից, ով ուսուցանեց այն իր ընտանիքն անձնական և զորեղ եղանակով: Ես սիրում եմ նրա արդարակեցության վահանը: Ես սիրում եմ հավատքի նրա վահանը՝ հակառակորդի կատաղի նետերը ետ մղելու համար: Սրանք են համաժողովի օրհնությունները:

Իմ եղբայրներ և քույրեր, ես բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ Տեր Հիսուս Քրիստոսն ապրում է և կանգնած է այս Եկեղեցու գլխավերևում: Սա *Նրա* գերագույն համաժողովն է: Ես խոստանում եմ ձեզ Նրա անունով, որ եթե դուք աղոթեք անկեղծ ցանկությամբ լսելու համար ձեր Երկնային Հոր ձայնը այս համաժողովի ուղերձների մեջ, դուք կհայտնաբերեք, որ Նա խոսում է ձեզ հետ, որպեսզի օգնի ձեզ, ամրացնի ձեզ և տանի ձեզ տուն՝ Իր ներկայությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Ջեյսոնը իր «Աստծո ողջ սպառազինության» մեջ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 124.88; շեշտադրումն ավելացված է:
2. Վարդապետություն և Ուխտեր 1.38:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 46.2:
4. Վարդապետություն և Ուխտեր 9.8:
5. Վարդապետություն և Ուխտեր 25.10:
6. Տես Մոսիա 2.5:
7. Տես 2 Նեփի 33.1:
8. See Spencer W. Kimball, in Conference Report, Tonga Area Conference 1976, 27.
9. Տես Ղուկաս 22.31–32:
10. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հարոլդ Բ. Լի* (2000), 84–85:
11. Մոսիա 6.3:
12. Տես Մոսիա 8.4:
13. 3 Նեփի 17.3:
14. Spencer W. Kimball, “Spoken from Their Hearts,” *Ensign,* Nov. 1975, 111.
15. Թոմաս Ս. Մոնսոն, «Տեր ընդ ձեզ մինչև նոր հանդիպում», *Լիահոնա,* նոյ. 2012, 110:

Երեց Ուլիսես Սարես
Յոթանասունի Նախագահություն

Եղեք հեզ ու սրտով խոնարհ

Հեզ լինելը չի նշանակում լինել թույլ, այլ նշանակում է վարվել առաքինությամբ և բարությամբ

Մորմոնն ուսուցանել է, որ մարդը «չի կարող ունենալ հավատք և հույս, եթե նա չլինի հեզ և սրտով խոնարհ»:[1] Նա ավելացրել է, որ առանց այդ հատկանիշների «հավատքը և հույսը զուր են, քանզի ոչ մեկն ընդունելի չէ Աստծո առաջ, բացի հեզից և սրտով խոնարհից»:[2]

Հեզությունը դա նրանց հատկանիշն է, ովքեր «Աստվածավախ, արդարակյաց, խոնարհ, ուսումնասեր և չարչարանքների մեջ համբերատար»[3] են: Նրանք, ովքեր ունեն այդ հատկանիշները, պատրաստակամ են հետևելու Հիսուս Քրիստոսին, և և նրանց բնավորությունը հանգիստ է, հլու, հանդուրժող և ենթարկվող:

Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ հեզությունը Հոգու պտուղ է:[4] Հետևաբար այն հեշտությամբ կարելի է ձեռք բերել, եթե մենք «Հոգով ենք ապրում»:[5] Իսկ Հոգով ապրելու համար մեր կենսակերպը Տիրոջ առաջ պետք է արտահայտի արդարակեցություն:

Երբ մենք վերցնում ենք Քրիստոսի անունը մեզ վրա, մեզանից ակնկալվում է, որ մենք ձգտենք ընդօրինակել Նրա հատկանիշները և փոխել մեր բնավորությունը, որպեսզի ավելի շատ նմանվենք Նրան ամեն օր: Փրկիչը խրատել է իր աշակերտներին, ասելով. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպես ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է»:[6] Եթե մենք «զանք դեպի Քրիստոսը, . . . հրաժարվենք ամեն անաստվածությունից . . . և սիրենք Աստծուն», ապա Քրիստոսի շնորհով այն օրը կգա, երբ մենք կատարյալ կլինենք Նրանում:[7]

«Քրիստոսանման հատկանիշները պարգևներ են Աստծուց: [Այդ հատկանիշները] գալիս են, երբ [մենք] արդար ձևով ենք օգտագործում [մեր] ազատ կամքը: . . . Աստծուն գոհացնելու ցանկությամբ [մենք պետք է] ընդունենք [մեր] թուլությունները և լինենք հոժար ու ձգտենք կատարելագործվել»:[8]

Հեզությունը կենսական նշանակություն ունի մեզ համար, որպեսզի ավելի նմանվենքՔրիստոսին: Առանց դրա մենք չենք կարող զարգացնել այլ կարևոր արժանիքներ: Հեզ լինելը չի նշանակում լինել թույլ, այլ նշանակում է վարվել առաքինությամբ և բարությամբ, ցույց տալ ուժ, պարզություն, առողջ ինքնագնահատական և ինքնակառավարում:

Հեզությունը Փրկչի կյանքում ամենահարուստ հատկանիշներից մեկն էր: Նա ուսուցանեց Իր աշակերտներին. «Ինձանից սովորեցէք. Որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ»:[9]

Մենք օրհնված ենք, ծնված լինելով հեզության սերմը մեր սրտում: Մենք պետք է հասկանանք, որ հնարավոր չէ աճել ու զարգացնել այդ սերմը մի ակնթարթում. դրա համար ժամանակ է պահանջվում: Քրիստոսը մեզ խնդրել է «ամեն օր [մեր] խաչն առն[ենք]»[10], ինչը նշանակում է, որ այն պետք է լինի չընդհատվող կենտրոնացում և ցանկություն:

Նախագահ Լորենսո Սնոուն, մեր տնտեսության հինգերորդ մարգարեն, ուսուցանել է. «Մեր պարտականությունն է ձգտել լինել կատարյալ, . . . զարգանալ ամեն օր և նայել ետ՝ մեր անցած շաբաթվան, և այս շաբաթ անել ավելի լավ գործեր, արեք այսօր ավելի լավ գործեր, քան երեկ»:[11] Այսպիսով, հեզության առաջին քայլը, դա ամենօրյա կատարելագործումն է: Ամեն օր մենք պետք է ձգտենք լինել ավելի լավը, քան նախորդ օրը, առաջ քայլելով այս գործընթացում:

Նախագահ Սնոուն ավելացրել է. «Մենք ունենք մեր փոքրիկ քմահաճույքներն ու մեր թուլությունները, մենք պետք է փորձենք հաղթահարել դրանք, որքան հնարավոր է շուտ, և . . . պետք է [սերմանենք] այդ զգացումը մեր երեխաների սրտերում, . . . որպեսզի նրանք սովորեն բոլոր հանգամանքներում [վարվել] պատշաճ Նրա առաջ:

Եթե ամուսինը իր կնոջ հետ մեկ օր կարողանա ապրել առանց վեճի կամ առանց որևէ մեկին անբարեհաճ վերաբերմունք ցուցաբերելու կամ առանց վշտացնելու Աստծո Հոգուն, . . . ապա մինչ այդ պահը նա կատարյալ է: Այնուհետև, թողեք, որպեսզի հաջորդ օրը նա ձգտի լինել նույն կերպ: Բայց ենթադրենք, որ նա իր հաջորդ օրվա փորձերում ձախողել է, ապա որևէ պատճառ չկա, որ նա չկարողանա հաջողել անել դա երրորդ օրը»:[12]

Ընդունելով մեր նվիրվածությունն ու պատրաստակամությունը, Տերը

կտա մեզ այն, ինչին մենք ունակ չենք հասնելու մեր անկատարությունների և մարդկային թուլությունների պատճառով:

Մեկ այլ կարևոր քայլ հեզ դառնալու համար՝ սովորելն է վերահսկել մեր բնավորությունը: Քանի որ բնական մարդը բնակվում է մեզանից յուրաքանչյուրի մեջ, և քանի որ մենք ապրում ենք մի աշխարհում, որը լի է լարվածությամբ, մեր բնավորության վերահսկումը կարող է դառնալ մեր կյանքի ամենամեծ փորձություններից մեկը: Մի քանի վայրկյան մտածեք, թե ինչպես եք վարվում, երբ ինչ-որ մեկը չի համաձայնվում ձեր ցանկությունների հետ, երբ դուք ուզում եք ինչ-որ բան: Ի՞նչ եք անում, երբ մարդիկ չեն համաձայնվում ձեր զաղափարների հետ, նույնիսկ եթե, ձեր կարծիքով, դրանք ներկայացնում են խնդրի ճիշտ լուծումը: Ո՞րն է ձեր պատասխանը, երբ ինչ-որ մեկը վիրավորում է ձեզ, քննադատում է ձեր ջանքերը կամ ուղղակի անբարյացակամ է, քանի որ նա վատ տրամադրության մեջ է: Այդ բոպեներին, կամ այլ դժվարին իրավիճակներում, մենք պետք է սովորենք վերահսկել մեր բնավորությունը և արտահայտել մեր զգացմունքները համբերությամբ ու մեղմ համոզումով: Դա այնչափ կարևոր է մեր տներում և մեր հարաբերություններում մեր հավերժական զուգընկերոջ հետ: 31 տարի շարունակ ես ամուսնացած եմ իմ սիրելիի հետ, նա միշտ ինձ «մեղմիկ» հիշեցրել է այս մասին, երբ մենք բախվել ենք կյանքի մտահոգիչ դժվարություններին:

Տիմոթեոսի Երկրորդ Թղթում տրված ցուցումներում Պողոս Առաքյալն ասում է.

«Բայց Տիրոջ ծառային պէտք չէ կռիւ անել, այլ ամենի հետ հեզահոգի լինել, սովորեցնող, ոխ չ'պահող.

Հակառակողներին հեզությունով խրատել թերեւս Աստուած նորանց ապաշխարութիւն տայ ճշմարտութիւնն իմանալու համար.

Եւ սատանայի որոգայթիցն զգաստանալու»:[13]

Մեր պատասխանները վերահսկելով, լինելով խաղաղ ու մեղմ և մրցակցությունից խուսափելով, մենք կկսենք արժանի լինել հեզության պարգևը ստանալու համար: Նախագահ Հենրի Բ. Այրինգը մի առիթով ասել է. «Երբ մենք հավատքով վերահսկում ենք մեր բնավորությունները և զսպում մեր հպարտությունը, Սուրբ Հոգին տալիս է Իր հավանությունը և սուրբ խոստումներն ու ուխտերը դառնում են իրական»:[14]

Հեզությանը հասնելու ևս մեկ քայլ է խոնարհ լինելը: Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով հրահանգել է Թոմաս Բ. Մարշին, ասելով. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին»:[15]

Ես հավատում եմ, եղբայրներ և քույրեր, որ միայն նրանք, ովքեր խոնարհ են, ի վիճակի են ըմբռնել և հասկանալ իրենց աղոթքներին Տիրոջ պատասխանները: Խոնարհները ուսուցանվող են, գիտակցում են, թե որքան կախված են Աստծուց, և ցանկանում են ենթարկվել Նրա կամքին: Խոնարհները հեզ են և ունակ են իրենց ազդեցության շնորհիվ ներազդել ուրիշների վրա, որպեսզի նրանք անեն նույնը: Աստծո խոստումը խոնարհներին այն է, որ Նա ձեռքը բռնած կառաջնորդի նրանց: Ես իսկապես հավատում եմ, որ մենք կխուսափենք զարտուղի ճանապարհներից և տխրությունից, քանի դեռ քայլում ենք Տիրոջ ձեռքը բռնած:

Մեր օրերի ամենազեղեցիկ հեզության օրինակներից մեկը, որի մասին ես տեղյակ եմ, դա Եղբայր Մովսես Մահլանգուն է: Նրա դարձի գալը սկսվում է 1964թ., երբ նա ստացավ Մորմոնի Գրքի օրինակը: Նա հիացած էր այս գիրքը կարդալուց, բայց միայն 70-ականների սկզբում նա տեսավ ՎՕՍ Եկեղեցու ցուցանակը շենքի վրա Յոհանեսբուրգում, Հարավային Աֆրիկա, երբ քայլում էր փողոցով: Եղբայր Մահլանգուն հետաքրքրվեց և ներս մտավ շինություն՝ Եկեղեցու մասին ավելի շատ իմանալու համար: Նրան սիրով բացատրեցին, որ նա չի կարող մասնակցել ծառայություններին կամ մկրտվել, քանի որ այդ ժամանակ երկրի օրենքները չէին թույլատրում դա:

Եղբայր Մահլանգուն ընդունեց այդ որոշումը հեզությամբ, խոնարհությամբ և առանց վրդովմունքի, սակայն նա շարունակում էր ունենալ զորեղ ցանկություն ավելի շատ բան իմանալու Եկեղեցու մասին: Նա խնդրեց Եկեղեցու

ղեկավարներին, որպեսզի նրանք ժողովատան պատուհաններից մեկը բաց թողնեին Կիրակնօրյա ժողովների ժամանակ, որպեսզի նա կարողանար նստել դրսում և լսել ժողովները: Մի քանի տարի շարունակ Եղբայր Մահլանգուի ընտանիքն ու ընկերները պարբերաբար հաճախում էին Եկեղեցի «պատուհանի միջոցով»: Մի օր 1980թ. նրանց ասացին, որ նրանք կարող են հաճախել եկեղեցի և մկրտվել: Ինչպիսի փառավոր օր էր եղբայր Մահլանգուի համար:

Հետագայում Եկեղեցին կազմավորեց ճյուղ Սովենտոյում: Դա միայն հնարավոր էր վճռական, քաջ ու հավատարիմ մարդկանց շնորհիվ, ինչպիսին էր եղբայր Մահլանգուն, ով դժվարին իրավիճակներում մնաց հավատարիմ այդքան երկար տարիներ:

Եղբայր Մահլանգուի ընկերներից մեկը, ով Եկեղեցուն միացավ միևնույն ժամանակ, պատմեց ինձ այս պատմությունը, երբ ես այցելեցի Սովենտո ցից: Մեր զրույցի վերջում նա գրկեց ինձ: Այդ պահին, եղբայրներ և քույրեր, ես զգացի, կարծես, օղակված էի Փրկչի սիրող ձեռքերում: Հեզությունը դուրս էր բխում այդ բարի եղբոր աչքերից: Բարությամբ լեցուն սրտով և խորին երախտագիտությամբ նա հարցրեց ինձ, թե արդյոք կարող եմ փոխանցել Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, թե որքան է նա և շատ այլ մարդիկ երախտապարտ և օրհնված, որ ունեն ավետարանը իրենց կյանքում: Եղբայր Մահլանգուի և նրա ընկերների հեզության օրինակն իսկապես բարի կերպով է ազդել բազմաթիվ մարդկանց վրա՝ հատկապես ինձ վրա:

Քույրեր և եղբայրներ, ես հավատում եմ, որ Փրկիչ Հիսուս Քրիստոսը հեզության մեծագույն օրինակ է: Նույնիսկ իր մահկանացու կյանքի վերջին րոպեներին, լինելով անարդար մեղադրված և դատապարտված, ցավագին կերպով իր խաչը կրելով դեպի Գողգոթա, լինելով ծաղրի ենթարկված ու հայհոյված Իր թշնամիների կողմից, լինելով լքված շատերի կողմից, ովքեր Նրան ճանաչում էին և տեսել էին Նրա կատարած հրաշքները, Նա գամվեց խաչին:

Նույնիսկ ամենաուժգին ֆիզիկական տանջանքների մեջ Տերը շրջվեց դեպի Իր հայրը և խոսեց Իր հեզ ու խոնարհ սրտի խորքից. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չ՚գիտեն թէ ի՞նչ են անում»:[16] Քրիստոսը տարավ ֆիզիկական և հոգեկան ծայրահեղ տանջանքներ, տալով մեզ հնարավորություն փոխելու մեր հոգեկան բնույթը և դառնալու հեզ՝ ինչպես Ինքն էր:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Ես վկայում եմ ձեզ, որ Նրա սիրո շնորհիվ, հնարավոր է փոխվել: Հնարավոր է մեր ետևում թողնել մեր թույլությունները: Հնարավոր է մերժել չարի ազդեցությունները մեր կյանքում, վերահսկել մեր զայրույթը, դառնալ հեզ և զարգացնել մեր Փրկչի հատկանիշները: Նա ցույց է տվել մեզ ուղին: Նա տվել է մեզ կատարյալ օրինակ և պատվիրել է յուրաքանչյուրիս դառնալ այնպիսին, ինչպիսին Ինքն է: Նրա հրավիրում է մեզ հետևել Իրեն, հետևել Իր օրինակին և դառնալ Իր նման: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Նրա սուրբ անունով՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մորոնի 7.43:
2. Մորոնի 7.44:
3. Սուրբ գրությունների ուղեցույց, «Հեզ, հեզություն», scriptures.lds.org:
4. Տես Գաղատացիս 5.22–23:
5. Գաղատացիս 5.25:
6. Մատթեոս 5.48:
7. Մորոնի 10.32:
8. *Քարոզիր Իմ ավետարանը* (2004), 115:
9. Մատթեոս 11.29.
10. Ղուկաս 9.23:
11. Lorenzo Snow, in Conference Report, Apr. 1898, 13.
12. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Լորենզո Սնոու* (2012), 100, 101:
13. Բ Տիմոթեոս 2.24–26:
14. Հենրի Բ. Այրինգ, «Ուխտերի տակ ընտանիքները», *Լիահոնա,* մայիս 2012, 65:
15. Վարդապետություն և Ուխտեր 112.10:
16. Ղուկաս 23.34:



Քերոլ Մ. Ստեֆենս
Սփոփող Միության Գերագույն
Նախագահության երկրորդ խորհրդական

Գիտե՞նք արդյոք ինչ ունենք

Քահանայության ծեսերն ու ուխտերը մեզ համար հնարավոր են դարձնում Աստծո կողմից խոստացված օրհնությունների լիությունը, որը հնարավոր է դարձել Փրկչի Քավությամբ:

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը սահմանում են. «Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր»:[1] Այդ աստվածային ճակատագրին հասնելու համար Աստծո յուրաքանչյուր որդի և դուստր քահանայության ծեսերի և ուխտերի կարիքն ունի:

Մենք կարիք ունենք մկրտության: Ընկղմվելով մկրտության ջրերի մեջ, մենք ուխտ ենք կապում՝ վերցնել Քրիստոսի անունը մեզ վրա, միշտ հիշել Նրան, պահել Նրա պատվիրանները և ծառայել Նրան մինչև վերջ, որ միշտ Նրա Հոգին մեզ հետ ունենանք:[2]

Մենք Սուրբ Հոգու պարգևի կարիքն ունենք, որի օգնությամբ կարող ենք ունենալ Հոգու մշտական ընկերակցությունը: Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆն ուսուցանել է. «Բոլոր տղամարդիկ և կանայք, որոնք եկել են Աստծո եկեղեցի և մկրտվել մեղքերի թողության համար՝ իրավունքն ունեն հայտնության և Աստծո Հոգու պարգևի, որը կօգնի իրենց աշխատանքում, իրենց երեխաներին և իրենց նախագահության ներքո գտնվող անդամներին ղեկավարելու և խորհուրդ տալու գործում: Սուրբ Հոգին չի սահմանափակվում միայն տղամարդկանցով, առաքյալներով կամ մարգարեներով, այն պատկանում է բոլոր հավատարիմ տղամարդկանց, կանաց և այն տարիքի երեխաներին, ովքեր կարող են ստանալ Քրիստոսի ավետարանը»:[3]

Մենք տաճարային օժտում ստանալու կարիք ունենք: Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է. «Երբ տղամարդիկ և կանայք գնում են տաճար, նրանք օժտվում են նույն զորությամբ, որն, ըստ էության, քահանայության զորություն է: . . . Օժտումը բառացիորեն զորության պարգև է»:[4]

Մենք կարիք ունենք կնքման ծեսի, որն առաջնորդում է դեպի հավերժական կյանք, իսկ դա «մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից»:[5] Քահանայության այս ծեսը ստանում են միայն տղամարդն ու կինը միասին: Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Քահանայության իշխանությունը վերականգնվել է, որպեսզի ընտանիքները կարողանան հավերժ միասին կնքվել»:[6]

Ամեն շաբաթ հաղորդությունն ընդունելու միջոցով, մենք մեր ուխտերը նորացնելու հնարավորության կարիքն ունենք: Վերջին Օրերի մարգարեներն ու առաքյալներն ուսուցանել են, որ երբ արժանիորեն ենք ընդունում հաղորդությունը, նորացնում ենք ոչ միայն մեր մկրտության ուխտը, այլ «Տիրոջ հետ կապած բոլոր ուխտերը»:[7]

Քահանայության ծեսերն ու ուխտերը հնարավոր են դարձնում Աստծո կողմից մեզ խոստացված օրհնությունների լիությունը, որ հնարավոր է դարձել Փրկչի Քավությամբ: Դրանք զինում են Աստծո որդիներին և դուստրերին զորությամբ՝ Աստծո զորությամբ,[8] և մեզ հնարավորություն են տալիս հավերժական կյանք ստանալ՝ վերադառնալով Աստծո ներկայություն և ապրելով Նրա հետ՝ Իր հավերժական ընտանիքում:

Վերջերս Հոնդուրասում քահանայության ղեկավարների հետ այցելեցի չորս կանանց տներ: Այդ քույրերը և նրանց ընտանիքները կարիք ունեին քահանայության բանալիների և իշխանության, քահանայության ծեսերի և ուխտերի, քահանայության զորության և օրհնությունների:

Մենք այցելեցինք մի թանկագին քրոջ, որն ամուսնացած է և ունի երկու հրաշալի երեխա: Նա հավատարիմ ու ակտիվ է Եկեղեցում, և սովորեցնում է իր երեխաներին ճիշտն ընտրել: Նրա ամուսինն, ինքը չլինելով անդամ, աջակցում է նրան, որ ակտիվ լինի Եկեղեցում: Նրանց ընտանիքն ամուր է, սակայն ավելի շատ զորություն ունենալու համար նրանք քահանայության լրացուցիչ օրհնությունների կարիքն ունեն: Նրանք կարիք ունեն հոր, ով կմկրտվի, կստանա Սուրբ

Հոգու պարգևը և նրան կշնորհվի քահանայություն: Նրանք ունեն քահանայության զորության կարիքը, որը կարող են ստանալ օժտման և կնքման միջոցով:

Հաջորդը, մենք այցելեցինք մեծ հավատքի տեր երկու ամուրի քույրերի: Քույրերից մեկի որդին պատրաստվում էր միսիայի: Մյուս քույրը բուժում էր ստանում քաղցկեղի դեմ: Հուսահատության և վշտի պահին նրանք հիշում են Փրկչի Քավությունը՝ լցվելով հույսով և հավատքով: Նրանք երկուսն էլ հավելյալ օրհնությունների և զորության կարիքն ունեն, որը հասու է տաճարային ծեսերի միջոցով: Մենք խրախուսեցինք նրանց միանալ իրենց ընտանիքի ապագա միսիոներին՝ պատրաստվելով ստանալ այդ ծեսերը:

Վերջինը, մենք այցելեցինք մի քրոջ, որի ամուսինը նոր էր մահացել ողբերգական պատահարի ժամանակ: Լինելով Եկեղեցու նորադարձ, նա չէր հասկանում, որ կարող էր ստանալ իր անձնական օժտումը և կնքվել իր ամուսնու հետ: Երբ ուսուցանեցինք նրան, որ այդ օրհնությունները կարող են հասու լինել իրեն և իր մահացած ամուսնուն, նա լցվեց հույսով: Իմանալով, որ տաճարային ծեսերի և ուխտերի միջոցով իր ընտանիքը կարող է կնքվել միասին, նա հավատք և վճռականություն ունի դիմակայելու հետագա փորձություններին:

Այդ այրու որդին պատրաստվում է Ահարոնյան Քահանայություն ստանալ: Նրա կարգումը մեծ օրհնություն կլինի իր և ընտանիքի համար: Նրանք իրենց տանը քահանայություն կրող կունենան:

Երբ Հոնդուրասում հանդիպեցի այդ հավատարիմ կանանց, տեսա, ինչպես էին նրանք պայքարում իրենց ընտանիքներն ավետարանում ակտիվ պահելու համար: Նրանք իրենց երախտագիտությունը հայտնեցին ծխի ուխտ պահող անդամների համար, ովքեր հոգում են իրենց մասին և օգնում բավարարել իրենց աշխարհիկ և հոգևոր կարիքները: Ինչևէ, այդ քույրերն ունեին դեռևս լիովին չբավարարված կարիքներ:

Այդ այցելությունների ժամանակ ամեն անգամ իմաստուն քահանայության ղեկավարը յուրաքանչյուր քրոջը հարցնում էր, թե արդյոք նա քահանայության օրհնություն է ստացել: Պատասխանն էր՝ ոչ: Քույրերը խնդրում էին քահանայության օրհնություն և ստանում էին այն: Նրանք արտասվում էին՝ երախտագիտություն հայտնելով սփոփանքի, ուղղության, քաջալերման և ոգեշնչման համար, որ գալիս էր Երկնային Հորից՝ արժանի քահանայություն կրողի միջոցով:

Այդ քույրերը ոգեշնչեցին ինձ: Նրանք ակնածանք էին ցուցաբերում Աստծո, Նրա զորության ու իշխանության հանդեպ: Ես երախտապարտ էի նաև քահանայության այն ղեկավարների համար, ովքեր ինձ հետ այցելեցին այդ տներ: Ամեն տնից հեռանալուց հետո մենք միասին խորհրդակցում էինք, թե ինչպես կարելի էր օգնել այդ ընտանիքներին ստանալ իրենց անհրաժեշտ ծեսերը, որոնք կօգնեին ուխտի ճանապարհով առաջադիմելու և իրենց ընտանիքներն ամրացնելու գործում:

Այնտեղ մեծ կարիք կա, որ տղամարդիկ և կանայք զարգացնեն հարգանք միմյանց հանդեպ որպես Աստծո որդիներ և դուստրեր, և ակնածանք մեր Երկնային Հոր՝ Նրա քահանայության, Նրա զորության և իշխանության հանդեպ:

Նա ծրագիր ունի մեզ համար, և երբ մենք գործադրենք մեր հավատքը և վստահենք Նրա ծրագրին, մեր ակնածանքը էլ ավելի կխորանա քահանայության զորության և իշխանության հանդեպ:

Ամրացնել ընտանիքը և Եկեղեցին Քահանայության միջոցով թեմայով ղեկավարների համաշխարհային ուսուցման ժամանակ մենք ուսուցանվեցինք, որ քույրերը, ովքեր քահանայություն կրողներ չունեն իրենց ընտանիքում, երբեք չպետք է միայնակ իրենց զգան: Նրանք օրհնվում և ամրանում են իրենց ստացած ծեսերի և կապած ուխտերի միջոցով: Նրանք չպետք է ամաչեն դիմել, երբ օգնություն է անհրաժեշտ: Երեց Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է, որ Եկեղեցու յուրաքանչյուր կին պետք է իմանա, որ ունի եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ, տնային ուսուցիչ և քահանայություն կրող այլ արժանի անդամներ, ում կարող է վստահել, և ովքեր կարող են գալ իր տուն, օգնել իրեն, և ինչպես Քույր Ռոզմարի Վիքսոմն է ավելացրել, «օրհնություն տալ»:[9]

Երեց Բալարդը նաև ուսուցանել է. «Մեր Երկնային Հայրն առատորեն տալիս է Իր զորությունից: Բոլոր տղամարդիկ և կանայք կարող են ստանալ այդ զորությունից՝ հոգուտ իրենց անձնական կյանքի: Ովքեր Տիրոջ հետ կապել են սուրբ ուխտեր և պատվում են դրանք, կարող են անձնական հայտնություն ստանալ, օրհնվել հրեշտակների ծառայությամբ [և] հաղորդակցվել Աստծո հետ»:[10]

Մենք միմյանց կարիքն ունենք: Աստծո որդիները Աստծո դուստրերի, իսկ Աստծո դուստրերը՝ Աստծո որդիների կարիքն ունեն:

Մենք տարբեր պարգևներ և տարբեր ուժեղ կողմեր ունենք:

Ա Կորնթացիս գլուխ 12-ում շեշտվում է Աստծո որդիների և դուստրերի, մեզանից յուրաքանչյուրի կարիքը, կատարելու մեր դերը և պատասխանատվությունը՝ ըստ Տիրոջ ծրագրի, որ բոլորը կարողանան օգուտ քաղել:[11]

Աստծո որդիներ, արդյոք գիտե՞ք, թե ով եք դուք: Գիտե՞ք արդյոք, թե ինչ ունեք: Արժանի՞ եք գործադրելու քահանայությունը և ստանալու քահանայության զորությունն ու օրհնությունները: Ընդունո՞ւմ եք արդյոք տունն ամրացնող ձեր դերը և պատասխանատվությունը՝ որպես հայր, պապիկ, որդի, եղբայր, հորեղբայր և քեռի: Հարգո՞ւմ եք արդյոք կանանց և մայրերին:

Աստծո դուստրեր, մենք գիտե՞ք, թե ով ենք մենք: Գիտե՞նք արդյոք, թե ինչ ունենք: Արժանի՞ ենք ստանալու քահանայության զորությունն ու օրհնությունները: Ստանո՞ւմ ենք մեզ տրված պարգևները երախտագիտությամբ, շնորհով և արժանապատվորեն: Ընդունո՞ւմ եք արդյոք տունն ամրացնող մեր դերը և պատասխանատվությունը՝ որպես մայրեր, տատիկներ, դուստրեր, քույրեր, հորաքույրներ և մորաքույրներ: Հարգո՞ւմ եք արդյոք տղամարդկանց և հայրերին:

Որպես ուխտյալ որդիներ և դուստրեր, հավատո՞ւմ ենք արդյոք մեր Երկնային Հորը և մեզ համար Նրա հավերժական ծրագրին: Հավատում ենք արդյո՞ք Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը: Հավատո՞ւմ ենք, որ մենք աստվածային էություն և ճակատագիր ունենք: Իսկ երբ ջանքեր ենք գործադրում հասնելու այդ ճակատագրին և ստանալու այն ամենը, ինչ Հայրն ունի,[12] արդյոք հասկանո՞ւմ ենք քահանայության ծեսերը ստանալու և Տիրոջ հետ մեր ուխտերը կապելու, պահպանելու ու նորոգելու կարևորությունը:

Մենք երկնային ծնողների սիրելի հոգևոր որդիներն ու դուստրերն ենք՝աստվածային էությամբ և ճակատագրով: Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը սիրեց մեզ այնքան, որ իր կյանքը տվեց մեզ համար: Նրա Քավությունը հնարավորություն է տալիս մեզ առաջ ընթանալ այն ուղով, որը տանում է դեպի մեր երկնային տուն՝ քահանայության սուրբ ծեսերի և ուխտերի միջոցով:

Քահանայության այդ ծեսերը և ուխտերը վերականգնվել են երկրի վրա Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, իսկ այսօր երկրի վրա քահանայության բոլոր բանալիները կրում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում գործում է ծեսերը սպասավորելու քահնայության իշխանությունը, որի շնորհիվ մենք կարող ենք կապող ուխտերի մեջ մտնել մեր Երկնային Հոր հետ Նրա Սուրբ Որդու անունով: . . . Աստված կպահի ձեզ տված իր խոստումները, եթե դուք պատվեք Նրա հետ կապած ձեր ուխտերը»:[13]

Այս ամենի մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա*, նոյ. 2010, 129:
2. Տես Մորոնի 4.3; 6.3:
3. *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 49.
4. M. Russell Ballard, "Let Us Think Straight" (Brigham Young University Education Week devotional, Aug. 20, 2013); speeches.byu.edu.
5. Վարդապետություն և Ուխտեր 14.7; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 131.1–4:
6. Russell M. Nelson, "Nurturing Marriage," *Liahona,* May 2006, 37; կամ *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 134:
7. Delbert L. Stapley, in Conference Report, Oct. 1965, 14; մեջբերում՝ L. Tom Perry, "As Now We Take the Sacrament," *Liahona,* May 2006, 41; տես նաև *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 561; *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 220:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22:
9. Տես Մ. Ռասսել Բալլարդ և Ռոզմարի Մ. Վիքսոմ, «Քահանայության օրհնությունները յուրաքանչյուր տանը», *Ամրացնել ընտանիքը և Եկեղեցին Քահանայության միջոցով,* (ղեկավարների համաշխարհային ուսուցում, 2013); lds.org/broadcasts:
10. M. Russell Ballard, "Let Us Think Straight"; speeches.byu.edu.
11. Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 46.9, 12:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.38:
13. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Ուխտերի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2009, 22:

Երեց Էդվարդ Դյուբ
Յոթանասունից

Առաջ նայեք և հավատացեք

Տիրոջ համար այնքան կարևոր չէ, թե ինչ ենք արել կամ որտեղ ենք եղել, այլ շատ ավելի կարևոր է, թե ուր ենք կամենում գնալ:

Դատանի հասակում, մայրիկիս հետ դաշտում աշխատելիս, նա ինձ ուսուցանեց կյանքի ամենակարևոր դասերից մեկը: Լույսը վաղուց բացվել էր, արևը բարձրացել էր, և մենք թոխրով հողը փխրեցնում և քաղհան էինք անում, որն ինձ շատ երկար ժամեր էր թվում: Ես կանգ առա, որպեսզի հետ նայեմ և տեսնեմ, թե որքան աշխատանք ենք կատարել, և ասացի մայրիկիս. «Նայի՛ր մեր կատարած աշխատանքին»: Մայրիկս չարձագանքեց: Մտածելով, որ նա ինձ չլսեց, ես մի քիչ ավելի բարձր ձայնով կրկնեցի ասածս: Նա կրկին չարձագանքեց: Եվս մի քիչ բարձրացնելով ձայնս՝ ես նորից կրկնեցի: Վերջապես նա իմ կողմ շրջվեց և ասաց. «Էդվարդ, երբեք հետ մի նայիր: Նայիր առաջ այն ամենին, ինչ դեռ պետք է անենք»:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այն ուխտը, որ մենք կապել ենք Տիրոջ հետ մկրտվելիս՝ «կանգնել որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող [ենք] լինել» (Մոսիա 18.9), ողջ կյանքի ընթացքում տևող նվիրվածություն է: Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը խորհուրդ է տվել. «Նրանք, ովքեր մտել են մկրտության ջրերը և ստացել են Սուրբ Հոգու պարգևը, իրենց ոտքերը դրել են առաքելության ճանապարհի վրա և Փրկչի հետքերին հաստատունորեն և լիովին հետևելու պարտականություն են ստացել» («Սրբերը բոլոր ժամանակներում», *Լիահոնա,* Սեպտ. 2013, 5): Տերն Իր ծառաների միջոցով կանչում է մեզ ծառայելու տարբեր կոչումներում, որոնք մենք ընդունում ենք բացարձակ նվիրվածությամբ: Երբ ազատվում ենք ծառայությունից և այլ առաջադրանք կատարելու կանչ ենք ստանում, մենք ուրախությամբ ընդունում ենք այն՝ մեր նախնիների նման իմանալով, որ «Տիրոջ ծառայության մեջ կարևոր չէ, թե որտեղ ենք ծառայում, այլ ինչպես ենք ծառայում» (Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսեր, Համաժողովի ելույթ, Ապրիլ 1951, 154):

Այսպիսով, երբ ցցի նախագահը կամ եպիսկոպոսն ազատվում է իր ծառայությունից, նա ուրախությամբ ընդունում է իր հետ կանչը, և երբ կոչում է առաջարկվում նրան ծառայելու այնպես, ինչպես Տերն, Իր ծառաների միջոցով, «հարմար է տեսնում» (Մոսիա 3.19), նրա նախորդ փորձը ստվերում չի մնում, և ոչ էլ նա հետ է նայում և մտածում, որ ծառայել է բավարար: Նա «չի ձանձրանում բարին գործելուց», որովհետև նա գիտի, որ «դնում է հիմքը մի մեծ գործի՝ հստակ պատկերացմամբ, որ նման ջանքերը հավերժորեն օրհնում են կյանքեր: Այսպիսով, «փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է» (ՎևՈւ 64.33):

Մենք բոլորս պետք է «ջերմեռանդ ներգրավված [լինենք] բարի գործի մեջ, և շատ բաներ [անենք] [մեր] իսկ ազատ կամքով, և շատ արդարություն [գործենք]» (ՎևՈւ 58.27):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը խորհուրդ է տվել. «Անցյալից պետք է սովորել, այլ ոչ թե անցյալով ապրել: Մենք հետ ենք նայում, որպեսզի սովորենք անցյալի լավագույն փորձառություններից, այլ ոչ թե վերապրենք անցյալի փորձությունները: Եվ երբ մենք սովորում ենք այն, ինչ պետք է սովորեինք, և մեզ հետ վերցնում ենք մեր լավագույն փորձառությունները, ապա մենք առաջ ենք նայում և հիշում, որ *հավատքը միշտ ուղղված է դեպի ապագան*» («Լավագույնը դեռ առջևում է», *Լիահոնա,* Հունվ. 2010, 18):

Մինչ մայրիկիս առաջ նայելու մասին դասը վերաբերում էր դաշտի տեսանելի մոլախոտերին, դա քիչ էր այն ամենի համեմատ, ինչի միջով անցան վաղ շրջանի Սրբերը: Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինն այնքան լավ է նկարագրել այս փորձառությունը. «1846թ-ին ավելի քան 10000 [մարդ] դուրս եկան [Նավու] ծաղկող քաղաքից, որը կառուցված էր Միսսիսիպի գետի ափին: Մարգարեացող ղեկավարների նկատմամբ հավատքով՝ Եկեղեցու վաղ շրջանի անդամները լքեցին իրենց «Սիթի Բյուրիֆուլը» և գնացին Ամերիկայի արևմտյան սահմանին կից անապատը: Նրանք ստույգ չգիտեին, թե ուր են գնում, քանի մղոն ճանապարհ կար դեռ անցնելու, որքան կտևեր ճամփորդությունը կամ ինչ էր սպասվում նրանց ապագայում: Բայց նրանք

գիտեին, որ առաջնորդվում են Տիրոջ և Նրա ծառաների կողմից» («Մեր հայրերի հավատքը», *Ընտայն,* Մայիս, 1996, 33):

Նրանք գիտեին՝ ինչպես առաջ նայել ու հավատալ: Ավելի քան մեկ ու կես տասնամյակ առաջ այս անդամներից մի քանիսը ներկա էին, երբ հայտնություն ստացվեց.

«Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ օրհնված է նա, ով պահում է իմ պատվիրանները՝ կյանքում լինի, թե մահվան մեջ. և ով որ հավատարիմ է նեղության մեջ, նրա վարձքն ավելի մեծ է երկնքի արքայությունում:

Ներկայումս, դուք ձեր բնական աչքերով չեք կարող տեսնել ձեր Աստծո ծրագիրը, այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու, և փառքը, որը պիտի գա շատ նեղությունից հետո» (ՎևՈ 58.2–3):

Մենք նույնպես կարող ենք առաջ նայել և հավատալ: Մենք կարող ենք ընդունել մեր Տիրոջ հրավերքը, ով գրկաբաց հրավիրում է մեզ.

«Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնավորուածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստութիվն կգտնէք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս 11.28–30):

Մեր սիրելի մարգարեն՝ Թոմաս Ս. Մոնսոնը, նրա խորհրդականները և Տասներկու Առաքյալների Քվորումը մեզ բոլորիս հրավիրում են մասնակցել փրկության աշխատանքին: Նորադարձները, երիտասարդները, երիտասարդ ամուրիները, նրանք, ովքեր թոշակի են անցել, և լիաժամկետ միսիոներները պետք է հավասարապես միասին առաջ տանեն փրկության աշխատանքը:

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերը մի անգամ այցելեց մի մրցույթի, որի ընթացքում ցուլերի թիմերը մրցում էին միմյանց դեմ՝ ամենածանր բեռը քաշելով, և նա սրանից մի դաս քաղեց: Նա պատմեց այդ փորձառության մասին. «Մի փայտե սահնակ բեռնված էր ցեմենտի բլոկներով՝ տաս հազար ֆունտ [4535 կգ] – հինգ տոննա: . . . Նպատակը կայանում էր նրանում, որ ցուլերը պետք է երեք ֆուտ [91 սմ] տեղաշարժեին սահնակը: . . . Ես նկատեցի իրար համապատասխանող, շատ մեծ, խառը գույներ ունեցող, կապտամոխրագույն կենդանիների մի զույգ. . . նախկին ժամանակների մեծ կապույտ ցուլեր»:

Մրցույթի արդյունքների մասին խոսելիս՝ նա ասաց. «Թիմերը մեկ առ մեկ դուրս էին գալիս: . . . Մեծ կապույտ ցուլը նույնիսկ աստիճան չստացավ: Մի փոքր, ոչնչով աչքի չընկնող կենդանիների զույգ, որ չափսերով այդքան էլ համապատասխան չէին, բոլոր երեք անգամն էլ տեղաշարժեցին սահնակը»:

Այնուհետև նրան տվեցին մի զարմանալի բացատրություն. «Մեծ կապույտների թիմն ավելի մեծ ու ավելի ուժեղ էր և ավելի համապատասխան էր չափսերով, քան մյուս թիմը: Բայց փոքր ցուլերն ավելի լավ թիմային աշխատանք և համաձայնեցում ունեին: Նրանք միասին էին մոտենում լծին: Երկու կենդանին էլ առաջ էին քաշում հենց նույն պահին և այդ ուժն առաջ էր շարժում բեռը» (“Equally Yoked Together,” excerpt from an address delivered at regional representatives’ seminar, Apr. 3, 1975; in *Teaching Seminary: Preservice Readings* [2004], 30):

Երբ մենք առաջ ենք նայում և հավատում, մենք այս նույն թիմային աշխատանքի կարիքն ունենք փրկության աշխատանքն առաջ տանելիս, ուրիշներին դեպի Քրիստոսը հրավիրելիս: Մեր անհատական կարողությունների հարցում մենք պետք է հետևենք Նախագահ Դիթեր Ֆ. Ուխդորֆի խորհրդին. «Կանգնել կողք կողքի և բարձրացնել՝ որտեղ կանգնած ենք» («Բարձրացրեք՝ որտեղ կանգնած եք», *Լիահոնա,* Նոյ. 2008, 56): Մենք կարող ենք բացահայտել մեր ողջ ներուժը, հենց այնպես, ինչպես նկատել է Երեց Լ. Թոմ. Փերին Տասներկուսի Քվորումից. «Քանի որ ճամփորդում եմ Եկեղեցով մեկ, ես հիանում եմ այն բոլոր դրական բաներով, որոնք տեղի են ունենում: Քանզի ես ամենևին չեմ կարծում, որ մենք, որպես ժողովուրդ, ապրում

ենք մեր ողջ իրական ներուժը գործադրելով: Ես ի նկատի ունեմ, որ մենք միշտ չէ, որ աշխատում ենք միասին, որ մենք դեռ չափազանց շատ ենք հետաքրքրված մեր անձնական պատվի ու հաջողության նպատակներով, և ցույց ենք տալիս չափազանց քիչ հետաքրքրություն Աստծո արքայությունը կառուցելու ընդհանուր նպատակի մեջ» (“United in Building the Kingdom of God,” *Ensign,* May 1987, 35).

Թող որ մենք բոլորս միավորվենք «մարդու անմահությունն ու հավերժական կյանքը [իրականացնելու» ընդհանուր նպատակի մեջ (Մովսես 1.39):

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ով տեսնում է սկզբից մինչև վերջ, շատ լավ գիտեր այն ճանապարհը, որով Նա գնալու էր Գեթսեման և Գողգոթա, երբ Նա հայտարարեց. «Ոչ ով որ ձեռքը մաճի վերայ է դնում և ետևին մտիկ անում, յարմար չէ Աստուծոյ արքայութեան համար» (Ղուկաս 9.62): Տիրոջ համար այնքան կարևոր չէ, թե ինչ ենք արել կամ որտեղ ենք եղել, այլ շատ ավելի կարևոր է, թե ուր ենք կամենում գնալ:

Մենք ուսուցանվել ենք առաջնորդող սկզբունքները Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից. «Մեր կրոնի հիմնական սկզբունքներն Առաքյալների և Մարգարեների վկայություններն են Հիսուս Քրիստոսի մասին՝ որ Նա մահացել է, թաղվել է և կրկին, երրորդ օրը, հարություն է առել և համբարձվել է երկինք. բոլոր մյուս բաները, որոնք վերաբերում են մեր կրոնին, միայն դրա հավելումներն են» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 49):

Ես վկայում եմ, որ երբ մենք հետևում ենք մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի օրինակին, և բարձրացնում ենք մեր ձեռքերն անկյունաձև՝ հաստատելով մեր սիրելի մարգարեին՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, մենք կգտնենք խաղաղություն, սփոփանք և ուրախություն և մենք «[կճաշակենք] Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին» (Վ ևՈ 64.4): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորում

Երկնքի պատուհանները

Հոգևոր և նյութական օրհնություններ են ներթափանցում մեր կյանք, երբ ապրում ենք տասանորդի օրենքով

Ես ուզում եմ նկարագրել երկու կարևոր դաս, որոնք սովորել եմ տասանորդի օրենքի մասին: Առաջին դասը կենտրոնանում է օրհնությունների վրա, որոնք տրվում են անհատներին և ընտանիքներին, երբ նրանք հավատարմորեն հնազանդվում են այս պատվիրանին: Երկրորդ դասը շեշտում է տասանորդի կարևորությունը ողջ աշխարհում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու աճի հարցում: Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին հաստատի մեզանից յուրաքանչյուրին իմ քննարկած սկզբունքների ճշմարիտ լինելը:

Թիվ 1 դաս՝ Կարևոր, սակայն աննկատ օրհնություններ

Քույր Բեդնարի մայրը հավատարիմ կին է և ոգեշնչված տնային տնտեսուհի: Իր ամուսնության վաղ շրջանից ի վեր նա հոգատարությամբ վարել է ընտանիքի ֆինանսական գրառումները: Տասնամյակներ շարունակ նա ուշադիր հաշվարկել է ընտանիքի եկամուտը և ծախսերը՝ օգտագործելով շատ պարզ հաշվապահական մատյաններ: Տարիների ընթացքում նրա հավաքած տեղեկությունն ընդգրկուն է և առատ տեղեկատվություն պարունակող:

Երբ Քույր Բեդնարը երիտասարդ աղջիկ էր, նրա մայրը մատյաններում օգտագործում էր տվյալներ, որ շեշտեր խնայողաբար ապրելու և տան խելամիտ կառավարման հիմնական սկզբունքները: Մի օր, երբ նրանք միասին վերանայեցին տարբեր անվանակարգերի ծախսերը, նրա մայրը նկատեց մի հետաքրքիր օրինաչափություն: Բժշկին այցելելու և դեղորայքի ծախսերը նրանց ընտանիքի համար սպասվածից չափազանց քիչ էին: Նա այս բացահայտումը կապեց Հիսուս Քրիստոսի ավետարանի հետ և բացատրեց իր դստերը մի զորեղ ճշմարտություն. երբ ապրում ենք տասանորդի օրենքով, մենք հաճախ ստանում ենք կարևոր, սակայն աննկատ օրհնություններ, որոնք միշտ չէ, որ մենք սպասում ենք, ուստի հեշտորեն կարող ենք չնկատել: Ընտանիքը չէր ստացել որևէ անսպասելի կամ ակնհայտ հավելումներ ընտանեկան եկամուտին: Դրա փոխարեն, սիրող Երկնային Հայրը պարգևել էր սովորական օրհնություններ հասարակ թվացող եղանակներով:



Քույր Բեդնարը միշտ հիշել է իր մորից ստացած այս կարևոր դասը օգնության մասին, որ տրվում է մեզ երկնքի պատուհանների միջոցով, ինչպես խոստացված է Մաղաքիայի գրքում Հին Կտակարանում (տես Մաղաքիա Գ.10):

Երբ սովորեցնում և վկայում ենք տասանորդի օրենքի մասին, հաճախ մենք շեշտում ենք անհապաղ տրվող, մեծ և անմիջապես նկատվող նյութական օրհնությունները, որ ստանում ենք: Եվ, իհարկե, նման օրհնություններ տրվում են: Այնուամենայնիվ, այս պատվիրանին հնազանդվելիս ստացվող բազմազան օրհնություններ կան, որոնք կարևոր, սակայն աննկատ են: Նման օրհնությունները կարող են նկատելի լինել միայն այն դեպքում, երբ մենք հոգևորապես զգոն ենք և դիտունակ (տես Ա Կորնթացիս Բ.14):

Մաղաքիայի կողմից օգտագործված «պատուհանների» խորհուրդը շատ ուսուցողական է: Պատուհանները թույլ են տալիս, որ բնական լույսը ներս թափանցի բնակարան: Նմանապես, երբ մենք պահում ենք տասանորդի օրենքը, երկնքի պատուհանների միջոցով հոգևոր լուսավորություն ու հեռատեսություն է թափանցում մեր կյանք:

Օրինակ, մեր ստացած աննկատ, սակայն կարևոր օրհնություններից է երախտապարտ լինելու հոգևոր օրհնությունը, որը հնարավորություն է տալիս, որ մենք գնահատենք այն, ինչ ունենք, զսպելով մեր ցանկությունները: Երախտապարտ անձը հարուստ է գոհունակությամբ: Երախտամոռ անձը տառապում է անվերջ ագահությունից բխող աղքատությունից (տես Ղուկաս ԺԲ.15):

Միգուցե մենք կարիք ունենք և աղոթում ենք հարմար աշխատանք գտնելու համար: Այնուամենայնիվ, հավատքի աչքեր և ականջներ է անհրաժեշտ (տես Եթեր 12.19), որ նկատենք մեծ խորաթափանցության հոգևոր պարգևը, որը կարող է զորացնել մեզ՝ նկատելու աշխատանքի հետ կապված հնարավորություններ, որոնք կարող են աննկատ մնալ այլ մարդկանց կողմից կամ տեսնել ավելի մեծ անձնական վճռականության օրհնությունը, որը մեզ օգնում է ավելի ջերմեռանդ և հետևողական ձևով աշխատանք փնտրել, քան այլ մարդիկ կկարողանան կամ կցանկանան դա անել: Մենք միգուցե ցանկանանք և ակնկալենք աշխատանքի հետ կապված առաջարկ, սակայն օրհնությունը, որ գալիս է մեզ երկնքի պատուհանների միջոցով, կարող է լինել ավելի մեծ ունակությունը գործելու և փոխելու մեր իսկ պայմանները, այլ ոչ թե ակնկալելը, որ մեր պայմանները կփոխվեն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի միջոցով:

Մենք միգուցե պատշաճ կերպով ցանկանանք և աշխատենք, որ արժանանանք աշխատավարձի բարձրացման, որ ավելի լավ կարողանանք ապահովել կյանքի կարիքները: Այնուամենայնիվ, պահանջվում է հավատքի աչքեր և ականջներ, որ մեր մեջ նկատենք ավելի քչով ավելի շատ բան անելու հոգևոր և նյութական կարողության աճ (տես Ղուկաս Բ.52), ավելի մեծ ունակություն առաջնահերթությունները որոշելիս ու պարզեցնելիս, և ավելի մեծ ունակություն մեր արդեն իսկ ունեցած նյութական ունեցվածքը պատշաճ տնօրինելիս: Մենք միգուցե ցանկանանք և ակնկալենք ավելի բարձր աշխատավարձ, սակայն օրհնությունը, որ գալիս է մեզ երկնային պատուհանների միջոցով, կարող է լինել ավելի մեծ ունակությունը փոխելու մեր իսկ պայմանները, այլ ոչ թե ակնկալելը, որ մեր պայմանները կփոխվեն ինչ-որ մեկի կամ ինչ-որ մի բանի միջոցով:

Մորմոնի գրքում պատանի զինվորները (տես Ալմա 53, 56–58) անկեղծորեն աղոթեցին, որ Աստված ուժեղացներ և ազատեր իրենց թշնամիների ձեռքից: Հետաքրքրականն այն էր, որ այս աղոթքների պատասխանը չտվեց լրացուցիչ զենքեր կամ զինվորների քանակի աճ: Այլ Աստված շնորհեց այս հավատարիմ զինվորներին հավաստիացում, որ Նա կազատեր նրանց, խաղաղություն նրանց հոգիներին և մեծ հավատք և հույս, որ Նա կազատի իրենց (տես Ալմա 58.11): Այսպիսով, Հելամանի որդիները քաջացան, հաղթելու վճռականությամբ ամրացան և իրենց ողջ ուժով առաջ գնացին լամանացիների դեմ (տես Ալմա 58.12–13): Հավաստիացումը, խաղաղությունը, հավատքը և հույսը սկզբում միգուցե չթվան օրհնություններ, որոնք պատերազմի դաշտում զինվորները կցանկանային, սակայն դրանք հենց այն օրհնություններն էին, որոնց կարիքն ունեին այս անվեհեր երիտասարդները, որ առաջ գնային և հաղթեին ֆիզիկապես և հոգեպես:

Երբեմն, մենք խնդրում ենք Աստծուց հաջողություն, և Նա տալիս է մեզ ֆիզիկական և մտավոր ուժ: Մենք խնդրում ենք բարեկեցություն, և մենք ստանում ենք

մեծ հեռանկարներ և ավելի շատ համբերություն կամ մենք խնդրում ենք հոգևոր աճ և օրհնվում ենք շնորհի պարգևով: Նա կարող է տալ մեզ վստահություն և համոզվածություն, երբ մենք ձգտում ենք հասնել արժանապատիվ նպատակների: Եվ երբ մենք աղերսում ենք, որ ազատվենք ֆիզիկական, մտավոր և հոգևոր դժվարություններից, Նա կարող է մեծացնել մեր վճռականությունը և տոկունությունը:

Ես խոստանում եմ, որ երբ ես և դուք հնազանդվենք և պահենք տասանորդի օրենքը, երկնքի պատուհաններն իսկապես կբացվեն և այնքան հոգևոր և նյութական օրհնություններ կթափվեն, որ դրանց համար բավականաչափ տեղ չի լինի (տես Մաղաքիա Գ.10): Մենք նաև կհիշենք Տիրոջ հայտարարությունը.

«Որովհետեւ իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը.

Այլ ինչպէս որ բարձր է երկինքը երկրից, նոյնպէս էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներիցը եւ իմ խորհուրդները ձեր խորհուրդներիցը» (Եսայիա ԾԵ.8–9):

Ես վկայում եմ, որ եթե մենք հոգևորապես պատրաստակամ և ուշադիր լինենք, մենք կօրհնվենք աչքերով, որոնք ավելի պարզ են տեսնում և ականջներով, որոնք ավելի հետևողական են լսում և սրտով, որն ավելի խորությամբ է ըմբռնում մեր կյանքում Նրա ճանապարհների, Նրա խորհուրդների և Նրա օրհնությունների կարևորությունը և աննկատությունը:

Թիվ 2 դաս՝ Տիրոջ ուղու պարզությունը

Նախքան որպես Տասներկուսի Քվորումի անդամ ծառայելու իմ կանչը ստանալը, Վարդապետություն և Ուխտերում ես շատ անգամ էի կարդացել սուրբ տասանորդի ֆոնդերը վերահսկելու և բաշխելու համար խորհուրդ նշանակելու մասին: Տասանորդի տնօրինման խորհուրդը ստեղծվել է հայտնությամբ և կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու

Առաքյալների Խորհրդից և Նախագահող Եպիսկոպոսությունից (տես ՎևՈՒ 120): Երբ 2004թ. դեկտեմբերին ես պատրաստվում էի այցելել այդ խորհրդի իմ առաջին ժողովին, ես անհամբերությամբ ակնկալում էի ամենանշանակալից սովորելու հնարավորություն:

Ես դեռևս հիշում եմ այն բաները, որ զգացի այդ խորհրդի ժամանակ: Ես ձեռք բերեցի ավելի մեծ երախտագիտություն և ակնածանք անհատների, ընտանիքների և Իր Եկեղեցու Ֆինանսների հետ կապված Տիրոջ օրենքների վերաբերյալ: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հիմնական ֆինանսական ծրագիրը՝ թե՛ եկամուտի և թե՛ ծախսի համար, սահմանված է Վարդապետություն և Ուխտերի 119 և 120 բաժիններում: Այս հայտնություններում գտնվող երկու հայտարարություններ հիմք են ապահովում Եկեղեցու ֆինանսական գործառույթների համար:

119 բաժինը պարզ կերպով նշում է, որ բոլոր անդամները «պետք է վճարեն իրենց տարեկան ամբողջ եկամուտի մեկ տասներորդը. և սա մնայուն օրենք պիտի լինի նրանց համար հավիտյան, . . . ասում է Տերը» (հատված 4):

Ապա, տասանորդները պաշտոնապես թույլատրված կարգով ծախսելու վերաբերյալ Տերն ասել է. «Այն պետք է տնօրինվի խորհրդի միջոցով, որը բաղկացած է Իմ Եկեղեցու Առաջին Նախագահությունից և եպիսկոպոսից ու նրա խորհրդից և իմ բարձրագույն խորհրդից, և նրանց ուղղված իմ իսկ ձայնով, ասում է Տերը» (ՎևՈՒ 120.1): Այս հայտնության մեջ նշված «եպիսկոպոսից ու նրա խորհրդից» և «իմ բարձրագույն խորհրդից» արտահայտություններն այսօր համապատասխանաբար հայտնի են որպես Նախագահող Եպիսկոպոսություն և Տասներկու Առաքյալների Քվորում: Այս սրբազան դրամական միջոցներն օգտագործվում են արագ աճող եկեղեցում, որպեսզի հոգևոր առումով օրհնեն անհատներին և ընտանիքներին, կառուցելով և վերանորոգելով տաճարներ և երկրպագության տներ, աջակցելով միսիոներական աշխատանքին, թարգմանելով և հրատարակելով սուրբ գրություններ, օժանդակելով ընտանեկան պատմության ուսումնասիրությանը, ֆինանսավորելով ուսումնական հաստատություններ և կրոնական կրթությունը, և իրագործելով Եկեղեցու շատ այլ

նպատակները, ինչպես ուղղորդվում են Տիրոջ կարգված ծառաները:

Ես հիանում եմ այս երկու հայտնությունների պարզությամբ և հակիրճությամբ, երբ համեմատում եմ բազմաթիվ կազմակերպություններում և ողջ աշխարհի կառավարություններում օգտագործվող խճճված ֆինանսական օրենքների և վարչական ընթացակարգերի հետ: Ինչպե՞ս կարող են ֆինանսական գործերը մի կազմակերպության, որն այնքան մեծ է, որքան Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին, հնարավորինս գործել ողջ աշխարհով մեկ՝ օգտագործելով այսպիսի հակիրճ հրահանգներ: Ինձ համար պատասխանը շատ պարզ է. սա Տիրոջ աշխատանքն է, Նա ի վիճակի է անելու Իր սեփական գործը (տես 2 Նեփի 27.20), և Փրկիչը ոգեշնչում և հրահանգներ է տալիս Իր ծառաներին, երբ նրանք կիրառում են Իր հրահանգները և առաջ են տանում Իր գործը:

Այդ առաջին խորհրդի ժողովին ես տպավորված էի սկզբունքների պարզությամբ, որոնք առաջնորդում էին մեր քննարկումներն ու որոշումները: Եկեղեցու ֆինանսական գործերի համար հետևում է երկու հիմնական և անփոփոխ սկզբունքների: Առաջինը՝ Եկեղեցին գոյատևում է իր միջոցների սահմաններում և չի ծախսում ավելին, քան ստանում է: Երկրորդը, տարեկան եկամուտից որոշ մաս մի կողմ է դրվում որպես պահուստ ճգնաժամերի և անսպասելի կարիքների համար: Տասնամյակներ շարունակ Եկեղեցին սովորեցրել է իր անդամներին լրացուցիչ սնունդ, վառելանյութ և փող տնտեսել հնարավոր արտակարգ իրավիճակների համար: Եկեղեցին, որպես հաստատություն, պարզ կերպով հետևում է նույն սկզբունքներին, որոնք շարունակաբար ուսուցանվում են անդամներին:

Մինչ ժողովը շարունակվում էր, ես հասկացա, որ կցանկանայի, որ Եկեղեցու բոլոր անդամները կարողանային տեսնել Իր Եկեղեցու նյութական միջոցները ղեկավարելու Տիրոջ իսկ ձևի (տես ՎԵՈՒ 104.16) պարզությունը, հստակությունը, կարգապահությունը, գթությունը և զորությունը: Այժմ արդեն ես մասնակցել եմ Տասանորդի տնօրինման խորհրդին շատ տարիներ: Իմ երախտագիտությունը և ակնածանքը Տիրոջ օրինաչափությունների հանդեպ մեծացել է ամեն տարի, և սովորած դասերը նույնիսկ ավելի խոր իմաստ են ձեռք բերել:

Իմ սիրտը սիրով և հիացմունքով է լցված ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի այս Եկեղեցու հավատարիմ և հնազանդ անդամների նկատմամբ: Մինչ ես շրջում եմ աշխարհով մեկ, ես տեղեկանում եմ ձեր հույզերի և երազանքների, ձեր զանազան ապրելու պայմանների և իրավիճակների և ձեր ունեցած դժվարությունների մասին: Ես ձեր հետ միասին այցելել եմ Եկեղեցու ժողովներին և այցելել եմ ձեզանից ոմանց տները: Ձեր հավատքը ուժեղացնում է իմ հավատքը: Ձեր նվիրվածությունը ինձ ավելի նվիրված է դարձնում: Եվ ձեր բարյացակամությունը և կամավոր հնազանդությունը տասանորդի օրենքին ոգեշնչում է ինձ լինել ավելի լավ մարդ, ամուսին, հայր և Եկեղեցու ղեկավար: Ես հիշում և մտածում եմ ձեր մասին ամեն անգամ, երբ մասնակցում եմ Տասանորդի տնօրինման խորհրդին: Շնորհակալություն ձեր ուխտերը պատվելու ձեր բարյացակամության և հավատարմության համար:

Տիրոջ վերականգնված Եկեղեցու առաջնորդները մեծ պատասխանատվություն են զգում, որ պատշաճորեն տնօրինեն Եկեղեցու անդամների սրբագործված նվիրատվությունները: Մենք քաջատեղյակ ենք որբևայրու լումայի սրբազան էությանը:

«Եւ Յիսուսը գանձանակի դիմացը նստած մտիկ էր անում, թէ ժողովուրդն ինչպէս էր փող գցում գանձանակը, եւ շատ հարուստներ շատ բաներ էին գցում:

Եվ մի աղքատ որբեւայրի եկավ երկու լումայ գցեց, որ մի նաքարակիտ է:

Եւ իր աշակերտներին իրան մօտ կանչեց, եւ ասեց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ այս ազքատ որբեւայրին գանձանակը գցողների ամենից ավելի գցեց:

Որովհետեւ ամենքն իրանց աւելորդիցը գցեցին. Բայց սա իր չքաւորութիւնիցը ամեն ինչ որ ունէր գցեց, իր կեանքի բոլոր ապրուստը» (Մարկոս ԺԲ.41–44):

Ես գիտեմ իմ անձնական փորձից, որ Տասանորդի տնօրինման խորհուրդը աչալուրջ կերպով է տնօրինում որբևայրու լուման: Ես երախտագիտություն եմ հայտնում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և իր խորհրդականներին իրենց արդյունավետ առաջնորդության համար այս սուրբ աշխատանքը կատարելիս: Եվ ես երախտագիտություն եմ հայտնում Տիրոջ ձայնի (տես ՎԵՈՒ 120.1) և ձեռքի համար, որ աջակցում է Իր կարգված ծառաներին՝ Իրեն ներկայացնելու պարտականությունը կատարելիս:

Հրավեր և վկայություն

Տասանորդի ազնիվ վճարումը շատ ավելին է, քան պարտականություն. այն կարևոր քայլ է անձնական սրբագործման գործընթացում: Ես գովաբանում եմ նրանց, ովքեր վճարում են իրենց տասանորդը:

Նրանց, ովքեր այժմ չեն հնազանդվում տասանորդի օրենքին. ես հրավիրում եմ ձեզ խորհել ձեր ճանապարհների մասին և ապաշխարել: Ես վկայում եմ, որ Տիրոջ այս օրենքի հանդեպ ձեր հնազանդության շնորհիվ երկնքի պատուհանները կբացվեն ձեզ համար: Խնդրում եմ, մի հետաձգեք ձեր ապաշխարության օրը:

Ես վկայում եմ, որ հոգևոր և նյութական օրհնություններ են ներթափանցում մեր կյանք, երբ ապրում ենք տասանորդի օրենքով: Ես բերում եմ իմ վկայությունը, որ այդ օրհնությունները հաճախ նշանակալից են, սակայն աննկատ: Ես նաև հայտարարում եմ, որ Տիրոջ ուղու պարզությունը, որն այնքան ակնհայտ է Իր Եկեղեցու նյութական գործերում, տալիս է օրինակներ, որոնք մեզ կարող են առաջնորդել որպես անհատներ և որպես ընտանիքներ: Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կարողանա սովորել և օգուտ քաղել այդ կարևոր դասերից. Հիսուս Քրիստոսի սուրբ անունով՝ ամեն: ■

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկե՛ք, միացեք մեզ

Անկախ ձեր հանգամանքներից, ձեր կյանքի պատմությունից կամ ձեր վկայության ուժից, ձեզ համար տեղ կա այս Եկեղեցում:

Ի մարդ կար, ով երազում տեսել էր, թե մի մեծ դահլիճում էր, որտեղ հավաքվել էին աշխարհի բոլոր կրոնները: Նա գիտակցեց, որ յուրաքանչյուր կրոն, կարծես, բաղձալի և արժանապատիվ շատ բաներ ունի:

Նա հանդիպեց մի հաճելի ամուսնական զույգի, որոնք ներկայացնում էին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, և հարցրեց. «Ի՞նչ եք *դուք* պահանջում ձեր անդամներից»:

«*Մենք* ոչինչ չենք պահանջում, – պատասխանեցին նրանք, – սակայն *Տերը* պահանջում է, որ պատրաստ լինենք ամեն ինչ նվիրաբերել»:

Ամուսինները սկսեցին բացատրել Եկեղեցու կոչումները, տնային և այցելությամբ ուսուցումը, լիաժամկետ միսիայում ծառայելը, շաբաթական ընտանեկան երեկոները, տաճարի աշխատանքը, բարօրության և մարդասիրական ծառայությունները և ուսուցանելու առաջադրանքները:

«Դուք վճարո՞ւմ եք ձեր ժողովրդին այն բոլոր գործերի համար, ինչ նրանք կատարում են», – հարցրեց մարդը:

«Օ՜, ոչ, – բացատրեցին ամուսինները: – Նրանք անհատույց տրամադրում են իրենց ժամանակը»:

«Բացի այդ, – շարունակեցին նրանք, – յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ շաբաթավերջին, մեր Եկեղեցու անդամները ծախսում են 10 ժամ հաճախելու կամ դիտելու զերագույն համաժողով»:

«Տասը ժամ մարդկանց համար խոսո՞ւմ են», – մտածեց մարդը:

«Իսկ ի՞նչ կասեք ձեր շաբաթական եկեղեցական ծառայությունների մասին: Որքա՞ն են դրանք տևում»:

«Երեք ժամ, ամե՛ն կիրակի»:

«Օ՜, ոչ, – ասաց մարդը: – Եվ ձեր եկեղեցու անդամներն իրականում անո՞ւմ են այն, ինչ դուք ասացիք»:

«Այո՛, և ավելին: Մենք չնշեցինք ընտանեկան պատմությունը, երիտասարդական ճամբարները, հոգևոր երեկոները, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, ղեկավարների վերապատրաստումը, երիտասարդների միջոցառումները, վաղ առավոտյան սեմինարիան, Եկեղեցու շենքերի մաքրությունը, և, իհարկե, կա նաև Տիրոջ առողջության օրենք, աղքատներին օգնելու համար ամսվա մեջ մեկ անգամ ծոմապահություն և տասանորդ»:

Մարդն ասաց. «Ես շփոթված եմ: Ինչո՞ւ պետք է որևէ մարդ ցանկանա միանալ նման Եկեղեցու»:

Ամուսինները ժպտացին ու ասացին. «Մենք կարծում էինք, դա ձեզ չի հետաքրքրի»:

Ինչո՞ւ պետք է որևէ մարդ միանա նման Եկեղեցու:

Այն ժամանակ, երբ շատ եկեղեցիներ ողջ աշխարհում զգալի նվազում են թվաքանակով, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, թեև փոքր է ի համեմատ շատ այլ կրոնների, ամենաարագ աճող եկեղեցիներից մեկն է աշխարհում: 2013թ. սեպտեմբերի դրությամբ Եկեղեցին ունի ավելի քան 15 միլիոն անդամ ողջ աշխարհում:

Դրա համար կան բազմաթիվ պատճառներ. թույլ տվեք առաջարկեմ մի քանիսը:

Փրկչի Եկեղեցին

Նախ՝ այս Եկեղեցին մեր օրերում վերականգնվել է Ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Այստեղ դուք կգտնեք Իր անունից գործելու իշխանություն՝ մկրտելը մեղքերի թողության համար, շնորհելը Սուրբ Հոգու պարգևը և կնքելը երկրի վրա ու երկնքում:[1]

Այս Եկեղեցուն միացողները սիրում են Փրկիչ Հիսուս Քրիստոսին և ցանկանում են հետևել Նրան: Նրանք ուրախանում են գիտելիքով, որ Աստված կրկին խոսում է մարդկության հետ: Երբ նրանք ստանում են սուրբ քահանայության արարողությունները և ուխտեր են կապում Աստծո հետ, նրանք զգում են Նրա զորությունն իրենց կյանքում:[2] Երբ մտնում են սուրբ տաճար, նրանք զգում են, որ Նրա ներկայության մեջ են: Երբ կարդում են սուրբ գրությունները[3] և ապրում են Նրա մարգարեների ուսմունքներով, նրանք ավելի են մոտենում Փրկչին, ում այդքան սիրում են:

Գործուն հավատք

Մյուս պատճառն այն է, որ Եկեղեցին բարիք գործելու հնարավորություններ է տալիս:

Աստծուն հավատալը գովելի է, բայց մարդկանց մեծ մասը ցանկանում է անել ավելին, քան ոգեշնչող քարոզներ լսելը կամ երկնային ապարանքների մասին երազելը:[4] Նրանք ցանկանում են գործի դնել

իրենց հավատքը: Նրանք ցանկանում են թևքերը կշտել և ջանքեր ներդնել այս մեծ գործում:

Եվ ահա, թե ինչ է տեղի ունենում, երբ նրանք միանում են մեզ՝ նրանք շատ հնարավորություններ են ստանում բարի գործի վերածելու իրենց տաղանդները, կարեկցանքը և ժամանակը: Քանի որ աշխարհասփյուռ համայնքներում մենք չունենք վճարվող տեղական հոգևորականություն, մեր անդամները իրենք են կատարում սպասավորության աշխատանքը: Նրանք կանչվում են ոգեշնչմամբ: Երբեմն, ինքներս ենք առաջարկում կամավոր ծառայություն, երբեմն էլ՝ ուրիշներն են *մեզ* հանձնարարում «կամավոր» ծառայություն: Այդպիսի հանձնարարությունները մենք դիտում են ոչ թե որպես բեռ, այլ հնարավորություն իրականացնելու սիրով կապած մեր ուխտերը՝ ծառայելու Աստծուն և Նրա զավակներին:

Թանկագին օրհնություններ

Երրորդ պատճառը, թե ինչու են մարդիկ միանում Եկեղեցուն, այն է, որ աշակերտության ճանապարհով քայլելը բերում է թանկարժեք օրհնություններ:

Մենք դիտում ենք մկրտությունը որպես աշակերտության մեր ճանապարհի սկիզբ: Հիսուս Քրիստոսի հետ ամեն օր քայլելը բերում է խաղաղություն և նպատակ այս կյանքում և լիակատար ուրախություն և հավերժական փրկություն գալիք աշխարհում:

Նրանք, ովքեր հավատարմորեն հետևում են այս ճանապարհին, խուսափում են կյանքի շատ որոգայթներից, վշտից ու ափսոսանքից:

Հոգով աղքատները և սրտով մաքուրներն այստեղ գտնում են գիտության մեծ գանձեր:

Տառապյալներն ու վշտաբեկներն այստեղ գտնում են ապաքինում:

Մեղքով ծանրաբեռնվածները գտնում են մեղքի ներում, ազատություն և հանգստություն:

Նրանց, ովքեր հեռանում են

Ճշմարտության որոնումները միլիոնավոր մարդկանց են բերել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի: Սակայն կան ոմանք, ովքեր լքել են ժամանակին սիրված Եկեղեցին:

Կարելի է հարցնել. «Եթե ավետարանը այդքան հրաշալի է, ինչո՞ւ է որևէ մարդ հեռանում»:

Երբեմն, մենք ենթադրում ենք, որ դա այն պատճառով է, որ նրանք վիրավորվել են կամ ծուլացել կամ մեղքի մեջ ընկել: Իրականում, դա այդքան էլ հասարակ հարց չէ: Փաստորեն, չկա միայն մեկ պատճառ, որը կիրառելի լինի բոլոր իրավիճակներին:

Մեր թանկագին անդամներից ոմանց տարիներ շարունակ մտատանջում է այն հարցը, թե արդյոք պետք է իրենք առանձնանան Եկեղեցուց:

Այս Եկեղեցին հարգում է անձի կամքի ազատությունն այնքան ուժեղ, որ վերականգնվել է մի պատանիի կողմից, ով հարցեր էր տալիս և պատասխաններ էր փնտրում, այնպես որ մենք հարգում ենք նրանց, ովքեր ազնվորեն փնտրում են ճշմարտությունը: Մեր սիրտը կոտրվում է, երբ նրանց որոնումների ճանապարհը նրանց հեռու է տանում մեր սիրված Եկեղեցուց ու մեր գտած ճշմարտություններից, սակայն մենք հարգում ենք սեփական խղճի թելադրանքով Ամենազոր Աստծուն երկրպագելու նրանց իրավունքը՝ ճիշտ այնպես, ինչպես պահանջում ենք այդ արտոնությունը մեզ համար:[5]

Անպատասխան հարցեր

Ոմանց անհանգստացնում են անպատասխան հարցերը բաների մասին, որոնք արվել կամ ասվել են անցյալում: Մենք բացահայտ ընդունում ենք, որ մոտ 200 տարվա Եկեղեցու պատմության մեջ, որն ուղեկցվել է ոգեշնչված, պատվարժան և աստվածային իրադարձությունների չընդհատվող շարանով, ասվել և արվել են բաներ, որոնք, հնարավոր է, մարդկանց մոտ հարցեր առաջացրած լինեն:

Երբեմն, հարցերն առաջանում են, քանի որ մենք պարզապես չունենք ամբողջական տեղեկություն, և մենք, պարզապես, պետք է մի քիչ ավելի համբերատար լինենք: Երբ ողջ ճշմարտությունն, ի վերջո, հայտնի է դառնում, անտրամաբանական բաները հասկանալի են դառնում՝ ի բավարարվածություն մեզ:

Երբեմն, կա կարծիքների տարբերություն, թե որոնք են իրական «փաստերը»: Մի հարց, որը ստեղծում է կասկած մեկի մոտ, մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո կարող է հավատքն ամրապնդելու փորձառություն դառնալ մյուսի համար:

Անկատար մարդկանց սխալները

Եվ եթե կատարելապես անկեղծ լինենք, եղել են դեպքեր, երբ Եկեղեցու անդամները կամ ղեկավարները պարզապես սխալ են թույլ տվել: Հնարավոր է ասված կամ արված լինեն բաներ, որոնք համահունչ չեն եղել մեր արժեքներին, սկզբունքներին կամ վարդապետությանը:

Կարծում եմ, որ Եկեղեցին կատարյալ կլիներ, եթե ղեկավարվեր կատարյալ էակների կողմից: Աստված կատարյալ է, և Նրա

վարդապետությունը մաքուր է: Բայց Նա աշխատում է մեր՝ Իր անկատար զավակների միջոցով, իսկ անկատար մարդիկ թույլ են տալիս սխալներ:

Մորմոնի Գրքի տիտղոսաթերթում կարդում ենք. «Եվ արդ, եթե կան թերություններ, դրանք մարդկանց սխալներն են, ուստի, մի դատապարտեք Աստուծո բաները, որպեսզի դուք կարողանաք անբիծ համարվել Քրիստոսի ատյանի առաջ»:[6]

Այդպիսին է եղել ուղին և միշտ այդպես կլինի, մինչև կատարյալ օրը, երբ Քրիստոսն Ինքը անձամբ կթագավորի երկրի վրա:

Ցավալի է, որ ոմանք գայթակղվել են մարդկանց կողմից թույլ տված սխալների պատճառով: Սակայն, չնայած դրան, վերականգնված ավետարանի հավերժական ճշմարտությունը, որ գտնվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, ոչ խամրել է, ոչ նվազել, ոչ էլ՝ ոչնչացել:

Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ և որպես մեկը, ով անձամբ մասնակցել է այս Եկեղեցու խորհուրդներին ու գործառույթներին, ես հանդիսավոր վկայում եմ, որ այս Եկեղեցու կամ նրա անդամների հետ կապված ոչ մի նշանակալի որոշում երբևէ չի կայացվում առանց լրջորեն ոգեշնչում, առաջնորդություն և վավերացում փնտրելու մեր Հավերժական Հոր կողմից: Սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է: Աստված թույլ չի տա, որ Իր Եկեղեցին շեղվի իր նշանակված ուղուց, ոչ էլ, որ թերանա իրականացնել իր աստվածային ճակատագիրը:

Գցատեմալա Սիթի, Գվատեմալա

Այստեղ ձեզ համար տեղ կա

Իմ խոսքն եմ հղում նրանց, ովքեր առանձնացել են Եկեղեցուց, և ասում եմ՝ իմ թանկագին ընկերներ, այստեղ ձեզ համար դեռ տեղ կա:

Եկեք և ձեր տաղանդները, պարգևները և էներգիան ավելացրեք մերին: Արդյունքում մենք բոլորս ավելի լավը կդառնանք:

Ոմանք հնարավոր է մտածեն. «Իսկ ի՞նչ անեմ իմ կասկածների հետ»:

Հարցեր ունենալը բնական բան է. ազնիվ հարցման կաղինը հաճախ սերմ է դառնում և, աճելով, ըմբռնման մեծ կաղնու վերածվում: Կան Եկեղեցու անդամներ, որոնք ոչ մի անգամ ջանք չեն թափել լուրջ կամ զգայուն հարցերի պատասխաններ գտնելու համար: Եկեղեցու նպատակներից մեկը հավատքի սերմը սնուցելն ու մշակելն է, երբեմն, նույնիսկ կասկածի և անորոշության ավազոտ հողում: Հավատքը հույս է բաների մասին, որոնք չենք տեսնում, բայց որոնք ճշմարիտ են:[7]

Ուստի, իմ սիրելի եղբայրներ և քույրեր՝ իմ սիրելի ընկերներ, խնդրում եմ, առաջին հերթին ձեր կասկածները կասկածի տակ դրեք, հետո նոր ձեր հավատքը:[8] Մենք երբեք չպետք է թույլ տանք, որ կասկածը մեզ գերի դարձնի և մեզ ետ պահի աստվածային սիրուց, խաղաղությունից և պարգևներից, որոնք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսի հավատքով:

Ոմանք, հնարավոր է, ասեն. «Ես պարզապես ինձ չեմ պատկերացնում ձեր Եկեղեցու մարդկանց շարքում»:

Եթե դուք տեսնեիք ձեր սրտի խորքը, հավանաբար, կնկատեիք, որ դուք համապատասխանում եք ավելի լավ, քան կարծում եք: Դուք, հնարավոր է, զարմանայիք, որ մենք ունենք միևնույն ձգտումները, դժվարությունները և հույսերը, ինչ դուք: Ձեր անցած ճանապարհը կամ դաստիարակությունը կարող է տարբեր թվալ նրանից, ինչ դուք լսել եք Վերջին Օրերի Սրբերի մասին, սակայն դա կարող է օրհնություն լինել: Եղբայրներ և քույրեր, սիրելի ընկերներ, մեզ պետք են ձեր ուրույն տաղանդներն ու հեռանկարները: Մարդկանց և ժողովուրդների բազմազանությունը ողջ աշխարհով մեկ այս Եկեղեցու ուժն է:

Ոմանք, հնարավոր է, ասեն. «Ես չեմ կարծում, որ կարող եմ ապրել ըստ ձեր չափանիշների»:

Դա գալու ավելի մեծ առիթ է: Եկեղեցին նախատեսված է սնուցելու թերի մարդկանց, մաքառողներին և ուժասպառներին: Այն լի է մարդկանցով, ովքեր ողջ սրտով *ցանկանում* են պահել պատվիրանները, նույնիսկ եթե նրանք դեռ չեն *սերտել* դրանք:

Ոմանք, հնարավոր է, ասեն. «Ես գիտեմ ձեր Եկեղեցու մի անդամի, որը կեղծավոր է: Ես երբեք չեմ կարող միանալ մի եկեղեցու, որի անդամը նման մարդ է»:

Եթե, ըստ ձեզ, *կեղծավորն* այն մարդն է, որը թերանում է կատարելապես ապրել իր համոզմունքներով, ապա մենք բոլոր կեղծավորներ ենք: Մեզանից ոչ ոք էլ այնքան Քրիստոսանման չէ, որքան գիտենք, որ պետք է լինենք: Այնուամենայնիվ, մենք լրջորեն ցանկանում ենք հաղթահարել մեր թուլությունները և մեղք գործելու միտումները: Մեր սրտով և հոգով մենք ձգտում ենք

դառնալ ավելի լավը Հիսուս Քրիստոսի Քավության օգնությամբ:

Եթե դրանք նաև ձեր ցանկություններն են, ապա անկախ ձեր հանգամանքներից, ձեր անձնական պատմությունից կամ ձեր վկայության ուժից, ձեզ համար տեղ կա այս Եկեղեցում:

Եկե՛ք, միացեք մեզ:

Չնայած մեր մարդկային թերություններին, վստահ եմ, որ այս Եկեղեցու անդամների միջև դուք կգտնեք լավագույն հոգիներից շատերին, որ այս աշխարհն ունի առաջարկելու: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, կարծես, թե գրավում է բարի և հոգատար, ազնիվ և աշխատասեր մարդկանց:

Եթե դուք ակնկալեք այստեղ գտնել կատարյալ մարդկանց, դուք կհիասթափվեք: Սակայն, եթե դուք փնտրում եք Քրիստոսի մաքուր վարդապետությունը՝ վիրավոր հոգին ամոքող Աստծո խոսքը»[9] և Սուրբ Հոգու սրբագործող ազդեցությունը, ապա այստեղ դուք կգտնեք դրանք: Թուլացող հավատքի այս դարաշրջանում, մի ժամանակաշրջան, երբ այնքան շատերն են երկնային ընդունելությունից օտարացած զգում, այստեղ դուք կգտնեք մարդկանց, ովքեր ձեզ պես ձգտում են իմանալ և մոտենալ իրենց Փրկչին՝ ծառայելով Աստծուն և մերձավորին: Եկե՛ք, միացեք մեզ:

Մի՞թե դուք էլ եք ուզում հեռանալ:

Մտաբերում եմ Փրկչի կյանքի մի դրվագ, երբ շատերը լքեցին Նրան:[10] Հիսուսը հարցրեց Իր տասներկու աշակերտներին.

«Մի՞թէ դուք էլ ուզում էք գնալ:

Սիմօն Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենական կեանքի խօսքեր ունիս դու»:[11]

Կան ժամանակներ, երբ մենք պետք է պատասխանենք նույն հարցին: Մի՞թե մենք էլ ենք ուզում հեռանալ: Թե՞ մենք՝ Պետրոսի նման, կառչած ենք մնում հավերժական կյանքի խոսքերին:

Եթե դուք ճշմարտություն, իմաստ և հավատքը գործերի վերափոխելու ուղի եք փնտրում, եթե դուք Աստծո ընտանիքին պատկանելու տեղ եք փնտրում, ապա՝ Եկե՛ք, միացեք մեզ:

Եթե դուք ժամանակին հարել եք այս հավատքին, բայց հետո հեռացել եք, վերադարձե՛ք ետ: Միացե՛ք մեզ:

Եթե դուք հանձնվելու գայթակղություն եք զգում, դիմացեք ևս մի փոքր: Այստեղ ձեզ համար տեղ կա:

Ես խնդրանք եմ հղում բոլոր նրանց, ովքեր լսում կամ կարդում են այս խոսքերը. Եկե՛ք, միացեք մեզ: Եկե՛ք, ուշք դարձրեք մեղմ Քրիստոսի կանչին: Վերցրեք ձեր խաչը և հետևեք Նրան:[12]

Եկե՛ք, միացեք մեզ, քանի որ այստեղ դուք կարող եք գտնել այն, ինչ թանկ է, նույնիսկ անգին:

Ես վկայում եմ, որ այստեղ դուք կգտնեք հավերժական կյանքի խոսքերը, օրհնված փրկագնման խոստումը և խաղաղության ու երջանկության ճանապարհը:

Իմ ջերմեռանդ աղոթքն է, որ ճշմարտության ձեր անձնական որոնումները ձեր սրտում ցանկություն առաջացնեն գալ և միանալ մեզ: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■



ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մատթեոս 16.18–19; Հելաման 10.7:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20:
3. Տես 2 Նեփի 33.10:
4. Տես “Have I Done Any Good?” *Hymns,* no. 223:
5. Տես Հավատո հանգանակներ 1.11:
6. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ; տես Մորմոն 8.17:
7. Տես Եբրայեցիս 11.1; Ալմա 32.21:
8. Տես F. F. Bosworth, *Christ the Healer* (1924), 23:
9. Հակոբ 2.8:
10. Տես Հովհաննես 6.66:
11. Հովհաննես 6.67–68:
12. Տես Մատթեոս 16.24:

Ներկայացրեց Նախագահ Հենրի Բ. Այրինգը
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բենյոն Այրինգը որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քենեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում են ազատման Երեցներ Ջոն Բ. Դիքսոնը, Փոլ Ե. Քոլիքերը և Ֆ. Մայքլ Վաթսոնը որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամներ, և նշանակվել որպես պատվավոր Բարձրագույն Իշխանություններ:

Առաջարկվում է նաև ազատել Երեց Քենթ Դ. Վաթսոնին որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ:

Նաև մեր հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում Երեցներ Սեզար Հ. Հուքերին և Քրեյգ Տ. Ռայթին, ովքեր ազատվել են որպես Տարածքային Յոթանասունականներ իրենց ծառայությունից:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել այս Եղբայրներին իրենց գերազանց ծառայության համար, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային Յոթանասունականներ՝ Խուլիո Ա. Անգուլո, Պիտեր Ֆ. Էվանս և Գեննադի Պոդվոդովը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Ռանդալ Լ. Ռիդը որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են ևս քվեարկել:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի, ձեր շարունակական հավատքի և մեզ համար ասված աղոթքների համար: ■

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Հոգևոր պաշտպանության բանալին

Խաղաղություն կարող է հաստատվել յուրաքանչյուրի սրտում, ով դառնում է դեպի սուրբ գրությունները և բացահայտում է պաշտպանության և քավության խոստումները:

Վերջերս ես մի երիտասարդ զույգ կնքեցի տաճարում: Այս զույգն իրեն արժանի էր պահել հասնելու համար այն հրաշալի օրվան, երբ որդին ու դուստրը թողնում են իրենց պատանեկության տունը և դառնում են ամուսին և կին: Այս սուրբ իրադարձությանը նրանք անբիծ էին և մաքուր: Ժամանակի ընթացքում նրանք կսկսեն մեծացնել իրենց սեփական երեխաներին՝ համաձայն այն օրինակի, որը հաստատել է մեր Երկնային Հայրը: Նրանց երջանկությունը և գալիք սերունդների երջանկությունը կախված է Փրկչի կողմից հաստատված և Նրա սուրբ գրություններում տրված չափանիշներով ապրելուց:

Ծնողներն այսօր մտածում են, թե որտեղ *կա* ապահով վայր իրենց երեխաներին մեծացնելու համար: Կա ապահով վայր: Դա ավետարանի վրա հիմնված տունն է: Մենք կենտրոնանում ենք ընտանիքի վրա Եկեղեցում և մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին ամենուր մեծացնել իրենց երեխաներին արդարության մեջ:

Պողոս Առաքյալը մարգարեացել և նախազգուշացրել է, որ «յետի օրերումը չար ժամանակներ կգան:

Որովհետեւ մարդիկ կլինին ինքնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ,

Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսէր,

Մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր:

Որ աստուածապաշտութեան կերպարանքն ունին, բայց նորա զօրութիւնն ուրացած են. նորանցից էլ ետ քաշուիր»:[1]

Պողոսը նաև մարգարեացել է. «Չար եւ խաբեբայ մարդիկն յառաջ կգնան չարութեան մեջ, մոլորեցնելով եւ մոլորելով»:[2]

Այս հատվածները ծառայում են որպես նախազգուշացում, ցույց տալով, թե որ օրինակներից խուսափենք: Մենք պետք է միշտ ուշադիր լինենք և ջանասեր: Մենք կարող ենք վերանայել այս մարգարեություններից յուրաքանչյուրը և ստուգանիշ դնել, որ դրանք առկա են այսօր աշխարհում և անհանգստության պատճառ են.

Չար ժամանակներ՝ առկա է: Մենք ապրում ենք շատ չար ժամանակներում:

Արծաթասեր, ամբարտավան, հպարտ, – բոլորն էլ առկա է և մեր մեջ է:

Հայհոյիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, – այս ամենի մասին մենք քաջատեղյակ ենք:

Անհաշտ, բանսարկու, և այլն, – այս ամենն էլ լայնորեն տարածված է մեր շուրջ բոլորը:

Մորոնին նույնպես խոսել է մեր օրերի ամբարշտության մասին, երբ նա նախազգուշացրել է.

«Երբ դուք տեսնեք այս բաները ձեր մեջ առաջանալիս . . . դուք զարթնեք՝ ի զգացումն ձեր սոսկալի դրության . . .

Ուստի, ինձ՝ Մորոնիիս, պատվիրվել է գրել այս բաները, որպեսզի չարիքը վերանա, և որպեսզի գա ժամանակը, երբ Սատանան իշխանություն չի ունենա մարդկանց զավակների սրտերի վրա, այլ որպեսզի նրանք համոզվեն բարիք անել շարունակ, որպեսզի գան դեպի բոլոր արդարության ակունքը և փրկվեն»:[3]

Մեր օրերի մասին տված Պողոսի և Մորոնիի նկարագրություններն այնքան ճշգրիտ են, որ չեն կարող չնկատվել: Շատերի համար դա կարող է բավականաչափ տագնապալի լինել, նույնիսկ հուսալքող: Այնուամենայնիվ, երբ ես մտածում եմ ապագայի մասին, ես լցվում եմ դրական լավատեսության զգացումներով:

Պողոսի հայտնության մեջ, ի լրումն դժվարությունների և խնդիրների ցանկին, նա ասում է մեզ, թե ինչ կարող ենք մենք անել, որ պաշտպանենք մեզ.

«Բայց դու հաստատ կաց նորանցում, որ սովորեցիր եւ հաւատացիր. եւ գիտենալով թէ ումից սովորեցիր.

Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը գիտես, որ կարող են

քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն է»:[4]

Սուրբ գրությունները կրում են հոգևոր պաշտպանության բանալիները: Դրանք պարունակում են վարդապետությունը և օրենքը և արարողությունները, որ Աստծո յուրաքանչյուր զավակի կտան վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, որպես Փրկիչ և Քավիչ:

Նախապատրաստվելով տարիների ընթացքում՝ հսկայական ջանքեր են գործադրվել, որ սուրբ գրությունները հրատարակվեն ամեն լեզվով՝ տողատակի ծանոթագրություններով և հղումներով: Մենք ջանում ենք դրանք մատչելի դարձնել բոլորի համար, ովքեր ցանկանում են սովորել: Դրանք սովորեցնում են մեզ, թե ուր գնալ և ինչ անել: Դրանք առաջարկում են հույս և գիտելիք:

Տարիներ առաջ, Յոթանասունի քվորումից Երեց Ս. Դիլվորթ Յանգը տվել է ինձ մի դաս սուրբ գրությունները կարդալու մասին: Ցցում անդամների միջև կային տարաձայնություններ ու դժվարություններ և խորհուրդ տալու կարիք կար:

Ես հարցրեցի Նախագահ Յանգին. «Ինչ պետք է ես ասեմ»:

Նա պարզապես պատասխանեց. «Ասեք նրանց, որ կարդան սուրբ գրությունները»:

Ես հարցրեցի. «Ո՞ր սուրբ գրությունները»:

Նա ասաց. «Իրականում դա կարևոր չէ: Ասեք նրանց, որ բացեն Մորմոնի Գրքի պատահական մի էջ և սկսեն կարդալ: Շուտով կգա խաղաղության և ոգեշնչման զգացումը և կգտնվի լուծումը»:

Սուրբ գրությունների ընթերցումը դարձրեք ձեր առօրյայի մի մասը և օրհնություններ կհետևեն դրան: Սուրբ գրություններում կա նախազգուշացնող ձայն, սակայն այնտեղ նաև կա մեծ ուժ:

Եթե սուրբ գրությունների լեզուն նախ ձեզ խիստ թվա, շարունակեք կարդալ: Շուտով դուք կսկսեք տեսնել այդ էջերում գտնվող զեղեցկությունը և զորությունը:

Պողոսն ասել է. «Ամեն Գիրք աստուածաշունչ են եւ օգտակար՝



վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան խրատելու համար»:[5]

Դուք կարող եք ինքներդ փորձել այս խոստումը:

Մենք ապրում ենք չար ժամանակներում. այնուամենայնիվ, մենք կարող ենք հույս և խաղաղություն գտնել մեր և մեր ընտանիքների համար: Նրանք, ովքեր ապրում են վշտի մեջ, հույս չունեն, որ հնարավոր կլինի փրկել երեխաներին այնտեղից, որտեղ աշխարհը հասցրել է նրան, երբեք չպետք է հուսալքվեն: «Մի վախենար, բայց միայն հաւատա»:[6] Արդարությունն ավելի զորավոր է, քան ամբարշտությունը:

Երեխաները, որոնց կյանքի վաղ շրջանում ուսուցանում են հասկանալ սուրբ գրությունները, կիմանան, թե որ ճանապարհով պիտի քայլեն և ավելի հակված կլինեն մնալու այդ ճանապարհին: Նրանք, ովքեր շեղվեն, հնարավորություն կունենան վերադառնալ, և օգնություն ստանալով, կկարողանան գտնել վերադարձի ճամփան:

Մոսիայի որդիները մի առ ժամանակ պայքարում էին Եկեղեցու դեմ, սակայն հետագայում ապաշխարեցին և զորեղ փոփոխության փորձառություն ունեցան: Ալմայում մենք կարդում ենք. «Մոսիայի այս որդիները . . . դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ. քանզի նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին, և նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը»:[7]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հինգ տարեկան էր, երբ նրա հայրը՝ Հայրումը, սպանվեց Քարթեջի բանտում: Ավելի ուշ Ջոզեֆը տափաստաններ անցավ իր այրի մոր հետ:

15 տարեկանում նա կանչվեց միսիայի Հավայան Կղզիներում: Նա իրեն մոլորված և միայնակ էր զգում և ասել է. «Ես շատ ճնշված էի . . . Ես այնքան նվաստ էի զգում իմ աղքատության, ընդունակության և գիտելիքի պակասի պատճառով, ընդամենը մի տղա, որ չէի համարձակվում նայել [որևէ մեկի] դեմքին»:

Մի գիշեր, մինչ խորհում էր իր դժվար կացության մասին, պատանի Ջոզեֆը երազ տեսավ, որտեղ նա ճամփորդում էր՝ սլանալով այնքան արագ, որքան կարող էր: Նա իր հետ տանում էր մի փոքրիկ կապոց: Ի վերջո, նա հասավ մի հրաշալի ապարանքների, որը նրա ճամփորդության վերջնակետն էր: Երբ նա մոտեցավ, նա տեսավ մի նշան, որի վրա կարդաց՝ «Լոգարան»: Նա արագ ներս մտավ և լոգանք ընդունեց: Նա բացեց իր փոքրիկ կապոցը և գտավ մաքուր, սպիտակ հանդերձներ: «Մի բան,– ասել է նա,– «ինչ ես չէի տեսել երկար ժամանակ»: Նա հագավ դրանք և սլացավ դեպի ապարանքների դուռը:

«Ես թակեցի դուռը, – ասաց նա,– և դուռը բացվեց, և մարդը, ով կանգնած էր այնտեղ, Մարգարե Ջոզեֆ Սմիթն էր: Նա նայեց ինձ մի փոքր հանդիմանությամբ, և առաջին բառերը, որ ասաց, [հետևյալն էին]. «Ջոզե՛ֆ, դու ուշացել ես»: Սակայն, ես վստահություն հավաքեցի և ասացի.

«Այո՛, սակայն ես մաքուր եմ. ես մաքո՛ւր եմ»:[8]

Եվ այսպես, դա կարող է պատահել մեզանից յուրաքանչյուրի հետ:

Եթե դուք բռնել եք հավատքի և Եկեղեցում ակտիվ լինելու ուղին, մնացեք ուղու վրա և պահեք ձեր ուխտերը: Շարունակեք առաջ գնալ, մինչև կգա ժամանակը, երբ դուք կստանաք Տիրոջ օրհնությունները և Սուրբ Հոգին կտրվի որպես ձեր

Պանամա Սիթի, Պանամա

կյանքի առաջնորդող ուժ:

Եթե դուք այժմ բռնել եք մի ուղի, որը ձեզ հեռու է տանում սուրբ գրություններում նշված ուղուց, թույլ տվեք ինձ հավաստիացնել ձեզ, որ կա վերադարձի ճանապարհ:

Հիսուս Քրիստոսը տվել է շատ պարզ միջոց մեզ համար, որ ապաշխարենք և գտնենք բուժում մեր կյանքում: Շատ սխալների համար դեղամիջոց կարող է հանդիսանալ ներում փնտրելը անձնական աղոթքի միջոցով: Այնուամենայնիվ, կան որոշակի հոգևոր հիվանդություններ, հատկապես այն դեպքերում, երբ դրանք կապված են բարոյական օրենքի խախտումների հետ, որոնք միանշանակ պահանջում են որակված հոգևոր բժշկի աջակցությունն ու բուժումը:

Տարիներ առաջ իմ գրասենյակ եկան մի երիտասարդ կին և նրա տարիքով հայրը: Աղջիկը հորը հարյուրավոր մղոններ էր բերել, որպեսզի նա սպեղանի գտներ իր մեղքի զգացումից: Երիտասարդ տարիքում նա գործել էր մի լուրջ սխալ, և իր ծեր տարիքում այդ հիշողությունը կրկին վերադառնում էր: Նա չէր կարողանում ազատվել մեղքի զգացումից: Նա չէր կարող վերադառնալ և լուծել իր երիտասարդության խնդիրն ինքնուրույն, սակայն նա կարող էր սկսել այնտեղից, որտեղ գտնվում էր այժմ, և օգնություն ստանալով, ջնջել մեղքի զգացումը, որը հետևել էր նրան այդ բոլոր տարիների ընթացքում:

Ես երախտապարտ էի, որ ուսուցանելով նրան սկզբունքներ Մորմոնի Գրքից, կարծես թե մեծ բեռ վերցվեց նրա ուսերից: Երբ նա և նրա աղջիկը ետ վերադարձան տուն, անցնելով այդ հարյուրավոր մղոնները, ծեր տղամարդը հետևում թողեց նախկին օրինազանցության մեղքի զգացումը:

Եթե դուք «զարթնեք՝ ի զգացումն ձեր սոսկալի դրության»[9] և ցանկանաք վերականգնել ձեր լիարժեք հոգևոր առողջությունը, այցելեք ձեր եպիսկոպոսին: Նա կրում է բանալիները և կարող է օգնել ձեզ անցնելու ապաշխարության ուղին:

Ապաշխարությունը անհատական է, և ներումը նույնպես: Տերը միայն պահանջում է, որ մարդիկ ետ դառնան իրենց մեղքից, և «[Նա] կների նրանց անօրինությունը, և նրանց մեղքերը այլևս պիտի չհիշի»:[10]

Երբ ապաշխարության գործընթացն ամբողջությամբ է կատարվում, դուք կկսեք հասկանալ Քավության մասին Եսայիայի խոստման իմաստը. «Հիմա եկէք ու վիճաբանենք, ասում է Տէրը, եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան. եթէ նորանք որդան կարմիրի պէս լինին, ասրի պէս սպիտակ պիտի դառնան»:[11]

Ճիշտ ինչպես կավիճը կարող է մաքրվել գրատախտակից, անկեղծ ապաշխարության միջոցով մեր օրինազանցության ազդեցությունները կարող են ջնջվել Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Այդ խոստումը վերաբերում է յուրաքանչյուր դեպքի:

Ավետարանը սովորեցնում է մեզ լինել երջանիկ, ունենալ հավատք, և ոչ թե վախենալ, գտնել հույս և հաղթահարել հուսահատությունը, թողնել խավարը և դառնալ դեպի հավիտենական ավետարանի լույսը:

Պողոսը և այլոք նախազգուշացրել են մեր ժամանակների և դեռևս գալիք օրերի դժվարությունների մասին: Սակայն խաղաղություն կարող է հաստատվել յուրաքանչյուրի սրտում, ով դառնում է դեպի սուրբ գրությունները և բացահայտում է պաշտպանության և քավության խոստումները, որոնք ուսուցանվում են դրանցում: Մենք հրավիրում ենք բոլորին դառնալ դեպի Փրկիչ Հիսուս Քրիստոսը, դեպի Նրա ուսմունքները, ինչպես տրված են Հին Կտակարանում, Նոր Կտակարանում, Մորմոնի Գրքում, Վարդապետություններ և Ուխտերում և Թանկագին Մարգարիտում:

Ես բերում եմ հավաստի վկայություն սուրբ գրությունների վերաբերյալ՝ որպես մեր հոգևոր պաշտպանության բանալի: Ես նաև վկայում եմ Հիսուս Քրիստոսի Քավության բուժող զորության մասին, «որ նրա միջոցով կարողանան փրկվել բոլորը»[12], ովքեր պիտի փրկվեն: Տիրոջ Եկեղեցին ևս մեկ անգամ հաստատվել է երկրի վրա: Ես վկայում եմ ավետարանի ճշմարտության մասին: Ես վկայում եմ Նրա մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Տիմոթեոս Գ.1–5:
2. Բ Տիմոթեոս Գ.13:
3. Եթեր 8.24, 26:
4. Բ Տիմոթեոս Գ.14–15:
5. Բ Տիմոթեոս Գ.16:
6. Մարկոս Ե.36:
7. Ալմա 17.2:
8. Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 542.
9. Եթեր 8.24:
10. Երեմիա ԼԱ.34:
11. Եսայիա Ա.18:
12. Վարդապետություն և Ուխտեր 76.42:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Կանանց բարոյական ուժը

Դուք բարիք գործելու և բարին լինելու ներգիտակցություն ունեք, և եթե դուք հետևեք Սուրբ Հոգուն, ձեր բարոյական հեղինակությունը և ազդեցությունը կաճի:

Անհիշելի դարերից ի վեր հասարակությունները հիմնվել են կանանց բարոյական ուժի վրա: Չնայած, իհարկե, լինելով հասարակության մեջ ոչ միակ դրական ազդեցությունը, ապացուցվել է, որ կանանց կողմից ցույց տրվող բարոյական հիմքը առանձնապես օգտակար է եղել հասարակական բարիքի համար: Գուցե այն պատճառով, որ այն կարևոր է, կանանց այս ներդրումը հաճախ թերագնահատվել է: Ես կամենում եմ երախտագիտություն արտահայտել լավ կանանց ազդեցության համար, նշել որոշ փիլիսոփայություններ և ուղղություններ, որոնք սպառնում են կանանց ուժին, դիրքին և մի աղերսանքի ձայն ուղղել կանանց, որ մշակեն ներքին բարոյական ուժ իրենց ներսում:

Կանայք իրենց հետ աշխարհ են բերում որոշակի առաքինություն՝ մի աստվածային պարգև, որը նրանց գիտակ է դարձնում ներշնչել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հավատքը, քաջությունը, փոխըմբռնումը և փոխհարաբերությունների և մշակույթների հոկումը: Երբ Պողոսը գովեց Տիմոթեոսի «անկեղծ հավատքը», որ նրանում էր, նա նշեց, որ այդ հավատքը. «առաջ քո Լոիդա տատիկումը եւ քո Եունիկէ մորումը բնակուեցաւ»:[1]

Տարիներ առաջ, երբ ապրում էի Մեխիկոյում, ես անձնապես նկատեցի, թե ինչ ի նկատի ուներ Պողոսը: Ես հիշում եմ մի որոշակի երիտասարդ մոր՝ Մեխիկոյի Եկեղեցու կանանցից շատերի միջից մեկին, որի հավատքն Աստծո հանդեպ այնքան բնականորեն էր զարդարում նրանց կյանքը, որ թվում էր, թե նրանք հազիվ թե տեղյակ էին դրան: Այդ գեղեցիկ կինը ճառագում էր բարոյական հեղինակություն, որը բխում էր բարությունից, որն ազդում էր շրջապատում գտնվող բոլորի վրա՝ բարու համար: Իր ամուսնու հետ, նա զոհաբերել էր, առանց տատանվելու, մի շարք հաճույքներ և նյութական կարողություններ՝ հանուն իրենց ավելի բարձր առաջնահերթությունների:Իր երեխաներին բարձրացնելու, հսկելու, հավասարակշռելու քայլերի նրա ունակությունը մոտ էր գերմարդկայինին: Նրա պահանջարկը մեծ էր և նրա գործերը հաճախ կրկնվող էին և առօրյա, սակայն այդ բոլորի ետևում կար մի գեղեցիկ խաղաղություն՝ Աստծո գործի մեջ լինելու մի զգացում: Ինչպես Փրկչի դեպքում, նրան ազնվացրել էր ուրիշներին ծառայությամբ և զոհաբերությամբ օրհնելը: Նա սիրո մարմնավորում էր:

Ես նշանակալիորեն օրհնվել եմ կանանց, մասնավորապես իմ մոր և իմ կնոջ բարոյական ազդեցությունից: Այլ կանանց շարքում, որոնց երախտագիտությամբ եմ հիշում Աննա Դեյնսն է: Աննան և նրա ամուսինը՝ Հենրին ու նրանց չորս երեխաները Միացյալ Նահանգներում Նյու Ջերսիի Եկեղեցու ռահվիրաների շարքում էին: Սկսած 1930-ական թվականներից, երբ Հենրին Ռութջերսի Համալսարանի դոկտորական կոչումը պաշտպանող ուսանող էր, նա և Աննան անխոնջ աշխատում էին դպրոցի և հասարակական կազմակերպությունների հետ Մետուչենում, որտեղ նրանք ապրում էին, որպեսզի հաղթահարեն խորապես արմատավորված նախապաշարմունքը Մորմոնների դեմ և դարձնեն համայնքը իրենց երեխաներին մեծացնելու ավելի լավ վայր՝ բոլոր ծնողների համար:

Աննան, օրինակ, դարձավ կամավոր Մետուչենի ԵՏՔՄ-ում (Երիտասարդ տղամարդկանց Քրիստոնեական Միություն) և իրեն դարձրեց անփոխարինելի: Մեկ տարվա ընթացքում նա նշանակվեց Մայրերի Օժանդակ կազմակերպության նախագահ, իսկ հետո, նրան խնդրեցին վարել կանանց երեք պաշտոններից մեկը ԵՏՔՄ-ի տնօրենների խորհրդում: Նա հաղթեց առանց ընդդիմության և միացավ նույն այն խորհրդին, որն ընդամենը մի քանի տարի առաջ Սրբերին մերժել էր թույլ տալ հանդիպել իրենց շենքում»:[2]

Իմ ընտանիքը տեղափոխվեց Նյու Բրանսուիք Ծուխը, երբ ես դեռահաս էի: Քույր Դեյնսը նկատեց ինձ և հաճախ էր իր վստահությունն արտահայտում իմ ունակությունների և ներուժի վերաբերյալ, որը ոգեշնչում էր ինձ՝ հասնել բարձրի, ավելի բարձրի, որը չէի կարողանա

առանց նրա խրախուսանքի: Մի անգամ նրա կողմից խորիմաստ և ճիշտ ժամանակին նախազգուշացման շնորհիվ, ես խուսափեցի մի իրավիճակից, որն, անկասկած, կտաներ դեպի զոջում: Չնայած նա այլևս այստեղ չէ, Աննա Դեյնսի ազդեցությունը շարունակվում է զգացվել և արտացոլվել իր հետնորդների և անհամար ուրիշների, ներառյալ իմ կյանքում:

Իմ Ադենա Վարնիք Սուենսոն տատիկն ուսուցանել է ինձ բարեխիղճ լինել քահանայության ծառայության մեջ: Նա խրախուսեց ինձ անգիր սովորել հացի և ջրի հաղորդության օրհնությունները, բացատրելով, որ այդ ձևով ես կկարողանայի դրանք ավելի մեծ ըմբռնումով և զգացումով արտահայտել: Տեսնելով, թե ինչպես էր նա աջակցում իմ պապիկին՝ ցցի հայրապետին, իմ մեջ ակնածանք առաջացավ սրբազան բաների հանդեպ: Սուենսոն տատիկը երբեք չսովորեց մեքենա վարել, բայց նա կարողանում էր ուսուցանել տղաներին, թե ինչպես լինեին քահանայության տղամարդիկ:

Կնոջ բարոյական ազդեցությունը ոչ մի տեղում այնպես հզոր չի զգացվում կամ ավելի օգտակար ձևով գործածվում, քան տանը: Չկա ավելի լավ տեղ աճող սերնդին մեծացնելու համար, քան ավանդական ընտանիքը, որտեղ հայրը և մայրը ներդաշնակորեն աշխատում են ապահովելու, ուսուցանելու և դաստիարակելու համար իրենց երեխաներին: Որտեղ այս կատարելատիպը գոյություն չունի, մարդիկ ձգտում են կրկնօրինակել դրա օգուտները այնքան լավ, որքան կարող են՝ իրենց որոշակի հանգամանքներում:

Բոլոր իրադարձություններում մայրը կարող է ազդեցություն գործել՝ որևէ այլ անձնավորության կամ որևէ այլ փոխհարաբերության հետ իր հավասարը չունենալով: Նրա օրինակի և ուսուցման ուժով նրա որդիները սովորում են հարգել կանանց և հաստատել կարգուկանոն և բարձր բարոյական չափանիշներ իրենց իսկ կյանքում: Նրա դուստրերը սովորում են զարգացնել իրենց իսկ առաքինությունը և կանգնել կրկին և կրկին հանուն նրա ինչը ճիշտ է, որքան էլ այն հասարակական համակրանք չվայելի: Մոր սերը և բարձր ակնկալիքներն առաջնորդում են իրենց երեխաներին պատասխանատվությամբ գործելու, առանց արդարացումների, լինել լուրջ կրթության և անձնական զարգացման հարցում և կատարել անընդհատ ներդրումներ բոլորի համար, ովքեր իրենց շրջապատում են: Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ հարցրել է. «Երբ մարդկության իսկական պատմությունը լիովին բացահայտվի արդյոք այն կբնորոշվի հրացանի կրակոցների արձագանքներով, թե՞ օրորոցային երգերի ոգեշնչող հնչյուններով: Զինվորականների կողմից իրականացված մեծ զինադադարներով, թե տանը և հարևանության մեջ խաղաղություն հաստատող կանանցով: Գուցե պարզվի, որ այն ինչ տեղի է ունեցել օրորոցներում և խոհանոցներում, ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան այն, ինչ տեղի է ունեցել կոնգրեսներում»:[3]

Կնոջ դերը սրբազան է կյանքի ստեղծման ժամանակ: Մենք գիտենք, որ մեր ֆիզիկական մարմինները աստվածային ծագում ունեն[4] և մենք պետք է տանենք ինչպես ֆիզիկական ծնունդ, այնպես էլ հոգևոր վերածնունդ՝ հասնելու Աստծո սելեստիալ արքայության բարձրագույն ոլորտներին:[5] Այսպիսով՝ կանայք անփոխարինելի դեր ունեն (երբեմն վտանգի ենթարկելով իրենց իսկ կյանքը) Աստծո գործում և փառքում՝ «իրականացնելու մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[6] Որպես ընդօրինակման արժանի տատիկներ և մայրեր՝ կանայք եղել են կյանքի ակունքների պահապաններ՝ ուսուցանելով յուրաքանչյուր սերնդի սեռական մաքրության կարևորությունը՝ մաքրաբարոյություն նախքան ամուսնությունը և հավատարմություն ամուսնության մեջ: Այս ձևով նրանք եղել են քաղաքակրթող ազդեցություն հասարակության մեջ, նրանք բացահայտել են տղամարդկանց մեջ լավագույնը. նրանք պահպանել են ողջամիտ միջավայր, որոնցում մեծացրել են ապահով և առողջ երեխաներ:

Քույրեր, ես չեմ ուզում չափից շատ գովաբանել ձեզ, ինչպես, երբեմն, անում ենք Մայրերի Օրվա ելույթներում, որը ձեզ անհարմար վիճակի մեջ է դնում: Դուք պետք չէ, որ կատարյալ լինեք[7], ես չեմ պնդում, որ դուք կատարյալ եք (մեկ հնարավոր բացառությամբ, ով նստած է մոտակայքում այս պահին): Այն ինչ կամենում եմ ասել, այն է, որ անկախ նրանից ամուսնացած եք, թե միայնակ, արդյոք երեխաներ եք ծնել թե ոչ, անկախ նրանից ծեր եք, թե երիտասարդ,

թե միջին տարիքի, ձեր բարոյական հեղինակությունը կենսական է և, թերևս, մենք սկսել ենք չգնահատել այն: Իհարկե, կան գործող միտումներ և ուժեր, որոնք կթուլացնեն և նույնիսկ կվերացնեն ձեր ազդեցությունը՝ ի մեծ վնաս անհատների, ընտանիքների և ընդհանրապես հասարակության: Թույլ տվեք նշել դրանցից երեքը, որպես զգուշացում և նախազգուշություն:

Մի վտանգավոր փիլիսոփայություն, որը քայքայում է կանանց բարոյական ազդեցությունը՝ ամուսնության և մայրության ու տնարարության արժեզրկումն է, որպես կարիերա: Ոմանք նայում են տնարարությանը ուղղակի արհամարհանքով, փաստելով, որ այն նվաստացնում է կանանց և որ անընդհատ աճող երեխաների պահանջները շահագործման մի ձև է:[8] Նրանք ծաղրում են, ինչպես իրենք են կոչում «մայրիկի աշխատանքը» որպես կարիերա: Սա ազնիվ չէ կամ ճիշտ: Մենք չենք նվազեցնում կանանց, ոչ էլ տղամարդկանց ձեռքբերումների արժեքը արժանավոր որևէ նախաձեռնության կամ մասնագիտական զարգացման բնագավառում, – բոլորս էլ օգտվում ենք այդ ձեռքբերումներից, – բայց, այնուամենայնիվ, ընդունում ենք, որ չկա ավելի բարձր բարիք, քան մայրությունը և հայրությունը ամուսնության մեջ: Չկա ավելի գերադաս կարիերա և ոչ մի փողի քանակություն, իշխանություն կամ հասարակական դրվատանք, որ կարողանա գերազանցել ընտանիքի բարձրագույն պարգևին: Ինչ էլ որ կինը իրականացնի, նրա բարոյական ազդեցությունը ոչ մի այլ տեղ չի կարող ավելի արդյունավետ կիրառվել, քան ընտանիքում:

Մարդկային սեռական կյանքի հանդեպ վերաբերմունքը սպառնում է կանանց բարոյական հեղինակությանը մի քանի կողմերից: Անձնական կամ հասարակական հարմարավետությունից բխող արհեստական վիժումը հարվածում է կանանց ամենասրբազան ուժերի հենց սրտին և կործանում նրա բարոյական հեղինակությունը: Նույնը ճշմարիտ է սեռական անբարոյականության և կիսամերկ զգեստների հարցում, որոնք ոչ միայն նսեմացնում են կանանց, այլ ամրացնում այն սուտը, որ կնոջ սեռական հմայքն է, որ բնորոշում է նրա արժեքը:

Շատ երկար ժամանակ գոյություն ուներ մշակութային «կրկնակի չափանիշ», որն ակնկալում էր կանանցից լինել մաքրաբարո, մինչդեռ ներում էր տղամարդու անբարոյականությունը: Այդպիսի «կրկնակի չափանիշի» անարդարությունը ակնհայտ է և դա արդարացիորեն քննադատվել է և մերժվել: Այդ մերժումով հույս կար, որ տղամարդիկ կբարձրանային ավելի բարձր՝ դեպի եզակի չափանիշը, բայց ճիշտ հակառակն է տեղի ունեցել՝ կանանց և աղջիկներին այժմ խրախուսվում է լինել այնքան տարասեռ, որքան «կրկնակի չափանիշը» պահանջում էր տղամարդկանցից: Եթե մի ժամանակ կանանց ավելի բարձր չափանիշները պահանջում էին պարտավորություն և պատասխանատվություն տղամարդկանցից, այժմ հակառակն է՝ սեռական հարաբերություններ՝ առանց խղճի խայթի, անհայր ընտանիքներ և աճող աղքատություն: Հավասար հնարավորությամբ արտամուսնական հարաբերությունները ուղղակի կողոպտում է կանանցից իրենց բարոյական ազդեցությունը և այլասերում է ողջ հասարակությունը:[9] Այս սնամեջ գործարքի արդյունքում, տղամարդիկ «ազատագրվում են», իսկ ամենաշատը տառապում են կանայք և երեխաները:

Մտահոգության երրորդ մասը գալիս է նրանցից, ովքեր հավասարության անվան տակ կամենում են ջնջել արականի և իգականի միջև բոլոր տարբերությունները: Հաճախ սա ընդունում է կանանց արական հատկանիշներ որդեգրելու հարկադրանքի ձև՝ լինել ավելի հարձակողական, կոպիտ և հակառակվող: Այժմ կինոնկարներում և վիդիոխաղերում ընդունված է կանանց սոսկալի մոլեգին դերերում տեսնել, թողնելով մեռած մարմիններ և ավերումներ իրենց գործողությունների հետևանքով: Հոգու համար կործանարար է տեսնել տղամարդկանց այդպիսի դերերում և, իհարկե, ոչ պակաս, երբ կանայք են բռնարարքներ և տառապանք իրականացնողները:

Նախկին Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Մարգարետ Նադոլոն ուսուցանել է. «Աշխարհը բավականաչափ կանայք ունի, ովքեր կոպիտ են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր քնքուշ են: Կան բավականաչափ կանայք, ովքեր կարծր են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր բարի են:Կան բավականաչափ կանայք, ովքեր գռեհիկ են, մենք կարիք ունենք կանանց, ովքեր նուրբ են: Մենք բավականաչափ կանայք ունենք, ովքեր հանրահայտ են և հարուստ, մենք կարիք ունենք ավելի շատ հավատքի կանանց: Մենք ունենք բավականաչափ ագահություն, մենք կարիք ունենք ավելի շատ բարության: Մենք ունենք բավականաչափ սնապարծություն, մենք կարիք ունենք ավելի շատ առաքինության: Մենք ունենք բավականաչափ հանրաճանաչություն, մենք ավելի շատ մաքրության կարիք ունենք»:[10] Աղավաղելով իգականի և արականի տարբերությունները, մենք կորցնում ենք կանանց և տղամարդկանց որոշակի, լրացուցիչ պարգևները, որոնք միասին առաջացնում են ավելի մեծ ամբողջություն:

Այսօր կանանց և աղջիկներին ուղղված իմ աղերսանքն է՝ պաշտպանել և մշակել այն բարոյական ուժը, որը ձեր ներսում է: Պահպանեք այդ ներքին առաքինությունը և եզակի պարգևները, որոնք դուք ձեզ հետ աշխարհ եք բերում: Դուք բարիք գործելու և բարին լինելու ներգիտակցություն ունեք, և եթե դուք հետևեք Սուրբ Հոգուն, ձեր բարոյական հեղինակությունը և ազդեցությունը կաճի: Երիտասարդ կանանց ես ասում եմ. Մի կորցրեք այդ բարոյական ուժը, նույնիսկ, լրիվ չափով նախքան այն ունենալը: Առանձնապես հոգ տարեք, որ ձեր լեզուն մաքուր լինի, ոչ կոպիտ, որ ձեր զգեստը արտացոլի համեստություն, ոչ թե սնապարծություն. և որ ձեր վարվելակերպը ցույց տա մաքրաբարոյություն, ոչ թե անբարոյություն: Դուք չեք կարող մարդկանց

բարձրացնել դեպի առաքինություն և միևնույն ժամանակ զվարճանալ չարով:

Քույրեր, ձեր բոլոր փոխհարաբերություններից, Աստծո՝ մեր Երկնային Հոր հետ ձեր փոխհարաբերությունն է ձեր բարոյական ուժի աղբյուրը, որը դուք պետք է միշտ առաջինը դնեք ձեր կյանքում: Հիշեք, որ Հիսուսի ուժը եկավ Հոր կամքին Նրա ողջ մտքով նվիրվածությունից: Նա երբեք չէր անում տարբեր բան նրանից, ինչ գոհացնում էր Իր Հորը:[11] Զգտեք լինել Հոր և Որդու այդպիսի աշակերտ և ձեր ազդեցությունը երբեք չի թուլանա:

Եվ մի վախեցեք այդ ազդեցությունը կիրառել առանց երկյուղի կամ ներողության: «Միշտ պատրաստ եղէք հեզութեամբ եւ երկիւղածութեամբ պատասխան տալու ամենին [տղամարդու, կնոջ և երեխայի], որ ձեր մէջ եղած յոյսի համար պատճառ հարցնէ»:[12] «Խոսքը քարոզիր. վերայ հասիր թէ ժամանակին լինի թէ ժամանակից դուրս, յանդիմանիր, սաստիր, յորդորիր ամեն երկայնամտութիւնով եւ վարդապետութիւնով»:[13] «Մեծացրեք ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»:[14] «Ուսուցանեք [նրանց] աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ»:[15]

Կանանց ուղղված այս հորդորներում, թող ոչ ոք կամովին սխալ չհասկանա: Գովաբանելով և խրախուսելով կանանց մեջ բարոյական ուժ, ես չեմ ասում, որ տղամարդիկ և տղաները ինչ-որ ձևով ազատվում են ճշմարտությունը և արդարակեցությունը պաշտպանելու իրենց սեփական պարտականությունից, որ նրանց ծառայելու, զոհաբերելու և սպասավորելու պատասխանատվությունն ինչ-որ չափով ավելի քիչ է, քան կանանց կամ կարող է թողնվել կանանց: Տղամարդիկ, եկեք կանգնենք կանանց կողքին, կիսենք նրանց բեռները և մշակենք մեր զուգընկերոջ մեջ բարոյական հեղինակություն:

Սիրելի քույրեր, մենք ապավինում ենք այն բարոյական ուժին, որ դուք բերում եք աշխարհ, ընտանիք, Եկեղեցի: Մենք ապավինում ենք օրհնություններին, որ դուք վար եք բերում երկնքից ձեր աղոթքներով և հավատքով: Մենք աղոթում ենք ձեր ապահովության, բարօրության և երջանկության համար և նրա համար, որ ձեր ազդեցությունը պահպանվի: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Տիմոթեոս Ա.5:
2. Orson Scott Card, “Neighborliness: Daines Style,” *Ensign,* Apr. 1977, 19.
3. Neal A. Maxwell, “The Women of God,” *Ensign,* May 1978, 10–11.
4. Տես Մովսես 2.27:
5. Տես Մովսես 6.57–60:
6. Մովսես 1.39:
7. «Մեկ դար առաջ, մոր և երեխայի միջև կապվածության գիտակ Զոն Բոուլին, հայտնաբերեց, որ կապը, որը ստեղծվում է անհամար հոգատարության փոխհարաբերությունների միջոցով մոր և մանկան միջև, հասարակության մեջ ուրիշների հետ փոխհարաբերությունների զարգացման բուն հիմնաքարն է: Իսկ կանանց գիտակ Սառա Ռուդիկը բնորոշել է մայրական «ուշադիր սերը» որպես արդյունավետ ծնող լինելու միջուկը: «Միրո համբերատար աչքի» միջոցով մայրերը զարգացնում են հատուկ գիտելիք իրենց երեխաների մասին, մի գիտելիք, որը նրանց տալիս է եզակի ներըմբռնում, թե յուրաքանչյուր երեխայի համար, որոնք պետք է լինեն արդարև «լավագույն փորձառությունները» (Jenet Jacob Erickson, “Love, Not Perfection, Root of Good Mothering,” *Deseret News,* May 12, 2013, G3):
8. Ճշմարիտ է, որ բազմաթիվ կանայք շատ սերունդների ընթացքում շահագործվել են կամ ծանրաբեռնվել անարդար բեռներով ինչպես ընտանիքում այնպես էլ աշխատավայրում, բայց անեսասիրությունը չպետք է դառնա վիրավորական կամ շահագործող: Երեց Բրյուս Կ. Հեյֆենը նկատել է. « Եթե անեսասեր լինելը նշանակում է, որ կինը պետք է հրաժարվի իր սեփական ներքին ինքնությունից և անձնական աճից, անեսասիրության այդ ըմբռնումը սխալ է: . . . Բայց մյուս կողմից այսօրվա ազատամտության մոդելը խիստ հեռուն է գնում՝ ծայրահեղորեն կանանց ամբողջովին *անվախ* դասելով իրենց ընտանիքներից: Մեկ ավելի ողջամիտ տեսակետ կա, որ ամուսիններն ու կանայք *փոխկախված* են միմյանցից: . . . Քննադատները, ովքեր փոխեցին մայրերի կախվածությունը անկախությամբ բաց թողեցին փոխկախվածության արգասավոր միջին հիմնավորումը: Նրանք ովքեր մայրերին անեսասիրությունից տեղափոխեցին դեպի եսասիրություն, բաց թողեցին ինքնակամ ծառայության միջին հիմնավորումը, որը նպաստում է կնոջ անձնական աճին: Այս ծայրահեղությունների պատճառով, մայրության արժեքի վերաբերյալ քննարկումները հեգնանքով ստիպել են ընդհանրապես հասարկությանը արժեզրկել ոչ միայն մայրերին, այլ կանանց ընդհանրապես:» (“Motherhood and the Moral Influence of Women” [remarks to the World Congress of Families II, Geneva, Plenary Session IV, Nov. 16, 1999], http://worldcongress.org/wcf2_spkrs/wcf2_hafen.htm):
9. Մի մայր *Wall Street Journal*-ի խմբագրականում նկատել է. «Բացառությամբ որոշ մորմոնների, ավետարանչականների և ուղղափառ հրեաների մեզանից մեծամասնությունը չգիտեն, թե ինչպես ուսուցանենք մեր իսկ որդիներին և դուստրերին, որ իրենք այդքան պատրաստակամորեն անձնատուր չլինեն: . . . Այնուամենայնիվ, իմ ընկերուհիների շրջանակում ետ հրելու ցանկությունը ուժեղ է: Ես չգիտեմ նրանցից որևէ մեկին, ով մնայուն անհարմարավետության զգացումներ չունենա իր իսկ սեռական կյանքի անցյալի վերաբերյալ: Եվ ոչ մի կին, որին ես երբևէ այդ թեմայի շուրջ հարցրել եմ, չի ասել, որ կկամենար ավելի շատ «փորձարկել» (Jennifer Moses, “Why Do We Let Them Dress Like That?” *Wall Street Journal,* Mar. 19, 2011, C3):
10. Margaret D. Nadauld, “The Joy of Womanhood,” *Liahona,* Jan. 2001, 18.
11. Տես Հովհաննես Ը.29:
12. Ա Պետրոս Գ.15:
13. Բ Տիմոթեոս Դ.2:
14. Վարդապետություն և Ուխտեր 93.40:
15. Վարդապետություն և Ուխտեր 68.28:

Երեց Ս. Գիֆֆորդ Նիլսեն
Յոթանասունի Քվորում

Արագացնել խաղի Տիրոջ ռազմավարական ծրագիրը

Մենք պետք է զարգացնենք և իրականացնենք մեր իսկ մարտավարությունը՝ խանդավառությամբ կողք կողքի ծառայելով լիաժամկետ միսիոներների հետ:

Մի քանի տարի առաջ ես պետք է խոսեի մեր ցցի եպիսկոպոսներից մեկի կնոջ հետ, այսպիսով, ես զանգահարեցի նրանց տուն: Մի փոքրիկ տղա պատասխանեց զանգին: Ես ասացի. «Ողջույն, մայրիկդ տա՞նն է»:

Նա պատասխանեց. «Այո, տանն է: Ես կկանչեմ նրան: Ո՞վ է խոսում»:

Ես պատասխանեցի. «Ասա նրան, Նախագահ Նիլսենն է:»

Կարճ դադարից հետո մի շատ աշխույժ ձայն լսեցի. «Հե՜յ, մայրիկ Նախագահ *Հինքլին* է կանչում»:

Ես չեմ պատկերացնում, թե մոր մտքով ինչ էր անցնում: Դա պետք է որ ամենաերկարատև քայլերը լինեին, որ նա երբևէ արել էր հեռախոսին մոտենալու համար: Գլխումս միտք ծագեց. «Չկատակե՞մ»: Ես չկատակեցի, բայց մենք մի լավ ծիծաղեցինք: Այժմ, երբ մտածում եմ այդ մասին, նա պետք է որ այնքան հիասթափված լիներ պարզապես ինձ հետ խոսելով:

Ի՞նչ կանեիք դուք, եթե իսկապես Տիրոջ մարգարեն կանչեր ձեզ: Դե՜հ, նա կանչել է ձեզ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, ինչպես այս առավոտ, կանչել է մեզանից յուրաքանչյուրին շատ կարևոր աշխատանքի: Նա ասել է. «Այժմ է ժամանակը անդամների և միսիոներների համար համախմբվել՝ միասին աշխատելու համար, տքնելու Տիրոջ այգում, բերելու հոգիներ դեպի Նա» (“Faith in the Work of Salvation” [worldwide leadership training broadcast, June 2013]; lds.org/broadcasts):

Իսկ մենք լսո՞ւմ ենք:

Ողջ աշխարհով մեկ ցցերը, շրջանները և միսիաները զգում են եռանդի մի նոր մակարդակ, քանի որ Փրկչի հայտարարությունը Ջոզեֆ Սմիթին 1832թ. իրականանում է. «Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին» (ՎևՈՒ 88.73):

Եղբայրներ և քույրեր, այդ ժամանակը *հիմա* է: Ես դա զգում եմ և համոզված եմ, դուք էլ եք զգում:

Ես ցանկություն եմ զգացել իմ հուզմունքը և Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հավատքը գործի մեջ դնել: Երբ ֆուտբոլ էի խաղում, ես մտածում էի խաղի ռազմավարության ծրագրի տերմիններով: Մրցախաղի ժամանակ կասկած չկար, որ եթե մեր թիմը լավ պատրաստված լինի ճիշտ մարտավարությամբ, մենք հաջողություն ենք ունենալու: Այնուամենայնիվ, ես վերջերս խոսեցի ԲՅՀ-ի առասպելական մարզիչ Լա Վելլ Էդուարդսի հետ՝ մեր խաղերի ռազմավարության ծրագրերի վերաբերյալ և նա ասաց. «Իմ մտահոգությունը մարտավարությունը չէ, այլ միավորներ հավաքելը»: Որպես նրա կիսապաշտպաններից մեկը՝ ես կարծել էի, թե դա ավելի բարդ է, բայց, հավանաբար, նրա պարզ փիլիսոփայությունն է պատճառը, որ նրա անունով կոչված մարզադաշտ կա:

Քանի որ մենք բոլորս Տիրոջ թիմում ենք, արդյոք մենք ունե՞նք խաղում հաղթելու մեր սեփական ռազմավարական ծրագիրը: Արդյոք պատրաստ ե՞նք խաղալու: Եթե մենք անդամներս իսկապես սիրում ենք մեր ընտանիքը, ընկերներին և ծանթերին, մի՞թե չենք կամենում կիսվել վերականգված ավետարանի մեր վկայությամբ նրանց հետ:

Հունիսին՝ նոր միսիայի նախագահների սեմինարին, ռեկորդային թվով՝ 173 նոր ղեկավարներ և նրանց կանայք ստացան վերջնական հրահանգներ նախքան իրենց ծառայությունը սկսելը: Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի բոլոր 15 անդամները ողջունեցին այս հատուկ խմբին:

Երեց Լ. Թոմ Փերին ավելացրեց եզրափակիչ մեկնաբանություններ. «Սա ամենանշանավոր դարաշրջանն է Եկեղեցու պատմության մեջ: Սա մի բան է, որը դասվում է մեծ իրադարձությունների շարքում, որոնք տեղի են ունեցել անցյալի

պատմության ընթացքում, ինչպես Առաջին Տեսիլքը, ինչպես Մորմոնի Գրքի պարգևը, ինչպես ավետարանի վերականգնումը, ինչպես բոլոր այն բաները, որոնք հիմք են կառուցում մեզ համար՝ առաջ գնալու և ուսուցանելու մեր Երկնային Հոր արքայությունում» («Եզրափակիչ խոսք» [ելույթ տրված Նոր Միսիայի Նախագահների սեմինարում, հունիս 26, 2013] 1, Church History Library, Salt Lake City):

Մենք պետք է նախկինից ավելի շատ ներգրավված լինենք, որպեսզի համապատասխանենք մեր ղեկավարների ոգևորությանը և մեր լիաժամկետ միսիոներների պարտավորվածությանը: Այս աշխատանքը առաջ չի գնա Տիրոջ նախատեսած ձևով առանց մեզ: Ինչպես Նախագահ Այրինգն է ասել. «Ինչպիսին էլ լինի մեր տարիքը, ունակությունը, Եկեղեցական կոչումը կամ տեղանքը, մենք՝ որպես մեկ, կանչված ենք աշխատելու՝ օգնելու Նրան հոգիների Իր բերքահավաքում» («Մենք մեկ ենք», *Լիահոնա*, մայիս 2013, 62):

Թույլ տվեք կիսվել ձեզ հետ խաղի մի ռազմավարական ծրագրով, որը ես ոգեշնչվել եմ կիրառելու խորհրդածելուց, աղոթելուց և *Քարոզեք Իմ Ավետարանի* 13-րդ գլուխը կարդալուց հետո: Ես կոչ եմ անում մտածել այս երեք կետերի մասին, երբ դուք կմտածեք ձեր սեփական ծրագրի մասին:

Առաջինը՝ ամեն օր առանձնապես աղոթեք ինչ-որ մեկին ավելի մոտ բերելու դեպի Փրկիչը և Նրա ավետարանը: Մենք կարող ենք դա անել՝ բոլոր մարդկանց տեսնելով որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ օգնելով միմյանց դեպի տուն տանող նրանց ճանապարհին: Մտածեք նոր ընկերների մասին, որոնց ձեռք կբերեք:

Երկրորդը՝ աղոթեք միսիոներների համար, ովքեր ծառայում են ձեր տարածքում և նրանց ունկնդիրների համար՝ անուններով: Այդ անելու միակ ուղին նրանց ողջունելն է, նրանց կրծքանշաններին նայելը, նրանց անունով դիմելը, և հարցնելը, թե ում են այժմ ուսուցանում: Երեց Ռասսել Մ. Նելսոնը

իմաստուն ձևով ասաց. «Մինչև դուք չիմանաք այդ անձնավորությանը անունով և դեմքով, Տերը չի կարող օգնել ձեզ իմանալ նրա սիրտը»:

Ես մասնակցեցի մի հրաշալի քրոջ մկրտությանը, ով կիսվեց իր վկայությամբ: Ես ընդմիշտ կհիշեմ նրա խոսքերը. «Երբեք այդքան մարդ չի աղոթել ինձ համար և երբեք այդքան շատ սեր չեմ զգացել: Ես գիտեմ, որ այս աշխատանքը ճշմարիտ է»:

Երրորդը՝ հրավիրեք որևէ ընկերոջ միջոցառման՝ ձեր տանը կամ դրսում: Ուր էլ որ գնաք կամ ինչ էլ որ անեք, խորհեք, թե ով բավականություն կստանար այդ առիթից, իսկ հետո լսեք Հոգուն, երբ Նա առաջնորդի ձեզ:

Փրկիչն ուսուցանել է ինձ մի նուրբ դաս ավետարանի իմ ածնական ուսումնասիրության վերաբերյալ, որը կարծում եմ հիանալիորեն վերաբերվում է «արագացմանը»: Երբ ես ինչ-որ բանի վերաբերյալ հույզերով լիցքավորված եմ լինում, այն երևում է իմ գրվածքներում և հաճախ վերջանում է բացականչական նշանով, որն ըստ սահմանման արտահայտում է «ուժեղ զգացում կամ նշանակում է մեծ կարևորություն» (*Merriam-Webster's Collegiate Dictionary,* 11th ed. [2003], "exclamation point"):

Հետաքրքրությունս գրգռվեց, երբ «հավաքման» վերաբերյալ սուրբ գրությունները սկսեցին խիստ ակնհայտ դառնալ, որոնք վերջանում էին այս կետադրական նշանով, ինչպես օրինակ Ալմայի սրտառուչ աղերսանքը. «Ա՜խ, երանի ես մի հրեշտակ լինեի, և կարողանայի ունենալ իմ սրտի իղձը, որ ես առաջ գնայի և խոսեի Աստծո փողով, երկիրը ցնցելու ձայնով, և ապաշխարություն աղաղակեի ամեն ժողովրդի» (Ալմա 29.1):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կան այս տիպի 65 հատվածներ, որոնք ցույց են տալիս ուժեղ միսիոներական հույզեր, ներառյալ այս մեկը.

«Որքա՜ն մեծ է նրա ուրախությունն այն հոգու համար, որն ապաշխարում է. . . .

Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ, իմ Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ Իմ Հոր արքայություն, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ» (ՎևՈՒ 18.13, 15–16):

Իմ արթնացումը այս առանձնահատուկ հատվածների հանդեպ կարևոր դեր խաղաց որպես Տարածքային Յոթանասունական իմ առաջին հանձնարարությունը կատարելիս: Ես մի քիչ լարված էի զգում՝ լինելով Առաքյալի, Երեց Քվենթին Լ. Քուքի ընկերակիցը ցցի համաժողովում: Երբ ես մտա ցցի նախագահի գրասենյակը այդ շաբաթավերջի առաջին ժողովի համար, ես նկատեցի մի զույգ քրքրված, բրոնզապատ կոշիկներ նրա գրասեղանի ետևի պահարանում, որին ուղեկցում էր մի սուրբ գրության հատված, որը վերջանում էր բացականչական նշանով: Երբ ես կարդացի այն, ես զգացի, որ Տերը տեղյակ է իմ ուսումնասիրությանը, պատասխանեց իմ աղոթքներին, և որ Նա ճշգրիտ գիտեր, թե ինչի կարիք ունեի սփոփելու իմ անհանգիստ սիրտը:

Ես խնդրեցի ցցի նախագահին պատմել ինձ այդ կոշիկների պատմությունը:

Նա ասաց.

«Սրանք Եկեղեցու մի երիտասարդ նորադարձի կոշիկներն են, որի ընտանեկան վիճակն աղքատիկ էր, սակայն նա վճռել էր

ծառայել հաջող միսիա և դա արեց Գվատեմալայում: Նրա վերադառնալուց հետո, ես հանդիպեցի նրա հետ, որ հանձնեի պատվով ազատվելու վկայականը և տեսա, որ նրա կոշիկները պատառոտված վիճակում էին: Այդ երիտասարդը իր ողջ ունեցածը տվել էր Տիրոջը՝ չունենալով շատ ընտանեկան աջակցություն:

Նա նկատեց, որ ես սևեռուն նայում էի նրա կոշիկներին և հարցրեց ինձ. «Նախագահ, ինչ-որ բան այնպես չէ՞»:

Ես պատասխանեցի. «Ոչ, Երեց, ամեն ինչ կարգին է: Կարո՞ղ ես ինձ նվիրել այդ կոշիկները»:

Ցցի նախագահը շարունակեց.«Իմ հարգանքը և սերը այդ վերադարձած միսիոների հանդեպ անսահման էր: Ես ուզում էի հավերժացնել այդ փորձառությունը, այդպիսով՝ ես բրոնզապատել տվեցի նրա կոշիկները: Սա հիշեցնում է ինձ, երբ մտնում եմ այս գրասենյակ, այն ջանքի մասին, որ մենք բոլորս պիտի ցույց տանք, անկախ մեր հանգամանքներից: Հատվածը Եսայիայից էր. «Ինչ գեղեցիկ են սարերի վերայ աւետարանչի ոտքերը, որ խաղաղութիւն է քարոզում, բարիք աւետում, փրկութիւն քարոզում, որ ասում է Սիոնին՝ քո Աստուածը թագաւոր է» (Եսայիա ԾԲ.7):

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, բարի եպիսկոպոսի կինը գուցե զարմանում էր, թե ինչու էր մարգարեն կանչում իրեն: Ես վկայում եմ՝ նա և մենք այլևս պե՛տք չէ–(ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆՇԱՆ) զարմանանք::

Մենք պետք է զարգացնենք և իրականացնենք մեր իսկ մարտավարությունը՝ խանդավառությա՛մբ (ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆՇԱՆ) կողք կողքի ծառայելով լիաժամկետ միսիոներների հետ:

Ես ավելացնում եմ իմ վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությանը. «Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ նա ապրում է» (ՎԵՈՒ 76.22): Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

Երեց Առնուլֆո Վալենզուելա
Յոթանասունական

Փոքր և հասարակ բաներ

Եկեք օգնության հասնենք մարդկանց՝ հավատքով և սիրով:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ուղիղ մի քանի շաբաթ առաջ ես գտնվում էի Մեխիկո քաղաքի միսիոներների պատրաստման կենտրոնում՝ կիսվելու միսիոներների հետ մի ուղերձով: Կինս և ես դիտավորյալ մի քանի ժամ շուտ ժամանեցինք: Ուսումնասիրելով ՄՊԿ-ի գեղեցիկ պարտեզները և լավ խնամված փողոցները, մեզ աննկատ չմնացին հարյուրավոր երիտասարդ երեցների և քույրերի դեմքերից ճառագող երջանկությունը, յուրաքանչյուրը կենտրոնացած լինելով նոր լեզվական հմտություններ ձեռք բերելու՝ սովորելով ավելի լավ գնահատել իր նպատակը որպես միսիոներ:

Երբ ես կանգ առա լիովին ընկալելու այդ սքանչելի տեսարանը, մտածեցի Ալմայի խոսքերի մասին, երբ նա պատվիրեց իր որդի Հելամանին գրի առնել իր ժողովրդի պատմությունը որպես այն հիշատակարանների մի մաս, որոնք նրան վստահվել էին և պահել բոլոր այս բաները սրբազան, որպեսզի դրանք մի օր առաջ գնան դեպի ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի:

Ապա Ալման նրան ասաց.

«Արդ, դու գուցե ենթադրես, որ սա հիմարություն է իմ կողմից, բայց, ահա, ես ասում են քեզ, որ փոքր և հասարակ բաներով են իրականացվում մեծ բաները. Եվ փոքր միջոցները շատ դեպքերում շփոթեցնում են իմաստունին:

Եվ Տեր Աստված գործում է այս միջոցներով, որպեսզի իրականացնի իր մեծ և հավերժական նպատակները. և խիստ փոքր միջոցներով Տերը շփոթեցնում է իմաստուններին և իրականացնում բազում հոգիների փրկությունը» (Ալմա 37.6–7):

Մեր միսիոներների անմեղությունն ու երիտասարդությունը Տիրոջ ուղու մի օրինակ է, որ նրանք, ովքեր խոնարհ են, կարողանան «ուրիշներին հրավիրել գալ դեպի Քրիստոս՝ օգնելով նրանց ստանալ վերականգված ավետարանը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևը ստանալու և մինչև վերջ համբերելու հանդեպ հավատքի միջոցով» (*Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական ծառայության Ուղեցույց* [2004], 1):

Որպես Եկեղեցու անդամներ՝ մենք կարող ենք, մեր իսկ փոքր և հասարակ բաներով «համոզել

շատերին իրենց ուղիների սխալ-մունքների վերաբերյալ» և օգնել բերել «նրանց իրենց Աստծո իմացությանը՝ ի փրկություն իրենց հոգիների» (Ալմա 37.8)։

Մի առիթով ես ուղեկցում էի մի ցցի նախագահի և եպիսկոպոսի՝ այցելելու քիչ ակտիվ մի անդամի։ Մենք ուսուցանեցինք նրան մի շատ հասարակ ուղով Հանգստության օրվա օրհնությունների մասին։ Մենք արտահայտեցինք նրա հանդեպ մեր անկեղծ սերը։ Նա պատասխանեց. «Այն ամենը, ինչի կարիքը ունեի, ինձ այցելելն ու մի *abrazo* կամ գրկախառնում տալն էր»։ Ես անմիջապես կանգնեցի և գրկեցի նրան։ Հաջորդ օրը կիրակի էր։ Այդ նույն եղբայրը իր ողջ ընտանիքով եկավ հաղորդության ժողովի։

Այցելությամբ ուսուցման ժամանակ Մարթան՝ մեր ծխի անդամներից մեկը, ասել էր կնոջս և նրա ընկերակցին երբեք նորից ետ չգալ։ Նա որոշել էր դադարել եկեղեցի գալ։ Այցելող ուսուցիչներից մեկը հարցրել էր Մարթային, թե կարո՞ղ էին միասին մի օրհներգ երգել այդ մեկ և վերջին անգամը և նա համաձայնվել էր։ Երբ նրանք երգել էին, ինչ որ առանձնահատուկ մի բան էր պատահել։ Կամաց կամաց սենյակը սկսվել էր Հոգով լցվել։ Նրանցից յորաքանչյուրը զգացել էր դա։ Մարթայի սիրտը սկսել էր փափկել։ Աչքերն արցունքով լցված, նա արտահայտել էր իր այցելող ուսուցիչներին իր սրտի զգացումները։ Այդ պահին նա հասկացել էր, որ նա գիտեր, որ ավետարանը ճշմարիտ էր։ Արդ, նա շնորհակալություն հայտնեց իր այցելող ուսուցիչներին և ցանկություն հայտնեց, որ նրանք վերադառնան։ Այդ օրվանից սկսած, նա ուրախությամբ էր ընդունում նրանց։

Մարթան սկսեց եկեղեցի հաճախել իր փոքր աղջկա հետ։ Տարիներ շարունակ նրանք կանոնավորապես եկեղեցի էին հաճախում, Մարթան երբեք չկորցրեց հույսը, որ իր ամուսինը ի վերջո կընտրեր իրենց միանալ։ Վերջապես եկավ օրը, երբ Տերը դիպավ նրա սրտին և նա սկսեց հաճախել նրանց հետ, ինչպես նաև դրանից հետո շուտով նրանց մյուս դուստրն էլ միացավ նրանց։ Այդ ընտանիքը սկսեց զգալ իսկական ուրախություն, որը գալիս էր ավետարանի օրհնություններն իրենց տանն ունենալուց։ Մարթան այդ ժամանակից ի վեր ծառայել է հավատարմորեն որպես մեր ծխի Սփոփող Միության Նախագահ, իսկ նրա ամուսինը լավ ծառայություն է մատուցել մի քանի կոչումներում ծխի ներսում։ Այս բոլորը սկսվեց մի օրհներգ երգելուց, մի փոքր և հասարակ բանից, որը հուզեց Մարթայի սիրտը։

Նեեմանը Ասորիների թագավորի զորքի հրամանատարը, մի պատվավոր մարդ էր, մի հզոր քաջարի մարդ, բայց նա բորոտ էր (տես Դ Թագավորաց 5.1)։ Անհաջողություն կրելով իր բորոտության համար բժշկություն գտնել Իսրայելի թագավորից, Նեեմանը գնաց Եղիսեի՝ մարգարեի տուն։ Եղիսեն սուրհանդակ ուղարկեց նրա մոտ՝ ասելով.

«Գնա եւ եօթն անգամ լուացուիր Յորդանանումը, եւ մարմինդ քեզ մօտ կդառնայ եւ կմաքրուիս։

Բայց Նեեմանը բարկացաւ եւ գնաց՝ ասելով. Ահա ես կարծում էի թէ անպատճառ ինձ մօտ դուրս կգայ եւ կկանգէ ու իր Եհովայ Աստուծոյ անունը կկանչէ, եւ ձեռքը կդնէ այն տեղի վերայ, եւ այն ժամանակ բորոտութիւնը կբժշկէ։ . . .

Բայց նորա ծառաները մօտեցան եւ խոսեցին նորա հետ եւ ասեցին. Ով հայր, եթե մարգարէն քեզ մի մեծ բան ասած լինէր, չէի՞ր անիլ. ո՞ւր մնաց որ քեզ ասեց. Լուացուիր եւ կմաքրուիս։

Եւ նա վայր իջաւ եւ եօթն անգամ թաղուեցաւ Յորդանանի մէջ Աստուծոյ մարդի խօսքին համեմատ. Եւ նորա մարմինը ետ դառաւ իբրեւ մի փոքր տղայի մարմին, եւ նա մաքրուեցաւ» (Դ Թագավորաց Ե.10–11, 13–14):

Մեր մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հրավիրել է մեզ բոլորիս առաջ գնալ և փրկել մեր եղբայրներին և քույրերին: Նա ասել է. «Աշխարհը ձեր օգնության կարիքն ունի: Ոտքեր կան ամրացնելու, ձեռքեր բռելու, մտքեր խրախուսելու, սրտեր ոգեշնչելու և հոգիներ փրկելու: Հավերժության օրհնությունները սպասում են ձեզ:» («To the Rescue», *Liahona*, July 2001, 57):

Ես վկայում եմ, որ նրանցից շատերը, ովքեր մեր օգնության կարիքն ունեն, սպասում են մեզ: Նրանք պատրաստ են իրենց քաջարի եղբայրների և քույրերի օգնության հասցնելուն և իրենց փրկելուն փոքր և հասարակ միջոցներով: Ես անձնապես անցկացրել եմ շատ ժամեր այցելելով Եկեղեցու քիչ ակտիվ անդամներին, որոնց սրտերն արդեն փափկացվել են Տիրոջ կողմից, ովքեր այժմ պատրաստ են լսել մեր վկայությունները և մեր անկեղծ սիրո արտահայտությունները: Երբ մենք օգնության ենք հասնում և հրավիրում նրանց, նրանք կվերադառնան Եկեղեցի առանց տատանվելու:

Եկեք օգնության հասնենք մարդկանց՝ հավատքով և սիրով: Եկեք հիշենք Տիրոջ խոստումը.

«Եվ եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ» (ՎԵՈՒ 18.15–16):

Ես վկայություն եմ բերում Իր բոլոր զավակների հանդեպ Տիրոջ սիրո մասին: Ես գիտեմ՝ Նա ապրում է, և որ Նա մեր Քավիչն է: Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

Երեց Տիմոթի Ջ. Դայչես
Յոթանասունից

Կամենու՞մ ես առողջ լինել

Երբ մենք ապաշխարում և դարձի ենք գալիս դեպի Տերը, մենք ապաքինվում ենք և մեր մեղքերը մաքրվում են:

Երուսաղեմում ուրախ տոնակատարություններից մեկի ժամանակ Փրկիչը հեռացավ ամբոխից, որպեսզի որոներ նրանց, ովքեր ծայրաստիճան կարիքի մեջ էին: Նա հանդիպեց նրանց Բեթհեզդայում՝ հինգ սրահ ունեցող մի ավազանում, ոչխարաց շուկայի դռան մոտ, որը հայտնի էր հիվանդներին գրավելով:

Յովհաննէսի ավետարանը մեզ ասում է, որ ավազանի մոտ «խիստ շատ հիվանդներ կային պառկած. «կոյրեր, կաղեր, չորացածներ, որ ջրի շարժուելուն էին սպասում:

«Որովհետեվ Տիրոջ հրեշտակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն ավազանը և ջուրը շարժում. եվ ջրի շարժուելուց յետոյ նորա մէջ առաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ հիվանդութիվն էլ որ ունենար» (Յովհաննէս 5.3–4):

Փրկչի այցը պատկերված է Քարլ Բլոկի մի գեղեցիկ նկարում, որի վերնագիրն է *Քրիստոսը բժշկում է հիվանդներին Բեթհեզդայի ավազանում:* Բլոկը նկարել է Հիսուսին ժամանակավոր ամպհովանին մեղմորեն բարձրացնելիս և «հիվանդ մարդուն» բացահայտելիս (Յովհաննէս 5.7), ով պառկած սպասում էր ավազանի մոտ: Այստեղ *հիվանդ* բառը վերագրվում է մեկին, ով ուժ չունի և շեշտում է Փրկչի ողորմածությունն ու շնորհը, ով հանգիստ եկավ, որպեսզի ծառայեր նրանց, ովքեր անօգնական էին:

Նկարում տանջահար մարդը կծկված է ստվերի ներքո, ուժասպառ և բարոյալքված իր հիվանդության մեջ 38 տարի շարունակ տառապելուց հետո:

Մինչ Փրկիչը մի ձեռքով մահուդի ծայրն է բարձրացնում, մյուս ձեռքը պարզելով տալիս է մի խորաթափանց հարց. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»:

Մարդը պատասխանում է. «Տէր, մարդ չունիմ, որ երբոր ջուրը շարժվում է՝ ինձ ավազանի մէջ գցէ. և մինչև որ ես գալիս եմ, ուրիշն ինձանից առաջ իջնում է մէջը» (Յովհաննէս 5.6–7):

Մարդու անհնարին թվացող կոչին Հիսուսը տալիս է խորը և անսպասելի պատասխան.

«Վեր կաց, մահիճդ առ և ման եկ:

«Եվ մարդն իսկոյն ողջացավ, և վեր առավ իր մահիճը և ման էր գալիս» (Յովհաննէս 5.8–9):

Սիրո դրսևորման տեսարաններից մեկում Ղուկասը մեզ պատմում

է, որ Փրկիչը Երուսաղեմ գնալու ճանապարհին, հանդիպեց 10 բորոտի: Իրենց հիվանդության պատճառով նրանք «հեռուանց կանգնեցին» (Ղուկաս 17.12): Նրանք վտարանդիներ էին՝ անմաքուր և անցանկալի:

«Յիսուս, Վարդապետ, մեզ ողորմիր»,- բարձրացրեցին իրենց ձայնը (Ղուկաս 17.13). այլ կերպ ասած՝- համառեցին, «Մի՞թե *ինչ-որ բան* չես կարող անել մեզ համար»:

Մեծն Բժիշկը, լի կարեկցանքով, դեռ գիտեր, որ հավատքը պետք է նախորդի հրաշքին, և, հետևաբար, ասաց նրանց. «Գնացէք ձեր անձերը քահանաներին ցոյց տուէք» (Ղուկաս 17.14):

Երբ նրանք հավատքով գնացին, հրաշքը տեղի ունեցավ: Կարո՞ղ եք պատկերացնել այն մեծ ուրախությունը, որ զգում էին ամեն քայլը կատարելիս, քանզի նրանք իրական ժամանակում ականատես եղան, թե ինչպես իրենց մարմիններն իրենց իսկ աչքի առաջ մաքրվեցին, ապաքինվեցին և վերականգնվեցին:

«Եվ նորանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դառաւ՝ բարձր ձայնով փառավորում էր Աստուծուն,

«Եվ իր երեսի վերայ ընկաւ [Վարդապետի] ոտների առաջին, և գոհանում էր նորանից: . . .

«Եվ [Հիսուսն] ասեց նորան. Վեր կաց՝ գնա. քո հավատքն ապրեցրեց քեզ» (Ղուկաս 17.15–16, 19):

Որպես նախկին բժիշկ և վիրաբույժ՝ իմ գործունեությունը կենտրոնացած էր կազդուրելու և ֆիզիկական վիճակը բարելավելու մեջ: Հիսուս Քրիստոսը բուժում է մարմինը, միտքն ու հոգին, և Նրա բուժումը սկսվում է հավատքով:

Հիշո՞ւմ եք, երբ ձեր հավատքը և ուրախությունը հեղեղվում էին: Հիշո՞ւմ եք այն պահը, երբ դուք ստացաք ձեր վկայությունը կամ երբ Աստված հաստատեց ձեզ, որ դուք Նրա որդին կամ դուստրն եք, և որ Նա ձեզ շատ է սիրում - և դուք ձեզ ապաքինված զգացիք: Եթե այդ պահը մոռացված է թվում, այն կրկին կարելի է ետ բերել:

Փրկիչը մեզ խորհուրդ է տալիս ինչպես առողջ լինել՝ լիարժեք զգալ և ապաքինվել.

«Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնավորուածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

«Ձեզ վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստութիվն կգտնեք:

«Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթէոս 11.28–30):

«Եկ հետևիր ինձ» (Ղուկաս 18.22) արտահայտությունը հրավիրում է մեզ հետևում թողնել հին կյանքը և աշխարհի ցանկությունները և նոր արարածներ դառնալ, ում համար «հիները անցան, [և] ամեն բան նոր եղաւ» (Բ Կորնթացիս 5.17), նույնիսկ նոր, հավատարիմ սրտով: Եվ մենք կրկին ապաքինվում ենք:

«Մոտեցեք ինձ, և ես կմոտենամ ձեզ. փնտրեք ինձ ջանասիրաբար, և կգտնեք ինձ. խնդրեք, և կստանաք. թակեք, և ձեզ կբացվի» (ՎևՈւ 88.63):

Մինչ մենք մոտենում ենք Նրան, մենք հասկանում ենք, որ մահկանացու կյանքը դժվար է լինելու, և որ «[հակադրությունը] բոլոր բաներում» (2 Նեփի 2.11) փրկության ծրագրի մեջ թերություն չի ներկայացնում: Հակադրությունն, ավելի շուտ, մահկանացու կյանքի ամենակարևոր մասն է կազմում և ամրացնում է մեր կամքը և հղկում է մեր ընտրությունները: Կյանքի անկանխատեսելի փոփոխություններն օգնում են մեզ ստեղծել հավերժական հարաբերություն Աստծո հետ, և փոխանցել Աստծո պատկերը մեր դեմքին, երբ մենք տալիս ենք մեր սրտերը Նրան (տես Ալմա 5.19):

«Այս արէք իմ յիշատակի համար» (Ղուկաս 22.19)՝ սա այն է, ինչ խնդրեց մեր Փրկիչը, երբ Նա բացատրում էր այն, ինչը մենք

անվանում ենք Հաղորդություն: Հացով և ջրով այս արարողությունը թարմացնում է սրբազան ուխտերը, որ մենք կապել ենք Աստծո հետ, և հրավիրում է Քավության զորությունը դեպի մեր կյանք: Մենք ապաքինվում ենք՝ թողնելով սրտեր կարծրացնող և պարանոցներ խստացնող սովորություններն ու ապրելակերպը: Երբ մենք ներքև ենք դնում «[մեր] ապստամբության զենքերը» (Ալմա 23.7), մենք դառնում ենք որպես «[մեր] կամքի գործակալ» (ՎԱՌ 58.28)՝ այլևս չկուրանալով Սատանայի կեղծարարությունից կամ խլանալով ժամանակավոր աշխարհի սարսափելի աղմուկից:

Երբ մենք ապաշխարում և դարձի ենք գալիս դեպի Տերը, մենք բժշկվում և առողջանում ենք, և մեր մեղքերը մաքրվում են: Մենք գուցէ զարմանանք Ենովսի նման. «Ինչպե՞ս եղավ դա»: Տերը պատասխանում է. «Քրիստոսի հանդեպ քո հավատքի շնորհիվ: . . . Ուստի, գնա՛, քո հավատքը քեզ ողջ դարձրեց» (Ենովս 1.7, 8):

Կորի Թեն Բումը, մի բարեպաշտ հոլանդացի Քրիստոնյա կին, չնայած երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում համակենտրոնացման ճամբարներում զերի վերցված լինելուն, ստացավ նման ապաքինում: Նա մեծապես տանջվել էր, բայց ի տարբերություն իր սիրելի քույր Բեթսիի, ով մահացավ ճամբարներից մեկում, Կորին դիմակայեց:

Պատերազմից հետո նա հաճախ հրապարակայնորեն խոսում էր իր փորձառությունների, ապաքինման և ներման մասին: Մի առիթով Նացիստական պահակախմբի նախկին անդամներից մեկը, ով մասնակիորեն իր ներդրումն ուներ Կորիի տանջալի բանտարկման մեջ Ռավենսբրուքում, Գերմանիա, մոտեցավ նրան՝ ուրախ Քրիստոսի ներման և սիրո մասին նրա ուղերձը լսելով:

«Որքան երախտապարտ եմ ձեր ուղերձի համար, *Ֆրոյլայն*», - ասաց նա: «Մտածել, որ, ինչպես դուք եք ասում, Նա մաքրե՛լ է իմ մեղքերը»

«Նա առաջ մեկնեց իր ձեռքը, որպեսզի սեղմի իմը»- վերհիշում էր Կորին: «Եվ ես, որ այդքան հաճախ էի քարոզել . . . ներման անհրաժեշտության մասին, ձեռքս առաջ չէի մեկնում:

«Նույնիսկ երբ բորբոքված, վրիժառու մտքերը եռում էին իմ մեջ, ես տեսա նրանց մեղքը: . . . Տեր Հիսուս, ես աղոթեցի, ներիր ինձ և օգնիր ինձ, որպեսզի ներեմ նրան:

«Ես փորձում էի ժպտալ, [և] պայքարում էի բարձրացնել ձեռքս: Չկարողացա: Ես ոչինչ չէի զգում, ջերմության կամ գթության ոչ մի նշույլ: Եվ, այսպիսով, ես կրկին ասացի մի լուռ աղոթք: Հիսուս, ես չեմ կարող ներել նրան: Տուր ինձ Քո ներումը:

«Երբ ես սեղմեցի նրա ձեռքը, ամենաանհավատալի բանը տեղի ունեցավ: Թվաց, թե ուսիցս թևիս երկայնքով և ձեռքիս միջով մի հոսանք անցավ ինձանից դեպի նա, մինչ սրտիս մեջ այս օտարականի նկատմամբ սեր ծնվեց, որն ինձ գրեթե հեղեղում էր:

«Եվ այսպիսով, ես պարզեցի, որ ոչ թե մեր ներումից կամ բարությունից է կախված աշխարհի ապաքինումը, այլ՝ Նրա: Երբ Նա ասում է մեզ սիրել մեր թշնամիներին, Նա, պատվիրանի հետ մեկտեղ, տալիս է նաև սերը»:[1]

Կորի Թեն Բումն առողջացավ:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Կա մի կյանք, որն աջակցում է նրանց, ովքեր անհանգստացած են կամ զտնվում են թախծի ու վշտի ծանրության տակ, – դա Տեր Հիսուս Քրիստոսն է»:[2]

Եթե դուք ձեզ զգում եք անմաքուր, չսիրված, դժբախտ, անարժան կամ անառողջ, հիշեք, որ «այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է դառնալ ճիշտ՝ Հիսուս Քրիստոսի Քավությամբ»:[3] Ունեցեք հավատք և համբերություն ձեզ համար Փրկչի ժամանակի ընտրության և նպատակների նկատմամբ: «Մի՛ վախենար, բայց միայն հավատա» (Մարկոս 5.36):

Համոզված եղեք, Փրկիչը մինչև հիմա ուզում է նորոգել մեր հոգիները և բժշկել մեր սրտերը: Երբ Նա սպասում է դռան մոտ և թակում է, եկեք պատասխանենք կրկին սկսելով աղոթել, ապաշխարել, ներել և մոռանալ: Եկեք սիրենք Աստծուն և ծառայենք մեր ընկերոջը և կանգնենք սուրբ վայրերում մաքուր կյանքով: Հիվանդը Բեթհեզդայի ավազանի մոտ, Երուսաղեմ մեկնող բորոտը և Կորի Թեն Բումն ապաքինվեցին: «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Վեր կաց և ման եկ: Նրա «շնորհքը բավական է» (Բ Կորնթացիս 12.9), և դուք մենակ չէք քայլի:

Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Ես գիտեմ, որ մենք բոլորս Նրա զավակներն ենք, և որ Նա սիրում է մեզ այնպիսին, ինչպիսին կանք, և ինչպիսին կարող ենք դառնալ: Ես գիտեմ, որ Նա ուղարկեց Իր Որդուն աշխարհ, որպեսզի լինի քավող զոհաբերությունը բոլոր մարդկության համար, և որ նրանք, ովքեր ուրախությամբ ընդունում են Նրա ավետարանը և հետևում են Նրան, կլինեն առողջ և կատարյալ – «իր ժամանակին, իր ձևով, և ըստ իր կամքի» (D&C 88:68): Սա է իմ վկայությունը ձեզ համար, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Corrie ten Boom, *The Hiding Place* (1971), 215.
2. Thomas S. Monson, “Meeting Life’s Challenges,” *Ensign,* Nov. 1993, 71.
3. *Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական Ծառայության Ուղեցույց* (2004), 52:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Ինչպես կոտրված անոթը

Ինչպե՞ս եք դուք լավագույնս արձագանքում, երբ դուք կամ ձեր սիրելիները բախվում են հոգեկան ու էմոցիոնալ խնդիրների:

Պետրոս Առաքյալը գրել է, որ Հիսուս Քրիստոսի աշակերտները պետք է «կարեկից» լինեն իրար հանդեպ:[1] Այդ կերպով եմ ցանկանում խոսել նրանց հետ, ովքեր տառապում են հոգեկան հիվանդության որևէ տեսակով կամ հոգեկան խանգարումով, անկախ նրանից՝ այդ վիշտը թեթև է, թե՝ ծանր, կամ՝ կարճաժամկետ է, թե՝ ձգվում է ողջ կյանքի ընթացքում: Մենք զգում ենք այդ հիվանդությունների բարդությունը, երբ մասնագետները խոսում են նեվրոզների կամ փսիխոզների մասին, ժառանգական նախահակումների մասին, հարկադրանքի, պարանոյայի և շիզոֆրենիայի մասին: Սակայն որչքան էլ շփոթեցնող լինեն, այս խանգարումները մահկանացու կյանքի իրականություններից են և չպետք է այլևս ամաչել դրանք ընդունելուց, ինչպես ընդունում ենք արյան ճնշման տատանումները կամ չարորակ ուռուցքի հանկարծակի հայտնվելը:

Զգտելով խաղաղության և հասկացողության այս դժվարին կացությունների ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ մենք ապրում ենք (և ընտրել ենք ապրել) ընկած աշխարհում, որտեղ աստվածային նպատակների համար մեր աստվածայնության մեր ձգտումը կփորձարկվի և կփորձվի կրկին ու կրկին: Այս ծրագրում ամենամեծ հավաստիացումն այն է, որ մեզ Փրկիչ խոստացվեց՝ Քավիչ, ով Իր հանդեպ մեր հավատքի շնորհիվ մեզ հաղթականորեն վեր կբարձրացնի այդ փորձություններից ու դժվարություններից, թեև դրա վարձքը անհամեմատելի մեծ է այդ փորձությունների ու դժվարությունների համեմատ՝ թե՛ Հոր համար, ով ուղարկեց նրան, և թե՛ Որդու համար, ով եկավ: Այդ աստվածային սիրո հանդեպ երախտագիտությունն է, որ կդարձնի մեր անհատական, սակավ տառապանքները սկզբում տանելի, ապա հասկանալի և ,վերջապես, քավելի:

Եկեք թողնենք իմ թվարկված ծայրահեղ հիվանդությունները և կենտրոնանանք ՀԴԽ-ի (Հիմնական դեպրեսիվ խանգարում) վրա:Երբ ես խոսում եմ այդ մասին, ես չեմ խոսում վատ վարսահարդարման օրերի, հարկերի վճարման ժամկետների կամ այլ հուսահատեցնող պահերի մասին, որ մենք բոլորս էլ ունենում ենք: Բոլորն էլ ժամանակ առ ժամանակ ունենում են ոգևորության և հուսահատության պահեր: Մորմոնի Գրքում ասվում է, որ Ամմոնը և նրա եղբայրները ընկճված էին ամենադժվարին պահերին[2], և այդպես կարող ենք մենք նաև լինել: Սակայն այսօր ես խոսում եմ ավելի լուրջ բաների, այնպիսի մի դաժան դժբախտության, որ մեծապես սահմանափակում է լիարժեք գործելու մարդու կարողությունները, մի անդունդի մասին ուղեղում, որն այնքան խորն է, որ ոչ ոք չի կարող պատասխանատվորեն հայտարարել, որ այդ վերքերը հեռու կքաշվեն, եթե նրանք մնան վճռական և լինեն ավելի դրական, թեև ես խիստ հորդորում եմ լինել վճռական և տրամադրվել դրականորեն:

Ոչ, մտքի և հոգու այդ խավար գիշերը պարզապես հուսահատություն չէ: Ես տեսել եմ դա բոլորովին հրեշտակային մի մարդու մոտ, երբ նրա սիրելի կինը 50 տարեկանում մահացավ: Ես տեսել եմ դա այն նոր մայրերի մոտ այսպես կոչված «հետծննդյան տխրության» ժամանակ: Ես տեսել եմ դա ցուցարար ոգևորված ուսանողների, զինվորական վետերանների մոտ, իրենց հասուն երեխաների համար մտահոգվող տատիկների մոտ:

Եվ ես դա տեսել եմ երիտասարդ հայրերի մոտ, ովքեր փորձում են ապահովել իրենց ընտանիքները: Եվ մի անգամ ես դա սարսափելիորեն տեսել եմ ինձ մոտ: Մեր ամուսնական կյանքի մի հատվածում, երբ ֆինանսական վախը համաձուլվել էր ուժասպառությանը, ես ստացա հոգեկան մի հարված, որը, իրական լինելով հանդերձ, անտրամաբանական էր և անսպասելի: Աստծո և իմ ընտանիքի սիրո շնորհիվ ես շարունակեցի գործել և աշխատել: Սակայն նույնիսկ այսքան երկար տարիներ անց զգում եմ ավելի խորը կարեկցանք նրանց հանդեպ, ովքեր ավելի քրոնիկ կամ ավելի խորն էին վնասվել այդ խավարից, քան ես: Բոլոր դեպքերում մենք բոլորս էլ խիզախություն ենք սովորել նրանցից, ովքեր, Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերով, «որոնել և զննել են ամենամռայլ անդունդները»[3] և հաստատակամ շարունակել,

որոնցից ոչ վերջինները եղել են Աբրահամ Լինկոլնը, Ուինսթոն Չերչիլը և Երեց Ջորջ Ալբերտ Սմիթը՝ մեր տնտեսության ամենահեզ և Քրիստոսանման մարդկանցից մեկը, ով մի քանի տարի պայքարել է կրկնվող դեպրեսիայի դեմ, դառնալով համընդհանուր սիրելի մարգարե և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը:

Այսպիսով, ինչպե՞ս եք դուք լավագույնս արձագանքում, երբ դուք կամ ձեր սիրելիները բախվում են հոգեկան ու էմոցիոնալ խնդիրների: Բոլորից առավել երբեք մի կորցրեք հավատքն առ ձեր Երկնային Հայրը, ով սիրում է ձեզ առավել, քան դուք կարող եք պատկերացնել: Ինչպես Նախագահ Մոնսոնն արտահայտիչ ձևով ասաց անցած շաբաթ երեկոյան Սփոփող Միության քույրերին. «Սերը երբեք չի փոխվում: . . . Այն այդտեղ է, երբ դուք տխուր եք կամ երջանիկ, հուսահատված կամ հույսով լեցուն: Աստծո սերը այդտեղ է, անկախ նրանից դուք արժանի եք [դրան]: Այն ուղակի միշտ այդտեղ է»:[4] Երբեք դրան չկասկածեք և երբեք չկարծրացնեք ձեր սրտերը: Հավատարմորեն ձգտեք հետևել ժամանակով փորձված հոգևոր երեկոների ծրագրերին, որոնք Տիրոջ Հոգին ձեր կյանք են բերում: Խորհուրդ հարցրեք նրանցից, ովքեր կրում են ձեր հոգևոր բարեկեցության բանալիները: Խնդրեք և զնահատեք քահանայության օրհնությունները: Ամեն կիրակի ընդունեք հաղորդությունը և ամուր կառչեք Հիսուս Քրիստոսի Քավության խոստումներից: Հավատացեք հրաշքներին: Ես տեսել եմ, ինչպես են դրանցից շատերն իրականացել, երբ այլ ցուցումներ ասում էին, որ հույս չկա: Հույսը *երբեք* չի կորչում: Եթե այդ հրաշքները չեն իրականանում արագ կամ լիարժեք կամ, կարծես, ընդհանրապես, հիշեք Փրկչի անձնական տառապալից օրինակը. Եթե դառը բաժակը չի անցնում, խմեք այն և եղեք ուժեղ, վստահելով գալիք երջանիկ օրերին:[5]

Հիվանդությունը կանխելու ժամանակ, եթե դա հնարավոր է, հետևեք ստրեսի ցուցանիշին՝ ինքներդ ձեր և ուրիշների մեջ, որոնց կարող եք օգնել: Ինչպես ձեր մեքենայի դեպքում, եղեք զգոն աճող ջերմաստիճանի, զարգացող արագության կամ վառելիքի ցուցիչի հանդեպ: Երբ առնչվում եք «ուժասպառությունից առաջացող դեպրեսիային», ապա արեք անհրաժեշտ ճշգրտումներ: Հոգնածությունը մեր ընդհանուր թշնամին է, այնպես որ դանդաղեցրեք, հանգստացեք, վերականգնվեք և լիցքավորվեք: Բժիշկները մեզ խոստանում են, որ եթե մենք ժամանակ չծախսենք առողջ լինելու վրա, ապա հետագայում մենք անկասկած ժամանակ կծախսենք հիվանդ լինելու վրա:

Եթե խնդիրները շարունակում են խոչընդոտել մեզ առաջ շարժվելուն, փնտրեք վերապատրաստում անցած, հեղինակավոր մարդկանց խորհուրդները, ովքեր ունեն մասնագիտական հմտություններ և կրում են լավ արժեքներ: Նրանց հետ անկեղծ եղեք ձեր անցյալի և ձեր մաքառումների վերաբերյալ: Աղոթքով և պատասանատվությամբ խորհեք նրանց տված խորհուրդները և թելադրած լուծումները: Եթե դուք ունեցել եք կույր աղիքի բորբոքում, Աստված ձեզանից կակնկալի, որ փնտրեք քահանայության օրհնություն *և* ստանաք հնարավոր ամենալավ բժշկական օգնությունը: Նույն կերպ վարվել էմոցիոնալ խանգարումների դեպքում: Մեր Երկնային Հայրը մեզանից ակնկալում է առատորեն կիրառել *բոլոր* այն հրաշալի շնորհները, որոնք Նա տվել է այս փառահեղ տնտեսության ժամանակ:

Եթե դուք հիվանդն եք, կամ խնամք մատուցողը, փորձեք չծանրաբեռնվել ձեր առաջադրանքի մեծությունից: Մի մտածեք, որ կարող

եք ուղղել ամեն բան: Ուղղեք այն, ինչ կարող եք: Եթե դրանք դրանք փոքրիկ հաղթանակներ են, երախտապարտ և համբերատար եղեք: Սուրբ գրություններում տասնյակ անգամներ Տերն ինչ-որ մեկին հրամայում է՝ «հանգիստ կանգնեք» կամ «հանգիստ եղեք» և սպասեք:[6] Որոշ բաների հանդեպ համբերատար լինելը մեր մահկանացու կյանքի կրթության մի մասն է:

Խնամողներ, ուրիշների առաողջությունը պահպանելու ձեր ջանքերում մի փչացրեք ձեր անձնականը: Այդ բոլոր բաներում եղեք իմաստուն: Մի վազեք ավելի արագ, քան ուժ ունեք: [7] Անկախ նրանից, թե ինչ մենք կարող ենք կամ անկարող ենք առաջարկել, մենք կարող ենք առաջարկել մեր աղոթքները և « անկեղծ սերը»:[8] «Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, . . . չի գրգռվում հեշտորեն, . . . այլ . . . տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է: Գթությունը *երբեք* չի խափանվում»:[9]

Նաև եկեք հիշենք, որ ցանկացած հիվանդության կամ դժվարին իրավիճակի դեպքում, կյանքում դեռևս կան շատ բաներ, որոնց համար կարող ենք հույս ունենալ և երախտապարտ լինել: Մենք շատ ավելին ենք, քան մեր սահմանափակումները կամ դժբախտությունները: Ստեֆանի Քլարկ Նիլսոնը և նրա ընտանիքը ավելի քան 30 տարի եղել են մեր ընկերները: 2008թ. օգոստոսի 16-ին Ստեֆանին և նրա ամուսինը՝ Քրիսչենը ինքնաթիռի վթարի ենթարկվեցին և հետևած հրդեհն այնքան ուժեղ էր վնասել Ստեֆանիին, որ, երբ ընտանիքի անդամներն եկան ճանաչելու տուժածներին, նրանք ճանաչեցին միայն նրա ներկած եղունգները: Գրեթե հույս չկար, որ Ստեֆանին կապրեր: Երեք ամիս տևած կոմայից նա արթնացավ և տեսավ իրեն: Այդ սարսափելի արտաքին վերքերից նա ընկավ դեպրեսիայի մեջ: Լինելով յոթ տարեկանից փոքր չորս երեխաների մայր, Ստեֆանին չէր ցանկանում, որ նրանք երբևէ տեսնեին իրեն: Նա մտածում էր, որ լավ կլիներ, եթե նա չապրեր: «Ես

մտածեցի, որ այդպես ավելի հեշտ կլիներ, - մի օր ինձ ասեց Ստեֆանին իմ գրասենյակում, -եթե նրանք ուղղակի մոռանային իմ մասին և ես անձայն հեռանայի նրանց կյանքից»:

Սակայն նրա հավերժական երախտիքի և ամուսնու, ընտանիքի, ընկերների աղոթքների, չորս հիասքանչ երեխաների և հինգերերդի շնորհիվ, որը ծնվեց Նիլսոնների ընտանիքում միայն 18 ամիս առաջ, Ստեֆանին ետ եկավ ոչնչացման անդունդի եզրից՝ լինելու ամենահայտնի «մայրիկ բլոգերը» ողջ երկրով մեկ, բացահայտորեն հայտարարելով այն չորս միլիոն մարդկանց, ովքեր հետևում են իրեն, որ կյանքում իր «աստվածային նպատակը» մայր լինելը և *ամեն օրը* գնահատելն է, որը նրան է տրվել այս հիանալի երկրի վրա:

Ինչպիսին էլ որ լինեն ձեր մաքառումները, իմ եղբայրներ և քույրեր, մտավոր, էմոցիոնալ, ֆիզիկական կամ այլ, մի քվեարկեք այս թանկագին կյանքի դեմ, վերջ դնելով դրան: Վստահեք Աստծուն: Կառչեք Նրա սիրուց: Իմացեք, որ մի օր լուսաբացը կլինի պայծառ և մահկանացու կյանքի բոլոր ստվերները կվերանան: Չնայած մենք կարող ենք մտածել, որ «նման ենք կոտրված անոթի», ինչպես սաղմոսաբանն է ասում,[10] մենք պետք է հիշենք, որ անոթը գտնվում է աստվածային կավագործի ձեռքին: Կոտրված մտքերը կարող են բուժվել ճիշտ այնպես, ինչպես կոտրված որսկորներն ու սրտերն են բուժվում: Մինչ Աստված աշխատում է դրանք վերականգնել, մյուսները կարող են օգնել, լինելով ողորմած, չդատապարտող և բարի:

Ես վկայում եմ սուրբ Հարության մասին, Տեր Հիսուս Քրիստոսի Քավության անկյունաքարի այդ անասելի պարգևի մասին: Միանալով Պողոս Առաքյալին, ես վկայում եմ, որ ինչ-որ սերմվում է ապականությամբ, մի օր հարություն կառնի կառնի անապականությամբ, և այն, ինչ սերմվում է անարգությամբ, ի վերջո, հարություն կառնի կառնի զորությամբ:[11] Ես վկայում եմ, որ մեր սիրելիները, ովքեր ունեն թերություններ մահկանացու կյանքում, կկանգնեն մեր առջև փառավորված և մեծ, զարմանալիորեն կատարյալ մարմնով և մտքով: Ինչպիսի ցնցող պահ դա կլինի: Ես չգիտեմ, թե արդյոք մենք կլինենք երջանիկ այն բանի համար, որ մենք ականատես եղանք այդպիսի հրաշքի, թե երջանիկ կլինենք նրանց համար, որ նրանք ամբողջությամբ կատարյալ են և, ի վերջո, «վերջապես ազատ են»:[12] Մինչ այն ժամը, երբ Քրիստոսի կատարյալ շնորհը հայտնի կդառնա բոլորիս, եկեք ապրենք հավատքով, ամուր կառչենք հույսից և ցույց տանք կարեկցանք մեկը մյուսի հանդեպ, [13] ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Պետրոս 3.8:
2. Տես Ալմա 26.27; տես նաև Ալմա 56.16:
3. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 267:
4. Թոմաս Ս. Մոնսոն, «Մենք երբեք միայնակ չենք քայլում», *Լիահոնա*, նոյ. 2013, էջ 123,124:
5. Տես Մատթեոս 26.39:
6. Տես, օրինակ, Սաղմոս 4.4; Վարդապետություն և Ուխտեր 101.16:
7. Տես Մոսիա 4.27:
8. Վարդապետություն և Ուխտեր 121:41.
9. Ա Կորնթացիս 13.4, 7–8; շեշտադրումն ավելացված է; տես նաև Մորոնի 7.45–46:
10. Սաղմոս 31.12:
11. Տես Ա Կորնթացիս 15.42–43:
12. "Free at Last," in John W. Work, comp., *American Negro Songs: 230 Folk Songs and Spirituals, Religious and Secular* (1998), 197.
13. Ա Պետրոս 3.8:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Ապավինեք Տիրոջը

Ներգրավվեք անելու ինչ դուք կարող եք՝ կիսվելով Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգման հրաշալի ուղերձով:

Քույր Բալլարդը և ես Եվրոպայի հինգ երկրներում հանձնարարություն կատարելուց վերջերս ենք վերադարձել: Այնտեղ մենք արտոնություն ունեցանք հանդիպել մեր միսիոներներից շատերի, հավանաբար, ձեր որդիներից և ձեր դուստրերից ոմանց հետ: Այն ժամանակից ի վեր ինչ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց մեր երիտասարդ տղաների և երիտասարդ աղջիկների ծառայելու տարիքային սահմանը իջեցնելու մասին, ես արտոնություն եմ ունեցել հանդիպել նրանցից ավելի քան 3000-ի հետ: Քրիստոսի Լույսը շողում է նրանց դեմքին և նրանք ցանկանում են առաջ տանել աշխատանքը՝ գտնել և ուսուցանել, մկրտել և ակտիվացնել և զորացնել ու կառուցել Աստծո արքայությունը: Այնուամենայնիվ, հանդիպելով նրանց հետ, մարդ արագ սկսում է հասկանալ, որ նրանք չեն կարող այս աշխատանքը միայնակ անել: Այսօր ես կամենում եմ խոսել Եկեղեցու բոլոր անդամների հետ, որովհետև խիստ անհրաժեշտություն կա յուրաքանչյուրի համար՝ զբաղվել ավետարանով կիսվելով:

Ինչպես բազմիցս վկայակոչվել է՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է, որ «այն բոլորից հետո ինչ ասվել է, մեծագույն և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 330):

1974թ. Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է հետևյալը. «Հավանաբար, մեծագույն պատճառը միսիոներական աշխատանքի համար՝ աշխարհին ավետարանը լսելու և ընդունելու հնարավորություն տալն է: Սուրբ գրությունները լցված են հրամաններով և խոստումներով և ավետարանն ուսուցանելու համար կանչերով և պարգևներով: Ես դիտավորյալ օգտագործում եմ *հրաման* բառը, քանի որ այն թվում է հաստատակամ հրահանգ, որից մենք, անհատապես և հավաքականորեն չենք կարող խուսափել» (“When the World Will Be Converted,” *Ensign,* Oct. 1974, 4):

Այդ նույն տարվա հուլիսին, Քույր Բալլարդը և ես մեկնեցինք մեր երեխաների հետ նախագահելու Կանադայի Տորոնտո Միսիայում: Նախագահ Քիմբալի խոսքերը զնգում էին ականջներումս, հատկապես, երբ նա ասաց. «Իմ Եղբայրներ, ինձ անհանգստացնում է, թե մենք արդյոք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք: Միթե՞ մենք բավարարված ենք ողջ աշխարհին ուսուցանելու մեր մոտեցմամբ: Մենք քարոզում ենք արդեն 144 տարի: Արդյոք պատրաստ ե՞նք լայնացնել մեր քայլերը: Մեծացնել մեր տեսադաշտը» (*Ensign,* Oct. 1974, 5):

Նա խնդրեց մեզ նաև արագացնել մեր քայլվածքը, միասնաբար աշխատելով՝ Եկեղեցին և Աստծո արքայությունը կառուցելու համար:

Այս անցած հունիսին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նույն կոչը կրկնեց Եկեղեցու անդամների համար: Նա ասաց. «Այժմ է միավորվելու ժամանակը անդամների և միսիոներների համար . . . [և] աշխատելու Տիրոջ այգում բերելու հոգիներ Նրա համար: Նա պատաստել է միջոցներ մեզ համար՝ կիսվելու ավետարանով բազմաթիվ ուղիներով և Նա կօգնի մեզ մեր աշխատանքներում, եթե մենք գործենք հավատքով՝ Նրա աշխատանքը կատարելու համար» . . . (“Faith in the Work of Salvation” [address given at a special broadcast, June 23, 2013]; lds.org/broadcasts):

Լավ է եղբայրներ և քույրեր մտածել մարգարեների ուսմունքների մասին Ջոզեֆ Սմիթի ժամանակից սկսած մինչև այսօր: Նրանք խրախուսել են և կոչ արել ղեկավարությանը և Եկեղեցու անդամներին ջերմեռանդ զբաղվել ավետարանի վերականգման ուղերձը բոլոր մեր Երկնային Հոր զավակներին ողջ աշխարհում տարածելով:

Իմ այս հետկեսօրյա ուղերձն է, որ Տերն արագացնում *է* Իր աշխատանքը: Մեր օրերում սա միայն կարող է արվել, երբ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ օգնության է հասնում սիրով՝ Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի ճշմարտություններով կիսվելու համար: Մենք պետք է աշխատենք միասին համագործակցելով՝ այժմ մեր ծառայող մոտ 80000 միսիոներների հետ: Այս սքանչելի աշխատանքի վերաբերյալ տեղեկությունները, հատկապես ցցի և ծխի խորհրդի ղեկավարների համար հանձնարարությունները՝ հստակորեն ներկայացված են LDS.org կայքէջում, որը կոչվում է. «Արագացնել Փրկության աշխատանքը»:

Մենք մեր հետազոտություններից գիտենք, որ Եկեղեցու ամենաակտիվ անդամները կամենում են, որ ավետարանի օրհնությունները մաս լինեն մյուսների կյանքում, ում նրանք սիրում են, նույնիսկ նրանց, ում նրանք երբեք չեն հանդիպել: Բայց մենք գիտենք նաև, որ շատ անդամներ տատանվում են կատարել միսիոներական աշխատանք և կիսվել ավետարանով երկու հիմնական պատճառներով:

- Առաջինը վախն է: Շատ անդամներ նույնիսկ չեն աղոթում ավետարանով կիսվելու հնարավորությունների համար, վախենալով, որ իրենք կստանան աստվածային հուշումներ՝ անելու բաներ, որոնք իրենք կարծում են ընդունակ չեն անել:
- Երկրորդ պատճառը թյուրըմբռնումն է, թե ինչ է միսիոներական աշխատանքը:

Մենք գիտենք, որ երբ ինչ-որ մեկը վեր է կենում ելույթ ունենալու հաղորդության ժողովի ժամանակ և ասում. «Այսօր ես կխոսեմ միսիոներական աշխատանքի մասին» կամ գուցե, նույնիսկ, երբ Երեց Բալլարդն է վեր կենում գերագույն համաժողովի ժամանակ և ասում նույն բանը, ձեզանից ոմանք, ովքեր լսում են, կարող է մտածեն. «Օ՜ ոչ, չարժե նորից, մենք դա նախկինում լսել ենք»:

Այսպիսով, մենք գիտենք, որ ոչ ոք չի սիրում մեղավոր զգալ: Գուցե դուք զգում եք, որ ձեզ խնդրելու են անհիրական բաներ անել ձեր ընկերների և հարևանների փոխհարաբերություններում: Տիրոջ օգնությամբ թույլ տվեք հեռացնել ամեն վախ, որ դուք կամ լիաժամկետ միսիոներներից որևէ մեկը կարող է ունենան ուրիշների հետ ավետարանով կիսվելիս:

Որոշում ընդունեք անել այն, ինչ Հիսուս Քրիստոսն է խնդրել ձեզ անել: Փրկիչն ասել է.

«Խնդրեք եւ կտրուի ձեզ. որոնեցէք եւ կգտնէք, դուռը թակեցէք եւ կբացուի ձեզ.

Որովհետեւ ամեն խնդրող առնում է, եւ որոնողը գտնում է. Եւ դուռը թակողին կբացուի:

Կամ ո՞վ է ձեզանից այն մարդը, որ եթե նորանից իր որդին հաց ուզէ, մի՞թէ քար կտայ նորան:

Եւ եթե ձուկ ուզէ, մի՞թէ օձ կտայ նորան:

Եթե դուք . . . գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդկանցը. ո՞րքան աւելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բարիքներ կտայ նորանց, որ խնդրում են իրանից» (Մատթեոս Է.7–11):

Եղբայրներ և քույրեր վախը կվերափոխվի հավատքի և վստահության, երբ անդամները և լիաժամկետ միսիոներները ծնկի իջնեն և խնդրեն Տիրոջից օրհնել իրենց միսիոներական հնարավորություններով: Հետո, մենք պետք է դրսևորենք մեր հավատքը և որոնենք հնարավորություններ ներկայացնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր Երկնային Հոր զավակներին և, անկասկած, հնարավորությունները կգան: Այդ հնարավորությունները երբեք չեն պահանջի ստիպողական կամ հարկադրված պատասխան: Դրանք կհոսեն որպես մեր եղբայրների և քույրերի հանդեպ մեր սիրո բնական արդյունք: Ուղղակի եղեք լավատես և նրանք, ում հետ դուք կխոսեք, կզգան ձեր սերը: Նրանք երբեք չեն մոռանա այդ զգացումը, նույնիսկ, եթե այդ ժամանակը ճիշտ չլինի իրենց համար ընդունելու ավետարանը: Դա կարող է նաև փոխվել ապագայում, երբ նրանց հանգամանքները փոխվեն:

Անհնարին է ձախողվել, երբ անում ենք մեր լավագույնը, երբ Տիրոջ հանձնարարության տակ եք: Չնայած արդյունքն ազատ կամքի գործադրման հետևանք է, ավետարանով կիսվելը մեր պարտականությունն է:

Վստահեք Տիրոջը: Նա Բարի Հովիվն է: Նա գիտի իր ոչխարներին և Նրա ոչխարները ճանաչում են Նրա ձայնը, իսկ այսօր Բարի Հովվի ձայնը ձեր ձայնն է և իմ ձայնը: Եվ եթե մենք չենք մասնակցում, շատերը, ովքեր կլսեին Վերականգման ուղերձը, կանցնեն կողքով: Պարզ ասած, դա հավատքի և գործի հարց է մեր կողմից: Սկզբունքները բավականին պարզ են՝ աղոթք անհատապես և ձեր ընտանիքում՝ միսիոներական հնարավորությունների համար: Տերն ասել է Վարդապետություն և Ուխտերում, որ շատ մարդիկ ճշմարտությունից հեռու են պահվել, միայն «որովհետև չգիտեն որտեղ գտնեն այն» (ՎԵՈՒ 123.12):

Դուք պարտադիր չէ, որ կենսուրախ անձնավորություն կամ պերճախոս համոզիչ ուսուցիչ լինեք: Եթե դուք ունեք մնայուն սեր և հույս ձեր մեջ, Տերը խոստացել է՝ եթե դուք «բարձրացնեք ձեր ձայնը դեպի այս ժողովուրդը, ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում, . . . դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ:

«[Եվ] . . . այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք» (ՎԵՈՒ 100.5–6):

Քարոզիր Իմ Ավետարանը հիշեցնում է մեզ բոլորիս, որ «ոչինչ

տեղի չի ունենում միսիոներական աշխատանքում մինչև [մենք] չենք գտնում որևէ մեկին ուսուցանելու համար: Խոսեք այնքան շատ մարդկանց հետ, որքան կարող եք ամեն օր: Բնական է, որ ինչ-որ չափով վախենալի է խոսել մարդկանց հետ, բայց դուք կարող եք աղոթել հավատքի և ուժի համար, որ ավելի համարձակ լինեք վերականգված ավետարանը հռչակելու նպատակով ձեր բերանը բացելիս ([2004], 156–57): Զե՛զ, լիաժամկետ միսիոներներ, եթե դուք կամենում եք ավելի շատ ուսուցանել, դուք պետք է խոսեք ավելի շատ մարդկանց հետ, ամեն օր: Սա միշտ եղել է այն, ինչ Տերն է առաջ ուղարկել միսիոներներին անել:

Տերը գիտի մեզ: Նա գիտի, որ մենք ունենք մեր մարտահրավերները: Ես հասկանում եմ, որ ձեզանից ոմանք կարող է զգան խիստ ծանրաբեռնված, բայց ես աղոթում եմ, որ ձեզանից ոչ մեկը երբևէ չզգա, որ բնական, հաճելի ձևով ավետարանով կիսվելը երբևէ կարող է բեռ լինել: Ավելի շուտ, այն արտոնություն է: Չկա ավելի մեծ ուրախություն կյանքում, քան Տիրոջ ծառայությանը ջերմեռանդ մասնակցելը:

Բանալին այն է, որ դուք ոգեշնչվեք Աստծուց, որ դուք Նրանից ուղղություն խնդրեք և հետո գնաք և անեք ինչպես Հոգին կհուշի ձեզ: Երբ անդամները նայում են փրկության աշխատանքի վրա միայն որպես պարտականություն, դա կարող է երկյուղալի թվալ: Երբ նրանք նայում են դրան որպես Տիրոջը հետևելու հրավեր՝ դեպի Նա հոգիներ բերելու ուսուցանվելու լիաժամկետ երեցների և քույրերի կողմից, այն ոգեշնչող է, կենսատու և վեհացնող:

Մենք չենք խնդրում ամեն մեկին անել ամեն ինչ: Մենք պարզապես խնդրում ենք բոլոր անդամներին՝ աղոթել, իմանալով որ, եթե յուրաքանչյուր անդամ, երիտասարդ, թե ծեր, ճիգ գործադրի հաղորդակցվել ընդամենը «մեկի» հետ այժմվանից սկսած մինչև Սուրբ Ծնունդ, միլիոնավոր մարդիկ կզգան Տեր Հիսուս Քրիստոսի սերը: Ինչպիսի՜ սքանչելի նվեր կլինի Փրկչին:

Վեց շաբաթ առաջ ես մի նամակ ստացա մի շատ հաջողակ անդամ միսիոներական ընտանիքից, Մունների ընտանիքից՝ Ֆլորիդայից: Նրանք գրել են.

«Սիրելի Երեց Բալլարդ, փրկության աշխատանքն արագացնելու վերաբերյալ համաշխարհային հեռարձակումից 30 րոպե հետո, մենք հրավիրեցինք մեր ընտանեկան միսիոներական խորհուրդը: Մենք խորապես հուզվեցինք՝ պարզելով, որ մեր դեռահաս թոռները նույնպես ցանկացան մասնակցել: Մենք երջանիկ ենք հաղորդել, որ մեր խորհրդի ժողովից սկսած մենք մեծացրել ենք մեր ընտանեկան ուսուցման ծավալը 200 տոկոսով:

Մեր թոռները եկեղեցի բերեցին ընկերների, մենք վայելեցինք հաղորդության ժողովը մեր քիչ ակտիվ ընկերների հետ և մեր նոր ծանոթներին պարտավորեցրեցինք միսիոներական զրույցներ լսել: Մեր քիչ ակտիվ քույրերից մեկը ոչ միայն վերադարձավ եկեղեցի, այլ իր հետ բերեց նոր հետաքրքրվողներ:

Ոչ ոք չմերժեց միսիոներական զրույցներ լսելու հրավերը: Ինչպիսի



հուզումնալի ժամանակ է լինել այս Եկեղեցու անդամը: Ինչպիսի հուզումնալի պահ՝ այս Եկեղեցու անդամը լինել» (անձնական նամակ, օգոստ. 15, 2013):

Ուշադրություն դարձրեք Հոգու հուշումներին: Աղերսեք Տիրոջը հզոր աղոթքով: Ներգրավվեք անելու ինչ դուք կարող եք՝ կիսվելով Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգման հրաշալի ուղերձով:

Ես վկայակոչում եմ մեկ այլ հաջողակ անդամ միսիոներից՝ Քլեյթոն Քրիսչենսենից. «Ամեն անգամ, երբ դուք փոխաբերական ձևով բռնում եք ինչ-որ մեկի ձեռքը և ներկայացնում նրան Հիսուս Քրիստոսին, դուք կզգաք, թե որքան խորապես է մեր Փրկիչը սիրում ձեզ և սիրում այն մարդուն, ում ձեռքը դուք բռնած եք (*The Power of Everyday Missionaries: The What and How of Sharing the Gospel* [2013], 1):

Աստված օրհնի ձեզ եղբայրներ և քույրեր, գտնելու այն մեծ ուրախությունը, որը գալիս է ձեր հավատքի միջոցով հրաշքների փորձառություններ ունենալուց: Ինչպես մեզ ուսուցանվել է Մորոնիի 7-րդ գլխում.

«Քրիստոսն ասել է. Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, ապա զորություն կունենաք անելու ինչ-որ նպատակահարմար է ինձ . . . .

. . . Քանզի հավատքով է, որ հրաշքներ են գործվում և հավատքով է, որ հրեշտակներ են հայտնվում և սպասավորում մարդկանց. Ուստի, եթե այս բաները դադարել են, վայ լինի մարդկանց զավակներին, քանզի դա անհավատության պատճառով է և բոլորը զուր է» (Մորոնի 7.33, 37):

Իմ փորձառությունից ելնելով՝ ես կարող եմ վկայել ձեզ, որ Տերը կլսի ձեր աղոթքները և դուք կունենաք մեծ հնարավորություններ այժմ և գալիք տարիների ընթացքում՝ ներկայացնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր Երկնային Հոր թանկագին զավակներին: Աղոթում եմ, որ մենք բոլորս կարողանանք զգալ այն մեծ ուրախությունը, որը գալիս է միսիոներական ծառայությունից, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորում

Հավատո հանգանակներում պարունակվող վարդապետությունները և սկզբունքները

Հավատո յուրաքանչյուր հանգանակ յուրահատուկ արժեք է հաղորդում Հիսուս Քրիստոսի ավետարանի մեր հասկացողությանը:

Երբ ինձ հանձնարարեցին խոսել գերագույն համաժողովի քահանայության նիստին, ես անմիջապես մտածեցի Երեխաների խմբի հիանալի մի ուսուցչի մասին: Նրա մեծագույն ցանկությունն էր պատրաստել մեզ քահանայություն ստանալուն արժանի լինելուն: Նա վարժեցնում էր մեզ Երեխաների խմբի ավարտական պահանջները սերտելու մեջ՝ մտապահել Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների անունները և Հավատո Հանգանակները: Նա նաև խոստում տվեց մեզ. Եթե բոլորս կարողանայինք անգիր արտասանել հավատո տասներեքերորդ հանկանակը, ապա մենք կարող էինք ընտրել վայրը և վերջին դասին գնալ դուրս:

Մենք ընտրեցինք մի հատուկ տեղ, որը սիրում էինք, որովհետև մագլցում էինք ժայռերը՝ Լոգան Քենյոնի սկզբնամասում, հարավային Յուտա: Ժայռերի քարքարոտ բարձրունքներում մի փոքր հարթ տեղ կար, որը բնական բուխարի ուներ, որի մեջ կարելի էր հոթդոգ պատրաստել և մարշմելոու խորովել: Սակայն ընտրություն կատարելիս հաշվի չէինք առել մեր ուսուցչին, որը տարիքով մեծ էր և, անշուշտ, սպորտային տեսակին չէր պատկանում: Եթե մենք ավելի խորը մտածեինք, մեզ համար պարզ կլիներ, որ մագլցելը նրա համար դժվար էր լինելու: Ինչևէ, նրա խոստումը կարևոր էր նրա համար և նա ուրախ հետևեց մեզ:

Սկզբում մենք մագլցեցինք մի փոքր բլուր: Մեր ժամանակ չկային հոսանքի լարեր, որոնք կխանգարեին բարձրանալուն: Որոշ օգնությամբ մեր ուսուցիչը բարձրացավ բլրի վրա: Գագաթին մենք հանգրվանեցինք ժայռոտ մի վայրում, որը կոչել էինք «Կրիայի մեջք»:

Երբ հասանք, ժամանակ պահանջվեց մինչև որ մեր ուսուցչուհին վերականգներ իր շնչառությունը: Երբ մենք պատրաստեցինք մեր սնունդը և նստեցինք ուտելու, նա բավականին վերականգնվել էր, որպեսզի ուսուցաներ մեզ մեր վերջին դասը: Նա մեզ ասաց, թե ինչպիսի հաճույքով էր ուսուցանում Երեխաների խմբում վերջին երկու տարիների ընթացքում: Նա գովաբանեց մեզ նրա համար, թե որքան լավ էինք մենք սերտել հավատո հանգանակները: Նա կարող էր ասել համարը, և մենք կարող էինք արտասանել այդ հատվածը: Ապա նա ասաց, որ հավատո հանգանակները անգիր սովորելը կարող է լինել միայն խոսքերի մի ցանկ, եթե մենք չենք հասկանում դրանց մեջ պարունակվող վարդապետությունները և սկզբունքները: Նա խրախուսեց մեզ ուսումնասիրել ավետարանական վարդապետությունը հավատո յուրաքանչյուր հանգանակում: Նա բացատրեց, որ հավատո հանգանակներում գտնվող վարդապետությունները բաժանված են բաժինների:

I. Աստվածագլուխը և Քրիստոսի հիմնական վարդապետությունը

Հավատո առաջին հանգանակից մենք սովորում ենք, որ Աստվածագլուխը երեք կերպարներից է բաղկացած՝ Հայր Աստծուց, Հիսուս Քրիստոսից և Սուրբ Հոգուց:

Երկրորդ հանգանակն ուսուցանում է մեզ, որ մենք պատասխանատու ենք երկրի վրա մեր սեփական գործողությունների համար:

Երրորդը տալիս է Երկնային Հոր զավակների փրկության համար Փրկչի առաքելության պատկերը:

Չորրորդն ուսուցանում է

հիմնական սկզբունքների և ծեսերի կարևորությունը:

Մեր ուսուցչուհու խոսքերի զորությունը ոգեշնչման աղբյուր դարձավ ինձ համար, քանի որ նա շեշտը դրեց ավետարանի ուսումնասիրության վրա: Սուրբ գրություններն առաջնորդում են մեզ դեպի ճշմարտության չափանիշը, որով մենք կարող ենք դատել այն գիտելիքի մասին, որը ստանում ենք, լինի այն ճշմարիտ, թե՝ կեղծ: Ճշմարիտ վարդապետությունը գալիս է Աստծուց՝ ողջ ճշմարտության աղբյուրից և հիմքից: Ճշմարիտ վարդապետության ուսմունքները և դրույթները գտնվում են մեր Տիրոջ և Փրկչի ավետարանի մեջ: Կեղծ ուսմունքները գալիս են Սատանայից՝ բոլոր ստերի հորից: Նրա ցանկությունն է՝ խեղաթյուրել, փոփոխել և հարմարեցնել հայտնությամբ տրված ճշմարտությունները: Նա ցանկանում է խաբել մեզ, որպեսզի մեզանից ոմանք կորցնեն մեր երկնային տուն տանող վերադարձի ճանապարհը:

Սուրբ գրությունները մեզ սովորեցնում են, թե ինչպես խուսափել կեղծ ուսմունքներից: Օրինակ, Տիմոթեոսին ուղղված Պողոսի նամակում մենք կարդում ենք.

«Ամեն Գիրք աստուածաշունչ են եւ օգտակար, վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան խրատելու համար.

Որ Աստուծոյ մարդը կատարեալ լինի՝ ամեն բարի գործերի համար պատրաստուած» (Բ Տիմոթեոս 3.16–17):

Այս վարդապետությունն Եկեղեցու համար նման է մարտկոցի՝ բջջային հեռախոսի համար: Երբ դուք հանում եք մարտկոցը ձեր հեռախոսի միջից, այն անպետք է դառնում: Եկեղեցին, որում ճշմարիտ վարդապետությունն այլևս չի ուսուցանվում, նմանապես անպետք է դառնում: Այն չի կարող տանել մեզ հետ՝ դեպի մեր Երկնային Հայրը և մեր հավերժական տունը:

II. Քահանայության կազմակերպությունը և կարգը

Նրանից հետո, երբ մենք սկսում ենք հասկանալ Քրիստոսի

հիմնական վարդապետությունը, հավատո հինգերորդ և վեցերորդ հանգանակները մեզ սովորեցնում են քահանայության կազմակերպության և կարգի մասին: Տիրոջ ղեկավարությամբ Ջոզեֆ Սմիթը կազմակերպեց Փրկչի Եկեղեցին, օգտագործելով քահանայության իշխանությունը՝ Աստծո զորությունը: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին նույն կազմակերպությունն է, որը Քրիստոսը կազմակերպեց և ղեկավարեց, երբ երկրի վրա էր:

Ինչպիսի փառավոր օր էր Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիիի համար 1829թ. մայիսին, երբ նրանք գնացին անտառ աղոթելու մկրտության վարդապետության համար՝ մեղքերի թողության համար, որի մասին կարդացել էին Մորմոնի Գիրքը թարգմանելիս: 1800-ականների սկզբին կային բազմաթիվ ուսմունքներ մկրտության մասին, որոնք ուսուցանվում էին տարբեր եկեղեցիների կողմից, և Ջոզեֆը և Օլիվերը գիտեին, որ դրանք բոլորը ճշմարիտ չէին կարող լինել: Նրանք ցանկանում էին իմանալ մկրտության ճիշտ ձևի մասին, և թե ով ուներ մկրտելու իշխանություն:

Ի պատասխան Տիրոջն ուղղված նրանց խնդրանքին նրանց հայտնվեց Հովհաննես Մկրտիչը: Նա դրեց իր ձեռքերը նրանց գլուխներին և շնորհեց նրանց մկրտելու իշխանությունը այս խոսքերով. «Իմ ընկերակից ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի Քահանայությունը» (ՎԵՈՒ 13.1):

Ինչպիսի զարմանահրաշ օր աշխարհի պատմության մեջ: Քահանայությունը վերականգնվեց երկրի վրա:

Երբ մենք ստանում ենք քահանայություն, մենք ստանում ենք իշխանություն գործելու Աստծո անունից և ղեկավարելու ճշմարտության և արդարակեցության ճանապարհով: Այդ իշխանությունը արդարակեցության զորության կենսական աղբյուր է և ազդեցություն՝ ի օգուտ երկրի վրա Աստծո զավակների, և այն կշարունակվի գործել վարագույրից այն կողմ: Այն անհրաժեշտ է, որպեսզի քահանայությունը վերականգնվեր նախքան Հիսուս Քրիստոսի Եկեղեցու կազմավորումը: Սա հիմնարար դաս է, որը մենք սովորում ենք հավատո հինգերորդ և վեցերորդ հանգանակներից:

III. Հավերժական ռեսուրսներ մահկանացու ճանապարհորդության մեջ

Հավատո հաջորդ երեք հանգանակները՝ յոթերորդ, ութերորդ և իներորդը, սահմանում են այն ռեսուրսները, որոնք ուղղորդում են մեր մահկանացու ճանապարհորդությունը: Մեզ տրված են հոգևոր պարգևներ, որոնք առաջնորդում են մեզ, երբ մենք հետևում ենք Տիրոջ ուսմունքներին, և պաշտպանում են մեզ չարից: Սուրբ գրությունները մեկ այլ ուղեցույց են. եթե մենք ուշադիր ենք կարդում Աստծո խոսքը, Նա կհայտնի դեպի հավերժական կյանք տանող մեր ուղին:

Հավատո իններորդ հանգանակը մեզ ուսուցանում է, որ Աստված

հայտնել է, հայտնում է և կհայտնի ապագայում շատ մեծ և կարևոր ճշմարտություններ Իր մարգարեների, տեսանողների և հայտնողների միջոցով: Մենք սովորում ենք, որ Հոգու ցածր և մեղմ ձայնին լսելուց և սուրբ գրությունները կարդալուց բացի առաջնորդության մեկ այլ աղբյուր են հանդիսանում մեր Եկեղեցու ղեկավարները, ովքեր ընտրվել, կանչվել և ձեռնադրվել են՝ օրհնելու մեր կյանքը իրենց ուսուցանող դասերով:

IV. Անդամ միսիոներներ

Հավատո տասերորդ, տասնմեկերորդ և տասներկուերորդ հանգանակներն ուսուցանում են մեզ, թե ինչպես կատարել միսիոներական աշխատանք և կիսվել ավետարանով տարբեր ազգեր և օրենքներ ունեցող աշխարհում: Մենք սովորում ենք Իսրայելի հավաքման մասին՝ որպես պատրաստություն Փրկչի Երկրորդ Գալստին: Մենք ուսուցանվում ենք, որ տղամարդիկ և կանայք իրենց իսկ գործակալներն են և կարող են ընդունել կամ մերժել Աստծո խոսքը համաձայն իրենց խղճի: Վերջապես, մենք սովորում ենք, որ տարածելով Հիսուս Քրիստոսի ավետարանը երկրի չորս անկյուններում, մենք պետք է հարգենք յուրաքանչյուր երկրի կառավարությունը, ուր մուտք ենք գործում: Իսկապես, մենք հավատում ենք յուրաքանչյուր երկրի օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և դրան աջակցելուն:

V. Ոգեշնչող հատկանիշներ

Հավատո տասներեքերորդ հանգանակը հատուկ ներշնչում է տալիս այն մասին, թե ինչպես մենք պետք է վարենք մեր կյանքը և ներկայացնենք մեզ: Այն ասում է. «Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավ, կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին. Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր

բաներին: Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի,– մենք ձգտում ենք այդ ամենին»:

Մենք բոլորս պետք է ձգտենք մարմնավորել այդ հատկանիշները և վարել մեր կյանքն այնպես, որպեսզի դրանց օրինակը ծառայենք: Հավատո հանգանակներում ուսուցանված ճշմարտությունները կառուցվում են միմյանց վրա ինչպես բջջային հեռախոսի միմյանց օժանդակող բաղադրիչները: Ինչպես բարդ մատակարարման շղթա, որը բաղադրիչներ է ապահովում բջջային հեռախոսին, հավատո հանգանակները մատակարարում են մեզ Վերականգնման հիմնարար վարդապետութունները: Հավատո յուրաքանչյուր հանգանակ յուրահատուկ արժեք է հաղորդում Հիսուս Քրիստոսի ավետարանի մեր հասկացողությանը:

Երեխաների խմբի իմ ուսուցչուհին իմ մեջ վճռականություն է սերմանել ուսումնասիրելու արքայության վարդապետությունները: Նա ինձ ուսուցանել է փնտրել խոր իմաստ, որը պարունակվում է հավատո այս պարզ հանգանակներում: Նա խոստացել է ինձ, որ եթե ես ուսումնասիրեմ այս սուրբ ճշմարտությունները, իմ ձեռքբերած գիտելիքը կփոխի իմ կյանքը դեպի ավելի լավը, և ես վկայում եմ ձեզ, որ դա այդպես է:

Լոգան Քենյոնում իմ ուսուցչուհու այդ հիանալի դասից հետո մենք նկատեցինք, որ մի փոքր ավելի երկար էինք մնացել, քան պլանավորել էինք: Երեկոն մոտենում էր և մենք հասկացանք, որ խնդիր ունեինք:

Ուսուցչուհիս դժվարությամբ հասավ մեր հատուկ նշանակակետին, սակայն վերադարձը մեծ խնդիր էր հանդիսանում մեզ համար: Դա միայն մեկ անգամ ևս ապացուցեց տեղի վատ ընտրությունը մեր կողմից: Վերադառնալը մեզ համար դժվար էր, սակայն շատ ավելի դժվար էր նրա տարիքի մարդու համար:

Երբ մենք մաքառում էինք, օգնելով նրան իջնել բլրից, երկու ոստիկան հայտնվեցին: Երեխաների խմբի նախագահը ուղարկել էր նրանց գտնելու մեզ, վախենալով, որ մենք մոլորվել էինք: Իրադարձության զարգացումը և ուսուցանված դասերը անմոռանալի փորձառություն դարձան իմ կյանքում:

Երիտասարդ տղամարդիկ, ես խրախուսում եմ ձեզ օգտագործել ձեր պայծառ մտքերը և ուսումնասիրել հավատո հանգանակները և դրանցում ուսուցանվող վարդապետությունները: Դրանք Եկեղեցու վարդապետության առավել կարևոր և, անկասկած, առավել հակիրճ հայտարարությունների թվում են: Դուք կօգտագործեք դրանք որպես ուղեցույց՝ Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսումնասիրելիս, դուք կտեսնեք, որ պատրաստված եք հայտարարելու ձեր վկայությունը վերականգնված ճշմարտության մասին աշխարհին: Դուք ի վիճակի կլինեք պարզ, հասկանալի և խորաթափանց եղանակով հռչակել ձեր հիմնական հավատամքները, որոնք թանկ են ձեզ՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամի համար:

Ես ավելացնում եմ իմ վկայությունը Հավատո տասներեքերորդ հանգանակի ճշմարտացիությանը, մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Եպիսկոպոս Ջեռալդ Կոսե
Նախագահող եպիսկոպոսության
առաջին խորհրդական

Այլևս օտար չեք

Այս Եկեղեցում չկան օտարներ և վտարվածներ: Կան միայն եղբայրներ և քույրեր:

Մեզանից շատերը որոշակի պահերի հայտնվում են այնպիսի իրավիճակներում, որոնք նորություն են մեզ համար, որտեղ մենք օտար ու անպաշտպան էինք զգում: Այդպիսի իրավիճակի հանդիպեց մեր ընտանիքը շուրջ հինգ տարի առաջ, երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կանչեց ինձ ծառայելու որպես Եկեղեցու Գերագույն Իշխանավոր: Այդ կանչը պարտադրեց մեր ընտանիքին տեղափոխվել մի գեղեցիկ վայրից, որը մենք վայելում էինք ավելի քան երկու տասնամյակ: Կինս և ես դեռ հիշում ենք մեր երեխաների այն կտրուկ վերաբերմունքը, երբ նրանք իմացան փոփոխության մասին: Մեր 16 տարեկան որդին բացականչեց «Դա ընդհանրապես խնդիր չէ, դուք կարող եք գնալ, ես կմնամ»:

Ապա նա շատ արագ համակարերպվեց և ոևոշեց գալ մեզ հետ և հավատարմորեն ընդունեց իր կյանքի այդ նոր հնարավորությունը: Նոր միջավայրում ապրելու վերջին մի քանի տարիները իմ ընտանիքի համար դարձան սովորելու և հաճելի զգացողությունների տարիներ, հատկապես Վերջին Օրերի Սրբերի ջերմ ընդունելության ու սիրալիության շնորհիվ: Ապրելով տարբեր երկրներում, մենք գնահատեցինք երկրով մեկ սփռված Աստծո ժողովրդի միասնությունը, որն իրական ու շոշափելի է:

Իմ կոչումը հանգեցրեց բազմաթիվ երկրներով մեկ ճամփորդության և տվեց ինձ հատուկ արտոնություն՝ նախագահելու տարբեր ժողովների: Երբ նայում էի տարբեր լսարաններին, ես հաճախ էի տեսնում անդամների, ովքեր ներկայացնում էին տարբեր երկրներ, լեզուներ և մշակույթներ: Ավետարանի մեր ժամանակաշրջանի հրաշալի կետերից մեկն այն է, որ այն սահմանափակված չէ աշխարհագրական տարածքով և ազգային խմբով: Այն գլոբալ է և համընդհանուր: Այն նախապատրաստում է Աստծո Որդու փառահեղ վերադարձը, հավաքելով «իր զավակներին աշխարհի չորս կողմերից»:[1]

Չնայած Եկեղեցու անդամությունը ավելանում է իր բազմազանությամբ, մեր սրբազան ժառանգությունը վերացնում է մեր տարբերությունները: Որպես Եկեղեցու անդամներ, մենք ընդունված են Իսրայելի տանը: Մենք դառնում ենք եղբայրներ և քույրեր, հավասար ժառանգակիցներ միևնույն հոգևոր ընտանիքի: Աստված Աբրահամին խոստացել է, որ « քանի որ, բոլոր նրանք, ովքեր կընդունեն այս Ավետարանը, կկոչվեն [նրա] անունով, և կհամարվեն [նրա] սերունդը, և վեր կկենան ու կօրհնեն [նրան], որպես *իրենց* հայր»:[2]

Խոստում է տրվել բոլորին ովքեր դառնում են Եկեղեցու անդամ. «Ուրեմն այսուհետեւ այլ եւս օտար եւ պանդուխտ չէք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ եւ Աստուծոյ ընտանիքներ»:[3]

Օտար բառը բխում է լատիներեն extraneus բառից, որը նշանակում է «արտաքին» կամ «դրսից»: Ընդհանրապես այն բնութագրում է մեկին, ով «դրսից է» տարբեր պատճառներով, լինեն դրանք նրա ծագումը, մշակույթը, կարծիքները կամ կրոնը: Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, ովքեր ձգտում էին լինել աշխարհում բայց ոչ աշխարհից, մենք հաճախ զգում ենք մեզ որպես օտարականներ: Մենք շատերից ավելի լավ գիտենք, որ որոշ դռներ կարող են փակվել նրանց առաջ, ովքեր համարվում են տարբեր:

Ամբողջ ժամանակ Աստծո ժողովրդին պատվիրված է եղել հոգ տանել այն բոլոր անհատների համար, ովքեր օտարական են կամ ովքեր տարբեր են: Հին ժամանակներում օտարականը օգտվում էր այն նույն հյուրասիրության առավելություններից, որոնք ունեին այրին կամ որբը: Նրանց նման օտարականը գտնվում էր խոցելի

Պանամա Սիթի, Պանամա

Սանտյագո, Չիլի

իրավիճակում և նրա գոյությունը կախված էր տեղի բնակչության պաշտպանությունից: Իսրայելի ժողովուրդը հստակ հրահանգներ էր ստացել այդ կապակցությամբ. «Ձեզ մօտ պանդխտացող օտարականը ձեր երկրի բնակի պէս լինի ձեզ համար, եւ քո անձի պէս սիրես նորան, որովհետեւ Եգիպտոսի երկրի մէջ օտարական էիք»:[4]

Իր երկրային ծառայության ժամանակ Հիսուսը մարմնավորեց մեկին, ով շատ ավելին էր անում, քան հյուրասիրության և հանդուրժողականության հասարակ պարտականությունն էր պահանջում: Նրանք, ովքեր դուրս էին մնացել հասարակությունից, նրանք, ովքեր մերժված էին և համարվում էին անմաքուր ինքնահավաններ, զգացել էին Նրա կարեկցանքն ու հարգանքը: Նրանք հավասարապես օգտվեցին Նրա ուսմունքներից և ծառայությունից:

Օրինակ, Փրկիչը դեմ գնաց Իր ժամանակների հաստատված օրենքներին՝ Սամարացի կնոջից խնդրելով ջուր: Նա ճաշեց մաքսավորների և հարկահավաքների հետ: Նա չվարանեց մոտենալ բորոտին, դիպչել նրան և բուժել նրան: Զարմանալով հռոմեացի հարյուրապետի հավատքով, Նա ասաց ամբոխին. « Ճշմարիտ ասում եմ ձեզ. Իսրայէլի մէջ էլ այսպիսի հաւատք չ'գտայ»:[5]

Հիսուսը խնդրել է մեզ պահպանել կատարյալ սիրո օրենքը, որը համընդհանուր և անվերապահ ընծա է:

«Որովհետեւ՝ եթէ ձեզ սիրողներին սիրէք, ի՞նչ վարձք ունիք: Չէ՞ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում»:

Եւ եթէ միայն ձեր եղբայրներին բարեւ տաք, ի՞նչ աւելի բան էք անում. Չէ՞ որ մաքսաւորներն էլ են այնպէս անում:

Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է»:[6]

Այս Եկեղեցում չկան օտարականներ և վտարվածներ: Կան միայն եղբայրներ և քույրեր: Այն գիտելիքը, որը մենք ունենք Հավերժական Հոր մասին, օգնում է մեզ ավելի զգայուն լինել եղբայրության և քույրության հանդեպ, որը պետք է գոյություն ունենա երկրի երեսին ապրող բոլոր տղամարդկանց և կանանց միջև:

Թշվառները վեպից մի հատված ցույց է տալիս, թե ինչպես քահանայության կրողները կարող են վերաբերվել այն անձանց, ովքեր համարվում են օտարականներ: Ժան Վալժենը նոր էր ազատվել բանտից: Երկար ճանապարհորդությունից և քաղցից ու ծարավից տանջված, նա ժամանեց մի փոքրիկ քաղաք, փնտրելով մի վայր, որտեղ կգտներ ուտելիք և գիշերվա կացարան: Երբ նրա ժամանման մասին լուրը տարածվեց, մեկ առ մեկ բոլոր բնակիչները փակեցին դռները նրա առաջ: Ոչ հյուրանոցը, ոչ պանդոկը, ոչ էլ բանտը նրան ներս չթողեցին: Նա մերժվեց, հեռու քշվեց և վտարվեց: Ի վերջո, ուժասպառ նա տապալվեց քաղաքի եպիսկոպոսի դռան առջև:

Բարի հոգևորականը քաջատեղյակ էր Վալժենի անցյալից, բայց նա հրավիրեց շրջմոլիկին իր տուն այս սրտացավ խոսքերով.

«Սա իմ տունը չէ: Սա Հիսուս Քրիստոսի տունն է: Այս դուռը մտնողից չի պահանջում անուն, այլ պահանջում է վիշտ: Դու տառապել ես, դու քաղցած ու ծարավ ես, դու ընդունված ես: . . . Ինչո՞ւ ես պետք է իմանամ քո անունը: Բացի այդ, մինչ դու կասեիր ինձ [քո անունը], ես գիտեի այն մեկը, որն ունեիր»:

[Վալժեն] զարմացած բացեց իր աչքերը:

«Իրո՞ք: Դուք գիտեի՞ք իմ անունը»:

«Այո, - պատասխանեց եպիսկոպոսը, - քո անունն է՝ իմ եղբայր»:[7]

Այս Եկեղեցում մեր ծխերն ու քվորումները մեզ չեն պատկանում: Նրանք պատկանում են Հիսուս Քրիստոսին: Ով որ մտնի մեր հավաքատները, պետք է զգա իրեն ինչպես տանը: Յուրաքանչյուրին ողջունելու պարտականությունը ավելի ու ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում: Աշխարհը, որում մենք ապրում ենք, վերապրում է մեծ վերելք: Տրանսպորտային հնարավորությունների լայնացման, կապի արագության աճի և տնտեսությունների գլոբալիզացիայի շնորհիվ աշխարհը վերածվում է մի մեծ քաղաքի, որտեղ մարդիկ և ազգերը հանդիպում են, միանում ու խառնվում ինչպես երբևէ նախկինում:

Աշխարհով մեկ այս հսկայական փոփոխությունները ծառայում են Ամենակարող Աստծո նպատակներին: Աշխարհի չորս ծայրերից Իր ընտրյալների հավաքումը ոչ միայն պայմանավորված է միսիոներներ ուղարկելով հեռավոր երկրներ, այլ

նաև այլ տեղերից մեր քաղաքներ և համայնքներ մարդկանց ժամանումով: Շատերը, առանց դա գիտակցելու, առաջնորդվում են Տիրոջ կողմից դեպի այն վայրերը, որտեղ նրանք կարող են լսել ավետարանը և գալ դեպի Նրա հոտը:

Շատ հավանական է, որ ձեր ծխում մկրտված հաջորդ մարդը կլինի մեկը, ով ձեր ընկերների կամ ծանոթների շրջապատից չէ: Դուք դա կարող եք նկատել նրա տեսքից, լեզվից, հագուստի ձևից կամ մաշկի գույնից: Այդ անձը, հնարավոր է, մեծացել է այլ կրոնով, անցյալով կամ կենսակերպով:

Ընկերակցությունը քահանայության կարևոր պարտականություններից է: Ահարոնյան և Մելքիսեդեկյան քահանայության քվորումները եպիսկոպոսի ղեկավարության ներքո համագործակցում են քույրերի հետ, որպեսզի հավաստիանան, որ յուրաքանչյուր ոք ընդունված է սիրով և բարությամբ: Տնային ուսուցիչներն ու այցելող քույրերը պետք է զգոն լինեն հավաստիանալու համար, որ ոչ ոք մոռացված ու անտեսված չէ:

Մենք բոլորս պետք է միասին աշխատենք, որպեսզի կառուցենք հոգևոր միություն մեր ծխերի ու ճյուղերի միջև: Կատարյալ միության օրինակ է եղել Աստծո ժողովրդի մեջ այն բանից հետո, երբ Քրիստոսն այցելել է Ամերիկաներ: Գրառումը նշում է. «Չկային Լամանացիներ կամ որևէ այլ տեսակի -ացիներ. այլ նրանք մեկ էին՝ Քրիստոսի զավակները և Աստծո արքայության ժառանգները»:[8]

Միասնության չեն հասնում, անտեսելով կամ մեկուսացնելով անդամներին, ովքեր, կարծես թե, տարբեր են կամ թույլ են, և շփվելով միայն այնպիսի մարդկանց հետ, ովքեր նման են մեզ: Հակառակը, միասնության հասնում են ողջունելով և ծառայելով նրանց, ովքեր նոր են կամ ովքեր հատուկ կարիքներ ունեն: Այդ անդամները օրհնություն են Եկեղեցու համար և հնարավորություն են տալիս մեզ ծառայելու մեր հարևաններին և, այդպիսով, մաքրելու մեր սրտերը:

Այնպես որ, իմ եղբայրներ, մեր

պարտականությունն է՝ հասնել նրանց, ովքեր հայտնվում են ձեր Եկեղեցու շենքերի շեմին: Ողջունեք նրանց երախտագիտությամբ և առանց նախապաշարմունքի: Եթե ձեզ անծանոթ մարդիկ ներս են մտնում ձեր ժողովներին, ջերմագին ողջունեք նրանց և հրավիրեք նրանց նստել ձեզ հետ: Խնդրում ենք առաջին քայլը արեք, որպեսզի օգնեք նրանց զգալ ընդունված և սիրված, այլ ոչ թե սպասեք, որ նրանք մոտենան ձեզ:

Ձեր նախնական ողջույնից հետո մտածեք, թե ինչպես կարող եք անընդհատ ծառայել նրանց: Մի անգամ լսեցի մի ծխի մասին, որտեղ երկու խուլ քույրերի մկրտությունից հետո Սփոփող Միության երկու քույրեր որոշեցին սովորել նշանների լեզուն, որպեսզի ավելի լավ կարողանային շփվել այդ նորադարձների հետ: Ինչպիսի հիանալի սիրո օրինակ է ավետարանով եղբայրների ու քույրերի համար:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ ոչ մեկ օտարական չէ մեր Երկնային Հոր համար: Չկա այնպիսի հոգի, որ թանկ չլինի Նրա համար: Պետրոս Առաքյալի հետ ես վկայում եմ, որ « Աստուած աչառ չէ.ամեն ազգումն, ով որ վախենում է նորանից՝ եւ արդարութիւն է գործում, ընդունելի է նորան»:[9]

Ես աղոթում եմ, որ երբ Տերը հավաքի Իր ոչխարներին վերջին օրը, Նա մեզանից յուրաքանչյուրին կարող է ասել. «Օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք»:

Ապա մենք կհարցնենք Նրան. «Ե՞րբ տեսանք քեզ օտար, եւ մեզ մօտ առանք»:

Եվ Նա կպատասխանի մեզ. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[10]

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 1 Նեփի 22.25:
2. Աբրահամ 2.10; շեշտադրումն ավելացված է:
3. Եփեսացիս 2.19:
4. Ղևտացիս 19.34:
5. Մատթեոս 8.10; տես նաև Մատթեոս 8.2–3; Մարկոս 1.40–42; 2.15; Հովհաննես 4.7–9:
6. Մատթեոս 5.46–48:
7. Վիկտոր Հյուգո, *Թշվառները,* թարգմ. Isabel F. Hapgood, 5 vols. (1887), 1.73:
8. 4 Նեփի 1.17:
9. Գործք 10.34–35:
10. Մատթեոս 25.35, 38, 40:

Երեց Ռենդի Դ. Ֆանկ
Յոթանասունի Քվորում

Կանչված Նրա կողմից՝ հայտարարելու Նրա խոսքը

Եթե դուք խոնարհ եք, հնազանդ և ականջ եք դնում Հոգու ձայնին, դուք կգտնեք մեծ երջանկություն որպես միսիոներ ձեր ծառայությունում:

Երբ ես հաստատվեցի անցյալ ապրիլին որպես Բարձրագույն Իշխանավոր, ես ծառայում էի որպես միսիայի նախագահ Հնդկաստանում: Ես անձնապես նկատեցի այն, ինչ մեկ այլ նախկին նախագահ ասել էր ինձ. «Այս Եկեղեցու միսիոներները պարզապես ապշեցուցիչ են»:[1]

Շատ նշանավոր միսիոներներից մեկը, ում հետ Քույր Ֆանկը և ես ծառայեցինք, Երեց Փոխրելն էր՝ Նեպալից: Ընդամենը երկու տարի Եկեղեցու անդամ լինելուց հետո, նա կանչվել էր ծառայելու Հնդկաստանի Բանգալորի անգլախոս Միսիայում: Նա սովորություն ուներ ասելու, որ լավ պատրաստված չէ: Դա հասկանալի էր: Նա երբևէ միսիոներ չէր տեսել, մինչև ինքը դարձավ միսիոներ, որովհետև Նեպալում չկան երիտասարդ միսիոներներ: Նա բավականաչափ լավ չէր կարողանում կարդալ, որպեսզի հասկանար հրահանգները, որոնք ներառված էին նրա կանչում: Երբ նա ներկայացավ միսիոներների պատրաստման կենտրոն-համեստ տաբատներ, ճերմակ վերնաշապիկներ և փողկապներ բերելու փոխարեն, նա, ըստ իր խոսքերի, բերել էր «կապույտ ջինսե հինգ տաբատ, մի երկուկարճաթև շապիկ և մեծ քանակությամբ մազերի դոնդող»:[2]

Նույնիսկ պատշաճ հագուստ ձեռք բերելուց հետո, նա ամեն օր ասում էր, որ անհամապատասխան էր զգում առաջին շաբաթների ընթացքում: Նա նկարագրել է իր միսիայի այդ ժամանակաշրջանը. «Ոչ միայն անգլերենն էր դժվար, այլ հենց աշխատանքն էր մարտահրավեր: . . . Ի հավելումն այդ բոլորի, ես սոված էի մնում, հոգնում էի և կարոտում էի տանը: . . . Չնայած հանգամանքները դժվարին էին, ես վճռական էի: Ես թույլ էի զգում և անհամապատասխան: Այդ պահերին ես աղոթում էի, որ Երկնային Հայրն օգներ ինձ: Առանց բացառության՝ ամեն անգամ, երբ աղոթում էի, ես սփոփված էի զգում»:[3]

Չնայած միսիոներական աշխատանքը նոր էր և դժվար՝ Երեց Փոխրելի համար, նա ծառայում էր մեծ հավատքով և հավատարմությամբ, ձգտելով հասկանալ և հետևել ինչ որ սովորում էր սուրբ գրություններից, *Քարոզիր Իմ Ավետարանից* և իր միսիայի ղեկավարությունից: Նա դարձավ ավետարանի հզոր ուսուցիչ՝ անգլերենով, և գերազանց ղեկավար: Միսիան ավարտելուց և որոշ ժամանակ Նեպալում մնալուց հետո, նա վերադարձավ Հնդկաստան շարունակելու իր կրթությունը: Հունվարից սկսած նա ճյուղի նախագահ է ծառայում Նյու Դելիում: Իսկական աճի շնորհիվ, որ նա ունեցավ որպես միսիոներ, նա շարունակում է ներդրում կատարել Եկեղեցու իսկական աճի մեջ Հնդկաստանում:

Ինչպե՞ս երիտասարդը, ով երբեք միսիոներ չէր տեսել, դարձավ այդպիսի հոգևոր ուժով անձնավորություն: Ինչպե՞ս դուք կստանաք հոգևոր ուժ՝ որպես միսիոներ՝ բացելու դռներ, փոստարկղեր և նրանց սրտերը այն միսիայում, որտեղ դուք կծառայեք: Ինչպես միշտ՝ պատասխանները գտնվում են սուրբ գրություններում և ապրող մարգարեների և առաքյալների խոսքերում:

Երբ ավետարանն առաջին անգամ քարոզվեց Անգլիայում 1837թ. հուլիսին, Տերը հայտնեց. «Ում որ դուք ուղարկեք իմ անունով, ձեր եղբայրների՝ Տասներկուսի ձայնով, ձեր կողմից պատշաճ կերպով երաշխավորված և լիազորված, նրանք զորություն կունենան՝ բացելու իմ արքայության դուռը, որ ազգի համար էլ որ դուք նրանց ուղարկած լինեք»:[4]

Ուր էլ որ ձեզ ուղարկեն, որ միսիան էլ ձեզ նշանակված լինի, իմացեք, որ Տասներկուսի անդամն է պատշաճորեն երաշխավորել այդ նշանակումը և դուք կանչված եք Տիրոջ մարգարեի կողմից: Դուք

կանչվել եք «մարգարեությամբ և ձեռնադրմամբ»:[5]

Այնուհետև, Տերը տվել է այս խոստման համար իրագործման պայմանները: Նա ասել է. «Որքան որ [որը նշանակում է խոստումը կիրականցվի *եթե*, նրանք [նշանակում է միսիոներները, ովքեր ուղարկվում են] [1]կխոնարհեցնեն իրենց իմ առաջ, և [2] կմնան իմ խոսքի մեջ, և [3] ականջ կդնեն իմ Հոգու ձայնին»:[6]

Տիրոջ խոստումները հստակ են: Որպեսզի ունենաք անհրաժեշտ հոգևոր զորությունը Աստծո արքայության դուռը բացելու այն ազգի մեջ, ուր դուք ուղարկվում եք, դուք պետք է լինեք խոնարհ և հնազանդ և ունենաք ունակություն լսելու և հետևելու Հոգուն:

Այս երեք հատկանիշները սերտորեն փոխկապակցված են: Եթե դուք խոնարհ եք, դուք կկամենաք հնազանդ լինել: Եթե դուք հնազանդ եք, դուք կզգաք Հոգին: Հոգին կարևոր է, քանզի ինչպես Էզրա Թաֆտ Բենսոնն է ուսուցանել. «Առանց Հոգու դուք երբեք չեք հասնի հաջողության, *անկախ* ձեր տաղանդից և ունակությունից»:[7]

Որպես միսիայի նախագահ՝ ես, երբեմն, հարցազրույց էի անցկացնում միսիոներների հետ, ովքեր մաքառում էին, որովհետև նրանք դեռ մաքուր չէին: Նրանք ապրում էին իրենց հոգևոր ներուժից ցածր: Անկախ նրանից, թե որքան տքնաջան էին նրանք աշխատում կամ թե որքան շատ բարիք էին գործում, նրանք չէին կարողանում խաղաղություն զգալ և վայելել Սուրբ Հոգու ընկերակցությունը, մինչև իրենց չէին խոնարհեցնում, լիովին ապաշխարում և ճաշակում Փրկչի ողորմածությունից և շնորհից:

Տերը հրահանգում է Իր ծառաներին խոնարհ լինել, որովհետև հոգեպես ողջ դառնալու գործընթացը սկսվում է կոտրված սրտից: Մտածեք այն բարիքի մասին, որ գալիս է կոտրված բաներից. Հողը հերկվում է ցորեն ցանելու համար: Ցորենը աղացվում է հաց պատրաստելու համար: Հացը կտրատվում է դառնալու հաղորդության խորհրդանիշներ: Երբ ինչ-որ մեկը, ով ապաշխարող է, ճաշակում է

հաղորդությունը կոտրված սրտով և փշրված հոգով, նա ողջ է դառնում:[8] Երբ մենք ապաշխարում ենք և ողջ դառնում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, մենք ավելի շատ բան ենք ունենում Փրկչին առաջարկելու, երբ ծառայում ենք Նրան: «Այո, եկեք նրա մոտ և մատուցեք ձեր ողջ հոգիները նրան՝ որպես ընծա»:[9]

Եթե դուք ծանրաբեռնված եք մեղքից և կարիք ունեք ապաշխարելու, խնդրում ենք արեք դա անմիջապես: Երբ Փրկիչը բժշկում էր նրանց, ովքեր չարչարված էին, Նա հաճախ նրանց հրավիրում էր վեր կենալ: Սուրբ գրություններն արձանագրել են, որ նրանք այդ անում էին միանգամից կամ անմիջապես:[10] Ձեր հոգեկան տառապանքներից բժշկվելու համար, խնդրում ենք ընդունեք վեր կենալու Նրա հրավերը: Առանց հետաձգման խոսեք ձեր եպիսկոպոսի հետ, ճյուղի նախագահի կամ միսիայի նախագահի հետ և այժմ սկսեք ապաշխարության գործընթացը:

Քավության բժշկող զորությունը խաղաղություն կբերի ձեր հոգուն և հնարավորություն կտա ձեզ զգալ Սուրբ Հոգին: Փրկչի զոհաբերությունն անսահման է, բայց մեր մեղքերը, չնայած բազմաթիվ են և լուրջ, կարող են համբվել և խոստովանվել, թողնվել և ներվել: «Եվ որքան մեծ է նրա ուրախությունն այն հոգու համար, որն ապաշխարում է»:[11]

Վարդապետություն և Ուխտերի այս խոստումը հզոր է. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ»:[12] Երբ ապրեք առաքինի կյանքով, դուք կզգաք խաղաղ վստահություն Աստծո առջև ձեր դիրքի հարցում և ձեզ հետ կունենաք Հոգու զորությունը:[13]

Ոմանք, ովքեր նոր անդամներ են Եկեղեցում կամ ովքեր վերջերս են վերադարձել լիարժեք ակտիվության, գուցե ասեն. «Այժմ ես արժանի եմ և ցանկություն ունեմ ծառայելու, բայց չգիտեմ թե արդյոք բավականաչափ գիտե՞մ»: Ապրիլին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է մեզ. «Ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են մեզ, երբ մենք հնազանդ ենք լինում Աստծո պատվիրաններին»:[14] Որքան հուսադրող է իմանալը, որ մեր հնազանդության միջոցով մենք կարող ենք գիտելիք ձեռք բերել:

Մյուսները գուցե զգան, որ իրենք սահմանափակ տաղանդներ, ունակություններ կամ փորձառություն ունեն առաջարկելու: Եթե դուք ունեք այդպիսի մտահոգություններ, հիշեք Երեց Փոխրելի փորձառությունը: Որքան հնարավոր է լավ պատրաստվեք և իմացեք, որ մեր Երկնային Հայրը կմեծացնի ձեր խոնարհ և հնազանդ ջանքերը: Երեց Ռիչարդ Գ. Սքոթն առաջարկել է այս խրախուսող խորհուրդը. «Երբ մենք հնազանդվում ենք Տիրոջ պատվիրաներին և անեսասիրաբար ծառայում ենք նրա զավակներին, բնական հետևանքն է զորություն Աստծուց՝ զորություն անելու ավելին, քան մենք կարող ենք անել ինքներս: Մեր ներընկնումները,

մեր տաղանդները, մեր ունակությունները ընդարձակվում են, որովհետև մենք ստանում ենք ուժ և զորություն Տիրոջից»:[15]

Երբ դուք վստահում եք Տիրոջը և Նրա բարությանը, Ամենազոր Աստված օրհնում է Իր զավակներին ձեր միջոցով:[16] Երեց Հոլլինգսը՝ Նևադա նահանգից, վաղ սովորեց դա իր միսիայի ընթացքում: Այն օրը, երբ նա ժամանեց Հնդկաստան, նա ճանապարհորդեց Քույր Ֆանկի և ինձ հետ դեպի Ռաջահմունդրի՝ իր առաջին տարածքը: Այդ կեսօրին Երեց Հոլլինգսը և Երեց Գանապարամը գնացին այցելելու Եկեղեցու մի անդամի և նրա մորը: Մայրը ցանկացավ իմանալ Եկեղեցու մասին, որովհետև տեսել էր, թե ինչպես է ավետարանն օրհնել իր դստեր կյանքը: Քույր Ֆանկը միացավ նրանց ընկերակցություն ապահովելու համար: Քանի որ դասը ուսուցանվելու էր անգլերեն և մայրը խոսում էր միայն տելեգու լեզվով, ճյուղից մի եղբայր այնտեղ էր՝ թարգմանելու այն, ինչ ուսուցանվելու էր:

Երեց Հոլլինգսի հանձնարարությունն էր հենց առաջին ուսուցանման ժամանակ ուսուցանել Առաջին Տեսիլքը, օգտագործելով Մարգարե Զոզեֆի խոսքերը: Դասի այդ պահին նա շրջվեց դեպի Քույր Ֆանկը և հարցրեց. «Պիտի բառ առ բառ ասե՞մ» իմանալով, որ դա թարգմանվելու էր:

Նա պատասխանեց. «Ասա բառ առ բառ, որպեսզի Հոգին վկայի այն մասին, ինչ որ կասես»:

Երբ այս նոր միսիոները անկեղծորեն ուսուցանեց Առաջին տեսիլքը՝ օգտագործելով Մարգարեի խոսքերը, այդ սիրելի քրոջ դեմքի արտահայտությունը փոխվեց: Արցունքներ հայտնվեցին: Երբ Երեց Հոլլինգսն ավարտեց այդ փառահեղ ուղերձը, և նախքան ինչ նա ասել էր կթարգմանվեր, քույրը հարցրեց արցունքների միջից իր մայրենի լեզվով. «Կարո՞ղ եմ մկրտվել: Իսկ դուք որդուս կուսուցանե՞ք»:

Իմ երիտասարդ ընկերակից ծառաներ, ամեն օր դռներ և սրտեր են բացվում ավետարանի ուղերձի առջև՝ ուղերձ, որը բերում է հույս և խաղաղություն և ուրախություն Աստծո զավակներին ողջ աշխարհով մեկ: Եթե դուք խոնարհ եք, հնազանդ և ականջ եք դնում Հոգու ձայնին, դուք կգտնեք մեծ երջանկություն որպես միսիոներ ձեր ծառայությունում:[17] Ինչպիսի սքանչելի ժամանակաշրջան է միսիոներ լինելը՝ մի ժամանակ, երբ Տերն արագացնում է Իր աշխատանքը:

Ես վկայություն եմ բերում մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին և Նրա «աստվածային պատվիրանի»[18] «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցեք»:[19] Սա Նրա Եկեղեցին է: Նա ղեկավարում է այն ապրող մարգարեների և առաքյալների միջոցով: Հաջորդ մեկ ժամի ընթացքում Առաջին Նախագահությունը կուսուցանի մեզ: Թող որ մենք «արագ ընկալենք»[20] ինչպես Մորմոնը, որպեսզի, երբ կանչը գա, մենք արժանի լինենք և կարաղանանք հայտարարել Հոգու զորությամբ: «Ահա, ես Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մի աշակերտ եմ: Ես կանչվել եմ նրա կողմից հայտարարելու նրա խոսքն իր ժողովրդի մեջ, որ նրանք կարողանան հավիտենական կյանք ունենալ»:[21] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Personal conversations with Dennis C. Brimhall, president of the Kentucky Louisville Mission, 2005–8.
2. Ashish Pokhrel, “My Name Is Ashish Pokhrel and This Is My Story” (unpublished personal history, Sept. 2011).
3. Pokhrel, “My Name Is Ashish Pokhrel ”.
4. Վարդապետություն և Ուխտեր 112.22:
5. Հավատո Հանգանակ 1.5:
6. Վարդապետություն և Ուխտեր 112.22:
7. Ezra Taft Benson, in Preach My Gospel: A Guide to Missionary Service (2004), 176.
8. Ideas taken from a talk given by Elder Jeffrey R. Holland at the Bountiful Utah North Stake conference, June 8–9, 2013.
9. Օմնի 1.26:
10. Տես Մարկոս Ե.41–42, Հովհաննես Ե.8–9:
11. Վարդապետություն և Ուխտեր 18.13:
12. Վարդապետություն և Ուխտեր 121.45:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.46:
14. Թոմաս Ս. Մոնսոն, «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Լիահոնա,* մայիս 2013, 89:
15. Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», *Լիահոնա,* մայիս 2013, 30:
16. Նկարագրելով, թե ինչ կանեն նոր միսիոներներից շատերը, Երեց Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Նրանք կանեն այն, ինչ միսիոներները միշտ արել են: Նրանք կքարոզեն ավետարանը: Նրանք կօրհնեն Ամենազոր Աստծո զավակներին» («Բաց մի թողեք ալիքի վրա լինելու հնարավորությունը», *Լիահոնա,* մայիս 2013, 45):
17. Տես *Քարոզիր Իմ Ավետարանը*, v.
18. Թոմաս Ս. Մոնսոն, «Եկեք, Աստծո որդիք», *Լիահոնա,* մայիս 2013, 66:
19. Մատթեոս ԻԸ.19:
20. Մորմոն 1.2:
21. 3 Նեփի 5.13:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Դուք կարող եք անել դա հիմա

Քանի դեռ մենք պատրաստ ենք կրկին կանգնելու և շարունակելու ճանապարհը, . . . մենք կարող ենք ինչ-որ բան սովորել սխալներից և դառնալ ավելի լավը ու ավելի երջանիկ:

Երբ ես երիտասարդ էի, ընկնելն ու կանգնելը կարծես մեկ գործողություն լիներ: Սակայն տարիների ընթացքում եկել եմ այն անհանգստացնող եզրակացության, որ ֆիզիկայի օրենքները փոխվել են, և՝ ոչ իմ օգտին:

Վերջերս ես դահուկավարում էի 12 տարեկան թոռնիկիս հետ: Մենք վայելում էինք ժամանակը միասին, երբ ես սահեցի սառույցի վրայով և արդյունքում կատարեցի մի փառավոր վայրեջք լանջն ի վար:

Ես ամեն կերպ փորձեցի կանգնել, բայց չկարողացա՝ ես ընկել էի և չէի կարողանում վեր կենալ:

Ես ֆիզիկապես լավ էի զգում, սակայն իմ եսը մի փոքր վիրավորված էր: Այնպես որ ես համոզվեցի, որ սաղավարտն ու ակնոցները տեղում էին, քանի որ շատ էի ցանկանում, որ մյուս դահուկորդները չնկատեին ինձ: Ես կարող էի պատկերացնել ինձ, նստած այնտեղ անօգնական, երբ նրանք դահուկավարում էին այդպես էլեգանտ ձևով և ուրախ աղաղակում՝ «Բարև, Նախագահ Ուխդորֆ»:

Ես սկսեցի մտածել, թե ինչ կպահանջվեր ինձ փրկելու համար: Դա պատահեց, երբ թոռնիկս մոտեցավ ինձ: Ես պատմեցի նրան, թե ինչ էր պատահել, սակայն նա կարծես հետաքրքրված չէր իմ բացատրություններով, թե ինչու ես չէի կարողանում բարձրանալ: Նա նայեց աչքերիս, կռացավ, բռնեց ձեռքս և հստակ ձայնով ասաց. «Պապիկ, դու կարող ես անել դա հիմա»:

Ակնթարթորեն ես կանգնեցի:

Ես մինչև հիմա չեմ հավատում դրան: Այն ինչ անհնարին էր թվում մեկ րոպե առաջ, անմիջապես դարձավ հնարավոր, քանի որ 12 տարեկան տղան հասավ ինձ ու ասաց. «Դու կարող ես անել դա հիմա»: Դա ինձ ներարկեց վստահություն, խանդավառություն և ուժ:

Եղբայրներ, մեր կյանքում կլինեն պահեր, երբ բարձրանալը և շարունակելը կթվա մեր ուժերից վեր: Այդ օրը ձնապատ լանջին ես մի բան սովորեցի: Նույնիսկ երբ թվում է, թե չենք կարող բարձրանալ, դեռևս հույս կա: Եվ հաճախ մեր կյանքում մեզ միայն պետք է մեկը, ով կնայի մեր աչքերին, կբռնի մեր ձեռքը և կասի՝ «Դու կարող ես անել դա հիմա»:

Դժվարության մոլորությունը

Կարող է մտածենք, որ տղամարդկանցից ավելի շատ կանայք են ունենում անհամապատասխանության և ձախողման զգացումներ, որոնք ավելի շատ ազդում են ոչ թե մեր, այլ նրանց վրա: Ես վստահ չեմ, որ դա ճիշտ է: Տղամարդիկ ունենում են մեղքի, ընկճվածության և ձախողման զգացում: Մենք կարող ենք ձևացնել, որ այդ զգացմունքները չեն մտահոգում մեզ, բայց դա այդպես չէ: Մենք կարող ենք այնքան ծանրաբեռնված զգալ մեր ձախողումներից և թերություններից, որ սկսենք մտածել, թեայլևս չենք կարող հաջողություն ունենալ: Մենք նույնիսկ կարող է ենթադրենք, որ եթե մենք նախկինում ընկել ենք, ապա անկումը մեր ճակատագիրն է: Ինչպես մի գրող ասել է. «Մենք առաջ ենք գնում, կարծես ներկայիս հետ պայքարող նավեր, որոնք անդադար ետ են քշվում դեպի անցյալը»:[1]

Ես ականատես եմ եղել փառքով ու ներուժով լցված տղամարդկանց, ովքեր դադարել են մասնակցել Աստծո թագավորության կառուցման դժվարին գործին, քանի որ նրանք մեկ կամ երկու անգամ ձախողել են: Դրանք խոստումնալից տղամարդիկ էին, ովքեր կարող էին լինել քահանայության բացառիկ կրողներն ու ծառաները Աստծո: Բայց քանի որ նրանք սայթաքել են և հիասթափվել, նրանք դուրս են եկել իրենց քահանայության պարտականություններից և հետևել ավելի հեշտ, բայց քիչ արժանի ձգտումներին:

Այսպիսով, նրանք շարունակում են ապրել միայն այն կյանքի ստվերում, որը կարող էին ունենալ, երբեք չհասնելով այն ներուժին, որը իրենց ծննդյան իրավունքն էր: Ինչպես բանաստեղծն է ափսոսանք հայտնել, սրանք այն դժբախտ հոգիների թվում են, ովքեր «մահացան [ամենամեծ] երաժշտությունը [դեռևս] իրենց մեջ»:[2]

Ոչ ոք չի սիրում ձախողել: Եվ մասնավորապես մեզ դուր չի գալիս, երբ ուրիշները՝ հատկապես նրանք, ում սիրում ենք, տեսնեն մեզ ձախողելիս: Մենք բոլորս էլ

ցանկանում ենք լինել հարգված և գնահատված: Մենք ցանկանում ենք լինել չեմպիոններ: Սակայն մենք՝ մահկանացուներս չենք դառնում չեմպիոններ առանց ջանքերի, կարգապահության կամ առանց սխալներ գործելու:

Եղբայրներ, մեր ճակատագիրը որոշվում է ոչ թե մեր սայթաքումների, այլ վեր կանգնելու, փոշին թափ տալու և առաջ շարժվելու պահերի քանակով:

Աստվածային տրտմություն

Մենք գիտենք, որ այս մահկանացու կյանքը փորձաշրջան է: Բայց քանի որ մեր Երկնային Հայրը սիրում է մեզ կատարյալ սիրով, Նա ցույց է տվել մեզ, թե որտեղ գտնել պատասխանները: Նա տվել է մեզ քարտեզ, որը թույլ է տալիս մեզ նավարկել անորոշ տեղանքով և անսպասելի փորձությունների միջով, որոնց մեզանից յուրաքանչյուրը հանդիպում է: Մարգարեների խոսքերը այդ քարտեզի մի մասն են:

Երբ մենք մոլորվում ենք, ընկնում կամ հեռանում ենք Երկնային Հոր ուղիներից, մարգարեների խոսքերը ասում են մեզ, թե ինչպես վեր բարձրանալ և կրկին կանգնել ուղու վրա:

Դարերի ընթացքում մարգարեների ուսուցանած բոլոր սկզբունքներից մեկը, որը շեշտվում է կրկին ու կրկին անգամ, դա հուսադրող և սիրտ ջերմացնող ուղերձն է, որ մարդկությունը կարող է ապաշխարել, փոխել ուղին և կրկին վերադառնալ աշակերտի ճշմարիտ ուղու վրա:

Դա չի նշանակում, որ մենք պետք է հանգիստ լինենք մեր թուլությունների, սխալների կամ մեղքերի համար: Բայց կա մի շատ կարևոր տարբերություն ապաշխարության հանգեցնող մեղքի հանդեպ տրտմության և հուսահատության հանգեցնող տրտմության միջև:

Պողոս առաքյալն ուսուցանել է, որ «*Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնը* ապաշխարութիւն է գործում փրկութեան համար . . . . բայց *աշխարհքի տրտմութիւնը* մահ է գործում»:[3] *Աստվածային տրտմությունը* Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ոգեշնչում է փոփոխություն և հույս: *Աշխարհիկ տրտմությունը* քաշում է մեզ վար, մարում է հույսը և համոզում է մեզ տրվել հետագա գայթակղությունների:

Աստվածային տրտմությունը մեզ դարձի է բերում[4] ու փոխում մեր սրտերը:[5] Այն ստիպում է մեզ ատել մեղքը և սիրել աստվածայինը:[6] Այն խրախուսում է մեզ կանգնել և քայլել Քրիստոսի սիրո լույսի ներքո: Ճշմարիտ ապաշխարությունը բերում է վերափոխում, այլ ոչ թե խոշտանգումներ կամ տանջանք: Այո՛, անհնազանդության սրտանց ափսոսանքը և ճշմարիտ զղջումը հաճախ ցավոտ են, սակայն դրանք ապաշխարության սրբազան գործընթացի կարևոր քայլեր են:Բայց երբ մեղքը մեզ տանում է դեպի ինքնատելություն կամ թույլ չի տալիս մեզ կրկին բարձրանալ, դա ոչ թե նպաստում, այլ խափանում է մեր ապաշխարությանը:

Եղբայրներ, կա ավելի լավ ճանապարհ: Եկեք բարձրանանք և դառնանք Աստծո մարդիկ: Մենք ունենք չեմպիոն, Փրկիչը, ով քայլել է մահի շուքի ձորումը մեր իսկ օգտի համար: Նա իրեն տվել է որպես փրկագին մեր մեղքերի համար: Ոչ ոք երբևէ չի ունեցել ավելի մեծ սեր, քան այդ Հիսուս Քրիստոսը, անբիծ Գառը, ով պատրաստակամորեն դրեց Իրեն զոհասեղանի վրա և վճարեց գինը մեր մեղքերի, մինչև «վերջի նաքարակիտը»:[7] Նա իր վրա վերցրեց մեր տանջանքները: Նա իր ուսերին առավ մեր բեռը՝ մեր մեղքը: Իմ սիրելի ընկերներ, երբ որոշում ենք գալ դեպի Նա, երբ մենք վերցնում ենք մեզ վրա անունը Նրա և հաստատակամ քայլում որպես նրա աշակերտ, Քավության շնորհիվ մեզ խոստացված է ոչ միայն երջանկություն և «խաղաղություն այս աշխարհում», այլ նաև «հավերժական կյանք գալիք աշխարհում»:[8]

Երբ մենք սխալներ ենք գործում, երբ մեղք ենք գործում և ընկնում, եկեք մտածենք, թե ինչ է նշանակում իսկապես ապաշխարել: Դա նշանակում է Աստծո կողմը դարձնել մեր սիրտն ու կամքը, և հրաժարվել մեղքից: Ճշմարիտ, սրտանց ապաշխարությունն իր հետ բերում է երկնային հավաստիացում, որ «մենք կարող ենք անել դա հիմա»:

Ովքե՞ր եք դուք:

Առաջընթացից մեզ ետ պահելու հակառակորդի եղանակներից մեկը դա մեզ շփոթեցնելն է, թե իրականում ով ենք մենք և ինչ ենք իրականում ցանկանում:

Մենք ցանկանում ենք մեր ժամանակն անցկացնել մեր երեխաների հետ, բայց նաև ցանկանում ենք զբաղվել մեր ամենօրյա սիրած զբաղմունքներով: Մենք ցանկանում ենք նիհարել, սակայն մենք նաև ցանկանում ենք վայելել այն ուտելիքը, որը մենք ցանկանում ենք: Մենք ցանկանում ենք նմանվել Քրիստոսին, սակայն մենք նաև ցանկանում ենք վիճել այն տղայի հետ, ով խցանման ժամանակ մեր դեմը կտրել է:

Սատանայի նպատակն է գայթակղել մեզ փոխանակել ճշմարիտ երջանկության և հավերժական արժեքների անգին գոհարները պլաստիկ կեղծ կախազարդի հետ,

որը պարզապես պատրանք է և հակասում է ճշմարիտ երջանկությանն ու ուրախությանը:

Մեկ այլ եղանակ, որի միջոցով հակառակորդը ցանկանում է մեզ հուսալքել վեր բարձրանալուց այն է, որ ստիպում է մեզ սահմանափակել պատվիրանների հանդեպ վերաբերմունքը, որպես բաների, որոնք հարկադրել են մեզ: Կարծում եմ, որ դա մարդկային բնույթն է հերքելու ամեն բան, որը ըստ երևույթին առաջին հերթին մեր սեփական գաղափարը չէ:

Եթե մենք առողջ սնվելուն ու վարժություն անելուն վերաբերվում ենք մի բանի, որը միայն մեր բժիշկն է ակնկալում մեզանից, ապա մենք հավանական է կձախողենք: Եթե մենք նայում ենք այս որոշումներին այնպես, թե ովքեր ենք մենք և ով ենք ուզում դառնալ, մենք ունենք մեծ հնարավորություն մնալու ուղու վրա և հաջողելու:

Եթե մենք տնային այցելություններին ու այցելող քույրերին նայում ենք, որպես միայն ցցի նախագահի նպատակի, մենք այն կատարելուն կտանք ավելի քիչ կարևորություն: Եթե մենք նայենք դրան, որպես մեր նպատակի, մի բան, որ մենք ցանկանում ենք անել ավելի շատ Քրիստոսին նմանվելու և ուրիշներին ծառայելու համար, մենք ոչ միայն կկատարենք մեր պարտավորությունը, այլև կկատարենք այն այնպես, որ իսկապես օրհնենք այն ընտանիքներին, որոնց մենք այցելում ենք, ինչպես նաև մեր անձնական ընտանիքներին:

Հաճախ մենք ենք, որ օգնություն ենք ստանում մեր ընկերների ու ընտանիքների կողմից: Սակայն եթե մենք ուշադիր աչքերով նայենք և հոգատար մոտեցում ցուցաբերենք, մենք կտեսնենք այն հնարավորությունները, որը Տերը մեր առջև դնում է ուրիշներին օգնելու բարձրանալ և առաջ շարժվել դեպի իրենց իրական ներուժը: Սուրբ գրությունները առաջարկում են. «Եւ ամեն ինչ որ էլ անէք, սրտանց արէք, ինչպէս Տիրոջը, եւ ոչ թէ մարդկանց»:[9]

Հոգևոր զորության մեծ աղբյուր է՝ ազնիվ և արդարակյաց կյանքով ապրելը, մեր ուշադրության

կենտրոնում պահելով այն նպատակակետը, թե որտեղ ենք ուզում լինել հավերժության մեջ: Եթե միայն մենք կարողանանք այդ աստվածային նպատակակետին նայել հավատքի աչքերով, դա կօգնի մեզ մնալ ուղու վրա:

Երբ մեր ուշադրությունը հիմնականում կենտրոնացած է մեր ամենօրյա հաջողությունների ու ձախողումների վրա, մենք կարող ենք կորցնել ուղին, թափառել և ձախողել: Մեր հայացքն ուղղելով բարձր նպատակներին, կօգնի մեզ դառնալ ավելի լավ որդիներ, եղբայրներ, բարի հայրեր և ավելի սիրասուն ամուսիններ:

Նույնիսկ նրանք, ովքեր իրենց սրտերը դնում են աստվածային նպատակների վրա, կարող են երբեմն սայթաքել, սակայն չեն պարտվի: Նրանք վստահում և ապավինում են Աստծո խոստումներին: Նրանք կրկին կկանգնեն պայծառ հույսով առ արդար Աստվածը, ունենալով մեծ ապագայի ոգեշնչող տեսիլը: Նրանք գիտեն, որ կարող են անել դա հիմա:

Դուք կարող եք անել դա հիմա:

Յուրաքանչյուր ոք, երիտասարդ թե ալեհեր, ունեցել է ընկնելու իր փորձառությունը: Անկումը այն է, ինչ մենք մահկանացուներս անում ենք: Սակայն եթե մենք ցանկանում ենք կրկին կանգնել և շարունակել ճանապարհը դեպի Աստծո տված հոգևոր նպատակները, մենք կարող ենք սովորել ինչ-որ բան ձախողումից և արդյունքում դառնալ ավելի լավը և ավելի երջանիկ:

Իմ սիրելի եղբայրներ, իմ սիրելի ընկերներ, կլինեն պահեր, երբ դուք *կմտածեք*, որ չեք կարող շարունակել: Վստահեք Փրկչին և Նրա սիրուն: Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքի շնորհիվ, վերականգնված ավետարանի զորության և հույսի շնորհիվ, դուք միշտ ունակ *կլինեք* գլուխը բարձր քայլելով առաջ գնալ:

Եղբայրներ, մենք սիրում ենք ձեզ: Մենք աղոթում ենք ձեզ համար: Շատ կուզենայի, որ կարողանայիք լսել, թե ինչպես է Նախագահ Մոնսոնն աղոթում ձեզ համար: Անկախ նրանից դուք երիտասարդ հայր եք, տարեց քահանայության կրող, թե նոր կարգված սարկավագ, մենք մտածում ենք ձեր մասին: Տերը մտածում է ձեր մասին:

Մենք հասկանում ենք, որ ձեր ճանապարհը հաճախ դժվար կլինի: Բայց ես տալիս եմ ձեզ խոստում Տիրոջ անունով. վեր բարձրացեք և քայլեք Քավչի և Փրկչի հետքերով, և մի օր դուք ետ կնայեք և կլցվեք հավերժական երախտագիտությամբ, որ դուք որոշեցիք վստահել Քավությանը և ձեզ բարձրացնող և ուժ տվող նրա զորությանը:

Իմ սիրելի ընկերներ և եղբայրներ, անկախ նրանից, թե քանի անգամ եք դուք սայթաքել կամ ընկել, ելեք ոտքի: Ձեր ճակատագիրը փառահեղ է: Բարձր կանգնեք և քայլեք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի լույսով: Դուք ավելի ուժեղ եք, քան կարող եք գիտակցել: Դուք ավելի ունակ եք, քան կարող եք պատկերացնել: Դուք կարող եք անել դա, հիմա: Այս ամենի մասին ես վկայում են մեր Տիրոջ և Քավչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. F. Scott Fitzgerald, *The Great Gatsby* (1925), 180.
2. "The Voiceless," in *The Complete Poetical Works of Oliver Wendell Holmes* (1908), 99.
3. Բ Կորնթացիս 7.10; շեշտադրումն ավելացված է:
4. Տես Գործք 3.19:
5. Տես Եզեկիել 36.26; Բ Կորնթացիս 5.17; Մոսիա 3.19:
6. Տես Մոսիա 5.2:
7. Մատթեոս 5.26:
8. Վարդապետություն և Ուխտեր 59.23:
9. Կողոսացիս 3.23:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Կապեք նրանց վերքերը

Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք պատրաստվել կատարելու ինչ քահանայության ծառայություն էլ որ Տերը դնի մեր առջև մեր մահկանացու ճամփորդության ընթացքում:

Մենք բոլորս օրհնված ենք ուրիշների համար պատասխանատվությամբ: Կրել Աստծո Քահանայությունը նշանակում է պատասխանատվություն կրել Աստծո կողմից Նրա զավակների հավերժական կյանքի համար: Դա իրական է, դա սքանչելի է և, երբեմն, դա կարող է ճնշող թվալ:

Կան երեցների քվորումի նախագահներ, ովքեր այս երեկո լսում են, ովքեր գիտեն, թե ինչ ի նկատի ունեմ ես: Ահա թե ինչ է պատահել ձեզանից մեկի հետ: Դա, հավանաբար, պատահել է ձեզանից շատերի հետ և մեկից ավելի անգամ: Մանրամասները կարող են տարբերվել, բայց իրավիճակը նույնն է:

Մի երեց, որին դուք լավ չեք ճանաչում, ձեզանից օգնություն խնդրեց: Նա հենց նոր էր պարզել, որ պետք է տեղափոխեր իր կնոջն ու փոքրիկ մանկիկին այդ օրը այն բնակարանից, որտեղ նրանք ապրում էին մոտակա մեկ ուրիշ բնակարան:

Նա և նրա կինը արդեն խնդրել էին մի ընկերոջ, թե արդյոք կարող էին մեկ օրով վերցնել բեռնատարը տեղափոխելու իրենց տան անդամներին և անձնական իրերը: Ընկերը տրամադրել էր նրանց բեռնատարը: Երիտասարդ հայրը սկսել էր բեռնել այն ամենը, ինչ ունեին բեռնատարի մեջ, բայց առաջին մի քանի ռոպեների ընթացքում, նա վնասել էր իր մեջքը: Ընկերը, ով տրամադրել էր բեռնատարը, խիստ զբաղված էր օգնելու համար: Երիտասարդ հայրը հուսահատված էր զգում: Նա մտածել էր ձեր մասին՝ իր երեցների քվորումի նախագահի մասին:

Մինչ նա օգնություն կխնդրեր, օրը կեսօրից անցավ: Այդ երեկո Եկեղեցու ժողովների օրն էր: Դուք արդեն խոստացել էիք օգնել ձեր կնոջը ընտանեկան ծրագրերում այդ օրը: Ձեր երեխաները խնդրել էին ձեզ ինչ-որ բան անել իրենց հետ, բայց դուք դեռ դա չէիք հասցրել անել:

Դուք նաև գիտեիք, որ ձեր քվորումի անդամները, առանձնապես ամենահավատարիմները, նրանց, ում դուք սովորաբար օգնության եք կանչում, հավանաբար, ձեր նման դժվարին կացության մեջ են գտնվում:

Տերը գիտեր, որ դուք կունենաք այդպիսի օրեր, երբ նա կանչեց ձեզ այս կոչման, այնպես որ Նա տվեց ձեզ մի պատմություն՝ ձեզ քաջալերելու համար: Սա մի առակ է գերծանրաբեռնված քահանայություն կրողների մասին: Մենք երբեմն կոչում ենք այն բարի Սամարացու պատմություն: Բայց այն իսկապես հիանալի քահանայություն կրողի պատմությունն է այս մշտազբաղ դժվարին վերջին օրերում:

Պատմությունը կատարելապես սազում է գերբեռնված քահանայության ծառայողին: Ուղղակի հիշեք, որ դուք Սամարացին եք և ոչ թե Ղևտացի քահանան, ով անցավ վիրավոր մարդու կողքով:

Դուք երևի այդպիսի մարտահրավերների հանդիպելիս չեք մտածում այդ պատմության մասին: Բայց ես խնդրում եմ, որ դուք հիշեք, երբ այդպիսի օրեր կրկին գան, քանի որ դրանք անկասկած կգան:

Մեզ չի ասվում սուրբ գրությունում, թե ինչու էր Սամարացին ճանապարհորդում Երուսաղեմից Երիքով տանող ճանապարհով: Անհավանական է, որ նա միայնակ քայլեր, քանի որ նա պետք է, որ իմացած լիներ, որ ավազակները սպասում են անզգույշներին: Նա լուրջ ճամփորդության մեջ էր և սովորականի պես նա ուներ իր հետ բեռնակիր անասուն, ինչպես նաև ձեթ ու գինի:

Տիրոջ խոսքերի համաձայն, երբ Սամարացին տեսավ վիրավոր մարդուն կանգ առավ, որովհետև «գթաց»:

Բացի միայն գթություն զգալուց, նա գործեց: Միշտ հիշեք պատմության առանձնահատկությունները.

«Եվ [նա] մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց՝ վերան ձէթ եւ գինի ածելով և իր անասունի վերայ դրած տարաւ նորան մի իջեւան, եւ նորան հոգ տարաւ:

Եւ հետեւյալ օրն երբոր այն տեղիցը դուրս էր գնում, երկու դահեկան հանեց եւ իջեւանի տիրոջը տուաւ եւ ասեց նորան.Դորան հոգ տար, եւ ինչ որ աւելի ծախք անես, ես միուսանգամ ետ դառնալիս կվճարեմ քեզ»:[1]

Դուք և քահանայություն կրողները,

որոնց դուք կանչված եք առաջնորդելու, կարող են ունենալ առնվազն երեք համոզմունք: Առաջինը՝ Տերը կտա ձեզ, եթե խնդրեք, գթության զգացումներ, որ Նա է զգում կարիքավորների հանդեպ: Երկրորդը՝ Նա կապահովի ուրիշների, իջևանի տիրոջ նման, միանալու ձեզ հետ ձեր ծառայությունում: Եվ երրորդը՝ Տերը, բարի Սամարացու նման, ավելի շատ կփոխհատուցի բոլորին, ովքեր կմիանան օգնություն ցույց տալով նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Դուք, Քվորումի նախագահներ, հավանաբար մեկ անգամից ավելի եք գործել այդ համոզմունքների վրա հենվելով: Դուք խնդրել եք Տիրոջ քահանայություն կրողներին օգնել, վստահ լինելով, որ նրանք կարձագանքեն գթությամբ: Դուք չեք վախեցել խնդրել նրանց, ովքեր արձագանքել են ամենահաճախը անցյալում, որովհետև դուք գիտեիք, որ նրանք հեշտորեն էին զգում գթություն: Դուք խնդրել եք նրանց, գիտենալով որ անցյալում նրանք զգացել են Տիրոջ առատաձեռնությունը, երբ ընտրել են օգնել: Դուք խնդրել եք արդեն իսկ խիստ ծանրաբեռնվածների, իմանալով, որ որքան մեծ է զոհաբերությունը, այնքան ավելի մեծ է փոխհատուցումը, որ նրանք կստանան Տիրոջից: Նրանք, ովքեր օգնել են անցյալում, զգացել են Փրկչի հորդառատ երախտագիտությունը:

Ձեր ոգեշնչումը, հնարավոր է, չի եղել ինչ-որ մեկին խնդրելը, որ օգնի բեռնել, իսկ հետո բեռնաթափել բեռնատարը: Որպես առաջնորդ՝ դուք լավ գիտեք ձեր քվորումի անդամներին և նրանց ընտանիքներին: Տերը նրանց կատարելապես գիտի:

Նա գիտի, թե ում կինը քիչ է մնում կոտրվի, որովհետև ամուսինը չի գտել ժամանակ՝ անելու տան տղամարդու գործերը, որի կարիքը կար: Նա գիտի, թե որ երեխաները կօրհնվեն՝ տեսնելով իրենց հորը ևս մեկ անգամ ուրիշներին օգնելիս, կամ արդյոք երեխաները կարիք ունե՞ն այն զգացման, որ իրենք կարևոր են իրենց հոր համար այնքան, որ նա ժամանակ անցկացնի իրենց հետ այդ օրը: Բայց Նա նաև

գիտի, թե ով կարիք ունի ծառայելու հրավերի, բայց, հավանաբար, հավանական կամ պատարստակամ թեկնածու չի թվում:

Դուք բոլոր ձեր քվորումի անդամներին չեք կարող կատարելապես լավ իմանալ, բայց Աստված գիտի: Այսպիսով, ինչպես որ դուք արել եք այդքան շատ անգամներ, դուք աղոթում եք իմանալու, թե ում խնդրեք օգնելու ծառայել մյուսներին: Տերը գիտի թե ով կօրհնվի, երբ խնդրեն օգնել և ում ընտանիքը կօրհնվի առանց խնդրվելու: Դա է հայտնությունը, որին կարող եք սպասել, որ տրվի ձեզ, երբ դուք ղեկավարում եք քահանայությունում:

Ես դա տեսել եմ գործելիս, երբ երիտասարդ էի: Ես քահանաների քվորումի առաջին օգնական էի: Մի օր Եպիսկոպոսը զանգահարեց ինձ մեր տուն: Նա ասաց, որ ուզում էր, որ ես գնայի իր հետ՝ այցելելու մի այրու, որը մեծ կարիքի մեջ էր: Նա ասաց, որ իմ կարիքն ունի:

Երբ ես սպասում էի նրան, որ ինձ վերցներ մեր տնից, ես անհանգիստ էի: Ես գիտեի, որ եպիսկոպոսը ուժեղ և իմաստուն խորհրդականներ ունի: Մեկը հայտնի դատավոր էր: Մյուսը մի մեծ ընկերություն էր ղեկավարում և հետագայում դառնալու էր Բարձրագույն Իշխանավոր: Եպիսկոպոսը ինքն էլ մի օր ծառայելու էր որպես Բարձրագույն Իշխանավոր: Ինչո՞ւ էր եպիսկոպոսն ասում մի անփորձ քահանայի. «Ես քո օգնության կարիքն ունեմ»:

Դե՜հ, ես այժմ ավելի լավ գիտեմ, թե ինչ կարող էր նա ասել ինձ. «Տերը կամենում է օրհնել քեզ»: Այրու տանը ես տեսա, ի զարմանս ինձ, թե ինչպես նա ասաց կնոջը, որ նա օգնություն չի ստանա Եկեղեցուց մինչևչլրացնի բյուջեի ձևաթուղթը, որը եպիսկոպոսը թողել էր նրա մոտ անցյալ անգամ: Տունդարձի ճանապարհին, նկատելով, թե որքան ցնցված էի ես, նա ժպտաց իմ զարմանքի վրա և ասաց. «Հա՛լ, երբ նա սովորի վերահսկել իր ծախսերը, նա կկարողանա օգնել ուրիշներին»:

Մեկ այլ առիթով իմ եպիսկոպոսը ինձ տարավ իր հետ հարբեցող ծնողների տուն, ովքեր ուղարկեցին երկու վախեցած փոքրիկ աղջիկների՝ հանդիպելու մեզ դռան մոտ: Երկու աղջիկներին այցելելուց հետո, մենք շրջվեցինք դուրս գալով և նա ասաց ինձ. «Մենք դեռ չենք կարող փոխել ողբերգությունը նրանց կյանքում, բայց նրանք զգում են, որ Տերը սիրում է իրենց»:

Մեկ այլ երեկո նա տարավ ինձ մի մարդու տուն, ով եկեղեցի չէր եկել տարիներ շարունակ:

Եպիսկոպոսն ասաց նրան, թե որքան շատ էր սիրում նրան և թե որքան շատ է ծուխը նրա կարիքը զգում: Դա կարծես ոչ մի ազդեցություն չէր գործում այդ մարդու վրա: Բայց այդ ժամանակ, ամեն անգամ երբ, եպիսկոպոսը ինձ իր հետ էր տանում, դա մեծ ազդեցություն էր թողնում ինձ վրա:

Չկա միջոց, որով կարողանայի պարզել արդյոք եպիսկոպոսն աղոթում էր իմանալու, թե որ քահանան կօրհնվի իր հետ այցելություն կատարելով: Նա շատ հնարավոր է ուրիշ քահանաների էլ էր տարել իր հետ շատ անգամներ: Բայց Տերը գիտեր, որ մի օր ես եպիսկոպոս էի լինելու, հրավիրելով նրանց, ում հավատքը սառել էր՝ ետ գալու դեպի ավետարանի ջերմությունը: Բայց Տերը գիտեր, որ ես մի օր կրելու էի քահանայության պարտականություն հարյուրավորների և նույնիսկ Երկնային Հոր հազարավոր զավակների համար, ովքեր նյութական խիստ կարիքի մեջ էին:

Երիտասարդներ, դուք չեք կարող իմանալ, թե քահանայության ծառայության ինչ գործեր է Տերը պատրաստվում ձեզ տալ: Բայց յուրաքանչյուր քահանայություն կրողի համար ավելի մեծ մարտահրավեր է հոգևոր օգնություն ցույց տալը: Մենք բոլորս ունենք այդ պարտականությունը: Այն գալիս է քվորումի անդամ լինելուց: Այն գալիս է ընտանիքի անդամ լինելուց: Եթե ձեր քվորումից կամ ընտանիքից որևէ մեկի հավատքը հարձակման է ենթարկվում սատանայի կողմից, դուք կզգաք գթություն: Միշտ ինչպես Սամարացու կողմից տրված ծառայությունն ու ողորմածությունն էր, դուք ևս կսպասավորեք նրանց վերքերը՝ ապաքինող սպեղանիով նրանց կարիքի դեպքում:

Ձեր ծառայությունում որպես լիաժամկետ միսիոներ, դուք կգնաք մեծ հոգևոր կարիքի մեջ գտնվող հազարավոր մարդկանց մոտ: Շատերը, մինչև դուք նրանց չուսուցանեք, նույնիսկ չեն իմանա, որ իրենք հոգևոր վերքեր ունեն, որոնք եթե թողնվեն առանց բուժման, կբերեն անվերջ թշվառության: Դուք կգնաք Տիրոջ հանձանարարությամբ փրկելու նրանց: Միայն Տերը կարող է կապել նրանց հոգևոր վերքերը, երբ նրանք ստանան արարողությունները, որոնք տանում են դեպի հավերժական կյանք:

Որպես քվորումի անդամ, որպես տնային ուսուցիչ և որպես միսիոներ, դուք չեք կարող օգնել մարդկանց վերականգնել հոգևոր վնասը, մինչև ձեր սեփական հավատքն ուժեղ չլինի: Դա նշանակում է շատ ավելին, քան սուրբ գրությունները կանոնավորապես կարդալը և դրանց վերաբերյալ աղոթելը: Աղոթքը պահի տակ և արագ հայացք նետելը սուրբ գրությունների վրա բավականաչափ չեն նախապատրաստության համար: Այդ հավաստիացումը, թե ինչի կարիքը դուք կունենաք, գալիս է Վարդապետություն և Ուխտերի 84 բաժնի այս խորհրդից «Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. Բայց շարունակ ձեր մտում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը»:[2]

Այս խորհուրդը կարող է հաստատվել միայն այն դեպքում, եթե մենք «գանձենք» կյանքի խոսքեր և անենք դա շարունակաբար: Այդ սուրբ գրության գանձելու մասը ինձ համար նշանակում է ինչ որ մի զգացում խոսքերի հանդեպ: Օրինակ, երբ ես գնացել եմ, փորձելով ինչ-որ մեկին օգնել, ով տատանվում էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման հետ կապված իր հավատքում, զգացումները վերադաձել են ինձ մոտ:

Դրանք միայն բառեր չեն Մորմոնի Գրքից: Դա ճշմարտության համոզվածության զգացումն է, որը գալիս է, երբ կարդում եմ նույնիսկ մի քանի տող Մորմոնի Գրքից: Ես չեմ կարող խոստանալ, որ այն կգա ամեն մարդու, ով վարակված է Մարգարե Ջոզեֆի կամ Մորմոնի Գրքի հանդեպ կասկածով: Բայց ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը Վերականգման Մարգարեն է: Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, որովհետև ես զանձել եմ այն իմ սրտում:

Ես գիտեմ փորձառությամբ, որ դուք կարող եք համոզվածություն ստանալ ճշմարտության վերաբերյալ Հոգուց, որովհետև այն տրվել է ինձ: Դուք և ես պետք է ունենանք այդ համոզվածությունը նախքան Տերը մեզ կդնի որևէ ճամփորդի ճանապարհին, ում մենք սիրում ենք, ով վիրավորվել է ճշմարտության թշնամիների կողմից:

Կա ևս մեկ նախապատրաստություն, որ մենք պետք է կատարենք: Ուրիշների ցավերի հանդեպ կարծրանալը մարդկային բնորոշ հատկանիշ է: Դա էր պատճառներից մեկը, թե ինչու Փրկիչն այդքան շատ բան արեց՝ պատմելով Իր Քավության մասին և մեր Երկնային Հոր բոլոր զավակների ցավերն ու վշտերը Իր վրա վերցնելու մասին, որպեսզի իմանա, թե ինչպես օգներ նրանց:

Նույնիսկ Երկնային Հոր լավագույն մահկանացու քահանայություն



կրողները հեշտորեն չեն բարձրանում մինչև գթության այդ չափանիշը: Մեր մարդկային միտումն է անհամբեր լինել այն մարդու հետ, ով չի կարողանում տեսնել ճշմարտությունը, որն այնքան պարզ է մեզ համար: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի մեր անհամբերությունը չմեկնաբանվի որպես դատապարտում կամ մերժում:

Երբ պատրաստվում ենք օգնություն հասցնել Տիրոջ փոխարեն՝, որպես Նրա քահանայության ծառաներ, կա մի սուրբ գրություն, որն առաջնորդում է մեզ: Այն պարունակում է մի պարգև, որի կարիքը մենք կունենանք, ուր էլ Տերը մեզ ուղարկի: Բարի Սամարացին ուներ այդ պարգևը: Մենք դրա կարիքն ունենք և Տերն ասել է մեզ, թե ինչպես մենք կարող ենք գտնել այն.

«Ուստի իմ սիրելի եղբայրներ, եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում: Ուստի հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն,

Բայց գթությունըՔրիստոսի մաքուր սերն է և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի:

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր»:[3]

Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք պատրաստվել կատարելու ինչ քահանայության ծառայություն էլ որ Տերը դնի մեր առջև մեր մահկանացու ճամփորդության ընթացքում:Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս Ժ.33–35:
2. Վարդապետություն և Ուխտեր 84.85:
3. Մորոնի 7.46–48:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Ճշմարիտ հովիվներ

Տնային ուսուցումը պատասխանում է բազում աղոթքների և հնարավորություն է տալիս տեսնել մարդկանց կյանքում տեղի ունեցող փոփոխությունները:

Այս երեկո Սոլթ Լեյք Սիթիի Համաժողովների Կենտրոնում, հեռու և մոտ վայրերում հավաքվել են նրանք, ովքեր կրում են Աստծո քահանայությունը: Ինչպես Պետրոս Առաքյալն է հայտարարել՝ դուք իրոք «թագավորական քահանայություն» եք, անգամ «ընտրյալ սերունդ»:[1] Ինձ համար մեծ պատիվ է ձեզ հղել իմ խոսքը:

Մանուկ հասակում ամեն ամառ մեր ընտանիքով գնում էինք Սոլթ Լեյք Սիթից 72կմ. հարավ և մի փոքր արևելք գտնվող Պրովոյի կիրճ, որտեղ մի քանի շաբաթ անցկացնում էինք ընտանեկան տնակում: Տղաներով միշտ գնում էինք գետը ձուկ բռնելու կամ լողալու, և փորձում էինք հայրիկին ոգևորել ավելի արագ վարել մեքենան: Այդ օրերին հայրս վարում էր 1928 թվականի Օլդսմոբիլ: Երբ նա ժամում 56կմ. արագությունը գերազանցում էր, մայրս ասում էր. «Դանդաղեցրու, դանդաղեցրու»: Իսկ ես ասում էի. «Արագացրու հայրիկ, ավելի արագ»:

Հայրս վարում էր ժամում 56կմ. մինչև Պրովոյի կիրճ կամ մինչև հասնում էինք շրջադարձին, և մեր ընթացքը դանդաղում էր ոչխարների հոտի պատճառով: Մենք նայում էինք, ինչպես էին հարյուրավոր ոչխարներ անցնում մեր կողքով, և թվում էր, թե նրանք հովիվ չունեին, միայն մի քանի շներ էին կողքից հաչելով վազում: Հոտից բավական հեռու գալիս էր ձիու վրա նստած հովիվը՝ ձեռքին ոչ թե սանձ, այլ պարան: Նա երբեմն թամբի վրա կքված ննջում էր, քանի որ ձին գիտեր որ ուղղությամբ էր գնալու, իսկ հաչող շներն անում էին իրենց գործը:

Տարիներ առաջ Գերմանիայի Մյունխեն քաղաքում հակառակ պատկերի ականատեսը դարձա: Կիրակի առավոտ էր, և մենք գնում էինք միսիոներական համաժողովին: Միսիայի նախագահի մեքենայի պատուհանից դուրս նայելով տեսա հովիվը ցուպը ձեռքին *առաջնորդում էր* ոչխարներին: Ուր էլ որ հովիվը գնում էր, ոչխարները հետևում էին նրան: Եթե նա գնում էր ձախ, նրանք գնում էին ձախ, եթե գնում էր աջ, նրանք գնում էին աջ: Ես համեմատեցի ոչխարներին առաջնորդող այդ ճշմարիտ հովվին այն հովվի հետ, որը ձիով անտարբեր գնում էր ոչխարների ետևից:

Հիսուսն ասել է. «Ես եմ բարի Հովիվը, և ես իմ ոչխարներին ճանաչում եմ»:[2] Նա ճշմարիտ հովվի կատարյալ օրինակ է ծառայում մեզ համար:

Եղբայրներ, որպես Աստծո քահանայություն, մենք հովվի

պատասխանատվություն ենք կրում: Տիրոջ իմաստությունը ուղեցույցներ է տվել, թե ինչպես կարող ենք հովիվներ լինել Եկեղեցու ընտանիքների համար, որտեղ կարող ենք ծառայել, ուսուցանել և վկայել: Նման կոչում է տնային ուսուցումը, և այս երեկո այդ մասին կուզենայի խոսել:

Եկեղեցու յուրաքանչյուր ծխի եպիսկոպոս վերահսկում է, որ տնային ուսուցիչներ նշանակված քահանայության կրողներն ամեն ամիս այցելեն անդամներին: Նրանք գնում են զույգերով: Հնարավորության դեպքում, Մելքիսեդեկյան Քահանայություն կրող չափահասին ընկերակցում է երիտասարդ տղա, որն Ահարոնյան Քահանայության քահանա է կամ ուսուցիչ: Երբ այցելում են իրենց պատասխանատվության ներքո գտնվող անդամին, Ահարոնյան քահանայություն կրողը պետք է իր մասնակցությունը բերի ուսուցման գործում: Նման առաջադրանքը կօգնի այդ երիտասարդներին պատրաստվել ոչ միայն միսիային, այլև իրենց ողջ կյանքում քահանայության ծառայությանը:

Տնային ուսուցման ծրագիրն արձագանքն է ժամանակակից հայտնության, որը պարտավորեցնում է քահանայությանը կարգված անդամներին՝ «ուսուցանել, մեկնաբանել, հորդորել, մկրտել . . . և այցելել յուրաքանչյուր անդամի տուն և հորդորել նրանց, որ աղոթեն բարձրաձայն և գաղտնի, և կատարեն ընտանեկան բոլոր պարտականությունները, . . . միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրանց հետ և ամրապնդել նրանց. և հետևել, որ եկեղեցում չլինի անօրինություն, ոչ կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախոսություն, ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն»:[3]

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը հորդորել է. «Տնային ուսուցումը մեր Հոր զավակներին ուսուցանելու և ոգեշնչելու, խորհուրդ և ուղղություն տալու մեր առավել հրատապ և հատուցող հնարավորություններից մեկն է: . . . [Դա] աստվածային ծառայություն է՝ աստվածային կոչում: Որպես տնային ուսուցիչներ՝ մեր պարտականությունն է . . . այդ ոգին տանել ամեն տուն և սիրտ: Միրելով այդ աշխատանքը և լավագույնս կատարելով այն, Աստծո զավակների [վսեմ,] նվիրված [ուսուցիչը] կապրի անսահման խաղաղություն, ուրախություն և բավարարվածություն»:[4]

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք, որ Ալման «կարգեց բոլոր իրենց քահանաներին, և բոլոր իրենց ուսուցիչներին. և ոչ ոք չէր կարգվում, մինչև նրանք չլինեին արդար մարդիկ:

Հետևաբար, նրանք հսկում էին իրենց ժողովրդի վրա և սնուցում էին նրանց արդարությանը պատկանող բաներով»:[5]

Մեր տնային ուսուցման պարտականության մեջ մենք իմաստուն ենք, եթե տեղեկանում ենք յուրաքանչյուր ընտանիքի անդամների խնդիրներին և հասկանում դրանք, լինելով արդյունավետ՝ ուսուցման և անհրաժեշտ օգնություն տրամադրելու գործում:

Տնային ուսուցչի այցը թերևս ավելի հաջող կլինի, եթե նախապես պայմանավորվածություն ձեռք բերվի: Այս տեսակետը պարզաբանելու համար թույլ տվեք կիսվել տարիներ առաջ ինձ հետ տեղի ունեցած մի դեպքով: Այդ ժամանակ Միսիոներական Գործադիր Հանձնախմբի կազմում էին՝ Սպենսեր Վ. Քիմբալը, Գորդոն Բ. Հինքլին և Թոմաս Ս. Մոնսոնը: Մի երեկո Եղբայր և Քույր Հինքլիները ճաշկերույթ կազմակերպեցին իրենց տանը հանձնախմբի անդամների և նրանց կանանց համար: Նոր էինք ավարտել ճաշը, երբ դուռը թակեցին: Նախագահ Հինքլին բացեց դուռը, և դռան շեմին կանգնած էր իր տնային ուսուցիչներից մեկը: Տնային ուսուցիչն ասաց. «Գիտեմ, որ այցելության պայմանավորվածություն չունեմ, ընկերակիցս ինձ հետ չէ, սակայն զգացի, որ պետք է այցելեմ այս երեկո: Չգիտեի, որ հյուրեր ունեք»:

Նախագահ Հինքլին սիրալիր ներս հրավիրեց այդ տնային ուսուցչին, որ նստեր և ուսուցաներ մեզ՝ երեք Առաքյալներիս և մեր կանանց՝ որպես անդամ մեր պարտականության մասին: Մի փոքր վախվորած նա փորձում էր հնարավորինս լավ կատարել դա: Նախագահ Հինքլին շնորհակալություն հայտնեց նրան այցելելու համար, որից հետո այդ ուսուցիչն արագ հեռացավ:

Ուզում եմ բերել սխալ ձևով տնային ուսուցում անցկացնելու ևս մեկ օրինակ: Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին, ով տարիներ առաջ Առաջին Նախագահության խորհրդականն էր, պատմել է իր տնային ուսուցչի մասին, որը ձմեռային մի ցուրտ երեկո եկել էր Ռոմնիների տուն: Նա գլխարկը ձեռքին անհանգիստ ներս էր մտել, երբ իրեն հրավիրել էին, որ նստեր և իր ուղերձը հաղորդեր: Ոտքի վրա նա ասել էր. «Դե, ուզում եմ ասել, Եղբայր Ռոմնի,

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Թեդ Ռ. Քալիստեր

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիչենսեն

Ուլիսես *Սոարես*

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ
(այբենական կարգով)

Մարկոս Ա. Այդուկայտիս, Հոսե Լ. Ալոնսո, Կարլոս Հ. Սմադո, Յան Ս. Արդերն, Մերվին Բ. Առնոլդ, Դեյվիդ Ս. Բաքստեր, Շեյն Մ. Բոուեն, Քրեյգ Ա. Քարդոն, Յուն Հվան Չոյի, Դոն Ռ. Քլարկ

Քարլ Բ. Քուք, Լորենս Ե. Քորբրիջ, Կլաուդիո Ռ. Մ. Կոստա, Լեզրան Ռ. Քրոտիզ Կոտս., Բենջամին դե Հոյոս, Էդվարդ Դյուբ, Քեվին Ռ. Դանքըն, Լարի Ջ. Էքո Հոք, Սթենլի Գ. Էլիս, Դեյվիդ Ֆ. Էվանս

Էնրիկե Ռ. Ֆալաբելլա, Էդուարդո Գավարետ, Ռոբերտ Ս. Գայ, Կարլոս Ա. Գոդոյ, Քրիստոֆել Գոլդեն, Ջերիթ Վ . Գոնգ, Վոլթեր Ֆ. Գոնզալես, Ս. Սքոթ Գրոու, Ջեյմս Ջ. Համուլա, Դանիել Լ. Ջոնսոն

Փոլ Վ. Ջոնսոն, Պատրիկ Քիրոն, Էրիկ Վ. Կոպիչկե, Մարկուս Բ. Նաշ, Ս. Գիֆորդ Նիլսեն, Բրենտ Հ. Նիլսոն, Ալլան Ֆ. Փաքեր, Քեվին Վ. Փիրսոն, Էնթոնի Դ. Փերքինս, Փոլ Բ. Փիփեր

Ռաֆայել Ի.Փինո, Բրուս Դ. Փորթեր, Դեյլ Գ. Ռենլանդ, Մայքլ Տ. Ռինգվուդ, Լին Գ. Ռոբինս, Ջոզեֆ Վ. Սիտատի, Սթիվեն Ե. Սմոու, Մայքլ Ջոն Ու. Թեհ, Հոսե Ա. Թեքսեյրա, Խուան Ա. Ուսեդա



Առնուլֆո Վալենզուելա, Ֆրանսիսկո Ջ. Վինաս, Վ. Քրիստոֆեր Վադել, Վիլիամ Ռ. Վոքեր, Սքոթ Դ. Վայթինգ, Կազուհիկո Յամաշիտա, Ջորջ Ֆ. Զեբալոս, Կլաուդիո Դ. Զիվիկ, Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ
(այբենական կարգով)

Վիլֆորդ Վ. Անդերսեն, Կոիչի Սոյազի, Ռանդալ Կ. Բենեթ, Բրուս Ա. Քարլսոն

Ջ. Դեվն Քորնիշ, Տիմոթի Ջ. Դայքես, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Ռենդի Դ. Ֆանկ

Օ. Վինսենթ Հալեք, Քեվին Ս. Համիլտոն, Լարի Ռ. Լորենս, Փեր Գ. Մալմ

Ջեյմս Բ. Մարտինո, Ջայրո Մազագարդի, Ադրիան Օչոա, Քենտ Ֆ. Ռիչարդս



Գրեգորի Ս. Շվիցեր, Տերենս Մ. Վինսոն, Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ

Ջեռալդ Կոսե Առաջին Խորհրդական, Գարի Ի. Սթիվենսոն Նախագահող Եպիսկոպոս, Դին Մ. Դեյվիս Երկրորդ Խորհրդական

cԳերագույն համաժողովի ծածկույթը, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերով, հասավ «բոլոր մայրցամաքներ՝ մարդկանց ամենուրեք»: Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերին ձախից պատկերված են անդամները և միսիոներները Հռոմում, Իտալիա; Քեվիթում, Ֆիլիպիններ; Լիմայում, Պերու; Քոլիվիլում, Տեխաս; Ֆոզ դո Իգուայում, , Բրազիլիա; Լոնդոնում, Անգլիա; Առայջանում, Պանամա; և Լիոնում, Ֆրանսիա:

որ դրսում ցուրտ է, և ես մեքենայի շարժիչը միացրած եմ թողել, որ չսառչի: Ուղղակի եկել եմ, որպեսզի եպիսկոպոսին հայտնեմ, որ կատարել եմ իմ այցերը»:[6]

Քահանայություն կրողների ժողովին Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը, պատմելով Նախագահ Ռոմնիի փորձառության մասին, ավելացրել է. «Եղբայրներ, մենք կարող ենք ավելի լավ, շատ ավելի լավ գործել»:[7] Ես համամիտ եմ նրա հետ:

Տնային ուսուցումը պարզապես ամիսը մեկ մեխանիկական այց չէ: Մեր պարտականությունն է՝ ուսուցանել, ոգեշնչել, ուղղորդել, իսկ եթե այցելում ենք ոչ ակտիվ անդամներին, ապա ակտիվության վերադարձնել և, ի վերջո, վեհացում բերել Աստծո որդիներին և դուստրերին:

Մեզ այս գործում օգնելու համար, կուզենայի կիսվել մի իմաստուն խորհրդով, որն անշուշտ, վերաբերվում է տնային ուսուցիչներին: Աբրահամ Լինկոլն ասել է. «Եթե ուզում ես մարդուն ներգրավել քո գործում, նախ համոզիր նրան, որ դու իր անկեղծ ընկերն ես»:[8] Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը հորդորել է. «Նախևառաջ, եղեք անկեղծ ընկեր այն մարդկանց և ընտանիքների համար, ում ուսուցանում եք: . . . Ընկերը ամիսը մեկ պարտավորված այցելությունից ավելին է անում: Ընկերն ավելի շատ մտածում է մարդկանց օգնելու, քան երախտիք ստանալու մասին: Ընկերը հոգ է տանում, սեր է [ցուցաբերում], լսում է և օգնության ձեռք է մեկնում»:[9]

Տնային ուսուցումը պատասխանում է բազում աղոթքների և հնարավորություն է տալիս տեսնել մարդկանց կյանքում տեղի ունեցող փոփոխությունները:

Դրա վառ օրինակը կարող է լինել Դիք Համմերը, որը ճգնաժամի տարիներին եկավ Յուտա՝ Քաղաքացիական պահպանման խմբի կազմում: Այնտեղ նա հանդիպեց և ամուսնացավ Վերջին Օրերի Սուրբ երիտասարդ կնոջ հետ: Նա բացեց Դիքի Սրճարանը Սենտ Ջորջում, Յուտա, որը դարձավ



հանդիպումների հայտնի վայր:

Համմերների ընտանիքին նշանակված տնային ուսուցիչը Վիլլար Մայլն էր, իմ ընկերը: Քանի որ Դիք Համմերին լավ էի ճանաչում, և տպել էի նրա սրճարանի մենյուն, այցելելով Սենտ Ջորջ հարցրեցի Եղբայր Մայլնին. «Ինչպե՞ս է մեր ընկեր Դիք Համմերի առաջընթացը»:

Ընդհանուր առմամբ պատասխանն էր. «Առաջ է գնում, բայց դանդաղ»:

Ամեն ամիս Վիլլարդ Մայլնը և նրա ընկերակիցն այցելելով Համմերների տուն՝ ամեն անգամ ավետարանի մի ուղերձ էին ներկայացնում և Դիքի ու նրա ընտանիքի հետ կիսվում իրենց վկայություններով:

Տարիներ անցան, և մի օր Վիլլարդը զանգահարեց ինձ, հայտնելով լավ լուր: «Եղբայր Մոնսոն, սկսեց նա, - Դիք Համմերը դարձի է եկել և պատրաստվում է մկրտվել: Նա 90 տարեկան է, և մենք ընկերներ ենք եղել մեր ողջ կյանքի ընթացքում: Նրա որոշումը ջերմացնում է սիրտս: Ես երկար տարիներ եղել եմ նրա տնային ուսուցիչը»: Վիլլարդի ձայնը խզվում էր, երբ նա հաղորդում էր ինձ համար հաճելի լուրը:

Եղբայր Համմերն իսկապես մկրտվեց, և մեկ տարի անց այցելեց գեղեցիկ Սենտ Ջորջի Տաճարը, որտեղ էլ ստացավ իր օժտումն ու կնքման օրհնությունները:

Ես Վիլլարդին հարցրեցի. «Այսքան երկար ժամանակ լինելով նրա տնային ուսուցիչը, երբևէ եղե՞լ է, որ հուսահատվես»:

Նա պատասխանեց. «Ոչ, դա արժեր ամեն ջանք: Երբ տեսնում եմ, որքան մեծ ուրախություն է համակել Համմերների ընտանիքին, սիրտս լցվում է երախտագիտությամբ այն օրհնությունների համար, որ ավետարանը բերել է նրանց կյանք, և այն արտոնության համար, որ ես ինչ-որ կերպ նպաստեցի դրան: Ես երջանիկ մարդ եմ»:

Եղբայրներ, տարիների մեր արտոնությունն է լինելու՝ այցելել և ուսուցանել բազմաթիվ անհատների՝ և քիչ ակտիվ, և լիովին նվիրված անդամներին: Եթե մենք բարեխղճորեն վերաբերվենք մեր կոչմանը, բազում կյանքեր օրհնելու հնարավորություններ կունենանք: Եկեղեցու ակտիվությունից հեռացած անդամներին մեր այցելությունները կարող են դառնալ այն բանալին, որն, ի վերջո, կբացի նրանց վերադարձի դուռը:

Մտքում ունենալով այս գաղափարը՝ եկեք օգնենք նրանց, ում համար մենք պատասխանատու ենք, և բերենք նրանց Տիրոջ սեղանի մոտ, որ ճաշակեն Նրա խոսքը և վայելեն Նրա Հոգու ընկերակցությունը, և այլևս լինեն ոչ թե «օտար և պանդուխտ, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո ընտանիքներ»:[10]

Եթե ինչ-որ մեկը թերացել է իր տնային ուսուցման այցելություններում, կուզենայի ասել, որ այժմ է տնային ուսուցման պարտականությանը կրկին նվիրվելու ժամանակը: Այժմ որոշեք գործադրել անհրաժեշտ ամեն ջանք, ձեռք մեկնելու նրանց, ում համար դուք պատասխանատվություն եք կրում: Լինում են պահեր, երբ մի փոքր ավելի քաջալերանք է անհրաժեշտ օգնելու համար ձեր տնային ուսուցման զուգընկերոջը ձեզ միանալու ժամանակ գտնել, և լինելով հաստատակամ, դուք հաջողության կհասնեք:

Եղբայրներ, տնային ուսուցչի մեր ջանքերը շարունակական են: Աշխատանքը չի ավարտվի, մինչև որ Տերը և Վարդապետը չասի. «Բավական է»: Կան կյանքեր, որ պետք է լուսավորել: Կան սրտեր, որոնց պետք է դիպչել: Կան հոգիներ, որոնց պետք է ծառայել: Մենք ունենք սուրբ արտոնություն՝ լուսավորելու, դիպչելու և ծառայելու այն թանկագին հոգիներին, որոնց խնամքը վստահվել է մեզ: Մենք պետք է անենք դա հավատարմորեն և ուրախությամբ լի սրտով:

Վերջում ուզում եմ բերել մեկ օրինակ, որը կներկայացնի, թե ինչպիսի տնային ուսուցիչ պետք է մենք լինենք: Կա մեկ Ուսուցիչ, որի կյանքը ստվերում է թողնում մյուսներին: Նա ուսուցանեց կյանքի և մահվան, պարտականության և ճակատագրի մասին: Նա ապրեց, որ ծառայեր, ոչ թե՝ իրեն ծառայեին, որ տար, ոչ թե վերցներ, որ ոչ թե փրկեր Իր կյանքը, այլ զոհաբերեր այն մյուսների համար: Նա սերը առավել գեղեցիկ ներկայացրեց, քան տենչանքը, աղքատությունը՝ ավելի հարուստ, քան գանձը: Այդ Ուսուցչի մասին ասվում է, որ Նա ուսուցանեց իշխանությամբ, ոչ թե՝ ինչպես դպիրները:[11] Նրա օրենքները փորագրվեցին ոչ թե քարի, այլ մարդկանց սրտերի վրա:

Ես խոսում եմ Վարդապետի, այսինքն՝Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդու, ողջ մարդկության Փրկչի և Քավչի մասին: Աստվածաշնչում Նրա մասին ասվում է՝ Նա «ման եկավ բարի անելով»:[12] Ունենալով Նրան որպես մեր հուսալի առաջնորդ և օրինակ՝ մենք կունենանք Նրա աստվածային օգնությունը մեր տնային ուսուցման գործում: Կյանքեր կօրհնվեն, սրտեր կմխիթարվեն, հոգիներ կփրկվեն: Մենք կդառնանք ճշմարիտ հովիվներ: Որ դա այդպես լինի, ես աղոթում եմ Մեծ Հովվի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Պետրոս 2.9:
2. Հովհաննես 10.14:
3. Վարդապետություն և Ուխտեր 20.42, 47, 53–54:
4. David O. McKay, in *Priesthood Home Teaching Handbook,* rev. ed. (1967), ii, iii.
5. Մոսիա 23.17–18:
6. Quoted in Marion G. Romney, address given at a priesthood home teaching seminar, Aug. 9, 1963.
7. Ezra Taft Benson, "To the Home Teachers of the Church," *Ensign,* May 1987, 50.
8. Abraham Lincoln, in David Decamp Thompson, *Abraham Lincoln, the First American* (1895), 226.
9. Ezra Taft Benson, *Ensign,* May 1987, 50.
10. Եփեսացիս 2.19:
11. Տես Մատթեոս 7.28–29:
12. Գործք 10.38:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Իմ թոռներին

Կա մեկ գերիշխող պատվիրան, որը կօգնի հաղթահարել դժվարությունները և ստեղծել երջանիկ ընտանիք:

Այս տարի մեր առաջին երկու թոռները կամուսնան: Մոտավորապես մի 10 տարի հետո նրանց զարմիկները կհասնեն իրենց կյանքի այն կետին, երբ նրանք կընկնեն ընտանեկան կազմավորման հիանալի աշխարհ:

Այդ երջանիկ հեռանկարը իմ մեջ առաջացրեց խորը դիտարկում, երբ նրանք ինձանից խորհուրդ հարցրեցին: Ըստ էության, նրանք հարցրեցին. «Ինչպիսի՞ որոշումներ ես պետք է անեմ, որոնք կբերեն ինձ երջանկություն»: Եվ մյուս կողմից՝ «Ինչպիսի՞ որոշումներ կհանգեցնեն *ոչ*երջանիկ կյանքի»:

Երկնային Հայրը յուրաքանչյուրիս ստեղծել է անզուգական: Երկու հոգի միաժամանակ չեն կարող ունենալ միևնույն փորձառությունը: Ոչ մի երկու ընտանիք միանման չեն: Այնպես որ, զարմանալի չէ, որ դժվարանում եմ խորհուրդ տալ, թե ինչպես ընտրել երջանկությունը ընտանեկան կյանքում: Սակայն սիրող Երկնային Հայրը Իր զավակների համար առաջարդրել է երջանկության նույն ուղին: Ինչպիսին էլ մեր անձնական բնութագրերը լինեն, կամ ինչպիսին էլ մեր փորձառությունները լինեն, կա միայն երջանկության մեկ ծրագիր: Այդ ծրագիրը Աստծո բոլոր պատվիրանները հետևելն է:

Բոլորիս համար, ներառյալ իմ թոռնիկների, որոնք խորհում էին ամուսնության մասին, կա մեկ գերիշխող պատվիրան, որը կօգնի հաղթահարել դժվարությունները և ստեղծել երջանիկ ընտանիք: Այն վերաբերում է բոլոր հարաբերություններին, անկախ հանգամանքներից: Այն կրկնվում է սուրբ գրություններում և մեր օրերի մարգարեների ուսմունքներում: Աստվածաշնչյան ձևակերպման Տիրոջ խորհուրդը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ապրել հավերժ միասին սիրասուն երջանկության մեջ.

«Եւ նորանցից մէկը՝ մի օրինակն՝ հարցրեց փորձելով նորան եւ ասեց.

Վարդապետ, ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքումը:

Յիսուսն էլ ասեց նորան. Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը:

Սա է առաջին եւ մեծ պատուիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս:

Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէքը»:[1]

Այդ պարզ հայտարարությունից դժվար չէ ամփոփել այն ամենը, ինչ ես իմացել եմ այն մասին, թե որ ընտրությունները կբերեն երջանկություն ընտանեկան կյանքում: Ես սկսեցի մի հարցով. «Ո՞ր որոշումները հանգեցրին Տիրոջ հանդեպ իմ սիրուն՝ իմ ամբողջ սրտով, հոգով և մտքով»: Ինձ համար այդ հարցի պատասխանը այն որոշումներն են, որոնք ինձ թույլ են տվել զգալ այն երջանկությունը, որը գալիս է ներուժից Տիրոջ Քավության շնորհիվ:

Տարիներ առաջ Նյու Մեքսիկոյում, Ալբուկերկեյում ես մկրտեցի մի երիտասարդ տղայի, որին իմ միսիայի զուգընկերը և ես ուսուցանել էինք: Ես նրան ընկղմեցի ջրի մեջ և դուրս բերեցի: Նա պետք է որ լիներ իմ հասակին, քանի որ ուղիղ խոսեց իմ ականջին: Ավազանից հոսող ջրի և աչքերից հոսող արցունքների միջից երջանիկ ձայնով նա սաաց. «Ես մաքուր եմ, ես մաքուր եմ»:

Ես այդ նույն երջանկության արցունքները տեսել եմ մեկի աչքերում, ով արտասանեց Աստծո Առաքյալի խոսքերը: Մանրազնին ու նրբանկատ հարցազրույցից հետո նա ասել էր նրան. «Ես ներում եմ քեզ Տիրոջ անունով: Նա կների քեզ Իր ժամանակին և Իր ձևով»: Եվ Նա ներեց:

Ես տեսել եմ, թե ինչու Տերը կարող է ասել, որ երբ մեղքերը ներված են, Նա այլևս դրանք չի հիշում: Քավության զորության շնորհիվ այն մարդիկ, որոնց ես ճանաչում եմ և սիրում եմ, դառնում են նորը, և մեղքի հետևանքները մաքրվում են: Իմ սիրտը լցված է Փրկչի և Նրան ուղարկած սիրող Հոր հանդեպ սիրով:

Այդ մեծ օրհնությունը եկավ նրա շնորհիվ, որ ես հորդորել էի մարդկանց, որոնց համար հոգ էի տանում, ցավը փարատելու համար գնալ դեպի Փրկիչը. միայն Նա կարող էր դա անել: Այդ պատճառով ես կոչ եմ անում նրանց, ում սիրում եմ, ընդունել և մեծարել Եկեղեցում տրված ցանկացած կոչումը: Այդ ընտրությունը ընտանեկան երջանկության գրավականն է:

Կյանքի յուրաքանչյուր փուլի ճնշումները կարող են գայթակղել մեզ մերժել կամ անտեսել Փրկչին ծառայելու կոչերը: Դա կարող է

կանգնեցնել մեզ, մեր ամուսնուն և մեր ընտանիքներին հոգևոր վտանգի առաջ: Այդ կոչումներից ոմանք կարող են ոչ կարևոր թվալ, սակայն *իմ* կյանքը և իմ ընտանիքը փոխվել են դեպի լավը սարկավագների քվորումում դասավանդելու կոչումը ընդունելու արդյունքում: Ես զգացել եմ Փրկչի հանդեպ այդ սարկավագների սերը և Նրա սերը նրանց հանդեպ:

Ես տեսել եմ, ինչպես է դա իրականացել նախկին ցցի նախագահի և միսիայի նախագահի կյանքում, երբ նրանք կոչում էին ստացել ուսուցիչների քվորումում խորհուրդներ տալու: Ես ճանաչում եմ մեկ այլ մարդու, ով եղել է եպիսկոպոս, իսկ հետո Տարածքային Յոթանասունական, ով Տիրոջ կողմից առաջնորդվել է օգնելու մի տղայի ուսուցիչների քվորումում, ով ավտովթարի հետևանքով վնասվածքներ էր ունեցել: Այդ ծառայության հրաշքները ազդել են շատերի, ներառյալ ինձ վրա և մեծացրել Փրկչի հանդեպ նրանց սերը:

Ուրիշներին ծառայելով մենք ամենայն հավանականությամբ հայցում ենք Սուրբ Հոգու ընկերակցությունը: Տիրոջ ծառայության մեջ հաջողությունը մշտապես առաջացնում է մեր ուժերից վեր հրաշքներ: Ծնողը, ով հանդիպում է երեխայի խռովությանը, գիտի, որ դա ճշմարիտ է, ինչպես նաև այցելող ուսուցիչը, ընդունելով մի կնոջ, ով փնտրում է սփոփանք այն բանից հետո, երբ նրա ամուսինը հայտնում է նրան, որ նա լքում է իրեն: Երկու ծառաներն էլ շնորհակալ են այն բանի համար, որ այդ առավոտ աղոթել էին Տիրոջը՝ Սուրբ Հոգին ուղարկելու համար՝ որպես իրենց զուգընկեր:

Միայն Սուրբ Հոգու ընկերակցությամբ մենք կարող ենք հուսալ հավասարապես կապել մի ամուսնություն, որը զերծ կլինի անհամաձայնությունից: Ես տեսել եմ, թե ինչու է այդ ընկերակցությունը կարևոր՝ ամուսնության մեջ երջանիկ լինելու համար: Մեկ հոգու նման դառնալու հրաշքը պահանջում է երկնքի օգնությունը և ժամանակ: Մեր նպատակն է՝ ապրել միասին հավերժ Երկնային Հոր և մեր Փրկչի ներկայության մեջ:

Իմ հայրն ու մայրը տարբեր էին իրենց խառնվածքով: Իմ մայրը երգչուհի էր և դերասանուհի: Իմ հայրը քիմիկոս էր: Մի անգամ սիմֆոնիկ համերգի ժամանակ իմ մայրը զարմացել էր, երբ հայրս կանգնել էր և պատրաստվել դուրս գալ նախքան ծափահարությունները: Մայրս հարցրեց, թե ուր էր նա գնում: Նրա պատասխանը հնչեց ամբողջ անմեղությամբ. «Դե այն ավարտվել է, այդպե՞ս չէ»: Միայն Սուրբ Հոգու մեղմ ազդեցությունը ստիպեց նրան վերադառնալ համերգի այդ անգամ և հետո՝ կրկին ու կրկին անգամներ:

Իմ մայրը ապրել է Նյու Ջերսիում շուրջ 16 տարի, որպեսզի իմ հայրը կարողանար ապահովել ընտանիքը քիմիայի հետազոտություններ և ուսուցումներ կատարելով: Նրա համար դա զոհաբերություն էր՝ ապրել առանձին իր այրի մայրիկից և չամուսնացած քրոջից, որը խնամում էր մորը և հոգ տանում ընտանեկան հին ֆերմայի համար: Նրանք երկուսն էլ մահացան, երբ Մայրս գտնվում էր հեռավոր Նյու Ջերսիում: Դա միակ դեպքն էր, երբ տեսա մայրիկիս լաց լինելիս:

Տարիներ անց հայրիկիս առաջարկեցին աշխատանք Յուտայում: Կրկին, ամբողջ անմեղությամբ, նա հարցրեց մորս. «Միլդրեդ, քո կարծիքով, ի՞նչ պետք է ես անեմ»:

Նա ասաց. «Հենրի, արա այն, ինչը, քո կարծիքով, ամենաճիշտն է»:

Նա մերժեց առաջարկը: Հաջորդ առավոտյան մայրս գրեց նրան մի նամակ, որը ես կուզենայի, որ ինձ մոտ դեռ լիներ: Հիշում եմ, մայրս ասաց նրան. «Մի բացի այն այստեղ: Գնա գրասենյակ և այնտեղ բացի այն»: Այն սկսվում էր կշտամբանքով: Տարիներ առաջ հայրս նրան խոստացել էր, որ եթե երբևէ կարողանա, նա կտանի նրան այնտեղ, որ նա ավելի մոտ կլինի իր ընտանիքին: Նա զարմացավ նրա բարկության աստիճանից: Նա չէր հիշում նրա սրտի ցանկությունը: Նա անմիջապես նամակ ուղարկեց, ընդունելով աշխատանքի առաջարկը:

Նա ասաց. «Միլդրեդ, ինչո՞ւ դու ինձ չէիր ասել»:

Նա պատասխանեց. «Դու պետք է հիշեիր»:

Նա մշտապես խոսում էր Յուտա տեղափոխվելու այդ որոշման մասին, կարծես, դա իր միտքն էր և ոչ մի զոհաբերություն չկար մասնագիտական կարիերայի առումով: Նրանք ստացան մեկ անձ դառնալու հրաշքը: Ավելի լավ կլիներ, եթե հայրս Սուրբ Հոգու կողմից հիշեցվեր այն խոստման մասին, որ նա արել էր տարիներ առաջ: Սակայն նա թույլ տվեց Սուրբ Հոգուն փափկեցնել իր սիրտը, որպեսզի մորս ընտրությունը դառնար իրենը:

Երկնային Հայրն ունի կատարյալ կանխատեսում, գիտի յուրաքանչյուրիս և մեր ապագան: Նա գիտի, թե ինչ դժվարությունների միջով մենք պետք է անցնենք: Նա Իր Որդուն ուղարկեց տառապելու, որպեսզի իմանար ինչպես սատարեր մեզ մեր փորձությունների մեջ:

Մենք գիտենք, որ Երկնային Հայրն ունի հոգևոր զավակներ այս երկրում, ովքեր երբեմն ընտրում են մեղքը և մեծ դժբախտություն: Այդ պատճառով էլ Նա ուղարկեց Իր Առաջնեկին, որպեսզի Նա լիներ մեր Քավիչը: Դա սիրո ամենամեծ որոշումն էր ողջ արարման ընթացքում: Այդ պատճառով էլ մենք պետք է ակնկալենք, որ մեզ հղկելու համար կպահանջվի Աստծո օգնությունը և ժամանակ՝ հղկելու մեզ հավերժական կյանքում մեր Հոր հետ ապրելու համար:

Կյանքը ընտանիքում կփորձարկի մեզ: Դա մեզ մահկանացու կյանք պարգևելու Աստծո նպատակներից մեկն է՝ ուժեղացնել մեզ

Լիահոնա

փորձությունների միջով անցնելիս: Դա հատկապես ճշմարիտ կլինի այն ընտանեկան կյանքում, որտեղ մենք կգտնենք մեծ ուրախություն և մեծ ափսոսանք և դժվարություններ, որոնք ժամանակ առ ժամանակ կթվան դրանց դիմանալու մեր կարողությունից վեր:

Նախագահ Ջորջ Ք. Քենոնը խոսել է այն մասին, թե ինչպես է Աստված ինձ, ձեզ և մեր երեխաներին պատրաստել մեզ հանդիպող փորձություններին. «Մեզանից չկա մեկը, ով չի զգացել Աստծո սերը: Մեզանից չկա մեկը, ում մասին Նա հոգ չի տարել և ում չի փաղաքշել: Մեզանից չկա մեկը, ում Նա չի ցանկացել փրկել և միջոցներ ձեռնարկել փրկելու համար: Մեզանից չկա մեկը, ում օգնելու համար Նա չի հանձնարարել Իր հրեշտակներին: Մենք մեր և ուրիշների աչքերում կարող ենք լինել անկարևոր ու արհամարանքի արժանի, բայց ճշմարտությունը մնում է այն, որ մենք Աստծո զավակներն ենք և որ Նա, իրականում, տվել է Իր հրեշտակներին՝ զորության և կարողության անտեսանելի էակներին, հանձնարարություն պատասխանատու լինել մեզ համար, հոգ տանել մեր մասին և պահպանել մեզ»:[2]

Այն, ինչ Նախագահ Քենոնն ուսուցանել է, ճշմարիտ է: Դուք այդ հավաստիացման կարիքը կունենաք, ինչպես ես եմ ունեցել և դրանից կախված եղել:

Ես հավատքով աղոթել եմ, որ այն մարդը, ում ես սիրում եմ, կփնտրի և կզգա Քավության զորությունը: Ես հավատքով աղոթել եմ, որ մարդկային հրեշտակները իրենց օգնությամբ կգան, և նրանք եկան:

Աստված միջոցներ է մշակել փրկելու Իր զավակներից յուրաքանչյուրին: Շատերի համար դա իրենց եղբոր կամ քրոջ, տատիկ ու պապիկների հետ ապրելն է, ովքեր սիրում են նրանց անկախ նրանից, թե ինչ են նրանք անում:

Տարիներ առաջ մի ընկեր զրույց ունեցավ իր տատիկի հետ: Նա ապրել էր լիարժեք կյանքով, միշտ հավատարիմ Տիրոջը և Իր Եկեղեցուն: Սակայն նրա թոռներից մեկը ընտրեց հանցագործ կյանքը: Ի վերջո, նա բանտարկվեց: Իմ ընկերը պատմեց, որ իր տատիկը բանտում նստած իր թոռանը տեսակցության ճանապարհին մայրուղով մեքենան վարելիս լցվեց արցուքներով և տառապալից աղոթեց. «Ես փորձել եմ ապրել ճիշտ կյանքով: Ինչո՞ւ է այս դժբախտությունը պատահել իմ թոռան հետ, ով, կարծես, կործանել է իր կյանքը»: Պատասխանը նրա գլխում հայտնվեց այս բառերի տեսքով.

«Ես նրան քեզ եմ տվել, որովհետև ես գիտեմ որ դու կսիրեիր և կսիրես նրան անկախ նրանից, թե ինչ է նա արել»:

Հիանալի դաս է բոլորիս համար: Սիրող ծնողների և տատիկ, պապիկների և Աստծո բոլոր զավակների համար հեշտ չի լինի այս կործանվող աշխարհում: Մենք չենք կարող ստիպել Աստծո զավակներին ընտրել երջանկության ուղին: Աստված չի կարող անել դա Իր կողմից տրված ազատ կամքի պատճառով:

Երկնային Հայրը և Նրա սիրելի Որդին սիրում են Աստծո բոլոր զավակներին անկախ նրանից, թե նրանք ինչ են ընտրում անել կամ ինչ են դառնում: Փրկիչը վճարել է բոլոր մեղքերի համար, որքան էլ որ ցածր լինեն դրանք: Թեև պետք է լինի արդարություն, ողորմության հնարավորությունը տրամադրված է և այն չի կողոպտի արդարությանը:

Ալման այդ հույսը այսպես է արտահայտում իր որդի Կորիանթոնին. «Հետևաբար, ըստ

արդարադատության, փրկագնման ծրագիրն այս փորձնական վիճակում չէր կարող իրականացվել միայն մարդկանց ապաշխարության պայմանով, այո, այս նախապատրաստական վիճակում. եթե չլինեին այս պայմանները, ողորմությունը չէր կարող ուժի մեջ մտնել առանց արդարադատության գործը կործանելու: Այսպիսով, արդարադատության գործը չէր կարող կործանվել. եթե այդպես լիներ, Աստված կդադարեր Աստված լինել»: [3]

Իմ ուղերձը, սկզբում ուղված իմ թոռներին, այնուհետև՝ մեզ բոլորիս, ովքեր փորձում են կերտել հավերժական ընտանիքներ, այն է, որ երջանկությունը երաշխավորված է բոլոր հավատարիմների համար: Նախքան աշխարհի ստեղծումը Սիրող Երկնային Հայրը և Նրա սիրելի Որդին սիրեցին և աշխատեցին նրանց հետ, ովքեր պետք է շեղվեին ուղուց, և դրա մասին Նրանք գիտեին: Աստված կսիրի նրանց հավերժ:

Դուք առավելություն ունեք իմանալու, որ նրանք իմացան փրկության ծրագրի մասին այն ուսմունքներից, որոնք նրանք ստացան հոգևոր աշխարհում: Նրանք և դուք բավականին հավատարիմ էին, որպեսզի թույլտվություն ստանային գալու աշխարհ, մինչ շատերին թույլ չտրվեց:

Սուրբ Հոգու օգնությամբ մենք կհիշենք ողջ ճշմրտությունը: Մենք դա չենք կարող պարտադրել ուրիշներին, սակայն մենք կարող ենք թույլ տալ նրանց տեսնել դա մեր կյանքում: Մենք միշտ կարող ենք քաջություն քաղել այն հավաստիացումից, որ մի անգամ մենք բոլորս զգացել ենք ուրախությունը լինելու միասին որպես մեր Երկնային Հոր սիրող ընտանիք: Աստծո օգնությամբ մենք բոլորս էլ կրկին անգամ կարող ենք զգալ այդ հույսը և ուրախությունը: Ես աղոթում եմ, որ դա իրականանա բոլորիս համար, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 22.35–40:
2. George Q. Cannon, “Our Pre-existence and Present Probation,” *Contributor,* Oct. 1890, 476.
3. Ալմա 42.13:

Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորում

Ուրիշ աստվածներ չունենաս

Մենք ծառայո՞ւմ ենք առաջնահերթություններին կամ աստվածներին այն Աստծո փոխարեն, ում մենք խոստովանում ենք, որ երկրպագում ենք:

Տաս պատվիրանները Քրիստոնեական և հրեական հավատքների հիմնական մասն են հանդիսանում: Տրված լինելով Աստծո կողմից Մովսես մարգարեի միջոցով Իսրայելի որդիներին՝ այս պատվիրաններից առաջին երկուսն ուղղորդում են մեր երկրպագությունն ու առաջնահերթությունները: Առաջինում Տերը պատվիրել է. «Բացի ինձանից ուրիշ աստվածներ չունենաս» (Ելից 20.3): Դարեր անց, երբ Հիսուսին հարցրեցին. «Ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքումը», Նա պատասխանեց. «Սիրիր քո Տեր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» (Մատթէոս 22.36–37):

Տաս պատվիրաններից երկրորդը մանրամասնում է ուրիշ աստվածներ չունենալու հրահանգը և նշում է, թե որը պետք է լինի ամենակարևոր առաջնահերթությունը մեր կյանքում որպես Իր զավակներ: «Քեզ համար կուռք չշինես, եւ ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վերայ՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մէկ նմանութիւնը» (Ելից 20.4): Այնուհետև պատվիրանն ավելացնում է. «Նորանց երկրպագութիւն չանես, և նորանց չպաշտես» (Ելից 20.5): Ավելի քան պարզապես արգելելով երկրպագության նյութական առարկաները՝ սա սահմանում է հիմնական առաջնահերթություն բոլոր ժամանակների համար: Եհովան բացատրում է. «Որովհետեւ ես քո Եհովայ Աստուածը նախանձոտ Աստուած եմ, . . . կողորմեմ նորանց, . . . որ սիրում են ինձ եւ իմ պատուիրանքները պահում» (Ելից 20.5–6): *Նախանձոտ* բառի իմաստը բացահայտվում է: Դրա եբրայերեն ծագումը նշանակում է «նուրբ և խորը զգացմունքներ ունեցող» (Ելից 20.5, ծանոթագրություն *բ*): Ուստի, մենք վիրավորում ենք Աստծուն, երբ «ծառայում» ենք այլ աստվածների՝ սահմանելով այլ առաջնահերթություններ:[1]

I.

Աստծո փոխարեն ի՞նչ այլ առաջնահերթությունների են մարդիկ «ծառայում», նույնիսկ կրոնասեր մարդիկ, մեր օրերում: Մտածեք այս հավանականությունների մասին, որոնք ընդունված են մեր աշխարհում.

- Մշակութային և ընտանեկան ավանդույթներ
- Քաղաքական բարեկրթություն
- Կարիերայի ձգտումներ
- Նյութական կարողություններ
- Ժամանցի հետապնդումներ
- Իշխանություն, հանրաճանաչություն, հեղինակություն

Եթե այս օրինակներից ոչ մեկը չի վերաբերում մեզանից որևէ մեկին, գուցե մենք կարող ենք առաջարկել այլ օրինակներ, որոնք վերաբերում են: Սկզբունքն ավելի կարևոր է, քան անհատական օրինակները: Սկզբունքն այն չէ, թե արդյոք մենք ունենք այլ առաջնահերթություններ: Երկրորդ պատվիրանի առաջադրած հարցն է՝ «Ո՞րն է մեր *ամենակարևոր* առաջնահերթությունը»: Մենք ծառայո՞ւմ ենք առաջնահերթություններին կամ աստվածներին այն Աստծո փոխարեն, ում մենք խոստովանում ենք, որ երկրպագում ենք: Մի՞թե մենք մոռացել ենք հետևել Փրկչին, ով ուսուցանում էր, որ եթե մենք սիրում ենք Նրան, մենք կպահենք Նրա պատվիրանները (տես Յովհաննէս 14.15): Եթե այդպես է, ապա մեր առաջնահերթությունները սխալ ուղղության վրա են դրված մեր օրերում սովորական դարձած հոգևոր անտարբերության և անկառավարելի ցանկությունների պատճառով:

II.

Վերջին Օրերի Սրբերի համար Աստծո պատվիրանները հիմնված են և անբաժանելի են Աստծո ծրագրից՝ փրկության մեծ ծրագրից, որն ունի Իր զավակների համար: Այս ծրագիրը, որը երբեմն կոչվում է «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8), բացատրում է մեր ծագումն ու ճակատագիրը որպես Աստծո զավակներ. որտեղից ենք գալիս, ինչու ենք այստեղ և ուր ենք գնում: Փրկության ծրագիրը բացատրում է արարման նպատակը և մահկանացու կյանքի պայմանները՝ ներառյալ Աստծո պատվիրանները, Փրկչի անհրաժեշտությունը և մահկանացու և հավերժական ընտանիքների էական դերը: Եթե մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, ում տրված է այս



գիտելիքը, չենք հիմնում մեր առաջնահերթությունները համաձայն այս ծրագրի, մենք այլ աստվածների ծառայելու վտանգի մեջ ենք:

Իր զավակների մասին Աստծո ծրագրի իմացությունը Վերջին Օրերի Սրբերին տալիս է ամուսնության և ընտանիքի յուրահատուկ հեռանկար: Մեզ ճշմարտացիորեն ճանաչում են որպես ընտանիքակենտրոն եկեղեցի: Մեր աստվածաբանությունը սկսվում է երկնային ծնողներով, և մեր մեծագույն ձգտումն է հասնել հավերժական վեհացման լրիվությանը: Մենք գիտենք, որ սա հնարավոր է միայն ընտանեկան հարաբերությամբ: Մենք գիտենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունն անհրաժեշտ է Աստծո ծրագրի իրականացման համար: Միայն այս ամուսնությունը կապահովի մահկանացու ծննդի համար հավանության արժանացած միջավայր և ընտանիքի անդամներին կնախապատրաստի հավերժական կյանքի համար: Մենք համարում ենք ամուսնությունը և երեխաների ծնումն ու սնումը որպես Աստծո ծրագրի մաս և որպես սրբազան պարտականություն նրանց համար, ում տրված է այս հնարավորությունը: Մենք հավատում ենք, որ երկրի և երկնքի ամենամեծ գանձերը մեր երեխաներն ու մեր սերունդներն են:

III.

Ընտանիքի հավերժական դերի հեռանկարն ունենալով՝ մենք վշտանում ենք շատ արևմտյան երկրներում ծնունդների և ամուսնությունների թվի կտրուկ նվազման պատճառով, ում պատմական մշակույթները Քրիստոնեական և Հրեական են: Վստահելի աղբյուրները հայտնում են հետևյալը.

- Ներկայումս Միացյալ Նահանգներն ունի ամենացածր ծնելիությունն իր պատմության մեջ[2] և շատ Եվրոպական Միության երկրներում և այլ զարգացած երկրներում ծնելիությունը ցածր է այն մակարդակից, որն անհրաժեշտ է իրենց բնակչության պահպանման համար:[3] Սա սպառնում է մշակույթների և նույնիսկ ազգերի գոյատևմանը:
- Ամերիկայում 18–29 տարեկան ամուսնացած երիտասարդների տոկոսը նվազել է 59 տոկոսից 1960-ին մինչև 20 տոկոս 2010-ին:[4] Առաջին ամուսնության միջին տարիքն այժմ պատմության մեջ ամենաբարձր մակարդակի վրա է՝26 կանանց համար և գրեթե 29 տղամարդկանց համար:[5]
- Շատ երկրներում և մշակույթներում (1) ամուսնացած մոր, հոր և երեխաների ավանդական ընտանիքը դառնում է բացառություն, այլ ոչ թե նորմա, (2) ամուսնության և երեխաներ ծնելու փոխարեն կարիերայի ձգտումն աճող ընտրություն է շատ երիտասարդ կանանց համար և (3) հայրերի դերն ու գիտակցված անհրաժեշտությունը նվազում է:

Լինելով նման միտումների մեջ, որոնք վերաբերում են մեզ, մենք նաև գիտակցում ենք, որ Աստծո ծրագիրն Իր բոլոր զավակների համար է, և որ Աստված սիրում է Իր բոլոր զավակներին, ամենուր:[6] Մորմոնի Գրքի առաջին գլուխն ասում է, որ Աստծո «զորությունը, բարությունը և ողորմությունը երկրի բոլոր բնակիչների վրա են» (1 Նեփի 1.14): Հաջորդող գլուխներից մեկում ասվում է, որ «նա տվել է [իր փրկությունը] ձրի, բոլոր մարդկանց համար» և որ

«Բոլոր մարդիկ արտոնյալ են, մեկը մյուսի նման, և ոչ ոքի արգելված չէ» (2 Նեփի 26.27–28)։ Հետևաբար, սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք պարտավոր ենք լինել կարեկցող և գթառատ (սիրառատ) բոլոր մարդկանց նկատմամբ (տես Ա Թեսաղոնիկեցիս 3.12; Ա Յովհաննէս 3.17; ՎԿՈ 121.45)։

IV.

Մենք նաև հարգալից ենք բոլոր մարդկանց կրոնական համոզմունքների նկատմամբ, նույնիսկ այն աճող բազմության նկատմամբ, ովքեր անհավատություն են արտահայտում առ Աստված։ Մենք գիտենք, որ Աստծո կողմից տրված ընտրության զորությամբ շատերը կունենան մեր համոզմունքներին հակառակ համոզմունքներ, բայց մենք հույս ունենք, որ մյուսները հավասարապես հարգալից կլինեն մեր կրոնական համոզմունքների նկատմամբ և կհասկանան, որ մեր համոզմունքները մեզ տանում են դեպի այլ ընտրություններ և վարքագիծ, քան՝ նրանցը։ Օրինակ, մենք հավատում ենք, որ որպես Իր փրկության ծրագրի անհրաժեշտ մաս՝ Աստված հաստատել է հավերժական չափանիշ, որ սեռական հարաբերությունները պետք է տեղի ունենան միայն ամուսնացած տղամարդու և կնոջ միջև։

Մահկանացու կյանք ստեղծելու զորությունն ամենամեծ զորությունն է, որ Աստված տվել է Իր զավակներին։ Դրա կիրառումը պատվիրվել էր Ադամին ու Եվային Աստծո առաջին պատվիրանով (տես Ծննդոց 1.28), բայց այլ կարևոր պատվիրաններ էին տրվել դրա սխալ կիրառումն արգելելու համար (տես Ելից 20.14; Ա Թեսաղոնիկեցիս 4.3)։ Շեշտադրումը, որ մենք կատարում ենք մաքրաբարոյության օրենքի վրա, բացատրվում է Աստծո ծրագրի իրականացման մեջ մեր կյանք տվող զորության նպատակի ըմբռնմամբ։ Տղամարդու և կնոջ ամուսնության կապերից դուրս մեր կյանք տվող զորության բոլոր կիրառումներն ինչ որ չափով մեղսավոր են և հակառակ Աստծո՝ Իր զավակների վեհացման ծրագրին։

Կարևորությունը, որը մենք կապում ենք մաքրաբարոյության օրենքի հետ, ցույց է տալիս մեր նվիրվածությունը Ադամից և Եվայից սկիզբ առած ամուսնության օրինակին, որը որպես Աստծո օրինակ շարունակվել է դարերի ընթացքում Իր որդիների և դուստրերի միջև որպես կյանք տվող հարաբերություններ և Իր զավակների մասին հոգ տանելու օրինակ։ Բարեբախտաբար, այլ դավանանքների կամ կազմակերպությունների անդամ հանդիսացող շատ մարդիկ համաձայնվում են մեզ հետ ամուսնության էության և կարևորության հարցում. ոմանք հիմնվելով կրոնական վարդապետությունների վրա, ոմանք էլ հիմք ընդունելով այն, ինչը կարծում են լավագույնն է հասարակության համար։

Իր զավակների համար Աստծո ծրագրի մասին մեր գիտելիքը[7] բացատրում է, թե ինչու ենք մենք վշտանում, որ ավելի ու ավելի շատ երեխաներ ծնվում են ամուսնությունից դուրս (ներկայումս բոլոր ծնունդների 41 տոկոսը Միացյալ Նահանգներում),[8] և որ ամուսնությունից դուրս միասին ապրող զույգերի թիվը զգալիորեն ավելացել է վերջին կես դարի ընթացքում։ Հինգ տասնամյակ առաջ միայն փոքր տոկոսն էին ապրում միասին նախքան առաջին ամուսնությունը։ Ներկայումս 60 տոկոս ամուսնություններին նախորդում է միասին ապրելը։[9] Եվ սա աստիճանաբար ավելի շատ է ընդունվում հատկապես դեռահասների շրջանում։ Վերջերս կատարված ուսումնասիրության տվյալները ցույց տվեցին, որ դեռահասների մոտ 50 տոկոսն ասում է ամուսնությունից դուրս երեխա ունենալն «արժեքավոր ապրելակերպ է»։[10]

V.

Կան բազմաթիվ քաղաքական և սոցիալական ճնշումներ իրավական և քաղաքականության փոփոխություններ ստեղծելու համար, որպեսզի հաստատեն վարքագծեր՝ հակառակ Աստծո պատվիրանների, որոնք վերաբերում են սեռական բարոյականության և ամուսնության ու երեխա ծնելու հավերժական բնույթին և նպատակներին։ Այս ճնշումներն արդեն լիազորել են նույն գենդերային ամուսնությունները տարբեր պետություններում և երկրներում։ Այլ ճնշումներ կմթագնեն սեռը կամ կհամասեռացնեն տղամարդկանց և կանանց միջև եղած այդ տարբերությունները, որոնք անհրաժեշտ են Աստծո երջանկության մեծ ծրագիրն իրականացնելու համար։

Աստծո ծրագրի և Նրա վարդապետության մեր ըմբռնումը մեզ տալիս է հավերժական հեռանկար, որը թույլ չի տալիս մեզ ընդունել նման վարքագիծը կամ գտնել արդարացում այն օրենքներում,

որոնք թույլ են տալիս դրանք: Եվ, ի տարբերություն այն կազմակերպությունների, որոնք կարող են փոխել իրենց քաղաքականությունները կամ նույնիսկ վարդապետությունները, մեր քաղաքականությունները սահմանված են այն ճշմարտություններով, որոնք Աստված բնորոշել է, որ անփոփոխ են:

Մեր Հավատո տասներկուերորդ հանգանակը հայտարարում է մեր համոզմունքը քաղաքացիական իշխանություններին հպատակվելու և «օրենքին հնազանդվելու, այն հարգելու և պաշտպանելու» մասին: Բայց մարդու օրենքները չեն կարող բարոյական դարձնել այն, ինչն Աստված հայտարարել է՝ ոչ բարոյական: Մեր ամենակարևոր առաջնահերթությանը նվիրվելը՝ սիրել և ծառայել Աստծուն, պահանջում է, որ մենք ընդունենք Նրա օրենքը որպես մեր վարքագծի չափանիշ: Օրինակ, մենք մնում ենք աստվածային պատվիրանի ներքո չկատարել ամուսնական դավաճանություն կամ շնություն, նույնիսկ այն ժամանակ, երբ այս գործողություններն այլևս հանցագործություններ չեն այն պետությունների կամ երկրների օրենսդրությամբ, որտեղ մենք բնակվում ենք: Նմանապես, այսպես կոչված «նույն սեռի ամուսնությունը» օրինականացնող օրենքները չեն փոխում ամուսնության մասին Աստծո օրենքը կամ Նրա պատվիրանները և դրան վերաբերող մեր չափանիշները: Մենք մնում ենք ուխտի մեջ սիրել Աստծուն և պահել Նրա պատվիրանները և ետ կանգնել ուրիշ աստվածներին կամ գերակայություններին ծառայելուց, նույնիսկ նրանց, ովքեր հանրաճանաչ են դառնում մեզ համար հատուկ ժամանակահատվածում կամ վայրում:

Այս վճռականության հարցում մեզ կարող են սխալ հասկանալ, և մեզ կարող են վերագրել մոլեկրոնության մեղադրանքներ, կարող ենք զգալ խտրականություն կամ ստիպված լինել դիմակայել այն հարձակումներին, որոնք կատարվում են կրոնի մեր ազատ ընտրության պատճառով: Եթե այդպես է, ես կարծում եմ մենք պետք է հիշենք



մեր առաջին առաջնահերթությունը՝ ծառայել Աստծուն, և ինչպես մեր պիոներ նախնիները, նրանց պես նույն տոկունությամբ համբերենք մեր անձնական փորձություններին:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ուսմունքներից մեկը վերաբերում է այս հանգամանքին: 27 տարի առաջ այս համաժողովին նա համարձակորեն հայտարարեց. «Թող որ մենք ունենանք խիզախություն հասարակության կարծիքին դիմակայելու համար, խիզախություն՝ սկզբունքները պաշտպանելու համար: Ոչ թե փոխզիջումն, այլ խիզախությունն է բերում Տիրոջ հավանության ժպիտը: Խիզախությունը դառնում է կենդանի և գրավիչ առաքինություն, երբ այն համարվում է ոչ միայն որպես քաջաբար մահանալու պատրաստակամություն, այլ որպես պարկեշտորեն ապրելու վճռականություն: Բարոյական հարցերում վախկոտն այն անձնավորությունն է, ով վախենում է անել այն, ինչն իր կարծիքով ճիշտ է, որովհետև ուրիշները չեն ընդունի կամ կծիծաղեն: Հիշե՛ք, բոլոր մարդիկ ունեն իրենց երկյուղը, բայց նրանք, ովքեր արժանապատվությամբ դեմ առ դեմ են կանգնում իրենց երկյուղին, ունեն նաև խիզախություն»:[11]

Ես աղոթում եմ, որ մենք թույլ չտանք մահկանացու կյանքի ժամանակավոր մարտահրավերները պատճառ հանդիսանան, որ մենք մոռանանք մեր Արարչի և մեր Փրկչի կողմից տրված մեծ պատվիրաններն ու առաջնահերթությունները: Մենք չպետք է այնքան շատ դնենք մեր սրտերն այս աշխարհի բաների վրա և տենչանք մարդկանց գովասանքները (տես ՎևՈւ 121.35), որպեսզի չդադարենք հետամուտ լինել մեր հավերժական ճակատագրին: Մենք, որ գիտենք Իր զավակների համար Աստծո ծրագրի մասին, որ ուխտ ենք կապել դրանում մասնակցելու համար, ունենք հստակ պատասխանատվություն: Մենք երբեք չպետք է շեղվենք մեր ամենակարևոր ցանկությունից՝ձեռք բերել հավերժական կյանք:[12] Մենք երբեք չպետք է հեռանանք մեր ամենակարևոր առաջնահերթությունից՝ չունենալ ուրիշ աստվածներ և չծառայել ոչ մի ուրիշ գերակայությունների Հայր Աստծո և Նրա Որդու՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փոխարեն:

Թող որ Աստված օգնի մեզ հասկանալ այս առաջնահերթությունը և հասկանալի լինել ուրիշների կողմից, երբ ձգտում ենք հասնել դրան իմաստուն և սիրալիր ճանապարհով, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես, օրինակ, Վարդապետություն և Ուխտեր 124.84:
2. Տես Joyce A. Martin and others, “Births: Final Data for 2011,” *National Vital Statistics Reports,* vol. 62, no. 1 (June 28, 2013), 4; Gloria Goodale, “Behind a Looming Baby Bust,” *Christian Science Monitor Weekly,* Feb. 4, 2013, 21, 23.
3. Տես Population Reference Bureau, “2012 World Population Data Sheet,” www.prb.org/Publications/Datasheets/2012/world-population-data-sheet/data-sheet.aspx:
4. Տես D’Vera Cohn and others, “Barely Half of U.S. Adults Are Married—a Record Low,” Pew Research Center, Social and Demographic Trends, Dec. 14, 2011, available at www.pewsocialtrends.org/2011/12/14/barely-half-of-u-s-adults-are-married-a-record-low; “Rash Retreat from Marriage,” *Christian Science Monitor,* Jan. 2 and 9, 2012, 34:
5. U.S. Census Bureau, “Estimated Median Age at First Marriage, by Sex: 1890 to the Present,” available at www.census.gov/population/socdemo/hh-fam/ms2.xls.
6. Տես Դալլին Հ. Օուրս, «Բորոլ մարդկանց համար ամենուր», *Լիահոնա,* Մայիս 2006, 77–80:
7. Տես Դալլին Հ. Օուրս, «Երջանկության մեծ ծրագիրը», *Բնապն,* Նոյ. 1993, 72–75:
8. Տես Martin, “Births: Final Data for 2011,” 4:
9. Տես *The State of Our Unions: Marriage in America, 2012* (2012), 76:
10. Տես *The State of Our Unions,* 101, 102:
11. Thomas S. Monson, “Courage Counts,” *Ensign,* Nov. 1986, 41.
12. Տես Դալլին Հ. Օուրս, «Ցանկություն», *Լիահոնա,* Մայիս 2011, 42–45:

Բոննի Լ. Օսկարսոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Դարձի եկեք դեպի Տերը

Իրական դարձը տեղի է ունենում, երբ շարունակում եք գործել՝ ըստ այն վարդապետությունների, որոնք գիտեք, որ ճշմարիտ են և պահում եք պատվիրանները օրեցօր, ամիս առ ամիս։

Եղբայրներ և քույրեր, ինչպիսի խոնարհեցնող փորձառություն է կանգնել այս ամբիոնում, որտեղ իմ կյանքի այնքան շատ հերոսներ են կանգնել։ Կկամենայի կիսվել ձեզ հետ սրտիս մի քանի զգացումներով և դրանք ուղղել հատկապես երիտասարդությանը։

Հին Կտակարանի մեծ հերոսներից մեկը մարգարե զորավար Հեսուն էր։ Նա ուղղեց այս հրավերը Իսրայելի զավակներին, որոնց առաջնորդում էր. «Ընտրեցեք այսօր ձեզ համար, թե ո՞րն էք պաշտելու. . . . բայց ես եւ իմ տունը Եհովային ենք պաշտելու»։[1] Հեսուի հայտարարությունը ցույց է տալիս ճշմարիտ դարձ դեպի ավետարանը։ Հեսուի և մեզ բոլորիս համար՝ դարձը դեպի ավետարանի սկզբունքները գալիս է ավետարանի սկզբունքներով արդարկյաց ապրելու միջոցով և հավատարիմ լինելով Տիրոջ հետ կապած մեր ուխտերին։

Ես կկամենայի կիսվել դարձի մի պատմությամբ իմ ընտանիքի պատմությունից իմ մյուս հերոսների մասին։ Նրա անունը Ագնես Հոգան էր, և նա ու իր ամուսինը միացան Եկեղեցուն Շոտլանդիայում 1861թ.։ Տանելով մեծ հալածանքներ իրենց հայրենիքում, նրանք գաղթեցին Ամերիկա իրենց երեխաների հետ։ Մի քանի տարի անց Ագնեսը այրիացավ, ունենալով ութ երեխա, որոնց մասին նա պետք է հոգար, և նա տքնաջան աշխատում էր նրանց կերակրելու և հագցնելու համար։ Նրա 12 տարեկան դուստրը՝ Իզաբելը, բավականին հաջողակ գտնվեց՝ սպասուհու աշխատանք գտնելով մի հարուստ՝ ոչ ՎՕՍ ընտանիքում։

Իզաբելն ապրում էր նրանց ընդարձակ տանը և օգնում էր հոգալ նրանց փոքր երեխաների մասին։ Իր ծառայությունների դիմաց նրա մայրիկն ամեն շաբաթ ստանում էր փոքր աշխատավարձ։ Շուտով Իզաբելն ընդունվեց որպես ընտանիքի անդամ և սկսեց վայելել ընտանիքի արտոնություններից շատերը, ինչպես օրինակ՝ պարի դասերը, գեղեցիկ հագուստները և թատրոն հաճախելը։ Այդ պայմանավորվածությունը շարունակվեց չորս տարի, մինչև որ ընտանիքը, որի համար Իզաբելն աշխատում էր, տեղափոխվեց մեկ այլ նահանգ։ Նրանք այնքան էին հավանում Իզաբելին, որ մոտեցան նրա մայրիկին՝ Ագնեսին, և թույլտվություն խնդրեցին պաշտոնապես որդեգրել նրան։ Նրանք խոստացան, որ կապահովեին նրան լավ կրթությամբ, հոգ կտանեին, որ նա հաջող ամուսնանար և իրենց սեփական երեխաների հետ միասին նրան կդարձնեին իրենց ունեցվածքի ժառանգորդ։ Նրանք նաև կշարունակեին վճարումներ կատարել Ագնեսին։

Մաքառումների մեջ գտնվող այս այրին և մայրը խիստ դժվարին որոշում պետք է ընդուներ, բայց նա ոչ մի վայրկյան չտատանվեց։ Լսեք շատ տարիներ հետո նրա թոռնուհու գրած խոսքերը. «Եթե նրա սերը չստիպեր նրան ոչ ասել, ապա նա ուներ նույնիսկ ավելի ծանրակշիռ պատճառ՝ նա եկել էր Շոտլանդիայից այդ ողջ ճանապարհը և հանուն Ավետարանի անցել չարչարանքների և փորձությունների միջով, և նա մտադիր չէր, եթե մարդկայնորեն հնարավոր էր, թողնել իր երեխային կորցնել այն, ինչը ձեռք բերելու համար նա եկել էր այսքան հեռու»։[2] Հարուստ ընտանիքը օգտագործեց ամեն հնարավոր փաստարկ և Իզաբելն ինքն էր արտասվում և աղերսում, որ թույլ տրվեր իրեն գնալ, բայց Ագնեսն ամուր մնաց։ Ինչպես պատկերացնում եք, 16-ամյա Իզաբելը այնպես էր զգում, կարծես իր կյանքը կործանվեց։

Իզաբել Հոգանը իմ մեծ տատիկն է, և ես շատ երախտապարտ եմ այն վկայության և համոզմունքի համար, որն այնպես պայծառ էր վառվում նրա մոր սրտում, որ թույլ չտվեց նրան փոխանակել իր դստեր Եկեղեցու անդամակցությունը աշխարհիկ խոստումների հետ։Ագնեսի խորը արմատավորված հավատքի և դեպի ավետարանը նրա դարձի գալու շնորհիվ այսօր նրա հարյուրավոր ժառանգներ Եկեղեցու անդամության օրհնությունները վայելող շահառուներն են։

Երիտասարդ բարեկամներ, մենք ապրում ենք վտանգավոր

ժամանակներում և որոշումները, որոնք դուք կոչված եք կայացնելու ամեն օր և նույնիսկ ամեն ժամ, հավերժական հետևանքներ ունեն: Որոշումները, որոնք դուք ընդունում եք ձեր ամենօրյա կյանքում, կսահմանեն այն, ինչ կպատահի ձեզ հետ հետագայում: Եթե դուք չունեք ամուր արմատավորված վկայություն և համոզմունք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո արքայությունն է երկրի վրա, այժմ է ժամանակը անել ինչ պահանջվում է՝ այդ համոզմունքը ձեռք բերելու համար: Այդպիսի համոզմունք վաստակելու համար պահանջվող ջանքերի հետաձգումը կարող է վտանգավոր լինել ձեր հոգու համար:

Իսկական դարձն ավելին է, քան պարզապես ավետարանի սկզբունքների մասին գիտելիք ունենալը և նույնիսկ ավելին է, քան ուղղակի այդ սկզբունքների վերաբերյալ վկայություն ունենալը: Հնարավոր է ավետարանի մասին վկայություն ունենալ՝ առանց դրանով ապրելու: Իսկապես դարձի գալը նշանակում է, որ մենք գործում ենք հիմնվելով նրա վրա, ինչին մենք հավատում ենք և թույլ տալիս ստեղծել «հզոր փոփոխություն մեր մեջ կամ մեր սրտերում»:[3] *Հավատքին հավատարիմ* գրքույկում մենք կարդում ենք, որ «դարձի գալը գործընթաց է, ոչ թե իրադարձություն: Դուք դարձի եք գալիս Փրկչին հետևելու արդար ջանքերի հետևանքով»:[4] Դա պահանջում է ժամանակ, ջանքեր և աշխատանք: Իմ մեծ տատիկն ուներ ուժեղ համոզմունք, որ ավետարանն ավելի կարևոր էր իր երեխաների համար, քան այն բոլորն, ինչ աշխարհն էր առաջարկում հարստության և հարմարավետության տեսքով, քանի որ նա զոհաբերել էր, դիմացել և ապրել ավետարանով: Նա դարձի էր եկել ավետարանի սկզբունքներով ապրելու և դրանց համար զոհաբերելու հետևանքով:

Մենք պետք է անցնենք այդ նույն գործընթացով, եթե ուզում ենք ձեռք բերել այդ նույն տիպի պարտավորություն: Փրկիչն ուսուցանել է. «Եթե մէկը կամենում է նորա

կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար, թե արդեօք Աստուածանի՞ց է, կամ եթէ ես իմ անձիցն եմ խօսում»:[5] Երբեմն, մենք փորձում ենք անել դա հակառակ ուղղությամբ: Օրինակ՝ մենք հնարավոր է կիրառենք այս մոտեցումը՝ Ես երջանիկ կլինեմ ապրել տասանորդի օրենքով, բայց նախ՝ ես պետք է իմանամ, որ այն ճշմարիտ է: Մենք գուցե, նույնիսկ, աղոթենք տասանորդի օրենքի վերաբերյալ վկայություն ձեռք բերելու համար և հուսանք, որ Տերը կօրհնի մեզ այդ վկայությամբ, նախքան երբևէ կլրացնենք տասանորդի թերթիկը: Դա ուղղակի չի գործում այդ ձևով: Տերն ակնկալում է, որ մենք հավատք գործադրենք: Մենք պետք է հետևողականորեն լրիվ և ազնիվ տասանորդ վճարենք, որպեսզի վկայություն ձեռք բերենք տասանորդի վերաբերյալ: Այս նույն գործելակերպը վերաբերում է ավետարանի բոլոր սկզբունքներին, լինի դա մաքրաբարոյության օրենքը, համեստության սկզբունքը, Իմաստության խոսքը կամ ծոմի օրենքը:

Ես կկամենայի կիսվել մի օրինակով, թե ինչպես որևէ սկզբունքով ապրելն օգնում է մեզ դարձի գալ դեպի այդ սկզբունքը: Ես երիտասարդ աղջիկ էի 60-ականների ժամանակ և միակ ՎՕՍ աղջիկը իմ ավագ դպրոցում: Դա հեղափոխական ժամանակաշրջան էր, որը բնորոշվում էր ավանդական բարոյականության մերժումով, թմրանյութերի օգտագործմամբ և «ամեն ինչ կարելի է» մտածելակերպով: Իմ հասակակիցներից շատերը լավ մարդիկ էին, բայց նրանք հեշտությամբ տարվեցին այս նոր բարոյականության հովերով, որն իրականում ուղղակի հին անբարոյականությունն էր: Ծնողներս և ուսուցիչներս եկեղեցում իմ մեջ տպավորել էին մարմնիս հարգանքով վերաբերվելու արժեքը, միտքս մաքուր պահելը և ամենից կարևորը Տիրոջ պատվիրաններին վստահել սովորելը: Ես որոշեցի խուսափել իրավիճակներից, որտեղ գիտեի, որ ալկոհոլ էր լինելու և մնալ մաքուր ծխախոտից և թմրանյութերից: Դա հաճախ նշանակում էր, ես չէի հաճախում երկույթների և հազվադեպ էի ժամադրվում: Թմրանյութերի օգտագործումը դառնում էր ավելի ու ավելի սովորական երիտասարդների շրջանում և վտանգներն այնքան լավ հայտնի չէին ինչպես այժմ: Իմ հասակակիցներից շատերը հետագայում մնայուն վնաս կրեցին հոգեմետ դեղամիջոցներից կամ ձեռք բերեցին լուրջ հակվածություն: Ես երախտապարտ եմ, որ ինձ ուսուցանվել էր ապրել Իմաստության Խոսքով իմ տանը, և ես ձեռք բերեցի խորը վկայություն ավետարանի

այդ սկզբունքի վերաբերյալ, երբ հավատք գործադրեցի և ապրեցի դրանով: Լավ զգացողությունը, որն ինձ պատեց ավետարանի ճշմարիտ սկզբունքով ապրելուց, Սուրբ Հոգու Ոգին էր, որը հաստատեց, որ սկզբունքը ճշմարիտ էր: Այդ ժամանակ է, երբ իսկական դարձ է տեղի ունենում:

Մարգարե Մորոնին Մորմոնի Գրքում ուսուցանել է. «Ես կկամենայի ցույց տալ աշխարհին, որ հավատքը բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում. ուստի, մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում»:[6] Մեր աշխարհում, որտեղ ակնկալիքը վայրկենական բավականությունն է, մենք հաճախ մեղավոր ենք՝ սպասելով պարգևատրության առանց դրա համար աշխատելու: Ես հավատում եմ, որ Մորոնին ասում է մեզ, որ եթե մենք առաջինը կատարենք աշխատանքը և հավատք գործադրենք, ապրելով ավետարանով, ապա կստանանք վկայություն, որ այն ճշմարիտ է: Իրական դարձը տեղի է ունենում, երբ շարունակում եք գործել՝ ըստ այն վարդապետությունների, որոնք գիտեք, որ ճշմարիտ են և պահում եք պատվիրանները օրեցօր, ամիս առ ամիս:

Եկեղեցում երիտասարդ լինելը մի փառահեղ ժամանակ է : Դուք առաջինն եք, որ մասնակցում եք երիտասարդական *Հետևիր Ինձ* ծրագրին, որի նպատակներից մեկն է՝ ձեզ դարձի բերել դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Լավ կլինի հիշեք, որ անկախ նրանից, թե որքան ոգեշնչված են ձեր ծնողներն ու երիտասարդության ղեկավարները, դուք եք կրում ձեր սեփական դարձի հիմնական պատասխանատվությունը: Ոչ ոք չի կարող դարձի գալ ձեր փոխարեն, և ոչ ոք չի կարող ստիպել ձեզ դարձի գալ»:[7] Դարձի գալը տեղի է ունենում, երբ մենք ջանասեր ենք մեր աղոթքներն ասելիս, սուրբ գրություններն ուսումնասիրելիս, եկեղեցի հաճախելիս և տաճարային արարողություններին մասնակցելու համար արժանի լինելիս: Դարձի գալը

տեղի է ունենում, երբ մենք գործում ենք արդարակյաց սկզբունքների վրա հիմնվելով, որոնք սովորում ենք մեր տներում և դասարանում: Դարձի գալը տեղի է ունենում, երբ մենք ապրում ենք ավետարանով, վայելում Սուրբ Հոգու ընկերակցությունը և ապրում մաքուր և առաքինի կյանքով: Այն գալիս է, երբ մենք հասկանում ենք Հիսուս Քրիստոսի Քավությունը, ընդունում ենք Նրան որպես մեր Փրկիչ և Քավիչ և թույլ ենք տալիս, որ Քավությունը գործի մեր կյանքում:

Ձեր անձնական դարձը կօգնի ձեզ, երբ դուք պատրաստվեք ուխտեր կապել տաճարում, միսիա ծառայել և հիմնել ձեր իսկ ապագա տները: Երբ դուք դարձի եկած եք, դուք ցանկություն կունենաք կիսվել ուրիշների հետ այն, ինչ սովորել եք և ձեր վստահությունն և համոզմունքով ու զորությամբ ուրիշներին վկայելու ձեր ունակությունը կմեծանա: Ուրիշների հետ ավետարանով կիսվելու այս ցանկությունը և համարձակորեն վկայելու վստահությունը իսկական դարձի բնական արդյունքներն են: Փրկիչն ուսուցանեց Պետրոսին. «Դու երբոր դառնաս, եղբայրներիդ հաստատիր»:[8]

Հիշեք մարգարե զորավար Հեսուին: Նա ոչ միայն ինքն էր դարձի եկած, այլ մինչև իր կյանքի վերջ անխոնջ ջանում էր Իսրայելի զավակներին դարձի բերել դեպի Աստված: Մենք կարդում ենք Հին Կտակարանում. «Եվ Իսրայէլը Տիրոջը պաշտեց Հեսուի բոլոր օրերումը»:[9] Իսկապես դարձի եկած անձնավորությունը ապավինում է Քավությանը և փրկում է իր սեփական հոգին և ապա գործադրում հզոր ազդեցություն բոլոր նրանց վրա, ովքեր նրան գիտեն:

Ավետարանով ապրելը և սուրբ տեղերում կանգնելը միշտ չէ հարմարավետ կամ հեշտ, բայց ես վկայում եմ, որ դա արժե: Տերը խորհուրդ տվեց Էմմա Սմիթին «մի կողմ դնել այս աշխարհի բաները և ավել լավ բաների ձգտել»:[10] Կարծում եմ, մենք ուղղակի չենք պատկերացնում, թե որքան սքանչելի է այդ «ավելի լավ բաների» աշխարհը:

Ես վկայում եմ, որ մենք ունենք սիրառատ Երկնային Հայր, որի մեծագույն ցանկությունն է օգնել և օրհնել մեզ ավետարանով ապրելու և դարձի գալու մեր ջանքերում: Նա հստակորեն նշել է, որ Նրա հիմնական նպատակը և աշխատանքը մեր «անմահությունն է ու հավերժական կյանքը»:[11] Նա ցանկանում է տուն բերել մեզ Իր ներկայություն: Ես վկայում եմ, որ երբ մենք գործում ենք ավետարանի վարդապետությունների վրա հիմնվելով և դրանք դնում ամենօրյա օգտագործման մեջ, մենք դարձի կգանք և կլինենք շատ բարիք գործելու միջոց մեր ընտանիքում և աշխարհում: Թող որ մենք բոլորս օրհնվենք մեր ամենօրյա ջանքերում հասնելու այդ նպատակին՝ իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հեսու ԻԴ.15:
2. Fuschia Stringham, “Sketch of the Life of Isabelle Hunter Hoggan Stringham” (unpublished personal history, 1934), 4.
3. Մոսիա 5.2:
4. *Հաստատքին Հաստատրիմ. Ամերիկյան վկայակոչում* (2004), 41:
5. Հոհաննես Է.17:
6. Եթեր 12.6:
7. *Հաստատքին Հաստատրիմ, 43*:
8. Ղուկաս ԻԲ.32:
9. Հեսու ԻԴ.31:
10. Վարդապետություն և Ուխտեր 25.10:
11. Մովսես 1.39:

Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ
Յոթանասունի Նախագահություն

Տոկալու ուժը

Արդար կյանքով մինչև վերջ համբերելու մեր ունակությունը ուղիղ համեմատական է մեր վկայության ուժին և մեր դարձի խորությանը:

Ամեն առավոտ արթնանալով սկսում ենք կյանքի մարտահրավերներով լի մի նոր օր: Այդ մարտահրավերները տարբեր կերպ են արտահայտվում՝ ֆիզիկական դժվարություններ, ֆինանսական անհաջողություններ, հարաբերությունների խզում, զգացմունքային փորձություններ և անգամ սեփական հավատքի հետ մաքառումներ:

Մեր կյանքի շատ դժվարություններ կարող ենք լուծել և հաղթահարել, իսկ որոշները գուցե դժվարությամբ հասկանանք և հնարավոր չլինի լուծել, որոնք կմնան մեզ հետ մինչև հաջորդ կյանք անցնելը: Երբ տոկում ենք, լուծելով որոշ դժվարություններ, իսկ որոշներն էլ չլուծելով, կարևոր է հիշել, որ հոգևոր ուժը, որ զարգացնում ենք, կօգնի մեզ հաջողությամբ կրել մեր կյանքի բոլոր մարտահրավերները:

Եղբայրներ և քույրեր, մենք ունենք սիրող Երկնային Հայր, ով ծրագրել է մեր երկրային գոյությունը, որպեսզի մենք անհատապես սովորենք մեզ անհրաժեշտ դասերը՝ Նրա ներկայության մեջ հավերժական կյանքին արժանանալու համար:

Նախագահ Ջոզեֆ Սմիթի կյանքից մի դրվագ լուսաբանում է այդ սկզբունքը: Մարգարեն իր մի քանի ընկերների հետ միասին ամիսներ շարունակ գտնվում էր Լիբերթի բանտում: Իր չարչարանքների մեջ Մարգարե Ջոզեֆը խոնարհ աղոթքով աղերսեց Տիրոջը, որ փարատվեն Սրբերի տառապանքները: Տերը պատասխանեց Մարգարե Ջոզեֆին և մեզ բոլորիս ուսուցանելով, որ եթե հաջողությամբ համբերենք, մեր դեմ ծառացած դժվարությունները կլինեն մեր բարիքի համար: Ջոզեֆի խնդրանքին ի պատասխան Տերն ասաց.

«Որդի՛ս, խաղաղություն քո հոգուն. քո ձախորդություններն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ.

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի»:[1]

Երկնային Հայրը կազմակերպել է մեր ճամփորդությունն այս կյանքում՝ փորձելով մեր բնավորությունը: Մենք ենթարկվում ենք բարու և չարի ազդեցություններին, և ապա մեզ տրված բարոյական ազատ կամքի շնորհիվ ընտրում ենք մեր ուղին: Ինչպես Մորմոնի Գրքի հին օրերի Սամուել մարգարեն է ուսուցանել. «Դուք ազատ եք. ձեզ թույլատրված է գործելու ինքներդ ձեզ համար. քանզի ահա, Աստված տվել է ձեզ գիտելիք, և նա դարձրել է ձեզ ազատ»:[2]

Երկնային Հայրը նաև հասկանում էր, որ մահկանացու կյանքում մենք միշտ չէ որ ճիշտ կամ արդար ընտրություններ կկատարենք: Քանի որ մենք կատարյալ չենք և երբեմն սխալվում ենք, Նրա ներկայություն վերադառնալու համար մենք օգնության կարիք ունենք: Անհրաժեշտ օգնությունը տրվում է ուսմունքների, օրինակի և Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության միջոցով: Փրկչի քավող զոհաբերությունը հնարավոր է դարձնում մեր ապագա փրկությունը և վեհացումը ապաշխարության սկզբունքի շնորհիվ: Եթե մենք ազնվորեն և անկեղծորեն ապաշխարենք, Քավությունը կօգնի մեզ դառնալ մաքուր, փոխել մեր էությունը և հաջողությամբ կրել մեր դժվարությունները:

Համբերությունը կարևոր սկզբունք է Հիսուս Քրիստոսի վարդապետության մեջ, քանի որ մեր հավերժական ապագայի որակը համեմատական է արդար կյանքով տոկալու մեր ունակությանը:

2 Նեփի 31-ում Նեփի մարգարեն ուսուցանում է մեզ, որ Հիսուս Քրիստոսի պես ստանալով մկրտության նույն փրկող արարողությունը, և Սուրբ Հոգու պարգևը, մենք պետք է «առաջ մղվենք՝ սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերենք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենա՛ք հավերժական կյանք»:[3]

Ուստի, մեր Երկնային Հոր բոլոր օրհնություններից մեծագույնը՝ հավերժական կյանքը ստանալու համար, մենք պետք է ավարտենք համապատասխան ծեսերի աշխատանքը և ապա շարունակենք պահել դրանց հետ կապված ուխտերը: Այսինքն, մենք պետք է անսասան համբերենք:

Արդար կյանքով մինչև վերջ համբերելու մեր կարողությունը ուղիղ համեմատական է մեր վկայության ուժին և մեր դարձի խորությանը: Երբ մեր վկայություններն ամուր են, և մենք իրոք դարձի ենք եկել առ Հիսուս Քրիստոսի ավետարանը, մեր ընտրությունները կոգեշնչվեն Սուրբ Հոգով, դրանք կլինեն Քրիստոսակենտրոն և կամրապնդեն արդար կյանքով համբերելու մեր ցանկությունը: Եթե

մեր վկայությունները թույլ են, իսկ մեր դարձը՝ մակերեսային, վտանգը մեծ է, որ մենք կգայթակղվենք աշխարհի կեղծ ավանդույթներով՝ կատարելով սխալ ընտրություններ:

Ուզում եմ կիսվել մի դեպքով, որը լուսաբանում է ֆիզիկապես տոկալու համար անհրաժեշտ ջանքը, իսկ ապա համեմատել այն հոգեպես տոկալու համար անհրաժեշտ ջանքի հետ: Միսիսիպից վերադառնալուց հետո Կալիֆոռնիայի իմ քոլեջում ես բասկետբոլ խաղալու հնարավորություն ունեի մի հարգված մարզչի մոտ: Նախքան խաղաշրջանի սկսվելը, այդ մարզիչը շատ լրջորեն էր զբաղվում իր մարզիկների մարզավիճակով: Նրա պարապմունքների նախադրյալներից էր՝ մի որոշակի և շատ կարճ ժամանակահատվածում վազել բլուրների վրայով մի մեծ շառավղով երթուղի: Հիշում եմ այդ երթուղով վազելու իմ առաջին փորձը միսիսիպից վերադառնալուց անմիջապես հետո: Ինձ թվաց, ես կմեռնեյի:

Շաբաթներ տևած լուրջ մարզումներից հետո միայն վերջապես կարողացա վազել մարզչիս նշանակած ժամանակահատվածում: Հրաշալի զգացողություն էր, որ կարողացա ոչ միայն վազել, այլ վերջնագծին մոտ արագացնել ընթացքը:

Բասկետբոլ խաղալու համար պետք է լավ մարզավիճակ ունենալ: Ֆիզիկապես ամուր լինելու համար պետք է գին վճարել, իսկ այդ գինը՝ նվիրվածությունն է, հաստատակամությունը և ինքնակարգավարժումը: Հոգևոր տոկունության համար ևս պետք է գին վճարել: Դա նույն գինն է՝ նվիրվածություն, հաստատակամություն և ինքնակարգավարժում:

Ձեր մարմնի պես, վկայությունը ևս պետք է լավ մարզավիճակում լինի, եթե ցանկանում եք, որ այն ամրանա: Ուրեմն, ինչպե՞ս ենք լավ վիճակում պահում մեր վկայությունները: Լավ մարզավիճակում լինելու համար մենք պարզապես հեռուստացույցով բասկետբոլ չենք դիտում: Նմանապես, մենք մեր վկայությունները լավ վիճակում չենք կարող պահել հեռուստացույցով գերազույն համաժողովը դիտելով: Մենք պետք է ուսումնասիրենք և սովորենք Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները, որից հետո պետք է ապրենք ըստ դրանց: Այդպես միայն կարող ենք դառնալ Հիսուս Քրիստոսի աշակերտները և այդպես կարող ենք կառուցել ամուր վկայություն:

Երբ կյանքում ձախորդությունների ենք հանդիպում, իսկ մեր ցանկությունն է՝ ընդօրինակել Հիսուս Քրիստոսի հատկանիշները, կարևոր է հոգևոր առումով պատրաստված լինելը: Իսկ դա նշանակում է, որ զարգացնելով հոգևոր տոկունություն և ուժ, կգտնվենք հոգևոր լավ վիճակում: Լինելով հոգևոր լավ վիճակում, մենք մշտապես կընտրենք ճիշտը: Մենք կլինենք անսասան՝ ավետարանով ապրելու մեր ցանկության և ունակության մեջ: Ինչպես մի անանուն հեղինակ է մի անգամ ասել. «Դուք պետք է դառնաք քար, որը գետը չի կարող քշել-տանել»:

Ջոզեֆ Վաթսոն Մեյնզը (աջում) իր զուգընկերոջ՝ Գիլփին Ս. Վուլիի հետ:

Քանի որ ամեն օր մեր դեմ մարտահրավերներ են ծառանում, կարևոր է, որ ամեն օր աշխատենք մեր հոգևոր տոկունության վրա: Երբ հոգևոր տոկունություն ենք զարգացնում, աշխարհի կեղծ ավանդույթները, ինչպես նաև մեր առօրյա անձնական խնդիրները շատ քիչ բացասական ազդեցություն կթողնեն արդարությամբ տոկալու մեր կարողության վրա:

Հոգևոր տոկունություն դրսևորելու հրաշալի օրինակներ կան մեր ընտանեկան պատմության մեջ: Մեր նախնիների բազում պատմությունների թվում մենք կկարողանանք գտնել օրինակներ, որոնք ցույց են տալիս տոկալու դրական կողմերը:

Այդ սկզբունքը լուսաբանվում է իմ ընտանիքի մի պատմության մեջ: Իմ նախապապիկը՝ Ջոզեֆ Վաթսոն Մեյնզը ծնվել է 1856թ. Հուլում, Յորքշիր, Անգլիա: Նրա ընտանիքը միացել է Եկեղեցուն Անգլիայում և ապա տեղափոխվել Սոլթ Լեյք Սիթի: Նա ամուսնացել է Էմիլի Քիփի հետ 1883թ., և նրանք դարձել են ութ երեխաների ծնողներ: Ջոզեֆը կանչվել էր լիաժամկետ միսիա ծառայելու 1910թ. հունիսին, երբ 53 տարեկան էր: Իր կնոջ և ութ երեխաների աջակցությամբ նա վերադարձավ իր հայրենի Անգլիա՝ միսիա ծառայելու նպատակով:

Նա արդեն մոտ երկու տարի հավատարմորեն ծառայել էր, երբ մի օր իր զուգընկերոջ հետ հեծանվով Կիրակնօրյա Դպրոցի ծառայություններին գնալու ճանապարհին նրա հեծանվի ակը պայթում է: Նա իջնում է հեծանվից, որ գնահատի վնասի չափը: Տեսնելով, որ լուրջ խնդիր է և հեծանիվը վերանորոգելու համար ժամանակ է հարկավոր, նա ասում է զուգընկերոջը, որ չսպասի իրեն և գնա Կիրակնօրյա ծառայությանը և սկսի այն, մինչև ինքը ևս կմիանա իրեն: Դա ասելուն պես նա ընկնում է գետնին և մահանում սրտի կաթվածից:

Ջոզեֆ Վաթսոն Մեյնզն այս կյանքում այլևս երբեք չտեսավ իր կնոջն ու ութ երեխաներին: Նրանք նրա մարմինը տեղափոխեցին Սոլթ Լեյք Սիթի և նրա հոգեհանգիստը

կազմակերպեցին հին Վաթերլո Ժողովարանում: Թաղման ծառայության ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Էնթոնի Վ. Իվինսի խոսքերը կյանքի, մահվան և տոկալու մասին կարևոր դաս են ուսուցանում մեզ. «Ավետարանը մեզ պարգևում է մահվան հանդեպ ոչ թե անխոցելիություն, այլ հաղթանակ՝ փառահեղ հարության հանդեպ հույսի միջոցով: . . . Դա վերաբերում է [Ջոզեֆ Մեյնզին] . . . Հաճույք, բավարարվածություն և ուրախություն ես զգում, երբ գիտես, որ մարդիկ դնում են իրենց կյանքը արդարակեցությամբ և հավատքով՝ մնալով հավատքին հավատարիմ»:[4]

Այս ընտանեկան պատմությունը ոգեշնչում է ինձ, որ փորձեմ լավագույնս հետևել իմ նախապապիկի համբերություն և հոգևոր տոկունություն դրսևորելու օրինակին: Ինձ ոգեշնչում է նաև նրա կնոջ՝ Էմիլիի հավատքը, որի կյանքը Ջոզեֆի մահից հետո անշուշտ ծանր բեռ էր դարձել: Նրա վկայությունն ամուր էր և նրա դարձը լիարժեք, երբ նա իր ողջ կյանքում մնաց հավատքին հավատարիմ՝ միայնակ պահելով իր ութ երեխաներին:

Պողոս Առաքյալն այսպես է ասել. «Եկեք դեն գցենք ամեն ծանրություն, և մեզ դյուրավ պաշարող մեղքը. և համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարեզի ընթացքը»:[5] Մրցավազքը, որին մենք մասնակցում ենք այս երկրի վրա տոկունության մրցավազք է: Այս մրցավազքի խոչընդոտները այն մարտահրավերներն են, որոնք մեր դեմ են ծառանում ամեն առավոտ: Մենք այստեղ ենք՝ երկրի վրա, որպեսզի անցնենք այդ մրցավազքը, գործադրենք մեր բարոյական ազատ կամքը, և տարբերենք ճիշտը սխալից: Որպեսզի պատվով և հաջողությամբ ավարտենք այդ մրցավազքը և վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ, մենք պետք է վճարենք նվիրվածության, հաստատակամության և ինքնակարգավարժման գինը: Մենք պետք է լինենք հոգևոր լավ մարզավիճակում, զարգացնենք հոգևոր տոկունություն: Մեզ անհրաժեշտ է ամուր վկայություն, որը կհանգեցնի ճշմարիտ դարձի, իսկ արդյունքում մեր մեջ կգտնենք ներքին խաղաղություն և ուժ, որն անհրաժեշտ է մեր առջև ծառացած ամեն դժվարություն կրելու համար:

Ինչպիսի մարտահրավերներով էլ որ դուք արթնանաք ամեն առավոտ, հիշեք՝ ձեր զարգացրած հոգևոր ուժով և Տիրոջ օգնությամբ մրցավազքի ավարտին կունենաք այն վստահությունը, որը բնութագրել է Պողոս Առաքյալն՝ ասելով.

«Որովհետև ես արդեն նվիրվում եմ, և իմ բաժանվելու ժամանակը հասած է:

Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատքը պահեցի.

Այսուհետև մնում է ինձ արդարության պսակը, որ Տերը կտա ինձ այն օրումը՝ արդար դատավորը»:[6]

Ես բերում եմ իմ վկայությունը Երկնային Հոր իրականության և երջանկության Նրա հրաշալի ու հավերժական ծրագրի մասին, ըստ որի մենք այժմ գտնվում ենք այս երկրի վրա: Թող որ Տիրոջ Հոգին ոգեշնչի բոլորիս մեր մեջ զարգացնել տոկալու ուժ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.7–8:
2. Հելաման 14.30:
3. 2 Նեփի 31.20:
4. Էնթոնի Վ. Իվինս, Ջոզեֆ Վաթսոն Մեյնզի հուղարկավորությանը ասված մահախոսականից (Մեյնզ ընտանիքի անձնական գրառումներ):
5. Եբրայեցիս 12.1:
6. Բ Տիմոթեոս 4.6–8:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորում

Անձնական զորություն՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մեզանից յուրաքանչյուրը կարող է մաքրվել և մեր ըմբոստության բեռը կվերցվի:

Վերջերս ես օրհնվեցի, հանդիպելով երիտասարդների անչափ տպավորիչ մի խմբի՝ Այդահո նահանգից: Մի պարկեշտ երիտասարդ աղջիկ հարցրեց ինձ, թե որն է ամենակարևոր բանը, որ կարող են անել իրենց կյանքի այդ փուլում: Ես առաջարկեցի, որ սովորեն ընկալել Հիսուս Քրիստոսի Քավության զորությունն իրենց կյանքում: Այսօր ես կմեկնաբանեմ այդ զորության մեկ կողմը. դա անձնական ուժն է, որ կարող ենք ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Ամմոնի և նրա եղբայրների մասին, ովքեր Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում էին «վայրենի, կարծրացած և կատաղած մի ժողովրդի»:[1] Այդ ժողովրդից շատերը դարձի եկան և հրաժարվեցին իրենց մեղսավոր վարքից: Այնքան լիարժեք էր նրանց դարձը, որ նրանք թաղեցին իրենց զենքերը և ուխտեցին Տիրոջը, որ իրենք այլևս երբեք չեն օգտագործի դրանք:[2]

Ավելի ուշ, իրենց դարձի չեկած եղբայրներից շատերը հարձակվեցին նրանց վրա և սկսեցին սպանել նրանց: Այդ հավատարիմ մարդիկ ընտրեցին սրի քաշվել, քան վերցնելով զենքերը վտանգել իրենց հոգևոր կյանքը: Նրանց արդար օրինակը նպաստեց, որ նույնիսկ ավելի շատ մարդիկ դարձի գային և վայր դնեին իրենց ապստամբության զենքերը:[3]

Ամմոնի միջոցով Տերն առաջնորդեց նրանց ապաստան գտնել նեփիացիների մեջ, և նրանք հայտնի դարձան որպես Ամմոնի ժողովուրդ:[4] Նեփիացիները պաշտպանեցին նրանց երկար տարիներ, սակայն, ի վերջո, նեփիացիների բանակը սկսեց թուլանալ և հարկավոր էր ամրացնել այն:[5]

Ամմոնի ժողովրդի հոգևոր կյանքում վճռորոշ պահ էր: Նրանք հավատարիմ էին մնացել այլևս զենք չվերցնելու իրենց ուխտին: Սակայն նրանք հասկացան, որ հայրերը պատասխանատվություն են կրում՝ պաշտպանելու իրենց ընտանիքներին:[6] Դա այնքան մեծ անհրաժեշտություն էր, որ վերանայվեց իրենց ուխտը դրժելու հարցը:[7]

Նրանց քահանայության իմաստուն ղեկավարը՝ Հելամանը գիտեր, որ Տիրոջ հետ կապած ուխտը դրժելը երբեք չի արդարացվում: Նա ոգեշնչված այլընտրանք առաջարկեց: Նա հիշեցրեց նրանց, որ իրենց որդիները երբեք նույն մեղքերը չէին գործել և, ուստի, նույն ուխտը կապելու անհրաժեշտությունը չէր եղել:[8] Թեպետ նրանց որդիները շատ երիտասարդ էին, նրանք ֆիզիկապես ամուր և, որ ամենակարևորն է, առաքինի և մաքուր էին: Նրանց որդիները կոփվել էին իրենց մայրերի հավատքով:[9] Իրենց մարգարե-ղեկավարի առաջնորդությամբ այդ երիտասարդները զբաղեցրեցին իրենց հայրերի տեղը՝ ի պաշտպանություն իրենց ընտանիքների և տների:[10]

Այդ կարևոր որոշման հետ կապված իրադարձությունները ցույց են տալիս, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը անձնական զորություն բերում Աստծո զավակների կյանք: Հաշվի առեք այդ հայրերի զորովագութ զգացմունքները: Ինչպես էին նրանք զգում իրենց, իմանալով, որ իրենց ըմբոստ արարքների պատճառով չեն կարողանում կարիքի պահին պաշտպանել իրենց կանանց և երեխաներին: Հավանաբար, նրանք ծածուկ արտասվել են, իմանալով, թե ինչպիսի վայրագությունների էին հանդիպելու իրենց որդիները: Ոչ թե զավակները, այլ հայրերը պետք է պաշտպանեն իրենց ընտանիքներին:[11] Անշուշտ, խորն էր նրանց վիշտը:

Ինչո՞ւ էր իրենց ոգեշնչված քահանայության ղեկավարը վախենում, որ նրանք կրկին կվերցնեին իրենց զենքերը, «չլիներ, թե . . . նրանք կորցնեին իրենց հոգիները»:[12] Տերը հայտարարել է. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[13] Այդ հավատարիմ հայրերը վաղուց ապաշխարել էին իրենց մեղքերից և մաքրվել Հիսուս Քրիստոսի Քավությամբ, ուրեմն ինչո՞ւ նրանք որոշեցին չպաշտպանել

իրենց ընտանիքներին:

Հիմնարար ճշմարտություն է այն, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք մաքրագործվել: Մենք կարող ենք դառնալ առաքինի և մաքուր: Սակայն երբեմն մեր սխալ ընտրությունները երկարատև հետևանքներ են ունենում: Ապաշխարությունն ավարտին հասցնելու կարևոր քայլերից է՝կրել անցյալում կատարած մեր մեղքերի կարճատև և երկարատև հետևանքները: Իրենց անցյալի ընտրությունների պատճառով այդ ամմոնացի հայրերը տրվել էին մարմնական ցանկություններին, որը կարող էր կրկին դառնալ խոցելի տեղ, և սատանան կփորձեր օգտագործել դա:

Սատանան կփորձի օգտագործել մեր նախկին մեղքերի հիշողությունը՝ մեզ կրկին իրեն ենթարկելու համար: Մենք պետք է զգոն լինենք և խուսափենք նրա գայթակղություններից: Այդպես էր նաև ամմոնացի հավատարիմ հայրերի դեպքում: Երկար տարիների հավատարիմ ապրելակերպից հետո անգամ խիստ կարևոր էր նրանց համար ձերբազատվել հոգևոր նախկին մեղքերի հիշողությունից:

Բազում ճակատամարտերի մեջտեղում հրամանատար Մորոնին ղեկավարեց ամենաթույլ քաղաքների ամրացումը: «Նա կարգադրեց, որ նրանք հեծաններից մի ցցապատ շինեն՝ խանդակի ներսի թմբի վրա. և նրանք խանդակից ցեխ էին դուրս գցում, հեծաններից՝ ցցապատին . . . մինչև որ նրանք օղակեցին . . . քաղաքի շուրջբոլորը չափազանց մեծ բարձրության հեծաններով ու հողե մի ամուր պատով»:[14] Հրամանատար Մորոնին հասկանում էր թույլ մասերն ամրացնելով հզորանալու կարևորությունը:[15]

Նույնը վերաբերում էր նաև այդ ամմոնացի հայրերին: Նրանց անհրաժեշտ էր, որ ավելի բարձր և լայն ամրություններ վեր խորանային իրենց հավատարիմ կյանքի և անցյալի անօրեն վարքի միջև: Նրանց որդիները, որոնք օրհնվել էին արդարակյաց ավանդույթներով, այդքան խոցելի չէին նույն գայթակղությունների հանդեպ: Նրանք կարողացան հավատարմորեն պաշտպանել իրենց ընտանիքները՝ չվտանգելով իրենց հոգևոր բարօրությունը:

Ուրախ ավետիքը նրանց համար, ովքեր ցանկանում են ազատվել անցյալի սխալ ընտրությունների հետևանքներից, այն է, որ Տերը տարբեր կերպ է նայում թուլություններին և ըմբոստությանը: Տերը զգուշացնում է, որ չապաշխարող ըմբոստությունը կբերի պատիժ,[16] մինչդեռ Նա միշտ ողորմածությամբ է խոսում թուլությունների մասին:[17]

Անկասկած, որոշ ներողամտություն պետք է ցուցաբերվի ամմոնացի հայրերի նկատմամբ, քանի որ նրանք ուսուցանվել էին իրենց ծնողների կեղծ ավանդույթներով, սակայն Երկնային Հոր բոլոր զավակները գալիս են մահկանացու կյանք Քրիստոսի Լույսով: Անկախ նրանից, թե ինչն էր եղել նրանց մեղսավոր գործերի պատճառը, արդյունքում զարգացել էր հոգևոր խոցելիություն, որը սատանան փորձելու էր օգտագործել:

Բարեբախտաբար, ուսուցանվելով ավետարանը, նրանք ապաշխարել էին, և Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ դարձել հոգեպես ավելի ամուր՝ սատանայի գայթակղությունների դեմ: Ամենայն հավանականությամբ նրանք չէին զգում իրենց վայրենի անցյալին վերադառնալու գայթակղությունը և, հետևելով իրենց մարգարե-ղեկավարին, սատանային հնարավորություն չտվեցին «խաբել իրենց հոգիները և զգուշորեն առաջնորդել հեռու՝ վար դեպի դժոխք»:[18] Փրկչի Քավությունը ոչ միայն մաքրագործել էր նրանց մեղքից, այլ իրենց քահանայության ղեկավարի խորհրդին հնազանդվելու շնորհիվ Փրկիչը կարողացավ պաշտպանել նրանց իրենց թուլություններից և զորացնել նրանց: Մեղքերը թողնելու խոնարհ, ողջ կյանքի պարտավորվածությամբ նրանք ավելի լավ պաշտպանեցին իրենց ընտանիքներին, քան եթե գնային ճակատամարտի դաշտ: Նրանց հնազանդությունը չզրկեց նրանց օրհնություններից,

այլ ամրացրեց նրանց և օրհնեց ապագա բազում սերունդներին:

Այս պատմության ավարտը պարզաբանում է, թե ինչպես Տիրոջ ողորմությունը «թույլ կողմերը դարձրեց ուժեղ»:[19] Այդ հավատարիմ հայրերն ուղարկեցին իրենց որդիներին Հելամանի հոգատարության ներքո: Թեպետ այդ տղաները կռվեցին ահարկու ճակատամարտերում, որտեղ բոլորը ինչ-որ չափով վիրավորվել էին, սակայն ոչ մի կյանք չկորսվեց:[20] Երիտասարդ տղաները ապացուցեցին, որ իրենք կենսական խթան դարձան նեփիացիների թուլացած բանակի համար: Նրանք վերադարձան տուն հավատքով լի և հոգով ամուր: Նրանց ընտանիքներն օրհնված էին, պաշտպանված և ամրացած:[21] Մեր օրերում Մորմոնի Գրքի անթիվ ուսումնասիրողները կրթվել են այդ մաքուր և արդարակյաց տղաների օրինակով:

Մեզանից յուրաքանչյուրի կյանքում եղել են ժամանակներ, երբ սխալ ընտրություններ ենք կատարել: Մենք բոլորս էլ Հիսուս Քրիստոսի Քավության փրկագնող զորության կարիքն ունենք: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ապաշխարի իր ցանկացած ըմբոստությունից: «Քանզի, ես՝ Տերս, չեմ կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել»:[22] Նա չի կարող, քանի որ գիտի, թե ինչ է հարկավոր Իր նման դառնալու համար:

Մեզանից շատերը թույլ են տվել, որ թուլությունն արմատավորվի մեր բնավորության մեջ: Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, ամմոնացիների պես, մենք կարող ենք հոգևոր ամրություններ կառուցել մեր և անցյալի ցանկացած սխալի միջև, որ սատանան փորձում է օգտագործել: Ամմոնացի հայրերի շուրջ կառուցված հոգևոր պաշտպանություններն օրհնել և ամրացրել էին իրենց, իրենց ընտանիքներին, իրենց երկիրը և ապագա սերունդներին: Նույնկերպ կարող է լինել նաև մեզ հետ:

Ուրեմն, ինչպե՞ս կարող ենք կառուցել այդ հավերժական ամրությունները: Առաջին քայլը պետք է լինի անկեղծ, համակողմանի և լիարժեք ապաշխարությունը: Հիսուս

Քրիստոսի Քավության շնորհիվ մեզանից յուրաքանչյուրը կարող է մաքրվել և մեր ըմբոստության բեռը կվերցվի: Հիշեք, ապաշխարությունը պատիժ չէ. այն դեպի փառահեղ ապագա տանող հույսով լի ուղի է:

Երկնային Հայրը տվել է մեզ գործիքներ, որոնք օգնում են ամրություններ կառուցել մեր խոցելիության և մեր հավատարմության միջև: Դիտարկենք հետևյալ առաջարկությունները.

- Ուխտեր կապեք և ծեսեր ստացեք ձեզ համար: Ապա հաստատակամորեն և հետևողականորեն աշխատեք տաճարային ծեսեր կատարել ձեր նախնիների համար:
- Կիսվեք ավետարանով ոչ անդամի, ընտանիքի քիչ ակտիվ անդամների կամ ընկերների հետ: Այս ճշմարտություններով կիսվելը կարող է նոր եռանդ բերել ձեր կյանք:
- Հավատարմորեն ծառայեք եկեղեցական բոլոր կոչումներում, հատկապես տնային ուսուցման և այցելող ուսուցիչների հանձնարարություններում: Մի եղեք լոկ 15-րոպեանոց տնային կամ այցելող ուսուցիչ: Օգնության ձեռք մեկնեք ընտանիքի յուրաքանչյուր անդամին: Անձնապես ճանաչեք նրանց: Եղեք իսկական ընկեր: Բարի գործերով ցույց տվեք, թե որքան շատ եք հոգում նրանցից յուրաքանչյուրի համար:
- Ամենակարևորը՝ ծառայեք ձեր ընտանիքի անդամներին: Առաջնահերթություն համարեք ձեր ամուսնու և երեխաների հոգևոր զարգացումը: Ուշադիր եղեք, որ օգնեք յուրաքանչյուրին: Առատորեն նվիրեք ձեր ժամանակն ու ուշադրությունը:

Այս բոլոր առաջարկություններում մի ընդհանուր բան կա՝ ձեր կյանքը լցրեք ծառայությամբ: Եթե ձեր կյանքը նվիրեք Երկնային Հոր զավակներին ծառայելուն,[23] սատանայի գայթակղությունները կկորցնեն իրենց ուժը ձեր կյանքում:

Քանի որ ձեր Երկնային Հայրը անչափ սիրում է ձեզ, Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում այդ ուժը: Հրաշալի է, այնպես չէ՞: Ձեզանից շատերը զգացել են սխալ ընտրությունների բեռը, և յուրաքանչյուրդ կարող եք զգալ Տիրոջ ներողամտության, ողորմության և ուժի վեհացնող զորությունը: Ես զգացել եմ դա, և վկայում եմ, որ դա հասու է ձեզանից յուրաքանչյուրին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 17.14; տես նաև Ալմա 17–27:
2. Տես Ալմա 23.4–7; 24.5–19:
3. Տես Ալմա 24.20–27:
4. Տես Ալմա 27:
5. Տես Ալմա 53.8–9; 56.10–17:
6. Տես «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
7. Տես Ալմա 53.10–13:
8. Տես Ալմա 53.14–16:
9. Տես Ալմա 56.48:
10. Տես Ալմա 53.17–22; 56.3–10, 30–57:
11. Տես *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
12. Ալմա 53.15:
13. Վարդապետություն և Ուխտեր 58.42:
14. Ալմա 53.4:
15. Տես Եթեր 12.27:
16. Տես Ա Սամուել 12.15; Եսայիա 1.20; 1 Նեփի 2.23; Մոսիա 15.26; Ալմա 9.24; Վարդապետություն և Ուխտեր 76.25; Մովսես 4.3:
17. Տես Առակաց 28.13; Ա Կորնթացիս 2.3; 15.43; Ա Կորնթացիս 13.4; Հակոբոս 3.17; 2 Նեփի 3.13; Հակոբոս 4.7; Ալմա 34.17; 3 Նեփի 22.8; Եթեր 12.26–28; Վարդապետություն և Ուխտեր 24.11; 35.17; 38.14; 62.1:
18. 2 Նեփի 28.21:
19. Եթեր 12.27:
20. Տես Ալմա 57.25; 58.39:
21. Տես Ալմա 58.40:
22. Վարդապետություն և Ուխտեր 1.31:
23. Տես Մատթեոս 16.25; Վարդապետություն և Ուխտեր 88.125:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

«Քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողել եւ քեզ անտես չեմ անել»

Մեր Երկնային Հայրը . . . գիտի, որ մենք սովորում ենք, աճում և դառնում ենք ուժեղ, երբ դիմակայում ենք և հաղթահարում ենք փորձությունները, որոնցով պիտի անցնենք:

Այսօր իմ հուշատետրում գրանցելու եմ. «Սա իմ մասնակցած համաժողովների ամենառգեշնչող նիստերից մեկն էր: Բոլոր ելույթները փառահեղ ու ամենահոգևոր բնույթի էին»:

Եղբայրներ և քույրեր, վեց ամիս առաջ, երբ մենք հանդիպեցինք միասին մեր գերագույն համաժողովի ժամանակ, իմ սիրելի կինը՝ Ֆրենսիսը, պառկած էր հիվանդանոցում, հենց մի քանի օր առաջ ջախջախիչ ձևով վայր ընկնելու հետևանքով: Մայիսին, շաբաթներ շարունակ իր վնասվածքները հաղթահարելու համար խիզախորեն մաքառելուց հետո, նա հեռացավ դեպի հավերժություն: Նրա կորուստը խորն է: Ես և նա ամուսնացել ենք Սոլթ Լեյքի Տաճարում 1948թ. հոկտեմբերի 7-ին:Վաղը կլրանար մեր 65-րդ հարսանյաց տարեդարձը: Նա իմ կյանքի սերն էր, իմ վստահելի սրտակից և ամենամտերիմ ընկերը: Ասելը, որ ես կարոտում եմ նրան, չի արտահայտում իմ զգացմունքների խորությունը:

Այս համաժողովը նշում է 50 տարին այն ժամանակից, ինչ ես կանչվեցի Տասներկու Առաքյալների Քվորում Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից: Բոլոր այս տարիների ընթացքում միշտ զգացել եմ իմ սիրելի զուգընկերոջ լիարժեք և կատարյալ աջակցությունը: Անհամար են այն զոհաբերությունները, որ նա արել է, որպեսզի ես կարողանայի կատարել իմ կոչումը: Երբեք չեմ լսել բողոքի մեկ իսկ խոսք նրանից, երբ ես հաճախ էի անցկացնում օրեր և երբեմն շաբաթներ իրենից և մեր երեխաներից հեռու: Նա իսկապես հրեշտակ էր:

Իմ կողմից, ինչպեսև իմ ընտանիքի կողմից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել սիրո բուռն զեղումների համար, որ մենք զգացինք Ֆրենսիսի վախճանվելուց ի վեր: Հարյուրավոր բացիկներ և նամակներ ուղարկվեցին ողջ աշխարհից՝ արտահայտելով հիացմունք նրա հանդեպ և ցավակցություններ մեր ընտանիքին: Մենք ստացանք տասնյակ գեղեցիկ ծաղկեպսակներ: Մենք երախտապարտ ենք բազմաթիվ ներդրումների համար, որոնք մատուցվեցին նրա անունով Ընդհանուր Միսիոներական Հիմնադրամ: Իր ետևում թողած բոլոր հարազատների անունից իմ խորը երախտագիտությունն եմ հայտնում ձեր բարի և սրտառուչ խոսքերի համար:

Մեծագույն սփոփանքը ինձ համար բաժանման այս հուզումնալի պահին եղել է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին իմ վկայությունը և իմ ունեցած գիտելիքը, որ իմ սիրելի Ֆրենսիսը դեռևս ապրում է: Ես գիտեմ, որ մեր բաժանումը ժամանակավոր է: Մենք կնքված ենք Աստծո տանը մեկի կողմից, որն իշխանություն ունի կապելու երկրի վրա և երկնքում: Ես գիտեմ, որ մենք կվերամիավորվենք մի օր և երբեք այլևս չենք բաժանվի: Սա է այն գիտելիքը, որը պահպանում է ինձ:

Եղբայրներ և քույրեր, կարող ենք վստահությամբ ենթադրել, որ ոչ մի մարդ երբևէ չի ապրել ամբողջապես տառապանքից և վշտից զերծ, ոչ էլ եղել է մարդկային պատմության մեջ մի ժամանակաշրջան, որն ունեցած չլինի խառնաշփոթության ու թշվառության իր լրիվ բաժինը:

Երբ կյանքի արահետը թեքվում է դեպի դաժան շրջադարձ, կա գայթակղություն ուղղելու «Ինչո՞ւ ես» հարցը: Երբեմն, թվում է լույս չկա թունելի վերջում, չկա լուսաբաց ավարտելու գիշերվա խավարը: Մենք պարուրված ենք զգում կործանված երազանքների հիասթափությամբ և անհետացած հույսերի հուսահատությամբ: Մենք միանում ենք աստվածաշնչյան աղերսանքին արտասանելով. «Բալասան չկա՞յ Գաղաադում»:[1] Մենք լքված, սրտներս կոտրված, միայնակ ենք զգում: Մենք հակված ենք տեսնել մեր սեփական դժբախտությունները վատատեսության աղավաղված պրիզմայի միջով: Մենք անհամբեր ենք դառնում մեր խնդիրների լուծման համար, մոռանալով, որ

հաճախ համբերության երկնային առաքինությունն է պահանջվում։

Դժվարությունները, որոնք գալիս են մեզ, ներկայացնում են մեզ մեր դիմանալու կարողության իսկական ստուգարքը։ Մեզ յուրաքանչյուրիս մնում է մի էական հարց պատասխանելու՝ պետք է վարանե՞մ, թե առաջ գնամ ու ավարտեմ։ Ոմանք իսկապես վարանում են, երբ տեսնում են, որ անկարող են իրենց մարտահրավերներից ավելի վեր կանգնել։ Ավարտելը ներառում է մինչև կյանքի վերջ համբերելը։

Երբ խորհում ենք իրադարձությունների մասին, որոնք կարող են պատահել բոլորիս հետ, մենք կարող ենք ասել հին օրերի Հոբի հետ. «Մարդս թշուառութեան համար է ծնուած»։[2] Հոբը «կատարեալ և ուղիղ» մարդ էր, ով «աստուածավախ էր, եւ հեռանում էր չարութիւնից»։[3] Արդարակյաց իր վարքով, բարգավաճ իր ունեցվածքով, Հոբը պետք է ստուգարք անցներ, որը կարող էր կործանել ամեն մեկին։ Զրկվելով իր ունեցվածքից, ծաղրի ենթարկվելով իր ընկերներից, չարչարվելով իր տառապանքից, վշտացած իր ընտանիքի կորստից, նա հարկադրվում էր «անիծել Աստծուն և մեռնել»։[4] Սակայն, նա դիմադրեց այդ գայթակղությանը և հայտարարեց իր ազնիվ հոգու խորքերից.

«Հէնց հիմա էլ ահա երկնքումն է իմ վկան և իմ փաստաբանը բարձրերումն է»։[5]

«Ես գիտեմ որ փրկիչս կենդանի է»։[6]

Հոբը պահեց հավատքը։ Արդյոք մենք կանե՞նք նույնը, երբ հանդիպենք այդ մարտահրավերներին, որոնք կլինեն մերը։

Երբ որ մենք հակված ենք ծանրաբեռնված զգալ կյանքի հարվածներից, եկեք հիշենք, որ մյուսներն անցել են նույն ուղով, դիմացել են, իսկ հետո հաղթահարել։

Եկեղեցու պատմությունը, այս՝ ժամանակների լրության տնտեսությունում, լի է նման մարդկանց փորձառություններով, ովքեր մաքառել են, բայց, այնուամենայնիվ, անսասան և քաջ են մնացել։ Ո՞րն է պատճառը։ Նրանք դարձրել են Հիսուս Քրիստոսի ավետարանը իրենց կյանքի կենտրոնը։ Սա այն է, ինչը մեզ կքաշի այն ամենի միջով, ինչ կգա մեր ուղու ընթացքում։ Մենք դեռ կենթարկվենք դժվար մարտահրավերների, բայց մենք կկարողանանք դիմակայել դրանց՝ գլուխներս բարձր և դուրս գալ հաղթանակած։

Ցավի մահճակալից, արցունքից թացացած բարձից մենք ձգվում ենք դեպի երկինք, լսելով աստվածային հավաստիացումն ու թանկարժեք խոստումը. «Քեզ չեմ թողիլ եւ քեզ անտես չեմ անիլ»։[7] Այս սփոփանքն անգին է։

Ճամփորդելով շատ վայրեր ողջ աշխարհով մեկ, կատարելով իմ կոչման պարտականությունները, ես սկսել եմ հասկանալ շատ բաներ, ներառյալ այն ոչ փոքր բանը, որ տխրությունը և տառապանքը համընդհանուր է։ Ես չեմ կարող սկսել չափել ողջ այն կսկիծն ու վիշտը, որին ականատես եմ եղել, երբ այցելել եմ նրանց, ովքեր սգի մեջ են, հիվանդություն են տանում, դիմակայում ամուսնալուծության, մաքառում կամակոր որդու կամ դստեր հետ կամ տանջվում մեղքի հետևանքներից։ Ցուցակը կարելի է շարունակել և շարունակել, քանի որ կան անհամար խնդիրներ, որոնք կարող են հանդիպել մեզ։ Դժվար է առանձնացնել մեկ օրինակ, սակայն, երբ ես մտածում եմ մարտահրավերների մասին, մտքերս ուղղվում են դեպի Եղբայր Բրեմսը, իմ Կիրակնօրյա Դպրոցի պատանեկության տարիների ուսուցիչներից մեկը։ Նա Եկեղեցու հավատարիմ անդամ էր, մարդ, որը ոսկի սիրտ ուներ։ Նա և նրա կինը՝ Սադին, ունեին ութ երեխա, որոնցից շատերը նույն տարիքի էին ինչ մեր ընտանիքի երեխաները։

Երբ Ֆրենսիսը և ես ամուսնացանք և տեղափոխվեցինք ծխից, մենք տեսնում էինք եղբայր և քույր Բրեմսին և նրանց ընտանիքի անդամներին հարսանիքներում և հուղարկավորությունների, ինչպես նաև ծխի համահավաքների ժամանակ։

1968թ. Եղբայր Բրեմսը կորցրեց իր կնոջը՝ Սադիին։ Նրա երեխաներից երկուսը ևս մահացան տարիներ անց։

Մի օր մոտ 13 տարի առաջ Եղբայր Բրեմսի ամենամեծ թոռնուհին զանգահարեց ինձ։ Նա բացատրեց, որ իր պապիկը հասել է իր 105-րդ տարեդարձին։ Նա ասաց. «Նա ապրում է մի փոքրիկ խնամքի կենտրոնում, բայց հանդիպում է իր ողջ ընտանիքի հետ ամեն կիրակի, որտեղ նա ավետարանի դաս է տալիս։ – Նա շարունակեց, – անցած կիրակի պապիկը հայտարարեց մեզ. «Իմ սիրելիներ, այս շաբաթ ես մեռնելու եմ։ Խնդրում եմ կանչեք Թոմի Մոնսոնին։ Նա գիտի թե ինչ պիտի անի»։

Ես այցելեցի Եղբայր Բրեմսին հենց հաջորդ երեկոյան։ Ես բավականին ժամանակ էր նրան չէի տեսել։ Ես չէի կարող խոսել նրա հետ, որովհետև նա կորցրել էր լսողությունը։ Ես չէի կարող երկտող գրել նրան, որովհետև նա կորցրել էր տեսողությունը։ Ինձ ասացին, որ ընտանիքը հաղորդակցվում էր նրա հետ՝ վերցնելով նրա աջ ձեռքի մատը և հետո նրա ձախ ձեռքի ափի մեջ շարժելով գրում նրան այցելող մարդու անունը։ Ամեն ուղերձ պետք է հաղորդվեր այդ նույն ձևով։ Ես հետևեցի արարողակարգին՝ վերցնելով նրա մատը և տառ առ տառ գրեցի Թ-Ո-Մ-Ի Մ-Ո-Ն-Ս-Ո-Ն անունը, որով միշտ ճանաչել էր ինձ։ Եղբայր Բրեմսը հուզվեց և, վերցնելով իմ ձեռքերը, դրեց իր գլխին։ Ես գիտեի, որ նրա ցանկությունն էր քահանայության օրհնություն ստանալը։ Վարորդը, ով ինձ խնամքի կենտրոն էր տարել միացավ ինձ, երբ մենք դրեցինք մեր ձեռքերը Եղբայր Բրեմսի գլխին և տվեցինք նրա ցանկացած օրհնությունը։ Այնուհետև՝ արցունքներ հոսեցին նրա կուրացած աչքերից։ Նա երախտագիտությամբ բռնեց մեր ձեռքերը։ Չնայած նա չլսեց օրհնությունը, որ մենք տվեցինք նրան, Հոգին ուժեղ էր, և ես հավատում եմ նա ոգեշնչվեց իմանալու, որ նրան տրվեց այն օրհնությունը, որի կարիքը նա ուներ։ Այս հիանալի մարդը չէր կարող այլևս տեսնել։ Նա չէր կարողանում այլևս լսել։ Նա օր ու գիշեր գամված էր մի փոքրիկ

սենյակում խնամքի կենտրոնում: Սակայն դեմքի ժպիտը և խոսքերը, որ նա ասաց, հուզեց սիրտս: «Շնորհակալություն, ասաց նա, իմ Երկնային Հայրն այնքա՜ն բարի է եղել իմ հանդեպ»:

Մեկ շաբաթվա ընթացքում ճիշտ ինչպես որ կանխագուշակել էր Եղբայր Բրեմսը, նա մահացավ: Նա երբեք չէր կենտրոնանում նրա վրա, ինչ չուներ. ավելի շուտ՝ նա միշտ խորապես երախտապարտ էր իր բազում օրհնությունների համար:

Մեր Երկնային Հայրը, ով բարկրանքի այնքան շատ պահեր է շնորհում մեզ, գիտի նաև, որ մենք սովորում ենք, աճում և դառնում ենք ուժեղ, երբ դիմակայում ենք և հաղթահարում ենք փորձությունները, որոնցով պիտի անցնենք: Մենք գիտենք, որ լինում են ժամանակներ, որ մենք կտանենք կսկծալի վիշտ, երբ մենք կսգանք և մենք կստուգվենք մինչև մեր սահմանները: Այնուամենայնիվ, այդպիսի դժվարությունները թույլ են տալիս մեզ փոխվել դեպի լավը, վերակառուցել մեր կյանքը այն ձևով ինչպես մեր Երկնային Հայրն է ուսուցանում մեզ և դառնալ ինչ-որ ձևով տարբեր նրանից, ինչ մենք կանք, ավելի լավը, քան մենք եղել ենք, ավելի փոխըմբռնող, քան մենք էինք, ավելի ուժեղ վկայություններով, քան մենք ունեինք նախկինում:

Սա պետք է լինի մեր նպատակը՝ հաստատակամ լինել և համբերել, այո, բայց ոչ միայն դա, այլ նաև հոգևոր ավելի մաքուր դառնալ մինչ մեր ուղին ենք հարթում՝ անցնելով արևոտ օրվա և վշտի միջով: Եթե չլինեին մարտահրավերները հաղթահարելը և խնդիրները լուծելը, մենք կմնայինք այնպիսին, ինչպիսին որ կայինք, քիչ կամ փոքր առաջընթացով դեպի հավերժական կյանքի մեր նպատակը: Բանաստեղծն արտահայտել է հենց նույն միտքը այս խոսքերում.

Ամուր գերանը հեշտորեն չի աճում,
Որքան ուժեղ է քամին, այնքան
ուժեղ են ծառերը:
Որքան հեռու՝ երկինքը, այնքան
բարձր են նրանք,
Որքան փոթորիկ, այնքան շատ ուժ:

Արևին թե ցրտին, անձրևին
թե ձյանը,
Ծառերի մեջ ամուր փայտ է աճում,
Իսկ մարդկանց մեջ՝ ամուր
բնավորություն:[8]

Միայն Վարդապետը գիտի մեր փորձությունների խորությունը, մեր ցավը և մեր տառապանքը: Նա է միայն առաջարկում հավերժական խաղաղություն ձախորդության պահերին: Միայն Նա է հուզում մեր տանջահար հոգիները Իր մխիթարող խոսքերով.

«Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վրա առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք:

Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ»:[9]

Թե՛ լավագույն պահերին, թե՛ վատթարագույն պահերին՝ Նա մեզ հետ է: Նա խոստացել է, որ դա երբեք չի փոխվի:

Իմ եղբայրներ և քույրեր, թող որ մենք պարտավորվածություն ունենանք մեր Երկնային Հոր հանդեպ, որը չի փոխվում ժամանակի ընթացքում կամ համաձայն մեր կյանքի ճգնաժամերին: Պետք չէ, որ դժվարություններ տանենք, նոր հիշենք Նրան, և պետք չէ, որ մենք խոնարհեցվենք, նոր Նրան տանք մեր հավատքն ու վստահությունը:

Թող որ միշտ ձգտենք մոտիկ լինել մեր Երկնային Հորը: Այդ անելու համար մենք պետք է աղոթենք Նրան և լսենք Նրան ամեն օր: Մենք իսկապես Նրա կարիքն ունենք ամեն ժամ՝ թե՛ արևափայլի ժամին, թե՛ անձրևի: Թող որ Նրա խոստումը լինի մեր նշանաբանը. «Քեզ չեմ թողիլ եւ քեզ անտես չեմ անիլ»:[10]

Իմ հոգու ողջ կորովով ես վկայում եմ, որ Աստված ապրում է և սիրում է մեզ, որ Նրա Միածին Որդին ապրեց և մահացավ մեզ համար, և որ Հիսուս Քրիստոսի ավետարանը այն ներթափանցող լույսն է, որը շողում է մեր կյանքի խավար պահերին: Թող որ այն ձեզ միշտ հասանելի լինի. դա իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Երեմիա Ը.22:
2. Հոբ Ե.7:
3. Հոբ Ա.1:
4. Հոբ Բ.9:
5. Հոբ ԺԶ.19:
6. Հոբ ԺԹ.25:
7. Հեսու Ա.5.
8. Douglas Malloch, “Good Timber,” in Sterling W. Sill, *Making the Most of Yourself* (1971), 23.
9. Մատթեոս ԺԱ.28–30:
10. Հեսու Ա.5:

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորում

Երեմիայի ողբերը. Զգուշացեք գերությունից

Մեր խնդիրն է՝ խուսափել ցանկացած տեսակի գերությունից, օգնել Տիրոջը իր ընտրյալներին հավաքելիս և զոհաբերություն անել աճող սերնդի համար:

Մեր ամուսնության վաղ տարիներին ես և Մերին՝ իմ կինը, որոշեցինք հնարավորինս ընտրել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող ենք հաճախել միասին: Մենք ցանկանում էինք նաև իմաստուն լինել մեր բյուջեն կառավարելիս: Մերին սիրում էր երաժշտություն և, անկասկած, մտահոգված էր, որ ես կարող եմ չափից ավելի մեծ շեշտ դնել սպորտային միջոցառումների վրա, այնպես որ նա բանակցություններ վարեց բոլոր վճարովի իրադարձությունների համար, առաջարկելով, որ յուրաքանչյուր ֆուտբոլի կամ սպորտային խաղի դիմաց մենք ընտրենք երկու մշակութային միջոցառում՝ համերգ, օպերա և այլն:

Սկզբում ես դեմ էի օպերային բաղադրիչին, բայց ժամանակի ընթացքում, ես փոխեցի իմ տեսակետը: Ինձ, մասնավորապես, սկսեցին շատ դուր գալ Ջուզեպպե Վերդիի օպերաները:[1] Այս շաբաթ նրա ծննդյան 200-ամյակն է:

Իր երիտասարդության տարիներին Վերդին տարվել էր մարգարե Երեմիայով, և 1842 թվականին, 28 տարեկան հասակում, նա համբավ ձեռք բերեց *Նաբուկո* օպերայով, որն իտալերենով Նոբուգոդոնոսորի՝ Բաբելոնի թագավորի անվան կրճատ ձևն է: Այդ օպերան պարունակում է հասկացություններ, որոնք վերցված են Հին Կտակարանի Երեմիայի մարգարեության, Երեմիայի ողբերի և Սաղմոսներ գրքերից: Օպերան պատկերում է Երուսաղեմի նվաճելն ու հրեաներին հպատակեցնելը ու ծառայեցնելը: 137-րդ Սաղմոսը Վերդիի ոգեշնչումն է եղել նրա հուզիչ և ոգևորիչ «Հրեա ստրուկների երգի» կատարման համար: Այս սաղմոսի անգլերեն սուրբ գրության նախաբանը շատ ողբերգական է հնչում. «Գերության ժամանակ հրեաները լաց են լինում Բաբելոնի գետերի մոտ. վշտի պատճառով, նրանք չէին կարող ոգևորվել՝ երգելու Սիոնի երգերը»:

Իմ նպատակն է խոսել գերության ու կախվածության բազմաթիվ ձևերից մի քանիսի մասին: Ես կհամեմատեմ մեր օրերի որոշ հանգամանքները Երեմիայի այդ օրերի հետ, նախքան Երուսաղեմի անկումը: Ներկայացնելով այս նախազգուշացման ձայնը, ես երախտապարտ եմ, որ Եկեղեցու անդամների մեծ մասն արդարությամբ խուսափում է այն վարքից, որը շատ վիրավորական էր Տիրոջ համար Երեմիայի ժամանակներում:

Երեմիայի մարգարեություններն ու Երեմիայի ողբերը կարևոր են Վերջին Օրերի Սրբերի համար: Երեմիայի և նրա օրերի Երուսաղեմի մասին խոսվում է Մորմոնի Գրքի առաջին գլուխների ետին պլանում: Երեմիան մարգարե Լեքիի ժամանակակիցն էր:[2] Տերը տպավորիչ ձևով տեղեկացրել էր Երեմիային իր նախակարգված լինելու մասին. «Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտէի, եւ արգանդից դեռ դու դուրս չեկած՝ ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարէ եմ կարգել»:[3]

Լեքին այլ կոչում, առաքելություն և հանձնարարական ուներ Տիրոջից: Նա կանչվել էր ոչ թե իր երիտասարդության, այլ հասուն տարիքում: Սկզբում նրա գործը նախազգուշացման ձայն բարձրացնելն էր, սակայն հետո, երբ նա հավատարմորեն հայտարարեց նույն պատգամներն, ինչ Երեմիային էր հայտարարել, Տերը պատվիրեց, որ նա վերցներ իր ընտանիքին և հեռանար անապատ:[4] Անելով այդ, Լեքին օրհնեց ոչ միայն իր ընտանիքին, այլ նաև բոլոր մարդկանց:

Երուսաղեմի կործանմանը[5] նախորդող տարիներին Երեմիային տրված Տիրոջ ուղերձները տխուր հիշողություն են: Նա ասել է.

«Իմ ժողովուրդը փոխել է իր փառքը մի այնպիսի բանով, որ օգուտ չունի . . .

. . . Ինձ՝ կենաց ջրի աղբյուրս՝ թողեցին որ իրանց համար հորեր

փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել»:[6]

Խոսելով Երուսաղեմի բնակիչներին սպասվող աղետների մասին՝ Տերը ողբում էր. «Հունձքը անցաւ, ամառը վերջացաւ. բայց [նրանք] չփրկուեցան»:[7]

Աստված նախատեսել է, որ տղամարդիկ և կանայք ազատ լինեն բարու և չարի միջև ընտրելիս: Երբ չարն ընտրելը դառնում է գերիշխող բնութագիր մի ազգի կամ քաղաքակրթության համար, լուրջ հետևանքներ են գալիս թե՛ այս կյանքում և թե՛ հանդերձյալ կյանքում: Մարդիկ կարող են ստրկանալ կամ գերի դառնալ ոչ միայն վնասակար, կախվածություն առաջացնող նյութերին, այլ նաև վնասակար, կախվածություն առաջացնող գաղափարներին, որոնք ետ են պահում արդար ապրելուց:

Ճշմարիտ և կենդանի Աստծուն երկրպագելու պաշտամունքից հրաժարվելն ու կեղծ աստվածներին երկրպագելը, ինչպիսիք են՝ հարստությունն ու փառքը, և անբարոյական ու անարդար վարքով ապրելը տանում են գերության՝ իր բոլոր ստոր դրսևորումներով: Դրանք ներառում են հոգևոր, ֆիզիկական և մտավոր գերությունը, իսկ երբեմն կործանում են բերում: Երեմիան և Լեքին նաև ուսուցանում էին, որ նրանք, ովքեր արդար են, պետք է օգնեն Տիրոջը Իր Եկեղեցին ու թագավորությունը հիմնելիս և ցրված Իսրայելը հավաքելիս:[8]

Այդ ուղերձների արձագանքը հնչել և ամրապնդվել է դարերի ընթացքում՝ ավետարանի բոլոր տնտեսությունների ժամանակ: Այս վերջին տնտեսության՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման ժամանակ ևս դրանք առանցքային տեղ են գրավում:

Հրեաների գերությունը և Իսրայելի ցեղերի, այդ թվում՝ տասը ցեղերի ցրվելը, ավետարանի Վերականգնման կարևոր վարդապետական գործոններից են: Տասը կորած ցեղերը կազմում էին Իսրայելի Հյուսիսային Թագավորությունը և գերի էին տարվել Ասորեստան՝ Ք.ծ.ա. 721 թվականին: Նրանք գաղթեցին դեպի հյուսիսայի երկրներ:[9] Մեր հավատո հանգանակի տասներորդ կետում ասվում է. «Մենք բառացիորեն հավատում ենք Իսրայելի Տան հավաքմանը և նրա Տաս Ցեղերի վերականգնմանը»:[10] Մեր համոզմունքն է նաև, որ որպես Տիրոջ հետ Աբրահամի ուխտի մաս ոչ միայն Աբրահամի սերունդն է օրհնվելու, այլ օրհնվելու են երկրի բոլոր ազգերը: Ինչպես Երեց Ռասսել Մ. Նելսոնն է հայտարարել. «Հավաքվելը ֆիզիկական տեղաբաշխման հարց չէ. այն անհատական պարտավորվածության հարց է. մարդիկ կարող են «Տիրոջ՝ իրենց Աստծո իմացությանը բերվել» [3 Նեփի 20.13] առանց իրենց հայրենի հողից հեռանալու»:[11]

Մեր վարդապետությունը պարզ է. «Իրենց անարդարակեցության և ըմբոստության պատճառով Տերը ցրեց և չարչարեց Իսրայելի տասներկու ցեղերին: Սակայն, իր ընտրյալ ժողովրդի այս ցրումն աշխարհի ազգերի մեջ, Տերն օգտագործեց նաև այդ ազգերին օրհնելու համար»:[12]

Այս ողբերգական ժամանակաշրջանից մենք արժեքավոր դասեր ենք սովորում: Մենք պետք է մեր ուժերի սահմաններում ամեն ինչ անենք, որ խուսափենք մեղքից ու ըմբոստությունից, որոնք տանում են գերության:[13] Մենք ընդունում ենք նաև, որ Իր ընտրյալների և Իսրայելի բառացի հավաքման գործում Տիրոջն աջակցելու համար արդար ապրելը կարևոր նախապայման է:

Անազատության ձևերը՝ գերված, նվաճված, կախված ու հակված լինելը, տարբեր կերպ են դրսևորվում: Դա կարող է լինել բառացիորեն ֆիզիկական ստրկացումը, բայց կարող է լինել նաև բարոյական ազատության կորուստը կամ վատթարացումը, որը կխոչընդոտի մեր առաջընթացը: Երեմիան պարզ ասում է, ամբարշտությունն ու ըմբոստությունը Երուսաղեմի կործանման և Բաբելոն գերի տարվելու հիմնական պատճառներն էին:[14]

Կախվածության մյուս տեսակները ևս հավասարապես կործանարար են մարդկային հոգու համար: Կամքի բարոյական ազատությունը հնարավոր է չարաշահվի բազմաթիվ ձևերով:[15] Ես կնշեմ դրանցից չորսը, որոնք առանձնակի կործանարար են մերօրյա քաղաքակրթությունում:

Առաջինը՝ վատ հակումներն են, որոնք սահմանափակում են ազատ կամքը, հակասում բարոյական համոզմունքներին և քայքայում են լավ առողջությունը՝ առաջացնելով կախվածություն: Թմրանյութերի, ալկոհոլի, անբարոյականության, մերկատեսագրությունների, մոլախաղերի, ֆինանսական հպատակեցման և նմանատիպ այլ ցավերը կախվածության մեջ գտնվողների և հասարակության վրա այնպիսի մեծության բեռ են դնում, որ գրեթե անհնարին է չափել:

Երկրորդ խմբում այն հակումները կամ նախասիրություններն

են, որոնք, թեև ծագումով չարը չեն, սակայն կարող են վատնել մեզ հատկացված թանկագին ժամանակը, որը հակառակ դեպքում կարող էր օգտագործվել առաքինի նպատակներ իրականացնելու համար: Դրանց թվում կարելի է դասել սոցիալական ցանցերի, վիդեո և թվային խաղերի, սպորտի, հանգստի և շատ այլ բաների չափից շատ օգտագործումը:[16]

Ընտանիքին հատկացված ժամանակն ամենակարևոր հարցերից է, որին բախվում են քաղաքակրթությունների մեծ մասը: Մի ժամանակ, երբ ես մեր իրավաբանական ընկերությունում միակ Եկեղեցու անդամն էի, փաստաբան կանանցից մեկն ինձ հետ կիսվեց, թե ինչպես էր նա միշտ ձեռնածուի պես զգում իրեն, երբ փորձում էր միևնույն ժամանակ երեք գնդակ պահել օդում: Մի գնդակը նրա փաստաբանական աշխատանքն էր, մյուսը՝ նրա ամուսնությունն էր, իսկ երրորդը նրա երեխաներն էին: Նա գրեթե հրաժարվել էր իր համար ժամանակ հատկացնելուց: Նա մեծապես մտահոգված էր, որ գնդակներից մեկը միշտ գետնին ընկած էր: Ես առաջարկեցի, որ մենք հավաքվենք որպես խումբ և քննարկենք մեր առաջնահերթությունները: Մենք որոշեցինք, որ հիմնական պատճառը, որ աշխատում ենք, մեր ընտանիքներին աջակցելն է: Մենք համաձայնվեցինք, որ ավելի շատ գումար վաստակելն այնքան կարևոր չէ, որքան մեր ընտանիքը, սակայն ընդունեցինք, որ մեր հաճախորդներին մեր լավագույն կարողությունների սահմաններում ծառայելը կարևոր է: Ապա՝ քննարկումն անցավ նրան, թե ինչ ենք մենք անում աշխատանքի վայրում, որն անհրաժեշտ չէր, և որը կարելի էր օգտագործել ընտանիքի համար: Արդյոք կա՞ ճնշում աշխատավայրում, որը ստիպում է ոչ էական ժամանակ ծախսել:[17] Մենք որոշեցինք նպատակ դնել ընտանիքի համար բարենպաստ միջավայր ստեղծել թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: Եկե՛ք առաջատար լինենք ընտանիքի ժամանակը պաշտպանելու հարցում:

Երրորդ, մեր օրերում առավել տարածվածը, ինչպես որ եղել է ողջ պատմության ընթացքում, կախվածությունն է այն գաղափարախոսական կամ քաղաքական համոզմունքներից, որոնք հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանին: Ավետարանի ճշմարտությունները մարդկային իմաստասիրությամբ փոխարինելը կարող է մեզ հեռու տանել Փրկչի պարզ ուղերձից: Երբ Պողոս Առաքյալն այցելեց Աթենք, նա փորձեց ուսուցանել Հիսուս Քրիստոսի Հարության մասին: Այս ջանքերի մասին մենք կարդում ենք Գործք Առաքելոց գրքում. «Որովհետեւ բոլոր Աթենացիք եւ այն տեղ կենող օտարները՝ ուրիշ ոչ մի բանի չէին պարապում, բայց միայն որ *նոր բան ասեն կամ լսեն»:*[18] Երբ բազմությունը գիտակցեց, որ Պողոսի ուղերձը պարզ կրոնական բնույթ ունի, որը նոր չէ, նրանք մերժեցին այն:

Սա խորհրդանշական է մեր օրերի համար, երբ ավետարանի ճշմարտությունները հաճախ մերժվում կամ խեղաթյուրվում են, որպեսզի մտավորապես ավելի գրավիչ կամ համատեղելի լինեն առկա մշակութային միտումների և մտավոր իմաստասիրությունների հետ: Եթե զգուշավոր չլինենք, մենք կարող ենք տարվել այդ միտումներով և հայտնվել մտավոր կախվածության մեջ: Այսօր բազմաթիվ ձայներ կան, որոնք կանանց թելադրում են ինչպես ապրել:[19] Դրանք հաճախ հակասում են միմյանց: Առանձնահատուկ մտահոգություն են առաջացնում այն գաղափարախոսությունները, որոնք քննադատում կամ նվազեցնում են հարգանքը կանանց հանդեպ, ովքեր ընտրում են զոհաբերություն կատարել, որն անհրաժեշտ է մայր, ուսուցիչ, դաստիարակ դառնալու կամ երեխաներին ընկեր լինելու համար:

Մի քանի ամիս առաջ մեր երկու կրտսեր թոռնուհիներն այցելեցին մեզ՝ յուրաքանչյուրը մեկ շաբաթ: Ես տանն էի և բացեցի դուռը: Իմ կինը՝ Մերին, սենյակում էր: Երկու դեպքում էլ, ինձ գրկելուց հետո, երկուսն էլ գրեթե նույն բանն ասացին: Նրանք նայեցին շուրջը, ապա ասացին. «Ես սիրում եմ լինել տատիկի տանը: Որտե՞ղ է տատիկը»: Ես նրանց դա չեմ ասել, բայց ես մտածում էի. «Իսկ սա պապիկի տունը չէ՞»: Այնուհետև, ես հիշեցի, որ երբ պատանի էի, մի անգամ մենք ընտանիքով գնում էինք տատիկիս տուն: Այդ ժամանակ իմ մտքին եկան ծանոթ մի երգի խոսքեր, որտեղ ասվում է. «Գետի վրայով ու անտառի միջով մենք գնում ենք տատիկի տուն»:

Թույլ տվեք ասել, միանշանակ, որ ես հրճվում եմ կրթական և այլ հնարավորություններով, որոնք մատչելի են կանանց մեր օրերում: Ես արժեքավոր եմ համարում այն փաստը, որ կանանցից պահանջվող ֆիզիկական ու տնային ծանր աշխատանքները թեթևացել են աշխարհի շատ մասերում ժամանակակից սարքավորումների շնորհիվ, և որ կանայք հոյակապ ներդրում են կատարում կյանքի տարբեր բնագավառներում: Սակայն, եթե մենք թույլ տանք, որ մեր

քաղաքակրթությունը նվազեցնի այն հատուկ հարաբերությունները, որ երեխաները պետք է ունենան մայրերի, տատիկների և իրենց դաստիարակների հետ, մենք մեծապես կզղջանք դրա համար:

Չորրորդ, այն ուժերը, որոնք ոտնահարում են անկեղծորեն պահպանվող կրոնական սկզբունքները, կարող են բերել կախվածություն: Այդ չարակամ ձևերից մեկն այն է, երբ արդար մարդկանց, որ Աստծո առաջ պատասխանատու են զգում իրենց վարքի համար, ստիպում են այնպիսի գործեր անել, որոնք իրենց խղճին դեմ են, օրինակ, առողջության բնագավառում, երբ բժշկին ստիպում են ընտրել իրենց խղճին հակառակ օգնել արհեստական վիժմանը, կամ հեռանալ աշխատանքից:

Եկեղեցին հարաբերական փոքրամասնություն է կազմում նույնիսկ այն դեպքում, երբ նրան միացնես այն մարդկանց, ովքեր նման հայացքներ կրող են: Հասարակությունը մեծ առումով փոխելը դժվար է, բայց մենք պետք է աշխատենք, որպեսզի բարելավենք մեզ շրջապատող բարոյական մշակույթը: Վերջին Օրերի Սրբերը ցանկացած երկրում պետք է լավ քաղաքացիներ լինեն, քաղաքացիական հարցերում կրթված լինեն և մասնակցեն գործընթացներին և ընտրություններին:

Այդ ամենով հանդերձ, մեր առաջնային շեշտը միշտ պետք է լինի, անհրաժեշտ զոհաբերություններ անելով, մեր իսկ ընտանիքին և աճող սերնդին պաշտպանելը:[20] Նրանց ճնշող մեծամասնությունը վնասակար հակումներից կամ կեղծ գաղափարախոսություններից կախվածության մեջ չէ դեռևս: Մենք պետք է օգնենք նրանց պատվաստվել, որ չմնանվեն այն աշխարհին, որը շատ նման է Լեքիի և Երեմիայի նկարագրած Երուսաղեմին: Բացի այդ, մենք պետք է պատրաստենք նրանց, որ սրբազան ուխտեր կապեն ու պահեն և լինեն այն հիմնական պատվիրակները, որոնք կօգնեն Տիրոջը հիմնել Իր Եկեղեցին ու հավաքել ցրված Իսրայելն ու Տիրոջ ընտրյալներին աշխարհով մեկ:[21] Ինչպես Վարդապետություն և Ուխտերում է գեղեցիկ ասվում. «Արդարները պիտի հավաքվեն բոլոր ազգերի միջից և պիտի գան Սիոն՝ երգելով հավիտենական ուրախության երգեր»:[22]

Մեր խնդիրը գերության ցանկացած տեսակից խուսափելն է, Տիրոջն օգնելը, որ հավաքի Իր ընտրյալներին, և զոհաբերություն անելը աճող սերնդի համար: Մենք պետք է միշտ հիշենք, որ մենք չէ, որ փրկում ենք մեզ: Մենք ազատագրվում ենք Փրկչի սիրո, շնորհի և քավիչ զոհաբերության շնորհիվ: Երբ Լեքիի ընտանիքը փախչեց, նրանք առաջնորդվում էին Տիրոջ լույսով: Եթե մենք հավատարիմ լինենք իր լույսին, հետևենք Նրա պատվիրաններին և ապավինենք Նրա արժանիքներին, մենք կխուսափենք հոգևոր, ֆիզիկական և մտավոր կախվածությունից, ինչպես նաև մեր իսկ անապատում թափառելու ողբերից, որովհետև նա հզոր է փրկելիս:

Եկեք խուսափենք այն հուսահատությունից ու վշտից, որը գալիս է գերությունից, որը հեռացնում է Սիոնի երգերը երգելու ցանկությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վերդիի բազմաթիվ օպերաներ, ինչպիսիք են՝ *Այիդա», Տրավիատա, Տրուբադուր* օպերաները, ամենատարածված օպերաների թվում են, որոնք բեմադրվում են այսօր աշխարհով մեկ:
2. Տես 1 Նեփի 5.13; 7.14:
3. Երեմիա 1.5:
4. Տես 1 Նեփի 2.2–3:
5. Սողոմոնի տաճարի կործանումը, Երուսաղեմի անկումը և Հուդայի ցեղի գերևարումը տեղի ունեցավ Ք.ծ.ա. մոտ 586 թվականին:
6. Երեմիա 2.11, 13:
7. Երեմիա 8.20: Երեմիան մինչ այդ արձանագրել էր ապաշխարության Տիրոջ աղաղակը. «Ցաւով բռնուած է սիրտս» (Երեմիա 4.19) և աղերսանքը. «Մի մարդ կգտեք իրաւունք անող եւ ճշմարտություն խնդրող. և ես այն քաղաքին կներեմ» (Երեմիա 5.1):
8. Տես Երեմիա 31; 1 Նեփի 10.14:
9. Տես Դ Թագավորաց 17.6, Վարդապետություն և Ուխտեր 110.11:
10. Հավատո Հանգանակ 1.10, տես նաև 2 Նեփի 10.22:
11. Russell M. Nelson, "The Book of Mormon and the Gathering of Israel" (address given at the seminar for new mission presidents, June 26, 2013).
12. Տես Սուրբ գրությունների ուղեցույց, Իսրայել, scriptures.lds.org:
13. Խոսելով մեր օրերի մասին, Տերն ասել է. «ողջ աշխարհն ընկած է մեղքի մեջ, և հառաչում է խավարի տակ և մեղքի գերության . . . տակ քանի որ նրանք չեն գալիս ինձ մոտ» (Վարդապետություն և Ուխտեր 84.49–50):
14. Իհարկե, անմեղ մարդիկ ևս կարող են ստրկացվել:
15. Վարդապետական սկզբունքները չեն փոխվում, սակայն գերություն, կախվածության և կործանման միջոցները աննախադեպ ձևով արագացել են:
16. Անդրադառնալով թվային խաղերի կախվածություն առաջացնող բնույթին՝ այդ մասին՝ տեղին և փոքր-ինչ հումորով նշված էր անցյալ տարվա *The New York Times* պարբերականի շապիկին (ապրիլի 8, 2012): Այնտեղ գրված էր. «Գերկախվածություն առաջացնող, ժամանակ կլանող, հարաբերություններ բթացնող, միտք ջախջախող հիմար թվային խաղերի ուժն ու հրապուրանքը»: Եվ ապա, փոքր տառաշարով ավելացված. «(չնայած, որ մենք էլ ենք դրանցով տարված)»: Սա մի զվարթ ձևով ընդգծում է իմաստություն գործածելու անհրաժեշտությունը այն հարցում, թե ինչպես ենք մենք օգտագործում մեր դարաշրջանի հրաշալի տեխնոլոգիական գյուտերը:
17. Շատ աշխատավայրերում ժամանակակից կարգախոս է դարձել հետևյալը. «Մենք քրտնաջան աշխատում ենք և քրտնաջան խաղում ենք»: Չնայած որ աշխատակիցների հետ համախմբված լինելը կարևոր է, երբ «աշխատանքն ու խաղը» գրավում են ընտանեկան ժամանակի տեղը, այն դառնում է ինքնատապալման մի ձև:
18. Գործք 17.21, շեշտադրումն ավելացվել է:
19. Տես Keli Goff, "Female Ivy League Graduates Have a Duty to Stay in the Workforce," *Guardian,* Apr. 21, 2013, www.theguardian.com/commentisfree/2013/apr/21/female-ivy-league-graduates-stay-home-moms; Sheryl Sandberg, *Lean In: Women, Work, and the Will to Lead* (2013); Anne-Marie Slaughter, "Why Women Still Can't Have It All," *The Atlantic,* June 13, 2012, www.theatlantic.com/magazine/print/2012/07/why-women-still-cant-have-it-all/309020; Lois M. Collins, "Can Women 'Have It All' When It Comes to Work and Family Life?" *Deseret News,* June 28, 2012, A3; Judith Warner, "The Midcareer Timeout (Is Over)," *New York Times Magazine,* Aug. 11, 2013, 24–29, 38; Scott Schieman, Markus Schafer, and Mitchell McIvor, "When Leaning In Doesn't Pay Off," *New York Times,* Aug. 11, 2013, 12:
20. Եկեղեցին խրախուսում է եպիսկոպոսության անդամներին աջակցել ընտանիքներին՝ ավելի շատ ժամանակ ծախսելով երիտասարդ տղամարդկանց, երիտասարդ կանանց և երիտասարդ ամուրիների հետ: Եպիսկոպոսության անդամներին խրախուսվում է ծխի խորհրդում ավելի շատ պարտականություններ պատվիրակել Մելքիսեդեկյան Քահանայության քվորումներին, օժանդակ կազմակերպություններին և անդամներին, ովքեր ունեն հատուկ ունակություններ, համապատասխանաբար աջակցելու մյուս անդամներին:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 29.7:
22. Վարդապետություն և Ուխտեր 45.71:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Զորություն քահանայությունում

Տղամարդը կարող է բացել վարագույրները, որպեսզի արևի լույսի ջերմ շողերը թափանցեն սենյակ, սակայն արևը կամ լույսը, կամ դրա բերած ջերմությունը չեն պատկանում տղամարդուն:

Քահանայության օրհնությունները բոլորի համար են

Մինչ երեխաները հաղորդության ժողովի ժամանակ սիրով երգում էին «Այտեղ խոսվում է սիրո մասին» Երեխաների Խմբի երգը, բոլորը հավանությամբ ժպտում էին: Մի համարձակ մայր, ով մեծացնում էր հինգ երեխաներ, ուշադրությամբ լսեց երկրորդ տողը. «Իմ տան [ամեն] ժամը օրհնված է քահանայության [զորության] ուժով»:[1] Տխրությամբ նա մտածեց. «Իմ երեխաները երբեք չեն ունեցել այսպիսի տուն»:[2]

Իմ ուղերձն այս հավատարիմ կնոջը և բոլորին այն է, որ մենք կարող ենք ապրել ամեն ժամ «օրհնված քահանայության զորության ուժով», անկախ մեր պայմաններից:

Մենք երբեմն չափազանցնելով զուգակցում ենք քահանայության զորությունը Եկեղեցու տղամարդկանց հետ: Քահանայությունը Աստծո զորությունն ու իշխանությունն է՝ տրված բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաների փրկության և օրհնության համար:

Տղամարդը կարող է բացել վարագույրները, որպեսզի արևի լույսի ջերմ շողերը թափանցեն սենյակ, սակայն արևը կամ լույսը, կամ դրա բերած ջերմությունը չեն պատկանում տղամարդուն: Քահանայության օրհնությունները շատ ավելի մեծ են, քան մեկը, ում խնդրում են տալ այդ պարգևը:

Այս և հաջորդ կյանքում քահանայության օրհնությունները, զորությունը և խոստումները ստանալը մահկանացության մեծ հնարավորություններից և պարտականություններից մեկն է: Երբ մենք արժանի ենք, քահանայության արարողությունները հարստացնում են մեր կյանքը երկրի վրա և նախապատրաստում են մեզ գալիք աշխարհի փառահեղ խոստումներին: Տերն ասել է. «Արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[3]

Աստծո կողմից հատուկ օրհնություններ են նախատեսված ամեն արժանի անձնավորության համար, ով մկրտվել է, ստացել Սուրբ Հոգին և մշտապես ճաշակում է հաղորդությունից: Տաճարը բերում է լրացուցիչ լույս և ուժ՝ հավերժական կյանքի խոստումի հետ միասին:[4]

Բոլոր արարողությունները հրավիրում են մեզ մեծացնել մեր հավատքն առ Հիսուս Քրիստոսը և կապել ու պահել ուխտեր Աստծո հետ: Երբ մենք պահում ենք այս սրբազան ուխտերը, մենք ստանում ենք քահանայության զորությունը և օրհնությունները:

Արդյո՞ք չենք զգում քահանայության այս զորությունը մեր իսկ սեփական կյանքում և տեսնում այն Եկեղեցու ուխտ պահող անդամների մեջ: Մենք տեսնում ենք այն նորադարձների մեջ, երբ նրանք դուրս են գալիս մկրտության ջրերից՝ զգալով ներված և մաքուր: Մենք տեսնում ենք մեր զավակներին և պատանիներին ավելի զգայուն Սուրբ Հոգու հուշումների և առաջնորդության հանդեպ: Մենք տեսնում ենք, թե ինչպես են տաճարային արարողությունները դառնում ուժի և լույսի փարոս աշխարհով մեկ գտնվող տղամարդկանց և կանանց համար:

Նախորդ ամիս ես ականատես եղա, թե ինչպես մի երիտասարդ զույգ հսկայական ուժ ստացավ տաճարի կնքման խոստումներից, երբ նրանց թանկագին փոքրիկ տղան ծնվեց, սակայն ապրեց միայն մեկ շաբաթ: Այդ երիտասարդ զույգը և մենք բոլորս քահանայության արարողությունների միջոցով ստանում ենք մխիթարություն, ուժ, պաշտպանություն, խաղաղություն և հավերժական խոստումներ:[5]

Ինչ մենք գիտենք Քահանայության մասին

Ոմանք կարող են անկեղծորեն տալ այս հարցը. «Եթե քահանայության զորությունը և օրհնությունները բոլորի համար են, ինչո՞ւ են քահանայության արարողությունները կատարում տղամարդիկ»:

Երբ հրեշտակը հարցրեց Նեփիին. «Գիտե՞ս դու Աստծո բարեհաճության մասին»: Նեփին անկեղծորեն պատասխանեց.- «Ես գիտեմ, որ նա սիրում է իր զավակներին. սակայն ես չգիտեմ բոլոր բաների մասին»:[6]

Երբ մենք խոսում ենք քահանայության մասին, կան շատ բաներ, որոնք մենք գիտենք:

Բոլորը նման են

Մենք գիտենք, որ Աստված սիրում է Իր բոլոր զավակներին և անաչառ է: «Նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, . . . այր [կամ] կին. . . . և բոլորը նույնն են Աստծո համար»:[7]

Ճիշտ ինչպես մենք գիտենք, որ Աստծո սերը «նույնն» է Իր որդիների և Իր դուստրերի հանդեպ, մենք նաև գիտենք, որ Նա չի ստեղծել տղամարդկանց և կանանց ճիշտ նույնությամբ: Մենք գիտենք, որ սեռը մեր մահկանացու և հավերժական ինքնության և նպատակի հիմնական բնութագիրն է: Սրբազան պարտականություններ են տրված յուրաքանչյուր սեռին:[8]

Ի սկզբանե

Մենք գիտենք, որ ի սկզբանե Տերը հաստատել է, թե ինչպես պետք է սպասավորվի Իր քահանայությունը: «Քահանայությունը առաջինը տրվել էր Ադամին»:[9] Նոյը, Աբրահամը և Մովսեսը՝ բոլորն էլ կատարել են քահանայության արարողությունները: Հիսուս Քրիստոսն էր և է Մեծ Քահանայապետը: Նա կանչեց Առաքյալներ: «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք»,- ասաց Նա,- «այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրի»:[10] Մեր օրերում երկնային սուրհանդակներ են ուղարկվել Աստծո կողմից: Հովհաննես Մկրտիչը, Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը վերականգնեցին քահանայությունը երկրի վրա Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:[11] Այս եղանակով մեր Երկնային Հայրը տվեց Իր քահանայությունը:[12]

Շատ պարգևներ Աստծուց

Մենք գիտենք, որ սուրբ քահանայության զորությունը չի գործում հավատքից, Սուրբ Հոգուց և հոգևոր պարգևներից առանձին: Սուրբ գրությունները զգուշացնում են. «Մի ուրացեք Աստծո պարգևները, քանզի դրանք շատ են: . . . Եվ կան զանազան ուղիներ, որոնցով այս պարգևները տրվում են. բայց դա նույն Աստվածն է, որ գործում է [դրանք] ամենի մեջ»:[13]

Արժանավորություն

Մենք գիտենք, որ արժանավորությունը կարևոր է քահանայության արարողություններ կատարելու և ստանալու համար: Սփոփող Միության գերագույն նախագահ Քույր Լինդա Ք. Բըրթընն ասել է. «Արդարակեցություն է պահանջվում, . . . որ հրավիրենք քահանայության զորությունը մեր կյանք»:[14]

Օրինակ, խորհեք այն մասին, որ պոռնոգրաֆիան անվերահսկելիորեն աճում է՝ տարածվելով ողջ աշխարհով մեկ: Արժանավորության Տիրոջ չափանիշը թույլ չի տալիս պոռնոգրաֆիան նրանց մեջ, ովքեր կատարում են քահանայության արարողությունները: Փրկիչն ասել է.

«Ապաշխարեք ձեր . . . գաղտնի պղծություններից»:[15]

«Մարմնի ճրագն աչքն է: . . . Թէ որ քո աչքը չար լինի, քո բոլոր մարմինը խաւար կլինի»:[16]

«[Քանզի] ով որ մի կնկայ վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ նորա հետ իր սրտի մէջ»:[17]

Անարժանորեն հաղորդությունն օրհնելը կամ բաժանելը, հիվանդներին օրհնելը կամ այլ քահանայության արարողությունների մասնակցելը, ինչպես ասել է Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը, Աստծո անունը զուր տեղը օգտագործել է:[18] Եթե մեկը արժանի չէ, նա պետք է հեռու մնա քահանայության արարողություններ կատարելուց և աղոթի ու դիմի իր եպիսկոպոսին, որպես ապաշխարելու և պատվիրաններին վերադառնալու առաջին քայլ:

Խոնարհություն

Մենք գիտենք, որ քահանայության օրհնություններն առատ են այն ընտանիքներում, որտեղ արդար մայրը և հայրը միասին առաջնորդում են իրենց երեխաներին: Սակայն մենք նաև գիտենք, որ Աստված սիրով տալիս է այս նույն օրհնությունները նրանց, ովքեր գտնվում են շատ այլ իրավիճակներում:[19]

Մի մայր, ով տանում էր իր ընտանիքի համար և հոգևորապես, և նյութապես հոգալու բեռը, նրբանկատորեն բացատրեց, որ իր տնային ուսուցիչներին կանչելը, որ օրհնեն իր երեխաներից մեկին, պահանջում է իր խոնարհությունը: Սակայն, նա խորաթափանցությամբ ավելացրեց, որ դա չի պահանջում ավելի շատ խոնարհություն, քան իր տնային ուսուցիչներինը, երբ նրանք պատրաստվում են, որ օրհնեն իր երեխային:[20]

Քահանայության բանալիները

Մենք գիտենք, որ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների կողմից կրվող քահանայությունը ղեկավարում է Տիրոջ աշխատանքը երկրի վրա: Յուրահատուկ քահանայության բանալիներ են հաստատվում ցցի նախագահների և եպիսկոպոսների վրա՝ իրենց տարածքներում պարտականություններ կատարելու համար: Եվ նրանք հայտնությամբ կանչում են տղամարդկանց և կանանց, ովքեր հաստատվում են և կարգվում, որ գործադրեն լիազորված իշխանությունը սովորեցնելու և ծառայելու համար:[21]

Չնայած, որ մենք շատ բան գիտենք քահանայության մասին, մահկանացության ոսպնյակներով դիտելը միշտ չէ, որ մեզ տալիս է Աստծո գործերի լիարժեք հասկացողություն: Սակայն Նրա մեղմ հիշեցումը՝ «Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն»,[22] հավաստիացնում են մեզ, որ ժամանակի ընթացքում և հավերժության հեռանկարում մենք կտեսնենք «բաները, ինչպես դրանք իրականում կան»[23] և ավելի լիարժեքորեն կհասկանանք Նրա կատարյալ սերը:

Մենք բոլորս պատրաստակամորեն ենք ծառայում: Երբեմն թվում է ոգևորվում ենք մեր կոչումով և ցանկանում ենք, որ մեզ խնդրեն ավելին անել: Երբեմն էլ երախտապարտ ենք լինում, երբ կոչումից ազատվելու պահն է գալիս: Մեր կոչումները մենք չենք որոշում:[24] Ես սովորեցի այս դասը իմ ամուսնության վաղ շրջանում: Երբ երիտասարդ զույգ էինք, իմ կինը՝ Քեյթին, և ես ապրում էինք Ֆլորիդայում: Մի կիրակի ցցի նախագահությունից մի խորհրդական բացատրեց ինձ, որ նրանք ոգեշնչում էին ստացել կանչել Քեյթիին որպես վաղ առավոտյան սեմինարիայի ուսուցիչ:

«Ինչպե՞ս ենք մենք դա անելու,- հարցրեցի ես,- Մենք ունենք փոքր երեխաներ, սեմինարիան սկսվում է առավոտյան ժամը 5.00-ին, և ես ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահն եմ»:

Խորհրդականը ժպտաց և ասաց. «Ամեն բան լավ կլինի, եղբայր Անդերսեն: Մենք կկանչենք նրան, և մենք կազատենք ձեզ»:

Եվ հենց այդպես էլ եղավ:

Կանանց ավանդը

Անկեղծորեն հարցնելը և լսելը կանանց մտքերը և մտահոգություններն արժեքավոր է կյանքում, ամուսնության մեջ և Աստծո թագավորությունը կառուցելիս:

Վ անի Պարելլա

Քսան տարի առաջ, գերագույն համաժողովի ժամանակ, Երեց Մ. Ռասսել Բալլարդը պատմեց մի զրույցի մասին, որ ունեցել էր Սփոփող Միության գերագույն նախագահի հետ: Հարց էր բարձրացված միսիա ծառայելու համար նախապատրաստվող երիտասարդների արժանավորությունը բարձրացնելու մասին: Քույր Էլեյն Ջաքը ժպտալով ասել էր. «Դուք գիտեք, Երեց Բալլարդ, որ Եկեղեցու [կանայք] կարող են որոշ լավ առաջարկություններ ունենալ, եթե նրանց հարցնեն: Ի վերջո, . . . մենք նրանց մայրերն *ենք*».[25]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կանանց մտահոգությունների մասին հարցնելու և դրանց պատասխանելու մեծ փորձ ունի: Այն կինը, ով ամենամեծ ազդեցությունն է ունեցել նրա վրա, Քույր Ֆրանցիս Մոնսոնն է: Մենք բոլորս էլ կարոտում ենք նրան: Նախագահ Մոնսոնը նաև վերջերս հիշեցրեց Բարձրագույն Իշխանություններին, թե որքան բան է նա սովորել իր ծխի 84 այրի կանանցից: Նրանք մեծ ազդեցություն են ունեցել իր ծառայության և իր ողջ կյանքի վրա:

Զարմանալի չէ այն, որ նախքան միսիոներական ծառայության համար տարիքի փոփոխության վերաբերյալ Նախագահ Մոնսոնը աղոթքով որոշում կկայացներ, շատ քննարկումներ են անցկացվել Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց և Երեխաների Խմբի գերագույն նախագահությունների հետ:

Եպիսկոպոսներ, երբ դուք հետևեք Նախագահ Մոնսոնի օրինակին, նույնիսկ ավելի առատորեն կզգաք, որ Տիրոջ առաջնորդող ձեռքն օրհնում է ձեր սուրբ աշխատանքը:

Մի քանի տարի մենք ապրել ենք Բրազիլիայում: Ժամանելուց կարճ ժամանակ անց ես հանդիպեցի Ադելսոն Պարելլային, ով ծառայում էր որպես Յոթանասունական, և նրա եղբայր Ադիլսոնին, ով ծառայում էր մեր ցցի նախագահությունում: Ավելի ուշ ես հանդիպեցի նրանց եղբայր Ադալտոնին, ով ծառայում էր որպես ցցի նախագահ

Ֆլորիանոպոլիսում, և ևս մեկ եղբայր Ադելմոյին, ով ծառայում էր որպես եպիսկոպոս: Ինձ զարմացրեց այս եղբայրների հավատքը, և ես հարցրեցի նրանց ծնողների մասին:

Ընտանիքը մկրտվել էր Սանտոսում, Բրազիլիա, 42 տարի առաջ: Ադիլսոն Պարելլան ասաց. «Նախ թվաց, թե հայրս շատ ոգևորված էր Եկեղեցուն միանալու մտքից: Ինչևիցե, նա [շուտով] դարձավ քիչ ակտիվ և խնդրեց մեր մորը, որ նա եկեղեցի չհաճախեր»:

Ադիլսոնը պատմեց ինձ, որ իր մայրը հագուստ էր կարում հարևանների համար, որ վճարեր իր երեխաների ավտոբուսի համար եկեղեցի հաճախելու վարձը: Չորս փոքրիկ տղաները միասին քայլում էին մոտ մեկ մղոն մեկ այլ քաղաք հասնելու համար, 45 րոպե երթևեկում էին ավտոբուսով, և հետո ևս 20 րոպե քայլում էին դեպի աղոթատուն:

Չնայած, որ նա չէր կարողանում եկեղեցի գնալ իր զավակների հետ, Քույր Պարելլան կարդում էր սուրբ գրություններն իր որդիների և դուստրերի հետ, սովորեցնում էր նրանց ավետարանը և աղոթում էր նրանց հետ: Նրանց համեստ տունը լցված էր քահանայության զորության հարուստ օրհնություններով: Փոքրիկ տղաները մեծացան, միսիա ծառայեցին, կրթություն ստացան և ամուսնացան տաճարում: Քահանայության օրհնությունները լցրեցին նրանց տները:

Տարիներ անց, որպես ամուրի քույր, Վենի Պարելլան մուտք գործեց տաճար իր անձնական օժտման համար և ավելի ուշ երեք միսիա ծառայեց Բրազիլիայում: Այժմ նա 84 տարեկան է, և նրա հավատքը շարունակում է օրհնել սերունդներին, որոնք հետևել են իրեն:

Վկայություն և խոստում

Աստծո սուրբ քահանայության զորությունը գտնվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Ես վկայում եմ, որ եթե դուք արժանիորեն մասնակցեք քահանայության արարողություններին, Տերը կտա ձեզ ավելի մեծ ուժ, խաղաղություն և հավերժական հեռանկար: Ինչ իրավիճակում էլ որ դուք լինեք, ձեր տունը կլինի «օրհնված քահանայության զորության ուժով» և ձեր մտերիմները ավելի շատ կցանկանան այս օրհնություններն իրենց համար:

Որպես տղամարդիկ և կանայք, քույրեր և եղբայրներ, Աստծո որդիներ և դուստրեր, մենք միասին առաջ ենք շարժվում: Սա մեր հնարավորությունն է, մեր պարտականությունը և մեր օրհնությունը: Սա մեր ճակատագիրն է, որ նախապատրաստենք Աստծո թագավորությունը Փրկչի վերադարձի համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Այստեղ խոսվում է սիրո մասին», *Երեխաների երգարան,* 190–91:
2. Անձնական հաղորդագրություն, օգոստոսի 5-ին, 2013թ.:
3. Վարդապետություն և Ուխտեր 84.20:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 138.37, 51:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.35, 109.22:
6. 1 Նեփի 11.16–17:
7. 2 Նեփի 26.33:
8. Տես «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
9. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 104, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 84.16; 107.40–53; 128.18, 21, Ռասսել Մ. Նելսոն, "Lessons from Eve," *Ensign,* Nov. 1987, 86–89:
10. Հովհաննես ԺԵ.16:
11. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.72, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 13, 27:
12. Տես Մ. Ռասսել Բալլարդ, "Let Us Think Straight" (BYU Campus Education Week devotional, Aug. 20, 2013); speeches.byu.edu. Երեց Բալլարդը նշել է. «Ինչո՞ւ են տղամարդիկ կարգվում քահանայության պաշտոններում, և ոչ կանայք: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է, որ Տերը և ոչ թե մարդն է «սահմանել, որ տղամարդիկ Իր Եկեղեցում պետք է կրեն քահանայություն» և որ նաև Տերն է օժտել կանանց «այս մեծ և հրաշալի կազմակերպության համար հոգալու ունակություններով, որն Աստծո Եկեղեցին և թագավորությունն է» ("Women of the Church," *Ensign,* Nov. 1996, 70): Ամեն բան ասելուց և անելուց հետո, Տերը չի հայտնել, թե ինչու է Նա հիմնել Իր Եկեղեցին այնպես, ինչպես հիմնել է»:
13. Մորոնի 10.8:
14. Linda K. Burton, "Priesthood: 'A Sacred Trust to Be Used for the Benefit of Men, Women, and Children'" (Brigham Young University Women's Conference address, May 3, 2013); ce.byu.edu/cw/womensconference/pdf/archive/2013/lindaBurtonTalk.pdf.
15. 3 Նեփի 30.2:
16. Մատթեոս 6.22–23:
17. Մատթեոս Ե.28, տես նաև Ալմա 39.9: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Պոռնոգրաֆիան հատկապես վտանգավոր և հակում առաջացնող է: Պոռնոգրաֆիայի հանդեպ դրսևորած հետաքրքրությունը կարող է դառնալ համակող սովորույթ, որը կտանի դեպի ավելի գռեհիկ նյութեր և սեռական մեղք: Ամեն գնով խուսափեք պոռնոգրաֆիայից» («Պատրաստվածությունը օրհնություններ է բերում», *Լիահոնա,* մայիս 2010, 65):

    «Ծայրահեղ անհանգստացնող են այն փաստերը, որ բազմաթիվ մարդիկ օգտագործում են ինտերնետը չար և կործանարար նպատակներով, որոնցից առավել գերակշռողը պոռնոգրաֆիա դիտելն է: Իմ եղբայրներ և քույրեր, նման հակումը բառացիորեն կործանում է հոգին: Եղեք ամուր: Եղեք մաքուր: Ամեն գնով խուսափեք նման քայքայիչ և կործանարար նյութերից, որտեղ էլ որ դրանք լինեն: Ես այս նախազգուշացումը հնչեցնում եմ բոլորի համար, ամենուրեք» («Մինչև նոր հանդիպում», *Լիահոնա,* մայիս 2009, 113):

    «Խուսափեք պոռնոգրաֆիայի որևէ նշույլից: Այն կանզգայացնի հոգին և կխեղի խիղճը: Վարդապետություն և Ուխտերում մեզ ասվել է. «Այն, ինչ չի շենացնում, Աստծուց չէ, և խավար է» [Վարդապետություն և Ուխտեր 50.23]» («Հավատքին հավատարիմ», *Լիահոնա,* մայիս 2006, 18–19):
18. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, *Գործել ըստ Վարդապետության* (2012), 53:
19. Տես Դալլին Հ. Օուքս, "Priesthood Authority in the Family and the Church," *Լիահոնա,* նոյեմբեր 2005, 24–27:
20. Անձնական հաղորդագրություն, օգոստոսի 5-ին, 2013թ., տես Հակոբոս Ե.14:
21. Տես Եբրայեցիս Ե.4:
22. Եսայիա ԾԵ.8:
23. Հակոբ 4.13:
24. Տես Վարդապետություն և Ուխտեր 81.4–5: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ձեր պարտավորությունը նույնքան լուրջ է ձեր պարտականության ոլորտում, որքան իմ պարտավորությունը իմ ոլորտում: Այս եկեղեցու ոչ մի կոչում փոքր կամ փոքր նշանակություն ունեցող չէ» ("This Is the Work of the Master," *Ensign,* May 1995, 71).
25. M. Russell Ballard, "Strength in Counsel," *Ensign,* Nov. 1993, 76.



Դեյվիդ Մ. ՄակՔոնկի
Գերագույն Նախագահության Կիրակնօրյա
Դպրոցի Առաջին Խորհրդական

Ուսուցանել Աստծո զորությամբ և իշխանությամբ

Տերը պատրաստել է ուղի՝ յուրաքանչյուր արժանավոր Վերջին Օրերի Սրբի համար ուսուցանել Փրկչի ձևով:

Մենք այնքան շատ ենք երախտապարտ Եկեղեցու ուսուցչիների համար, որ դա դժվար է ինչ որ ձևով արտահայտել: Մենք սիրում ենք ձեզ և մեծ վստահություն ունենք ձեր հանդեպ: Դուք վերականգնված ավետարանի մեծագույն հրաշքներից մեկն եք:

Իսկապես գոյություն ունի գաղտնիք հաջողված ավետարանի ուսուցիչ դառնալու, Աստծո զորությամբ և իշխանությամբ ուսուցանելու համար: Ես օգտագործում եմ *գաղտնիք* բառը, որովհետև սկզբունքները, որոնց վրա հիմնված է ուսուցչի հաջողությունը, կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր վկայություն ունեն նրա մասին, թե ինչ պատահեց 1820թ. վաղ գարնանային գեղեցիկ, հստակ օրվա առավոտյան:

14-ամյա պատանու խոնարհ աղոթքին ի պատասխան՝ երկինքը բացվեց: Աստված՝ Երկնային Հայրը և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը հայտնվեցին և խոսեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ: Երկար սպասված բոլոր բաների վերականգնումը սկսվեց և հայտնության սկզբունքը հավիտենականորեն հաստատվեց մեր տնտեսությունում: Ջոզեֆի ուղերձը և մեր ուղերձը աշխարհին կարող է ամփոփվել երկու բառով՝ «Աստված խոսում է»: Նա խոսել է հին ժամանակներում, նա խոսեց Ջոզեֆի հետ և նա կխոսի ձեզ հետ: Սա ձեզ առանձնացնում է աշխարհի բոլոր մնացած ուսուցիչներից: Սա է պատճառը, որ դուք չեք կարող ձախողվել:

Հռոմ, Իտալիա



Դուք կանչվել եք մարգարեության և հայտնության ոգով և ձեռնադրվել եք քահանայության իշխանությամբ: Ի՞նչ է նշանակում սա:

Առաջինը դա նշանակում է, որ դուք Տիրոջ հանձնարարության տակ եք: Դուք Նրա գործակալն եք, և դուք լիազորված եք և ուղարկված ներկայացնելու Նրան և գործելու Նրա անունից: Որպես Նրա գործակալ, դուք Նրա օգնության իրավունքն ունեք: Դուք պետք է հարցնեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ կասեր Փրկիչը, եթե Նա ուսուցաներ իմ դասարանում այսօր, և ինչպե՞ս Նա կասեր դա»: Ապա դուք պետք է անեք նույն ձևով:

Այս պարտականությունը կարող է ստիպել ոմանց անհամապատասխան զգալ կամ նույնիսկ ինչ որ չափով երկյուղել: Ուղին դժվար չէ: Տերը պատրաստել է ուղի յուրաքանչյուր արժանավոր Վերջին Օրերի Սրբի համար ուսուցանել Փրկչի ձևով:

Երկրորդը, դուք կանչվել եք քարոզելու Հիսուս Քրիստոսի ավետարանը: Դուք չպետք է ուսուցանեք մեր սեփական գաղափարները կամ փիլիսոփայությունը, նույնիսկ սուրբ գրությունների հետ խառնած: Ավետարանը «Աստուծոյ զորութիւն է փրկելու համար»,[1] և միայն ավետարանի միջոցով է, որ մենք փրկվում ենք:

Երրորդը, ձեզ պատվիրված է ուսուցանել ավետարանի սկզբունքները ինչպես դրանք գտնվում են Եկեղեցու կանոնիկ գրքերում, ուսուցանել սուրբ գրություններից, ժամանակակից օրերի առաքյալների խոսքերից և մարգարեներից և ուսուցանել այն, ինչ ուսուցանվում է ձեզ Սուրբ Հոգու կողմից:

Այսպիսով, որտեղի՞ց ենք մենք սկսում:

Մեր առաջին և ամենակարևոր պարտականությունը այնպես ապրելն է, որ մենք կարողանանք ունենալ Սուրբ Հոգին մեզ հետ որպես ուղեկից և ընկերակից: Երբ Հայրում Սմիթը ձգտում էր ներգրավվել այս վերջին օրերի աշխատանքում, Տերն ասաց. «Ահա, սա է քո աշխատանքը՝ պահել իմ պատվիրանները, այո, քո

Առայջան, Պանամա

ողջ զորությամբ, մտքով և ուժով»:[2] Սա մեկնարկային կետն է: Տիրոջ կողմից Հայրումին տրված խորհուրդը նույն խորհուրդն է, ինչ Նա տվել է Սրբերին ամեն դարում:

Խոսելով ուսուցիչների հետ այսօր, Առաջին Նախագահությունը նշել է. «Ձեր ծառայության ամենակարևոր մասը կլինի ձեր սեփական ամենօրյա հոգևոր նախապատրաստությունը, ներառյալ աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը և պատվիրաններին հնազանդվելը: Մենք խրախուսում ենք ձեզ նվիրվել ավետարանին ապրելուն ավելի մեծ նպատակասլացությամբ, քան երբևէ նախկինում»:[3]

Կարևոր է, որ Առաջին Նախագահությունը չի ասել, որ ձեր ծառայության ամենակարևոր մասը ձեր դասը լավ պատրաստելն է կամ ուսուցման տարբեր տեխնիկական միջոցներին տիրապետելը: Իհարկե, դուք պետք է ջանասիրաբար նախապատրաստվեք յուրաքանչյուր դասին և ձգտեք սովորել, թե ինչպես կարող եք ուսուցանել այնպես, որպեսզի օգնեք ուսանողներին գործածել իրենց ազատ կամքը և թույլ տալ, որ ավետարանը մտնի իրենց սրտերը, բայց ձեր ծառայության առաջին և ամենակարևոր մասը ձեր անձնական հոգևոր նախապատրաստությունն է: Երբ դուք հետևեք այդ խորհրդին Առաջին Նախագահությունը խոստացել է. «Սուրբ Հոգին կօգնի ձեզ իմանալ ինչ անել: Ձեր սեփական վկայությունը կաճի, ձեր դարձը կխորանա և դուք կզորացվեք՝ կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար»:[4]

Ի՞նչ ավելի մեծ օրհնություններ կարող է ուսուցիչը ցանկանալ:

Հաջորդը Տերը պատվիրել է, որ նախքան Նրա խոսքը հայտարարելը, մենք պետք է ձգտենք ձեռք բերել այն:[5] Դուք պետք է դառնաք առողջ դատողությամբ տղամարդիկ և կանայք՝ ջանասիրաբար ուսումնասիրելով սուրբ գրությունները և գանձելով դրանք ձեր սրտերում: Հետո, եթե դուք խնդրեք Տիրոջ օգնությունը, Նա կօրհնի ձեզ Իր Հոգով և Իր խոսքով: Դուք կունենաք Աստծո զորությունը մարդկանց համոզելու համար:

Պողոսն ասում է մեզ, որ ավետարանը գալիս է մարդկանց երկու ուղիներով, խոսքով և զորությամբ:[6] Ավետարանի խոսքերը գրված են սուրբ գրություններում և մենք կարող ենք ձեռք բերել խոսքը ջանասիրաբար հետազոտելով: Ավետարանի զորությունը գալիս է նրանց կյանք, ովքեր այնպես են ապրում, որ Սուրբ Հոգին իրենց ուղեկիցն է լինում և ովքեր հետևում են իրենց ստացած հուշումներին: Ոմանք կենտրոնացնում են իրենց ուշադրությունը միայն խոսքը ձեռք բերելու վրա և նրանք դառնում են մասնագետներ տեղեկությունները հաղորդելիս: Մյուսներն անտեսում են իրենց նախապատրաստությունը և հույս տածում, որ ինչ որ կերպ Տերն Իր մեծահոգությամբ կօգնի իրենց դա անել դասի ընթացքում:

Դուք չեք կարող սպասել, որ Հոգին կօգնի ձեզ հիշել սուրբ գրությունները և սկզբունքները, որոնք դուք չեք ուսումնասիրել կամ խորհել: Որպեսզի հաջողությամբ ուսուցանեք ավետարանը, դուք պետք է ունենաք ինչպես խոսքը, այնպես էլ ավետարանի զորությունը ձեր կյանքում:

Ալման հասկանում էր այս սկզբունքները, երբ նա ուրախացավ Մոսիայի որդիներով և թե ինչպես նրանք ուսուցանեցին զորությամբ և Աստծո իշխանությամբ: Մենք կարդում ենք.

«Նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին, և նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը:

Բայց դա բոլորը չէր, նրանք նվիրվել էին շատ աղոթքի ու ծոմի. այդ պատճառով նրանք ունեին . . . հայտնության ոգին»:[7]

Հաջորդը, դուք պետք է սովորեք լսել: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է այս սկզբունքը միսիոներներին: Ես կմեջբերեմ Երեց Հոլլանդի դիտարկումներից, բայց թույլ եմ տվել ազատություն համապատասխանաբար փոխարինելով *միսիոներներ* և *ունկնդիրներ* տերմինները *ուսուցիչ* և *ուսանող* բառերով. «Հոգուն լսելու [ուսուցիչների] ունեցած պատասխանատվությունից բացի, միայն երկրորդ տեղում է [ուսանողին] լսելու նրանց պատասխանատվությունը: . . . Եթե մենք լսենք հոգևոր ականջով . . . , *[մեր ուսանողները] կասեն մեզ*, թե ինչ դասեր նրանք կարիք ունեն մեզանից լսելու»:

Երեց Հոլլանդը շարունակեց. «Հարցը կայանում է նրանում, որ [ուսուցիչները] դեռ խիստ կենտրոնացած են ավելի շուտ հարմարավետ, կրկնվող դասի բովանդակությունը տալով, քան կենտրոնանալով իրենց [ուսանողների] վրա որպես անհատականություններ»:[8]

Ձեզ և ձեր դասերը ըստ ձեր ունակությունների լավագույն ձևով նախապատրաստելուց հետո, պետք է պատրաստակամորեն թույլ տաք առաջնորդվել: Երբ Սուրբ Հոգու մեղմ հուշումները գան, դուք

պետք է խիզախություն ունենաք մի կողմ դնելու ձեր ակնարկները և նշումները և գնաք այնտեղ, ուր այդ հուշումները տանում են ձեզ : Երբ մենք անում ենք այդ, դասը որ դուք հաղորդում եք, այլևս ձեր դասը չէ, այլ դա դառնում է Փրկչի դասը:

Երբ դուք նվիրաբերում եք ձեզ ավելի մեծ նպատակասլացությամբ ավետարանով ապրելուն, քան երբևէ նախկինում և հետազոտում սուրբ գրությունները, գանձելով դրանք ձեր սրտերում, նույն Սուրբ Հոգին, ով հայտնել է այս խոսքերը առաքյալներին և մարգարեներին հին դարերում, կվկայի ձեզ դրանց ճշմարտացիության մասին: Փաստորեն Սուրբ Հոգին դրանք նորեն հայտնի կդարձնի ձեզ: Երբ դա պատահի, խոսքերը, որոնք դուք կարդում եք, այլևս միայն Նեփիի կամ Պողոսի կամ Ալմայի խոսքերը չեն, այլ դրանք դառնում են ձեր խոսքերը: Այդ ժամանակ, երբ դուք ուսուցանում եք, Սուրբ Հոգին կկարողանա բերել բոլոր բաները ձեր հիշողության մեջ: Իրոք «այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք»:[9] Երբ սա պատահի, դուք կգտնեք ձեզ ասելիս բաներ, որոնք դուք չէիք ծրագրել ասել: Ապա եթե ուշադրություն դարձնեք, դուք կսովորեք ինչ որ բան այն բաներից, որոնք դուք ուսուցանում եք: Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ասել է. «Ես միշտ գիտեմ, թե երբ եմ խոսում Սուրբ Հոգու ոգեշնչմամբ, որովհետև ես միշտ սովորում եմ ինչ որ բան նրանից, ինչ ես ասում եմ»:[10] Հիշեք, ուսուցիչը նաև ուսանող է:

Ի վերջո դուք պետք է կանգնեք որպես անկախ վկա այն բաների, որ դուք ուսուցանում եք և ոչ թե ուղղակի ձեռնարկի խոսքերի կամ ուրիշների մտքերի արձագանք: Երբ դուք սնվում եք Քրիստոսի խոսքերով և ձգտում ավելի մեծ նպատակասլացությամբ ավետարանով ապրել քան երբևէ նախկինում, Սուրբ Հոգին ցույց կտա ձեզ, որ այն բաները, որ դուք ուսուցանում եք, ճշմարիտ են: Սա հայտնության ոգին է, և այս նույն ոգին կտանի այս ուղերձը նրանց սրտերը, ովքեր ցանկանում են և հոժար են ընդունել այն:

Եկեք այժմ ավարտենք որտեղից սկսեցինք՝ Սրբազան Պուրակից: Այն պատճառով, ինչ տեղի ունեցավ այդ գարնանային գեղեցիկ առավոտյան՝ ոչ այնքան շատ առաջ, դուք լիազորված եք ուսուցանել Աստծո զորությամբ և իշխանությամբ: Սրա վերաբերյալ ես բերում եմ իմ հանդիսավոր և անկախ վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հռովմայեցիս Ա.16:
2. Վարդապետություն և Ուխտեր 11.20:
3. First Presidency, in *Teaching the Gospel in the Savior's Way: A Guide to* Come, Follow Me: Learning Resources for Youth (2012), 2.
4. First Presidency, in *Teaching the Gospel in the Savior's Way,* 2.
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 11.21:
6. Տես Ա Թեսաղոնիկեցիսe Ա.5:
7. Ալմա 17.2–3:
8. Jeffrey R. Holland, "The Divine Companionship" (address given at the seminar for new mission presidents, June 26, 2009), 7, 8, Church History Library, Salt Lake City; emphasis in original.
9. Վարդապետություն և Ուխտեր 100.6:
10. Marion G. Romney, in Boyd K. Packer, *Teach Ye Diligently* (1975), 304.

Երեց Քեվին Ս. Համիլտոն
Յոթանասունից

Անընդհատ ամուր բռնած

Թող որ մենք անընդհատ ամուր բռնենք երկաթյա ձողից, որն առաջնորդում է դեպի մեր Երկնային Հոր ներկայությունը:

Հայրս հիշում էր այն օրը, նույնիսկ հենց այն պահը, որ իր ընտանիքը՝ հայրը, մայրը և չորս երեխաները, հեռացան Եկեղեցուց, շատերը երբեք կրկին չվերադառնալու այս կյանքում: Նա 13 տարեկան էր՝ սարկավագ, և այդ օրերին ընտանիքներն առավոտյան հաճախում էին Կիրակնօրյա Դպրոց, իսկ հետո՝ ցերեկը հաղորդության ժողովին: Մի գեղեցիկ գարնանային օր, երբ վերադարձել էին Կիրակնօրյա առավոտյան երկրպագության ծառայություններից և ցերեկը միասին ճաշում էին, նրա մայրը շրջվեց դեպի նրա հայրը և պարզապես հարցրեց. «Լավ, սիրելիս, ի՞նչ ես կարծում, այս ցերեկ մենք գնանք հաղորդության ժողովի, թե՞ ընտանիքով այցելենք գեղատեսիլ վայրեր»:

Հայրս երբևիցէ չմտածելով, որ ընտրություն կա հաղորդության ժողով գնալու համար, նա և իր երեք դեռահաս քույրերն ու եղբայրները բոլորն էլ ուղղվեցին իրենց տեղում և ուշադիր սկսեցին լսել: Այդ կիրակի ցերեկը գեղատեսիլ վայրեր այցելելը հավանաբար հաճելի ընտանեկան միջոցառում էր, սակայն այդ փոքրիկ որոշումը դարձավ մի նոր ուղղության սկիզբ, որն ի վերջո, նրա ընտանիքին հեռացրեց Եկեղեցուց՝ դրա ապահովությամբ, անվտանգությամբ և օրհնություններով, և դրեց այլ ուղու վրա:

Որպես դաս մեր օրերի այն մարդկանց համար, ովքեր կարող են գայթակղվել՝ ընտրելով այլ ուղի, Մորմոնի Գրքի մարգարե Լեքին կիսվեց տեսիլքով իր ընտանիքի հետ, որտեղ նա «[տեսավ] մարդկանց անհամար բազմություններ, որոնցից շատերն առաջ էին մղվում, որպեսզի կարողանային հասնել արահետին, որը տանում էր դեպի ծառը, որի մոտ [նա] կանգնած [էր]:

Եվ . . . նրանք առաջ եկան և սկսեցին քայլել արահետով, որը տանում էր դեպի ծառը:

Եվ . . . խավարի մեգ բարձրացավ. . . . որի հետևանքով նրանք, ովքեր սկսել էին քայլել արահետով, կորցրեցին իրենց ճանապարհը, հետևաբար հեռու թափառելով կորան»:[1]

Լեքին այնուհետև տեսավ երկրորդ խմբին՝ «առաջ մղվելիս, և նրանք առաջ եկան և բռնեցին երկաթյա ձողի ծայրից. և նրանք առաջ մղվեցին խավարի մեգի միջով՝ կառչելով երկաթյա ձողից, այնքան, մինչև որ առաջ եկան և ճաշակեցին ծառի պտղից»: Դժբախտաբար, «ծառի պտղից ճաշակելուց հետո, նրանք աչք ածեցին շուրջբոլորը, կարծես թե ամաչում էին» նրանցից, ովքեր գտնվում էին «մեծ ու ընդարձակ մի շենքում», որ «զբաղված էին ծաղրելով և մատով ցույց տալով դեպի նրանց, ովքեր հասել և ճաշակում էին պտղից»: Այդ մարդիկ այնուհետև «հեռացան դեպի արգելված ուղիներ և կորան»:[2] Նրանք չկարողացան, կամ միգուցե չկամեցան համբերել մինչև վերջ:

Այնուամենայնիվ, այնտեղ կար երրորդ խումբը, որը ոչ միայն հաջողությամբ հասավ կենաց ծառին. նրանք դրանից հետո չմոլորվեցին: Նրանց վերաբերյալ սուրբ գրություններն ասում են, որ նրանք «առաջ մղվեցին, *անընդհատ* ամուր բռնած երկաթյա ձողից, մինչև առաջ եկան ու երեսնիվայր ընկան և ճաշակեցին ծառի պտղից»:[3] Երկաթյա ձողն այս խմբի համար իրենից ներկայացնում էր միակ

ապահովությունը և անվտանգությունը, որը նրանք կարող էին գտնել, և նրանք անընդհատ ամուր բռնել էին դրանից. նրանք հրաժարվեցին հեռանալ նույնիսկ այնպիսի մի հասարակ բանի համար, ինչպիսին կիրակի օրը ցերեկը գեղատեսիլ վայրեր այցելելն էր:

Այս խմբի մարդկանց մասին Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Այս հատվածի գլխավոր արտահայտությունն է՝ «անընդհատ ամուր բռնած երկաթյա ձողից»: . . . Հավանաբար, մարդկանց այս երրորդ խումբը *հետևողականորեն* կարդում *և* սովորում *և* ուսումնասիրում էր Քրիստոսի խոսքերը: . . . Սա է այն խումբը, որին դուք և ես պետք է ձգտենք միանալ»:[4]

Մեզանից նրանք, ովքեր այսօր Աստծո Եկեղեցու անդամներ են, ուխտեր են կապել հետևել Հիսուս Քրիստոսին և հնազանդվել Աստծո պատվիրաններին: Մկրտվելիս մենք ուխտեցինք կանգնել որպես Փրկչի վկաներ,[5] սատարել թույլերին և կարիքավորներին,[6] պահել Աստծո պատվիրանները, և ապաշխարել կարիքի դեպքում, քանզի ինչպես ուսուցանել է Պողոս Առաքյալը. «Ամենքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցը պակասուած են»:[7]

Ամեն շաբաթ մենք հնարավորություն ունենք հաճախելու հաղորդության ժողովին, որտեղ մենք կարող ենք վերհիշել այս ուխտերը՝ ճաշակելով հաղորդության արարողության հացն ու ջուրը: Այս հասարակ գործողությունը մեզ թույլ է տալիս ևս մեկ անգամ խոստանալ հետևել Հիսուս Քրիստոսին և ապաշխարել, երբ մենք սխալվում ենք: Ի պատասխան՝ Աստված մեզ խոստանում է Իր Հոգին՝ որպես առաջնորդ և պաշտպան:

Քարոզիր Իմ Ավետարանը

Ձեռնարկից մեր միսիոներները ուսուցանում են, որ հայտնությունը և վկայությունը տրվում են, երբ մենք հաճախում ենք մեր Կիրակնօրյա Եկեղեցու ժողովներին. «Երբ մենք միասին հաճախում ենք Եկեղեցու ծառայություններին և երկրպագում, մենք ամրացնում ենք միմյանց: Մենք նորոգվում ենք ընկերների և ընտանիքի հետ շփվելով: Մեր հավատքն ամրանում է, երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները և սովորում ավելին վերականգնված ավետարանի մասին»:[8]

Մեկը կարող է հարցնել՝ ինչու կիրակի օրը ունենք երեք առանձին ժողովներ և ինչու են անհրաժեշտ դրանցից յուրաքանչյուրը: Եկեք հակիրճ անդրադառնանք այս երեք ժողովներին.

- Հաղորդության ժողովը հնարավորություն է տալիս մասնակցելու հաղորդության արարողությանը: Մենք նորոգում ենք մեր ուխտերը, առատորեն զգում ենք Հոգին և ունենում ենք լրացուցիչ օրհնություն՝ հրահանգվելով և շենանալով Սուրբ Հոգով:
- Կիրակնօրյա Դպրոցը մեզ թույլ է տալիս «միմյանց ուսուցանել արքայության վարդապետությունը»,[9] որ բոլորը կարողանան «շենանալ և միասին ցնծալ»:[10] Մեծ զորություն և անձնական խաղաղություն ենք զգում, երբ մենք հասկանում ենք վերականգնված ավետարանի վարդապետությունները:
- Քահանայության ժողովներին տղամարդիկ և երիտասարդ տղաները պետք է «սովորեն [իրենց] պարտականությունը»[11] և «ավելի կատարյալ ձևով հրահանգվեն»,[12] իսկ Սփոփող Միության ժողովները Եկեղեցու կանանց հնարավորություն է տալիս «մեծացնել իրենց հավատքը . . . , ամրացնել [իրենց] ընտանիքները և տները, և օգնել կարիքի մեջ գտնվողներին»:[13]

Նմանապես, մեր երիտասարդ կանայք և երեխաները ունեն իրենց իսկ ժողովները և դասարանները, որտեղ նրանց ուսուցանվում է ավետարանը, մինչ նրանք պատրաստվում են կարևոր պարտականությունների, որոնք նրանք կունենան: Այս առանձնահատուկ, սակայն կապակցված ժողովներից յուրաքանչյուրում մենք սովորում ենք վարդապետությունը, զգում ենք Հոգին, և ծառայում ենք միմյանց: Չնայած կարող են լինել բացառություններ կապված հեռավորության, գումարի կամ առողջության հետ, մենք պետք է ձգտենք հաճախել մեր բոլոր կիրակնօրյա ժողովներին: Ես խոստանում եմ, որ մեծ ուրախության և խաղաղության օրհնություններ կգան երկրպագության

երեքժամյա կիրակնօրյա ժողովների ընթացքում:

Մեր ընտանիքը պարտավորվել է միշտ հաճախել մեր բոլոր կիրակնօրյա ժողովներին: Մենք զգացել ենք, որ սա ամրացնում է մեր հավատքը և խորացնում է ավետարանի մասին մեր հասկացողությունը: Մենք գիտենք, որ լավ զգացումներ ենք ունենում Եկեղեցու ժողովներին հաճախելու մեր որոշման արդյունքում, հատկապես, երբ մենք տուն ենք վերադառնում և շարունակում ենք պահել Հանգստյան օրը: Մենք նույնիսկ հաճախում ենք մեր բոլոր կիրակնօրյա ժողովներին, երբ արձակուրդի մեջ ենք կամ ճամփորդում ենք: Մեր դուստրերից մեկը վերջերս գրել էր մեզ, որ նա այցելել էր եկեղեցի մի քաղաքում, որտեղ ճամփորդում էր, և հետո ավելացրել էր. «Այո, հայրիկ, ես մասնակցել եմ կիրակնօրյա բոլոր ժողովներին»: Մենք գիտենք, որ նա օրհնվել է այս արդար որոշման համար:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է կայացնի բազմազան որոշումներ, ինչ վերաբերվում է այն հարցին, թե ինչպես պահել Հանգստյան օրը: Միշտ կլինի ինչ-որ «լավ» միջոցառում, որը կարող է և պետք է զոհաբերվի Եկեղեցու ժողովին այցելելու ավելի լավ ընտրության համար: Իրականում, սա այն ուղիներից մեկն է, որի օգնությամբ հակառակորդը «խաբում է [մեր] հոգիները և զգուշորեն հեռացնում [մեզ]»:[14] Նա օգտագործում է «լավ» միջոցառումները որպես «ավելի լավ» կամ նույնիսկ «ամենալավ» միջոցառումների փոխարինողներ:[15]

Զողից անընդհատ ամուր բռնելը նշանակում է, որ մենք հաճախում ենք մեր բոլոր կիրակնօրյա ժողովներին՝ հաղորդության ժողով, Կիրակնօրյա Դպրոց և քահանայության կամ Սփոփող Միության ժողովներ: Մեր երեխաները և պատանիները հաճախում են իրենց համապատասխան ժողովները Երեխաների Խմբում, Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց դասարաններում: Մենք պետք է երբեք չընտրենք, թե որ ժողովներին հաճախել: Մենք պարզապես ամուր բռնում ենք



Աստծո խոսքից՝ երկրպագելով և հաճախելով Հանգստյան օրվա մեր ժողովներին:

Զողից անընդհատ ամուր բռնելը նշանակում է, որ մենք ձգտում ենք պահել Աստծո բոլոր պատվիրանները, ասել ամենօրյա անձնական և ընտանեկան աղոթքները և ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները:

Անընդհատ ամուր բռնելը Քրիստոսի վարդապետության մի մասն է, ինչպես ուսուցանված է Մորմոնի Գրքում: Մենք հավատք ենք գործադրում առ Հիսուս Քրիստոսը, ապաշխարում ենք մեր մեղքերից և փոխում ենք մեր սրտերը, ապա հետևելով Նրան վար ենք իջնում մկրտության ջրերի մեջ և ստանում ենք Սուրբ Հոգու հաստատող պարգևը, որը ծառայում է որպես առաջնորդ և մխիթարող: Եվ հետո, ինչպես ուսուցանել է Նեփին, մենք «առաջ [ենք մղվում], սնվելով Քրիստոսի խոսքով»՝ մինչև մեր կյանքի վերջը:[16]

Իմ քույրեր և եղբայրներ, մենք ուխտյալ ժողովուրդ ենք: Մենք կամավոր կերպով կապում և պահում ենք ուխտեր, և խոստացված օրհնությունն այն է, որ մենք կստանանք «այն ամենն, ինչ Հայրն ունի»:[17] Երբ մենք անընդհատ բռնում ենք ձողից, պահելով մեր ուխտերը, մենք կամրապնդվենք, որ դիմակայենք գայթակղություններին և աշխարհի վտանգներին: Մենք կկարողանանք առաջ ընթանալ այս մահկանացու կյանքում՝ դրա բոլոր դժվարություններով հանդերձ, մինչև իրականում կհասնենք ծառին, որի պտուղը «ամենաթանկն ու ամենաբաղձալին է բոլոր այլ պտուղներից ավելի»:[18]

Բարեբախտաբար, հայրս ամուսնացավ լավ կնոջ հետ, ով խրախուսեց նրան վերադառնալ իր պատանեկության եկեղեցին և կրկին սկսել առաջ ընթանալ ճանապարհով: Նրանց հավատարիմ կյանքն օրհնել է իրենց բոլոր երեխաներին, թոռների հաջորդ սերնդին և այժմ՝ ծոռներին:

Ճիշտ ինչպես իրենց Հանգստյան օրվա երկրպագության ժողովներից մեկին հաճախելու կամ չհաճախելու հասարակ որոշումը մեծ տարբերություն առաջ բերեց իմ հոր ընտանիքում, մեր ամենօրյա որոշումները մեծ ազդեցություն կունենան մեր կյանքի վրա: Փոքր թվացող որոշումը, ինչպիսին է հաղորդության ժողովին հաճախելը կամ չհաճախելը, կարող է ունենալ հեռուն գնացող, նույնիսկ հավերժական հետևանքներ:

Թող որ մենք ընտրենք լինել ջանասեր և ստանանք մեծ օրհնություններ և պաշտպանություններ, որ առաջ են գալիս միասին հավաքվելուց և ուխտերը պահելուց: Թող որ մենք անընդհատ ամուր բռնենք երկաթյա ձողից, որն առաջնորդում է դեպի մեր Երկնային Հոր ներկայությունը, սա իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 1 Նեփի 8. 21–23:
2. 1 Նեփի 8. 24–28:
3. 1 Նեփի 8.30, նշումներն ավելացված են:
4. David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Church Educational System fireside address, Feb. 4, 2007), 8–9; speeches.byu.edu.
5. Տես Մոսիա 18.9:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 81.5:
7. Հռովմայեցիս Գ.23:
8. *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 74:
9. Վարդապետություն և Ուխտեր 88.77:
10. Վարդապետություն և Ուխտեր 50.22:
11. Վարդապետություն և Ուխտեր 107.99:
12. Վարդապետություն և Ուխտեր 88.78:
13. *Handbook 2: Administering the Church* (2010), 9.1.1.
14. 2 Նեփի 28. 21:
15. Տես Դալլին Հ. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ», *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 104–8:
16. 2 Նեփի 31.20:
17. Վարդապետություն և Ուխտեր 84.38:
18. 1 Նեփի 15.36:

Երեց Ադրիան Օչոա
Յոթանասունից

Վերև նայեք

Այսօր է ժամանակը, որ նայենք դեպի ճշմարտության Աղբյուրը և հավաստիանանք, որ մեր վկայություններն ամուր են:

Երբ ես ութ տարեկան էի, ինձ և իմ հորաքրոջ ու հորեղբոր երկու որդիներին ուղարկեցին մոտակա քաղաք հաջորդ 15 օրվա համար նպարեղեն գնելու: Երբ հիշում եմ այս փորձառության մասին, զարմանում եմ, թե որքան շատ վստահություն ունեին իմ տատիկը, հորաքույրն ու հորեղբայրը մեր նկատմամբ: Առավոտյան երկինքը պայծառ էր և արևոտ, երբ նստելով մեր երեք ձիերից բաղկացած քարավանը մենք ճանապարհ ընկանք:

Մարգագետնի մեջտեղում մեզ մոտ հիանալի միտք առաջացավ, որ պետք է ցած իջնենք և գնդակախաղ խաղանք: Եվ մենք երկար խաղացինք: Մենք այնքան էինք կլանված մեր խաղով, որ չնկատեցինք «ժամանակների նշանները» մեր գլխավերևում, երբ մութ ամպերը ծածկեցին երկինքը: Այն պահին, երբ հասկացանք, թե ինչ է կատարվում, մենք նույնիսկ մեր ձիերը նստելու ժամանակ չունեցանք: Ուժեղ անձրևն ու կարկուտը մեզ այնքան ուժեղ էին հարվածում, որ միակ բանը, որ մտածում էինք անել, ձիերի թամբերը հանելն ու թամբերի փոքր կտորներից բաղկացած ծածկի տակ մտնելն էր:

Առանց ձիերի, թրջված և մրսած՝ մենք շարունակում էինք մեր ճանապարհը որքան կարող էինք արագ: Երբ մենք հասանք մեր նպատակատեղին, տեսանք, որ քաղաք մտնող լայն փողոցը հեղեղված էր և նման էր գետի, որը գալիս էր դեպի մեր կողմ: Այժմ, միակ ընտրությունը, որ ունեինք, մեր ծածկերը թողնելն ու քաղաքը շրջապատող մետաղյա փշալարե ցանկապատը մագլցելն էր: Ուշ գիշեր էր, երբ հոգնած, մրսած և թրջված ապաստան էինք փնտրում առաջին տանը, որը տեսանք քաղաք մտնելիս: Բարի երիտասարդ ընտանիքը մեզ չորացրեց, կերակրեց համեղ բակլա և բլիթներ, և այնուհետև անկողին պատրաստեց մեզ համար առանձին սենյակում: Շուտով մենք պարզեցինք, որ սենյակի հատակը հարթ է, և ևս մի հիանալի միտք առաջացավ մեզ մոտ: Մենք շրջան գծեցինք հատակի վրա և շարունակեցինք մեր գնդակախաղը, մինչև որ գետնին ընկանք և քնեցինք:

Երբ երեխա էինք, մենք մտածում էինք միայն մեր մասին: Մենք ամենևին չէինք մտածում մեր սիրելիների մասին, ովքեր հուսահատորեն փնտրում էին մեզ. եթե մտածեինք, մենք երբեք չէինք ուշացնի մեր ճամփորդությունն այդքան անօգուտ զբաղմունքի պատճառով: Եվ եթե ավելի իմաստուն լինեինք, մենք կնայեինք երկնքին, կտեսնեինք ամպերի ձևավորումը, և կարագացնեինք մեր ընթացքը, որպեսզի փոթորկից հեռու մնայինք: Այժմ, երբ ավելի շատ փորձառություն ունեմ, ես միշտ հիշեցնում եմ ինքս ինձ. «Մի՛ մոռացիր վերև նայել»:

Իմ փորձառությունը հորաքրոջս և հորեղբորս որդիների հետ ուսուցանեց ինձ ուշադրություն դարձնել մեր ժամանակների նշաններին: Մենք ապրում ենք փոթորկոտ, վտանգավոր օրերում, որոնց մասին նկարագրել է Պողոսը. «Մարդիկ կլինին ինքնասէր, . . . ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ, . . . բանսարկու, անժուժկալ, . . . ավելի ցանկասէր, քան թէ աստուածասէր» (2 Տիմոթէոս Բ 3.2–4):

Խոսելով այս ժամանակների մասին՝ Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Մեզ անհրաժեշտ է և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր նախապատրաստություն: . . . Եվ ավելի հեշտ է անուշադրության մատնել ավելի քիչ նկատելին և ավելի դժվարը՝ հոգևորը»: («Նախապատրաստում երկրորդ գալստին», *Լիահոնա,* Մայիս 2004, 9): Այլ կերպ ասած՝ մի մոռացեք վերև նայել:

Հաշվի առնելով հոգևոր նախապատրաստվածության հրատապ անհրաժեշտությունը նման վտանգի ժամանակ, ես ուզում եմ մի նախազգուշացում անել ժամանակների մի շատ կարևոր նշանի վերաբերյալ: Իմ մասնագիտական կյանքի շնորհիվ ես շատ եմ առնչվել տեխնոլոգիայի հետ, այնպես որ, ես գնահատում եմ դրա արժեքը, հատկապես հաղորդակցման մեջ: Այսպիսով, մարդկանց մասին տեղեկություններն արագ և հեշտ հասանելի են: Բայց համացանցը նաև լի է անարգ և ապակողմնորոշող բաներով: Տեխնոլոգիան մեծացրել է մեր խոսքի ազատությունը, բայց այն նաև համացանցում ինչ-որ բան գրող անվերապահ անձի գրվածքին տալիս է անարդար հավաստիություն՝ ըստ այն կարդացողների թվի: Սա է պատճառը, որ այժմ, ավելի քան երբևէ, մենք պետք է հիշենք այս հավերժական սկզբունքը. «Իրանց պտուղներիցը ճանաչեցէք նորանց» (Մատթէոս 7.20):

Ես ձեզ հատկապես զգուշացնում

եմ չդիտել անարգ նկարներ, ուշադրություն չդարձնել Քրիստոսի կամ Մարգարե Ջոզեֆ Սմիթի դեմ կեղծ մեղադրանքներ ներկայացնողներին: Երկու գործողություններն էլ հանգեցնում են նույն հետևանքին. Սուրբ Հոգու և Նրա պաշտպանության, աջակցող զորության հեռացմանը: Դրան միշտ հետևում է մեղքը և դժբախտությունը:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, եթե դուք երբևէ ինչ-որ բանի հանդիպեք, որը կասկածի կենթարկի ավետարանի մասին ձեր վկայությունը, խնդրում եմ ձեզ, վերև նայեք: Նայեք ողջ իմաստության և ճշմարտության Աղբյուրին: Մնուցեք ձեր հավատքն ու վկայությունը Աստծո խոսքով: Աշխարհում կան այնպիսիններն, ովքեր ձգտում են թուլացնել ձեր հավատքը՝ կեղծիքներն ու կիսատ ճշմարտություններն իրար խառնելով: Այս պատճառով բացարձակապես կարևոր է, որ դուք մշտապես մնաք Սուրբ Հոգուն արժանի: Սուրբ Հոգու ընկերակցությունը պարզապես հաճելի հարմարավետություն չէ. այն անհրաժեշտ է ձեր հոգևոր գոյատևման համար: Եթե դուք չգանձեք Քրիստոսի խոսքերը և ուշադիր չլսեք Հոգու հուշումները, դուք կմոլորվեք (տես Ջոզեֆ Սմիթ - Մատթեոս 1.37): Մենք պետք է կատարենք այդ ամենը:

Հիսուս Քրիստոսը, ով կատարյալ էր, և Ջոզեֆ Սմիթը, ով ընդունել էր, որ ինքը կատարյալ չէր, երկուսն էլ սպանվեցին բանսարկուների կողմից, ովքեր չէին ընդունում իրենց վկայությունը: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ նրանց վկայությունը ճշմարիտ է. որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, և Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե է:

«Իրանց պտուղներիցը ճանաչեցէք նորանց»: Կարո՞ղ է լավ պտուղ աճել վատ ծառից: Ես գիտեմ, որ իմ Քավիչը ներել է իմ մեղքերը և ազատել է ինձ իմ անձնական լծից՝ բերելով ինձ երջանկության մի վիճակի, որի մասին ես նույնիսկ չգիտեի, որ գոյություն ուներ: Եվ ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է եղել, որովհետև ես հետևել եմ Մորմոնի Գրքի պարզ խոստումին. «[Հարցրեք] Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով» (Մորոնի 10.4): Պարզ բառերով ասած՝ վերև նայեք:

Բրասիլիա, Բրազիլիա

Կան մարդիկ, ովքեր ենթադրում են, որ դուք պետք է ունենաք ֆիզիկական ապացույց, որպեսզի հավատաք Քրիստոսի Հարությանը կամ Նրա վերականգնված ավետարանի ճշմարտացիությանը: Նրանց համար ես մեջբերում կկատարեմ Ալմայի խոսքերից ուղղված Կորիհորին, ով փորձում էր ուրիշներին համոզել չհավատալ. «Դու ունեցել ես բավականաչափ նշաններ, մի՞թե դու փորձում ես քո Աստծուն: Մի՞թե դու կասես՝ ցույց տուր ինձ մի նշան, երբ դու ունես վկայությունը բոլոր այս քո եղբայրների և նաև բոլոր սուրբ մարգարեների: սուրբ գրքերը դրված են քո առջև» (Ալմա 3.44):

Դուք և ես Փրկչի քավության զորության կենդանի ապացույցն ենք: Մենք կենդանի ապացույցն ենք Մարգարե Ջոզեֆի ծառայության և վաղ շրջանում ապրող Սրբերի հավատարմության, ովքեր ամուր մնացին իրենց վկայության մեջ: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այժմ տարածվել է ամբողջ աշխարհում և աճում է, ինչպես երբեք՝ընդունվելով, ինչպես Քրիստոսի ժամանակ, հնազանդ մարդկանց կողմից, ովքեր հավատում են առանց տեսնելու և ձեռք տալու:

Ոչ ոք չգիտի, երբ է Տերը կրկին գալու: Բայց ներկայումս մենք ապրում ենք վտանգավոր ժամանակաշրջանում: Այսօր է ժամանակը, որ նայենք դեպի ճշմարտության Աղբյուրը և հավաստիանանք, որ մեր վկայություններն ամուր են:

Վերադառնալով իմ պատմությանը՝ հորաքրոջս և հորեղբորս տղաներն ու ես առավոտյան արթնացանք, երբ արևը պայծառ էր և երկնքը գեղեցիկ: Մի մարդ թակեց դուռը, ով փնտրում էր երեք կորած տղայի: Նա մեզ ձիեր տրամադրեց և մենք նույն մարգագետնով տուն վերադարձանք: Ես երբեք չեմ մոռանա այն ամենն, ինչ մենք տեսանք տուն վերադառնալու մեր ճանապարհին. մարդկանց բազմություն, ովքեր ողջ գիշեր մեզ են փնտրել՝ իրենց տրակտորներն ու բեռնատարները խրված ցեխի մեջ: Նրանք գտել էին մի թամբ այստեղ, մի ձի այնտեղ, և երբ տեսան մեզ տուն վերադառնալիս՝ ես զգացի նրանց հանգստությունն ու սերը: Երբ մտանք քաղաք, շատ մարդիկ էին սպասում մեզ, և նրանց առջև իմ սիրառատ տատիկը, հորեղբայրն ու հորաքույրն էին: Նրանք գրկեցին մեզ և արտասվեցին՝ անչափ ուրախ լինելով, որ գտել են իրենց կորած երեխաներին: Ինչպիսի հրաշալի հիշեցում է սա ինձ համար, որ մեր սիրառատ Երկնային Հայրը հոգ է տանում մեր մասին: Նա անհամբեր սպասում է մեր դեպի տուն վերադարձին:

Անշուշտ, մեր բոլորի շուրջ կան ձևավորվող փոթորկի նշաններ: Եկեք վերև նայենք և պատրաստվենք: Ամուր վկայության մեջ ապահովություն կա: Եկեք ամեն օր սնուցենք և ամրացնենք մեր վկայությունները:

Ես գիտեմ, որ մենք կարող ենք հավերժ ապրել միասին, որպես ընտանիքներ, որ մեր սիրառատ Երկնային Հայրը գրկաբաց սպասում է մեզ՝ Իր զավակներին: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը՝ մեր Փրկիչը, ապրում է: Ինչպես Պետրոսին, մարմինը և արյունը չհայտնեց ինձ, բայց իմ Հայրը, որ երկնքում է (տես Մատթէոս 16.15–19): Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Երեց Թերենս Մ. Վինսոն
Յոթանասունից

Ավելի մոտենալ Աստծուն

Մեր Փրկիչը կամենում է, որ մենք իսկապես սիրենք Նրան այն աստիճան, որ մենք կամենանք համապատասխանեցնել մեր կամքը Նրան կամքի հետ:

Մեր վեցամյա թոռնիկը՝ Օլին, որը քնքշորեն անվանում է ինձ «Փոփի», ինչ որ բան պետք է վերցներ մեքենայից: Նրա հայրը տան ներսում կանգնած և առանց Օլիին տեղյակ պահելու, բացեց մեքենայի դուռը հեռակառավարման միջոցով, երբ Օլին մոտեցավ մեքենային, ապա կրկին այն փակեց, երբ նա վերջացրեց: Այնուհետև Օլին ներս վազեց լայն ժպտալով:

Ողջ ընտանիքը հարցնում էր նրան. «Ինչպե՞ս կարողացար ինքնուրույն բացել մեքենայի դուռը և հետո կրկին փակել»: Նա ուղղակի ժպտում էր:

Մեր դուստրը՝ նրա մայրն ասաց. «Երևի Փոփիի նման ես անում, գուցե դու էլ նրա նման կախարդական ուժ ունես»:

Երբ դա տեղի ունեցավ երկրորդ անգամ մի քանի րոպե հետո, նրա պատասխանը շարունակվող հարցերին իր նոր բացահայտված ընդունակությունների վերաբերյալ այսպիսին էր. «Դա զարմանալի է: Կարծում եմ, դա այն պատճառով է, որ Փոփին սիրում է ինձ և իմ լավագույն ընկերներից մեկն է, և նա հոգ է տանում իմ մասին»:

Ես օրհնվել եմ իմանալով իսկապես այն զարմանահրաշ բաների մասին, որոնք տեղի են ունեցել հավատարիմ սրբերի կյանքում Աֆրիկայում, Պապուայում Նոր Գվինեա, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և Խաղաղ օվկիանոսի կղզիներում: Ես համաձայն եմ Օլիի հետ: Կարծում եմ, դա այն պատճառով է, որ հավատարիմ մարդիկ նույն զգացումն ունեն Երկնային Հոր և Փրկչի հանդեպ ինչպես Օլին է զգում իմ հանդեպ: Նրանք սիրում են Աստծուն որպես մտերիմ ընկերոջ, և Նա հոգ է տանում նրանց համար:

Այս Եկեղեցու անդամները լիազորված են և շատերն են ստանում հոգևոր վկայություն և կապում Տիրոջը հետևելու սրբազան ուխտեր: Սակայն չնայած դրան, ոմանք շարժվում են դեպի Նա, մինչդեռ մյուսները՝ ոչ: Ո՞ր կարգում եք գտնվում դուք:

Աստված պետք է լինի մեր տիեզերքի կենտրոնը՝ տառացիորեն մեր կիզակետը: Արդյո՞ք դա այդպես է: Թե՞ Նա երբեմն հեռու է մեր մտքերից և մեր սրտերի խորհուրդներից (տես Մոսիա 5.13): Նկատի ունեցեք, որ դա ուղղակի մեր սրտերի մտքերը չեն, որոնք կարևոր են, այլ «խորհուրդները»: Ինչպե՞ս են մեր վարքը և գործողություններն արտացոլում մեր խորհուրդների ազնվությունը:

Մեր որդի Բենը, երբ 16 տարեկան էր, խոսելով ցցի համաժողովում, ուղղեց հետևյալ հարցը. «Ի՞նչ կզգայիք, եթե ինչ որ մեկը խոստանար ձեզ ինչ որ բան ամեն շաբաթ և երբեք չպահեր խոստումը»: Նա շարունակեց. «Արդյո՞ք մենք լրջորեն ենք վերաբերվում մեր կողմից տրված խոստմանը, երբ ճաշակում ենք հաղորդությունը և ուխտում պահել Նրա պատվիրանները և միշտ հիշել Նրան»:

Տերը տալիս է ուղիներ՝ օգնելու հիշել Իրեն և Իր պահպանող զորությունները: Ուղիներից մեկը, որն ընդհանուր ճակատագիր է, որը բոլորիս է բաժին ընկնում՝ ձախորդությունն է (տես Ալմա 32.6): Երբ ետ եմ նայում այն փորձություններին, որոնց ես դիմակայել եմ, պարզ է դառնում, որ դրանց արդյունքում ես աճել եմ, խորացրել հասկացողությունս և փոխըմբռնումս: Դրանք մոտեցրել են ինձ իմ Երկնային Հորը և Նրա Որդուն փորձառություններով և իմ սրտում փորագրված զտմամբ:

Տիրոջ առաջնորդությունն ու հրահանգավորումը կարևոր է: Նա օգնեց Հարեդի հավատարիմ եղբորը լուծելով նրա երկու մարտահրավերներից մեկը, երբ Նա պատմեց նրան, թե ինչպես մաքուր օդ ապահովեր նավերում, որոնք հավատարմորեն կառուցել էին

(տես Եթեր 2.20)։ Բայց դիտավորյալ Տերը ոչ միայն ժամանակավորապես չլուծված թողեց լույս ապահովելու խնդիրը, այլ այնուհետև հստակեցրեց, որ Տերն Ինքն էր թույլ տալու հարվածներ ու փորձություններ, որոնք անհրաժեշտ էին դարձնելու դրանց լուծումը։ Այդ Նա էր ուղարկելու քամիներ, անձրևներ և ջրհեղեղներ (տես Եթեր 2.23–24)։

Ինչո՞ւ էր Նա դա անում։ Եվ ինչո՞ւ է Նա նախազգուշացնում մեզանից ոմանց հեռանալ վտանգի աղբյուրից, երբ Նա ուղղակի կարող է խափանել վտանգը տեղի ունենալուց։ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը պատմել է մի պատմություն կառքը տեղափոխելու մասին հոգեպես նախազգուշացված լինելու վերաբերյալ, որտեղ նա, իր կինը և երեխան քնած էին, միայն հայտնաբերելով ոչ շատ անց դրանից հետո, որ մի պտտահողմ արմատախիլ արեց մի մեծ ծառ և գցեց ճիշտ այն տեղում, որտեղ կառքն էր նախկինում կանգնած եղել (տես *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 47)։

Այդ երկու դեպքերում էլ եղանակը կարող էր հարմարեցվել՝ վտանգները վերացնելու համար։ Բայց ահա թե հարցն ինչում է, խնդիրը լուծելու փոխարեն, Տերն ուզում է, որ մենք զարգացնենք հավատք, որը կօգնի մեզ խնդիրները լուծելիս ապավինել Իրեն և վստահել Իրեն։ Այդ ժամանակ մենք կկարողանանք զգալ Նրա սերն ավելի մշտապես, ավելի ուժգնորեն, ավելի հստակորեն և ավելի անձնապես։ Մենք միավորվում ենք Նրա հետ և կարող ենք դառնալ Նրա նման։ Նրա նպատակն է, որ մենք դառնանք Իր նման։ Իրականում, դա Նրա փառքն է, ինչպես նաև Նրա աշխատանքը (տես Մովսես 1.39)։

Մի պատանի փորձում էր մաքրել աղբոտ տարածքը իր տան ետևի մասում, որպեսզի իր մեքենաներով խաղար այնտեղ։ Այնտեղ կար մի մեծ քար, որը խանգարում էր նրա աշխատանքին։ Տղան հրում էր և քաշում իր ողջ ուժով, բայց որքան էլ շատ էր տքնում, քարը տեղից չէր շարժվում։

Քոլիվիլ, Տեխաս

Հայրը որոշ ժամանակ նայելուց հետո, մոտեցավ իր որդուն և ասաց. «Դու պետք է օգտագործես քո ողջ ուժը շարժելու այս մեծության քարը»։

Տղան պատասխանեց. «Ես օգտագործեցի իմ ողջ ուժը»։

Նրա հայրն ուղղեց նրան. «Ոչ դու չես գործածել։ Դու դեռ չես դիմել իմ օգնությանը»։

Ապա նրանք միասին կռացան և քարը հեշտությամբ տեղից շարժեցին։

Ընկերոջս հայրը՝ Վահբա Ռոմը, Պապուա Նոր Գվինեայի առաջին ցցի նախագահը, նույնպես ուսուցանվեց, որ կարիքի դեպքում կարող էր դիմել իր Երկնային Հորը։ Նա և նրա համագյուղացիները կարողանում էին գոյատևել միայն իրենց աճեցրած բերքով։ Մի օր նա կրակ վառեց իր հողաբաժինը մաքրելու համար, որպեսզի ցաներ։ Սակայն, դրան նախորդել էր երկարատև չոր ժամանակահատված, և բուսականությունը շատ չոր էր։ Այսպիսով հրդեհը դարձավ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի պատմածի պես, ինչպես մեր մարգարեն ինքը նկարագրեց վերջին գերագույն համաժողովի ընթացքում (տես «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Լիահոնա,* մայիս 2013, 89–90)։ Այն սկսեց տարածվել դեպի խոտհարքները և մացառուտները և նրա որդու խոսքերով «մի հրեշավոր վիթխարի հրդեհ» բռնկվեց։

Նա վախենում էր իր համագյուղացիների համար և նրանց բերքի հնարավոր կորստի համար։ Եթե դրանք ոչնչանային, նա ենթակա կլիներ գյուղի դատաստանին։ Երբ հասկացավ, որ չի կարող հրդեհը մարել, նա հիշեց Տիրոջը։

Այժմ ես մեջբերում եմ անում նրա որդուց՝ իմ ընկերոջից. «Նա ծնկի իջավ բլրի լանջին թփուտների մեջ և սկսեց աղոթել Երկնային Հորը կրակը դադարեցնելու համար։ Հանկարծ հայտնվեց մի մեծ սև ամպ վերևում, որտեղ նա աղոթում էր և անձրևն այնպես ուժեղ էր, բայց միայն այն մասում, որտեղ հրդեհն էր վառվում։ Երբ նա նայեց շուրջը, երկինքը հստակ էր ամենուրեք, բացի այն տեղից որտեղ բոցերն էին վառվում։ Նա չէր կարողանում հավատալ, որ Տերը կպատասխաներ իր նման մի հասարակ մարդու և նա կրկին ծնկի եկավ և երեխայի նման արտասվեց։ Նա ասաց, որ դա ամենաքաղցր զգացումն էր» (տես Ալմա 36.3)։

Մեր Փրկիչն ուզում է, որ մենք իսկապես իրեն այնքան սիրենք, որ մենք կամենանք համապատասխանեցնել մեր կամքը Նրա կամքին։ Այդ ժամանակ մենք կարող ենք զգալ Նրա սերը և ճանաչել Նրա փառքը։ Այդ ժամանակ Նա կարող է օրհնել մեզ, ինչպես Նա է կամենում։ Սա պատահեց Հելամանի որդի Նեփիի հետ, որը հասավ այն աստիճանին, որ Տերը նրան լիովին վստահեց և դրա շնորհիվ, կարողացավ օրհնել նրան այն ամենով, ինչ նա խնդրեց (տես Հելաման 10.4–5)։

Յան Մարթելի *«Փայլի կյանքը»* գեղարվեստական գրքում, հերոսն արտահայտում է իր զգացումները Քրիստոսի հանդեպ. «Ես չէի կարողանում Նրան գլխիցս հանել։ Մինչև աժմ չեմ կարողանում։ Ես անցկացրեցի ամբողջ երեք օր Նրա մասին մտածելով։ Որքան Նա ավելի շատ էր ինձ անհանգստացնում, այնքան ավելի քիչ էի կարողանում Նրան մոռանալ։ Եվ որքան ավելի շատ էի իմանում Նրա մասին, այնքան ավելի քիչ էի կամենում Նրան լքել» ([2001], 57)։

Փրկչի հանդեպ ես ճիշտ այդպես եմ զգում։ Նա միշտ մոտ է,

հատկապես սրբազան վայրերում և կարիքի դեպքում, և երբեմն, երբ ամենաքիչն եմ սպասում, ես միշտ գրեթե այնպիսի զգացում եմ ունենում կարծես նա ուսիս թփթփացնում է, իմաց տալով, որ Նա սիրում է ինձ: Ես կարող եմ վերադարձնել այդ սերը իմ իսկ անկատար ձևով՝ Նրան տալով իմ սիրտը (տես ՎևՈւ 64.22, 34):

Մի քանի ամիս առաջ ես նստած էի Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետ, երբ նա միսիոներներ էր նշանակում իրենց միսիաներում: Երբ մենք մեկնում էինք, նա սպասեց ինձ, և երբ մենք քայլում էինք, նա դրեց ձեռքը ուսիս: Ես հիշեցրեցի նրան, որ նա նույն բանն արել էր նախկինում Ավստրալիայում: Նա ասաց. «Դա այն պատճառով է, որ ես սիրում եմ քեզ»: Եվ ես գիտեի, որ դա ճիշտ էր:

Ես հավատում եմ, որ եթե մենք Փրկչի հետ քայլելու արտոնությունն ունենայինք, ճիշտ նույն կերպ կզգայինք Նրա ձեռքը մեր ուսին: Դեպի Էմմաուս գնացող աշակերտների պես մեր սրտերը կբորբոքվեին «մեր ներսում» (Ղուկաս ԻԴ.32): Սա է Նրա ուղերձը. «Եկ և տես» (Հովհաննես Ա.39): Իր ձեռքը մեր ուսին միասին քայլելը անձնական, ոգեշնչող կոչ է:

Թող որ մենք բոլորս Ենովսի պես այնպես վստահ զգանք, ինչպես արտացոլված է նրա կարճ բայց խորիմաստ գրքի վերջին հատվածում. «Ես հրճվում եմ այն օրով, երբ իմ մահկանացուն կհագնի անմահություն և կկանգնի նրա առջև. այն ժամանակ կտեսնեմ ես նրա երեսը հաճույքով, և նա կասի ինձ. արի ինձ մոտ, դու, օրհնված, քեզ համար իմ Հոր ապարանքներում տեղ կա պատրաստված» (Ենովս 1.27):

Բազում փորձառությունների շնորհիվ և այն զորությամբ, որով Հոգին վկայել է ինձ, ես վկայում եմ բացարձակ համոզվածությամբ, որ Աստված ապրում է: Ես զգում եմ Նրա սերը: Դա ամենահաճելի զգացումն է: Թող որ մենք անենք անհրաժեշտ ամեն բանհամապատասխանեցնելու մեր կամքը Նրա կամքին և ճշմարտապես սիրենք Նրան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Հավերժական որոշումներ

Հոգևոր աճի համար անչափ կարևոր է անձնական որոշումները կայացնելու ձեր ազատության խելամիտ օգտագործումը՝ այժմ և հավիտյան:

Ամ սիրելի եղբայրներ և քույրեր, յուրաքանչյուր օրը որոշում կայացնելու օր է: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է մեզ, որ «որոշումները բնորոշում են ճակատագիրը»:[1] Հոգևոր աճի համար անչափ կարևոր է անձնական որոշումները կայացնելու ձեր ազատության խելամիտ օգտագործումը՝ այժմ և հավիտյան: Երբեք շատ երիտասարդ չեք սովորելու համար, երբեք շատ ծեր չեք փոխվելու համար: Սովորելու և փոխվելու ձեր փափագը՝ հավերժական առաջընթացի համար աստվածայնորեն ներշնչված ձգտման արդյունք է:[2] Յուրաքանչյուր օրը հավերժական որոշումներ կայացնելու հնարավորություն է ընձեռում:

Մենք հավերժական էակներ ենք՝ երկնային ծնողների հոգևոր զավակներ: Աստվածաշնչում ասվում է, որ՝ «Աստված ստեղծեց մարդը իր պատկերովը. . . . արու և էգ ստեղծեց նորանց»:[3] Վերջերս երեխաների երգչախմբի կատարմամբ լսեցի «Աստծո զավակն եմ»[4] սիրելի երգը: Ինձ հետաքրքիր էր՝ «Ինչո՞ւ չեմ լսել այդ երգն ավելի հաճախ մայրերի կամ հավատարիմ հայրերի կատարմամբ»: Արդյո՞ք մենք *բոլորս* էլ Աստծո զավակները չենք: Իրականում, մեզանից ոչ ոք *երբեք չի դադարում* Աստծո զավակը լինելուց:

Որպես Աստծո զավակներ, մենք պետք է սիրենք Նրան մեր ողջ սրտով և հոգով, անգամ ավելի, քան սիրում ենք մեր երկրային ծնողներին:[5] Մենք պետք է սիրենք մեր մերձավորներին որպես եղբայրներ և քույրեր: Սրանից ավելի մեծ պատվիրան չկա:[6] Եվ մենք պետք է միշտ հարգենք մարդկային կյանքի արժեքը՝ իր բոլոր փուլերում:

Սուրբ գրությունն ուսուցանում է, որ մարմինը և ոգին մարդու հոգին են:[7] Որպես երկակի էակ ձեզանից յուրաքանչյուրը կարող է երախտապարտ լինել Աստծուն Իր անգին պարգևների՝ մարմնի և հոգու համար:

Մարդկային մարմինը

Որպես բժիշկ իմ մասնագիտական տարիները ինձ մոտ խորը հարգանք են առաջացրել մարդկային մարմնի հանդեպ: Որպես պարգև ձեզ համար Աստծո կողմից ստեղծված մարմինը հիասքանչ է:

Ձեր աչքերը տեսնում են, ականջները լսում են, իսկ մատերը զգում են ձեր շուրջը գտնվող ամեն հրաշալի բան: Ձեր ուղեղն օգնում է սովորել, մտածել և կշռադատել: Ձեր սիրտն օր ու գիշեր անխոնջ աշխատում է անգամ առանց ձեր գիտակցության:[8]

Ձեր մարմինը պաշտպանում է ինքն իրեն: Ցավը գալիս է որպես զգուշացում, որ ինչ-որ բան այն չէ, և ուշադրության կարիք կա: Ժամանակ առ ժամանակ վարակիչ հիվանդություններ են գլուխ բարձրացնում, և այդ դեպքում հակամարմիններ են ձևավորվում, որոնք մեծացնում են ձեր դիմադրողականությունը՝ տվյալ վարակի դեմ:

Ձեր մարմինն ինքնիրեն վերականգնվում է: Կտրվածքներն ու կապտուկները բուժվում են: Կոտրված ոսկորները կրկին ամրանում են: Ես նշեցի ձեր մարմնի Աստվածատուր զարմանալի հատկություններից միայն մի քանիսը:

Նույնիսկ այդ դեպքում, եթե ոչ ամեն մարդու մեջ, առնվազն ամեն ընտանիքում կան որոշակի ֆիզիկական խնդիրներ, որոնց համար հատուկ հոգածություն է պահանջվում:[9] Տերը տվել է նման խնդիրներ հաղթահարելու օրինակը: Նա ասել է. «Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. . . . քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց . . . և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»:[10]

Երբեմն հրաշալի հոգիներ են բնակվում անկատար մարմիններում:[11] Նման մարմնի պարգևը կարող է ամրացնել ընտանիքը, երբ ծնողներն ու տան մյուս երեխաները պատրաստակամորեն հոգ են տանում հատուկ կարիքներով ծնված երեխայի համար:

Ծերացման ընթացքը, ինչպեսև՝ մահը պարգև են Աստծուց: Ի վերջո, ձեր մահկանացու մարմնի մահանալը կարևոր դեր է խաղում Աստծո երջանկության մեծ ծրագրում:[12] Ինչո՞ւ: Որովհետև մահը թույլ է տալիս, որ ձեր հոգին վերադառնա Իր մոտ:[13] Հավերժական տեսակետից մահը վաղահաս է լինում նրանց

համար, ովքեր պատրաստ չեն հանդիպելու Աստծուն:

Քանի որ մարմինն այդքան կարևոր մասն է Աստծո հավերժական ծրագրի, զարմանալի չէ, որ Պողոս Առաքյալը բնութագրում է այն որպես «Աստծո տաճար»:[14] Ամեն անգամ հայելու մեջ նայելիս՝ ձեր մարմնին նայեք որպես ձեր տաճար: Ամեն օր այդ ճշմարտությունը երախտագիտությամբ թարմացնելը կարող է դրական ազդեցություն թողնել ձեր մարմնի մասին հոգ տանելու և այն խելամտորեն օգտագործելու ձեր որոշումների վրա: Իսկ այդ որոշումները կբնորոշեն ձեր ճակատագիրը: Ինչպե՞ս կարող է դա լինել: Որովհետև ձեր մարմինը ձեր հոգու տաճարն է: Եվ այն, թե ինչպես կօգտագործեք ձեր մարմինը, կազդի ձեր հոգու վրա: Ձեր հավերժական ճակատագիրը բնորոշող որոշումներից են՝

- Ինչպե՞ս եք որոշում հոգ տանել և օգտագործել ձեր մարմինը:
- Ինչպիսի՞ հոգևոր հատկանիշներ եք ցանկանում զարգացնել:

Մարդկային հոգին

Ձեր հոգին հավերժական էություն է: Տերն ասաց Իր մարգարե Աբրահամին. «Դու սրանցից մեկն ես. դու ընտրվել էիր նախքան քո ծնվելը»:[15] Տերը նման բան ասել է Երեմիայի[16] և շատ-շատերի մասին:[17] Նա նույնիսկ դա ասել է ձեր մասին:[18]

Ձեր Երկնային Հայրը ճանաչում է ձեզ երկար ժամանակ: Դուք, որպես Նրա որդի կամ դուստր, ընտրվել եք Նրա կողմից, որ գաք երկիր այս ճշգրիտ պահին և լինեք ղեկավար Նրա մեծ աշխատանքում:[19] Դուք ընտրվել եք *ոչ* թե ձեր մարմնական առանձնահատկությունների, այլ *հոգևոր* հատկանիշների համար, որոնք են՝ քաջությունը, համարձակությունը, սրտի մաքրությունը, ճշմարտության ծարավը, իմաստության քաղցը և մյուսներին ծառայելու ցանկությունը:

Նախքան ծնվելը դուք զարգացրել եք այդ գծերից մի քանիսը: Մյուսները կարող եք զարգացնել այստեղ երկրի վրա[20] հաստատակամորեն ձգտելով դրան:[21]

Հոգևոր կարևոր հատկանիշը ինքնատիրապետումն է՝ դատողությունը ցանկությունից վեր դասելու ուժը: Ինքնատիրապետումը զարգացնում է ամուր խիղճ: Իսկ խիղճը որոշում է ձեր բարոյական արձագանքը դժվար, գայթակղիչ և փորձող իրավիճակներում: Ծոմապահությունն օգնում է, որ ձեր հոգին գերիշխանություն զարգացնի ձեր ֆիզիկական ցանկությունների վրա: Ծոմը նաև մեծացնում է երկնքի օգնությունը ստանալու հնարավորությունը, քանի որ այն ուժեղացնում է ձեր աղոթքները: Ինչո՞ւ ինքնատիրապետման կարիքն ունենք: Աստված ուժեղ ցանկություններ է դրել մեր մեջ սնուցման և սիրո համար, որը էական է մարդկային ընտանիքի գոյատևման համար:[22] Երբ տիրապետում ենք մեր ցանկությունները Աստծո օրենքների սահմաններում, մենք կունենանք երկար կյանք, մեծ սեր և լիակատար ուրախություն:[23]

Զարմանալի չէ, որ հիմնականում Աստծո երջանկության ծրագրից շեղող գայթակղությունները գալիս

են այդ կարևոր, Աստվածատուր ցանկությունները սխալ գործածելու պատճառով: Մեր ցանկությունները վերահսկելը միշտ չէ որ հեշտ է տրվում: Մեզանից ոչ ոք չի կարող կատարելապես կառավարել դրանք:[24] Սխալներ են կատարվում: Մեղքեր են գործվում: Այդ դեպքում, ի՞նչ կարող ենք անել: Մենք կարող ենք սովորել դրանցից: Եվ կարող ենք իսկապես ապաշխարել:[25]

Մենք կարող ենք փոխել մեր վարքը: Մեր բուն ցանկությունները կարող են փոխվել: Ինչպե՞ս: Կա միայն մեկ ելք: Իրական, այսինքն՝ մշտական փոփոխությունը կարող է գալ միայն Հիսուս Քրիստոսի Քավության բժշկող, մաքրագործող և օժանդակող զորությունից:[26] Նա սիրում է ձեզ՝ յուրաքանչյուրիդ:[27] Նա թույլ է տալիս ձեզ ստանալ Իր զորությունից, երբ պահում եք Նրա պատվիրանները՝ ձգտումով, անկեղծորեն և ճշգրտորեն: Դա այդքան պարզ ու հստակ է: Հիսուս Քրիստոսի ավետարանը փոփոխության ավետարան է:[28]

Մարմնի ցանկությունները զսպող ամուր հոգին դառնում է զգացմունքների և կրքերի կառավարիչը, ոչ թե՝ գերին: Նման ազատությունը հոգու համար այնքան կարևոր է, որքան թթվածինը՝մարմնի համար: Ինքն իրեն գերությունից ազատելը իրական ազատագրում է:[29]

Մենք «ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք . . . կամ ընտրելու գերություն և մահ»:[30] Երբ մենք ընտրում ենք դեպի ազատություն և հավերժական կյանք տանող վեհ ուղին, այն ներառում է ամուսնությունը:[31] Վերջին Օրերի Սրբերը հայտարարում են, որ «տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար»: Մենք նաև գիտենք, որ «սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի»:[32]

Տղամարդու և կնոջ ամուսնությունն առանցքն է Տիրոջ վարդապետության և կարևոր դեր ունի Աստծո հավերժական ծրագրում: Տղամարդու և կնոջ ամուսնությունը երկրի վրա և երկնքում լիարժեք կյանքի Աստծո նախատեսած օրինակն է: Ամուսնության Աստծո օրինակը չի կարող չարաշահվել, սխալ ընկալվել կամ սխալ մեկնաբանվել,[33] եթե փափագում եք լիարժեք ուրախություն: Աստծո ամուսնության օրինակը պաշտպանում է ծննդաստեղծ սուրբ զորությունը և ամուսնական կենակցության ուրախությունը:[34] Մենք գիտենք, որ Ադամը և Եվան ամուսնացան Աստծո կողմից, նախքան կապրեին ամուսնուն և կնոջը միավորող ուրախությունը:[35]

Մեր օրերում քաղաքացիական կառավարությունները հատկապես հետաքրքրված են պաշտպանելու ամուսնությունը, քանի որ ամուր ընտանիքներն աճող սերնդի առողջության, կրթության, բարօրության և բարգավաճման լավագույն գրավականն են:[36] Սակայն քաղաքացիական կառավարությունների վրա մեծապես ազդում են սոցիալական ուղղվածությունները և աշխարհիկ փիլիսոփայությունները, երբ նրանք գրում, վերարտադրում և գործադրում են օրենքները: Անկախ նրանից, թե ինչ քաղաքացիական օրենսդրություն է ընդունվում, ամուսնության և բարոյականության վերաբերյալ, Տիրոջ վարդապետությունը *չի կարող փոխվել*:[37] Հիշեք՝-մեղքը, եթե անգամ մարդու կողմից օրինականացվում է, դեռևս մեղք է Աստծո աչքում:

Ճիշտ է, մենք պետք է ընդօրինակենք մեր Փրկչի բարությունն ու կարեկցանքը և արժեվորենք Աստծո բոլոր զավակների իրավունքներն ու զգացմունքները, սակայն չենք կարող փոխել Նրա վարդապետությունը: Մենք ոչ թե պետք է փոխենք, այլ պետք է ուսումնասիրենք, հասկանանք և պաշտպանենք Նրա վարդապետությունը:

Կյանքի Փրկչի ուղին բարի է: Այն ընդգրկում է մաքրաբարոյություն՝ նախքան ամուսնությունը և լիարժեք հավատարմություն՝ ամուսնության ընթացքում:[38] Տիրոջ ուղին մեզ համար՝ հարատև երջանկություն ունենալու միակ ուղին է: Այն պարգևում է երկարատև հանգստություն մեր հոգիներին և խաղաղություն՝ մեր տներին: Իսկ ամենակարևորը, Նրա ուղին տանում է մեզ տուն՝ Նրա և մեր Երկնային Հոր մոտ, դեպի հավերժական կյանք և վեհացում:[39] Դա է Աստծո գործի և փառքի բուն էությունը:[40]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, յուրաքանչյուր օրը որոշում կայացնելու օր է, և մեր որոշումները բնորոշում են մեր ապագան: Մի օր մենք կկանգնենք Տիրոջ առաջ՝ դատվելու:[41] Մեզանից յուրաքանչյուրն անձնական հարցազրույց կանցնի Հիսուս Քրիստոսի հետ:[42] Մենք հաշվետու կլինենք մեր որոշումների համար, որ կայացրել ենք մեր մարմնի, հոգևոր

հատկանիշների և այն ամենի վերաբերյալ, թե ինչպես ենք պատվել ամուսնության և ընտանիքի Աստծո օրինակը: Իմ ջերմեռանդ աղոթքն է, որ մենք խելամտորեն կայացնենք մեր ամենօրյա որոշումները, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, "Decisions Determine Destiny" (Church Educational System fireside, Nov. 6, 2005), 3; speeches.byu.edu.
2. Հավերժական առաջընթացի գաղափարն է ներկայացնում Վ. Վ. Ֆելփսը «Եթե կարող եք շտապեք Քոլոբ» օրհներգում (*Hymns,* no. 284): 4-րդ տունն ասում է՝ «Անվերջ է առաքինությունը, / Անվերջ է ուժը, / Անվերջ է իմաստությունը, / Անվերջ է լույսը: / Անվերջ է միությունը, / Անվերջ է երիտասարդությունը, / Անվերջ է քահանայությունը, / Անվերջ է ճշմարտությունը»: 5-րդ տունն ամփոփում է՝ «Անվերջ է փառքը, / Անվերջ է սերը, / Անվերջ է գոյությունը,/ Մահ չկա երկնքում»:
3. Ծննդոց 1.27; տես նաև Կողոսացիս 3.10; Ալմա 18.34; Եթեր 3.15; Մովսես 6.9:
4. «Աստծո զավակն եմ», *ՀՄԵ,* էջ 58:
5. Տես Մատթեոս 10.37:
6. Տես Մարկոս 12.30–31:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.15:
8. Այլ Աստվածատուր մեխանիզմներ ևս աշխատում են ձեր մարմնում: Մեր գոյատևման համար կարևոր են այնպիսի էլեմենտները, ինչպիսիք են՝ նատրիումը, կալիումը և կալցիումը, և այնպիսի միացությունները, ինչպիսիք են՝ ջուրը, գլյուկոզան և սպիտակուցները: Մարմինը գործ ունի այնպիսի գազերի հետ, ինչպիսիք են՝ թթվածինը և ածխաթթու գազը: Այնստեղծում է հորմոններ, ինչպիսիք են՝ ինսուլինը, ադրենալինը և տիրոքսինը: Դրանց և շատ այլ միացությունների մակարդակները մարմնում ինքնակարգավորվում են որոշակի սահմաններում: Ինքնակարգավորող կապեր գոյություն ունեն մարմնի գեղձերի միջև: Օրինակ, գլխուղեղի հիմքում ընկած մակուղեղը ստեղծում է մի հորմոն, որը խթանում է մակերիկամային գեղձի աշխատանքը, որի արդյունքում ստեղծվում է մակերիկամային կեղևային հորմոնը: Կեղևային հորմոնների մակարդակի բարձրացումը իր հերթին ճնշում է մակուղեղի հորմոնի արտադրությունը և ընդհակառակը: Ձեր մարմնի ջերմաստիճանը պահպանվում է իր նորմայի սահմաններում՝ 98.6°F կամ 37°C, լինեք դուք հասարակածի վրա, թե Հյուսիսային բևեռում:
9. Որոշ պայմաններ հեշտությամբ են երևում, մյուսները կարող են թաքնվել: Որոշները ժառանգական են, որոշները՝ ոչ: Որոշ մարդիկ նախահակվածություն ունեն, քաղցկեղի հանդեպ, մյուսները՝ ալերգիաների և այլն: Մեզանից յուրաքանչյուրը կարող է զգոն լինել իր թուլության հանդեպ և խոնարհաբար սովորել այն, որ Տերը ուսուցանում է՝ թուլությունը կարող է ուժեղ կողմ դառնալ:
10. Եթեր 12.27:
11. Որոշ խնդիրներ լիովին չեն շտկվի մինչև Հարությունը, երբ «բոլոր բաները պիտի վերականգնվեն իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով» (Ալմա 40.23):
12. Տես Ալմա 42.8:
13. Սաղմոսողը գրել է. «Պատուական է Տիրոջ առաջին նորա սուրբերի մահը» (Սաղմոս 116.15): Մահը թանկ է, քանի որ դա Սրբերի համար «տունդարձ» է՝ Տիրոջ մոտ:
14. Ա Կորնթացիս 3.16; 6.19; տես նաև 6.19:
15. Աբրահամ 3.23
16. Տես Երեմիայի 1.5:
17. Տես Ալմա 13.2–3:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 138.55–56:
19. Տես Ալմա 13.2–3; Վարդապետություն և Ուխտեր 138.38–57:
20. «Հավատքի, առաքինության, գիտության, ժուժկալության, համբերության, եղբայրասիրության, աստվածայնության, գթության, խոնարհության [և] ջանասիրության» (Վարդապետություն և Ուխտեր 4.6) հատկանիշները այն հոգևոր պարգևներն են, որ կարող ենք զարգացնել: Երախտագիտությունը մեկ այլ հոգևոր հատկանիշ է, որ կարող ենք զարգացնել: Երախտագիտությունը ձևավորում է տրամադրություն և արդյունավետություն: Իսկ երբ «ծնվեք Աստծուց հոգեպես», դուք կարող եք երախտագիտությամբ ստանալ Նրա պատկերը ձեր դեմքին (տես Ալմա 5.14):
21. Տես Ա Կորնթացիս 12.1–31; 14.1–12; Մորոնի 10.8–19; Վարդապետություն և Ուխտեր 46.10–29:
22. Ոմանք հակված են շատակերությանը: «Գիրությունը հասել է համաճարակային չափերի աշխարհում, ամեն տարի առնվազն 2.8 մլն մարդ է մահանում ավելնորդ քաշի պատճառով» ("10 Facts on Obesity," World Health Organization, Mar. 2013, www.who.int/features/factfiles/obesity/en): Մյուսները գայթակղվում են շատ քիչ ուտել: Անորեքսիան և բուլիմիան կործանում են շատ կյանքեր, ամուսնություններ և ընտանիքներ: Իսկ ոմանք էլ գայթակղվում են սեռական տենչանքներով, որոնք արգելված են մեր Արարչի կողմից: *Ձեռնարկ 2. Եկեղեցու ղեկավարումը* բաժնում տրվում է բարգաբանումը. «Տիրոջ ողջախոհության օրենքը դա օրինական ամուսնությունից դուրս սեռական հարաբերություններից զերծ մնալն է և հավատարմությունը ամության մեջ: . . . Շնությունը, ապօրինի կենակցությունը, համասեռամոլությունը և նման այլ անսուրբ, անբնական կամ անպարկեշտ հարաբերությունները մեղսավոր են»: Շարունակենք մեջբերել ձեռնարկից. «Համասեռամոլ վարքը խախտում է Աստծո պատվիրանները, հակասում է մարդկային սեռական համակարգի նպատակներին, և մարդկանց զրկում է այն օրհնություններից, որոնք կարելի է ձեռք բերել ընտանեկան կյանքում և ավետարանի փրկող արարողություններում: . . . Համասեռամոլ վարքին դեմ արտահայտվելով՝ Եկեղեցին միևնույն ժամանակ ըմբռնումով և հարգանքով օգնության ձեռք է մեկնում համասեռամոլ հակումներ ունեցող անհատներին» ([2010], 21.4.5; 21.4.6):
23. Տես Ա Կորնթացիս 6.9–20; Հակոբոս 1.25–27; Վարդապետություն և Ուխտեր 130.20–21: Եվ մենք պետք է միշտ հիշենք, որ «մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25):
24. Մահկանացու կյանքը փորձնական ժամանակաշրջան է, ինչպես բացատրվում է սուրբ գրության մեջ. «Դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.25):
25. Տես Մոսիա 4.10; Ալմա 39.9; Հելաման 15.7: *Ձեռնարկ 2*-ում ներառում է այս ուղերձը. «Համասեռամոլ վարքը կարող է ներվել անկեղծ ապաշխարության շնորհիվ» (21.4.6):
26. Հիսուս Քրիստոսի Քավության և ավետարանի սկզբունքներին հնազանդվելու շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել (տես Վարդապետություն և Ուխտեր 138.4; Հավատո Հանգանակ 1.3):
27. Տես Եթեր 12.33–34; Մորոնի 8.17:
28. Տես Մոսիա 5.2; Ալմա 5.12–14:
29. Տես Հռովմայեցիս 8.13–17; Գաղատացիս 5.13–25; Վարդապետություն և Ուխտեր 88.86:
30. 2 Նեփի 2.27:
31. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.1–4:
32. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
33. Տես Մատթեոս 19.4–6; Մոսիա 29.26–27; Հելաման 5.2:
34. Յուրաքանչյուր մարդ ծնվում է յուրահատուկ էությամբ, քրոմոսոմներով և ԴՆԹ-ով (Դեզօքսիռիբոնուկլեինային թթու): ԴՆԹ-ն մոլեկուլ է, որը կոդավորում է գենետիկական հրահանգներ, որոնք օգտագործվում են կենդանի բջիջների զարգացման և գործունեության համար: Յուրաքանչյուր մարդու ԴՆԹ-ն ստեղծվում է, երբ մոր և հոր ԴՆԹ-ն միավորվում է, ստեղծելով նոր մարմնի ԴՆԹ-ն՝ մոր, հոր և երեխայի միասնական գործընկերությունը:
35. Տես Ծննդոց 2.24–25; 3.20–21; 4.1–2, 25:
36. Դր. Պատրիկ Ֆ. Ֆագանը գրել է. «Անփոխարինելի հիմքը, որից կախված է տնտեսության ճակատագիրը ամուսնացած զույգի ընտանիքն է՝ հատկապես երեխաներով լի, ամեն շաբաթ երկրպագող ընտանիքը: Յուրաքանչյուր ամուսնություն ստեղծում է նոր տուն, անկախ տնտեսական միավոր, որն ունի եկամուտ, ծախսում է, խնայում և ներդնում» ("The Family GDP: How Marriage and Fertility Drive the Economy," *The Family in America,* vol. 24, no. 2 [Spring 2010], 136):
37. Տես Ելից 20.14; Ղևտացիս 18.22; 20.13; Երկրորդ Օրինաց 5.18; Մատթեոս 5.27–28; Մարկոս 10.19; Ղուկաս 18.20; Հռովմայեցիս 1.26–27; 13.9; Մոսիա 13.22; 3 Նեփի 12.27–28; Վարդապետություն և Ուխտեր 42.24; 59.6:
38. Տես Gordon B. Hinckley, "This Thing Was Not Done in a Corner," *Ensign,* Nov. 1996, 49:
39. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
40. Տես Մովսես 1.39:
41. Տես 2 Նեփի 9.41, 46; Մոսիա 16.10:
42. Մենք կդատվենք ըստ մեր գործերի և մեր սրտերի ցանկությունների (տես Վարդապետություն և Ուխտեր 137.9; տես նաև Եբրայեցիս 4.12; Ալմա 18.32; Վարդապետություն և Ուխտեր 6.16; 88.109):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մինչև նոր հանդիպում

Թող որ մենք ցուցաբերենք ավելի մեծ բարություն միմյանց հանդեպ, և թող որ մենք միշտ տեսնենք մեզ Տիրոջ գործի մեջ:

Իմ եղբայրներ և քույրեր, սիրտս լցված է, մենք մոտենում ենք Եկեղեցու այս հրաշալի համաժողովի ավարտին: Մենք սնուցվեցինք հոգեպես, լսելով նրանց խորհուրդները և վկայությունները, ովքեր մասնակցեցին յուրաքանչյուր նիստին:

Մենք օրհնված ենք, որ կարող ենք հավաքվել այստեղ՝ Համաժողովների վեհաշուք կենտրոնում խաղաղության և ապահովության պայմաններում: Մենք ականատես ենք համաժողովի աննախադեպ ծածկույթի, որը հասնում է մարդկանց ամենուրեք՝ բոլոր մայրցամաքներով: Թեև ֆիզիկապես մենք հեռու ենք ձեզանից շատերից, մենք զգում ենք ձեր հոգին:



Մեր Եղբայրներին, ովքեր ազատվեցին այս համաժողովին իրենց կոչումներից, թույլ տվեք, որ ես արտահայտեմ իմ սրտանց շնորհակալությունը ամբողջ Եկեղեցու կողմից՝ նվիրված ծառայության տարիների համար: Անթիվ են նրանք, ովքեր օրհնվել են Տիրոջ աշխատանքին կատարած ձեր ներդրումների շնորհիվ:

Ես երախտագիտությունս եմ հայտնում Թաբենաքլ երգչախմբին և մյուս բոլոր երգչախմբերին, որոնք մասնակցեցին այս համաժողովին: Երաժշտությունը սքանչելի էր և մեծապես խորացրեց Հոգու ներկայությունը, որը մենք զգացինք յուրաքանչյուր նիստին:

Ես շնորհակալ եմ ձեզ ինձ համար և Բարձրագույն բոլոր Իշխանությունների և Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաների համար ասված ձեր աղոթքների համար: Մենք ամրանում ենք դրանցով:

Թող երկնային օրհնությունները լինեն ձեզ հետ: Թող ձեր տները լցված լինեն սիրով և հոգատարությամբ և Տիրոջ Հոգով: Թող դուք մշտապես սնուցեք ավետարանի մասին ձեր վկայությունները, որպեսզի դրանք պաշտպանություն լինեն ձեզ համար թշնամու գրոհների ժամանակ:

Համաժողովն ավարտվեց: Թող որ մենք ապահով վերադառնանք մեր տները: Թող Հոգին, որը մենք զգացինք այստեղ, լինի և մնա մեզ հետ, երբ մենք գնանք և անենք այն բաները, որոնք զբաղեցնում են մեր յուրաքանչյուր օրը: Թող որ մենք ցուցաբերենք ավելի մեծ բարություն միմյանց հանդեպ, և թող որ մենք միշտ տեսնենք մեզ Տիրոջ գործի մեջ:

Իմ եղբայրներ և քույրեր, թող Աստված օրհնի ձեզ: Թող Նրա խոստացված խաղաղությունը լինի ձեզ հետ այժմ և հավիտյան: Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս մինչև նոր հանդիպում վեց ամիս անց: Մեր Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ | *28 սեպտեմբերի, 2013թ.*



Լինդա Կ. Բըրթըն
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Ուխտերը պահելու զորությունը, ուրախությունը և սերը

Ես հրավիրում եմ բոլորիս խորհել, թե որքան ենք սիրում Փրկչին, որպես չափորոշիչ ընդունելով, թե որքան ուրախությամբ ենք մենք պահում մեր ուխտերը:

Ուզում եմ խոսքս սկսել պատմելով մի սրտահույզ պատմություն:

Մի երեկո մարդը կանչեց իր հինգ ոչխարներին, որ գան և գիշերեն փարախում: Նրա ընտանիքը մեծ հետաքրքրությամբ էր դիտում, թե ինչպես էր նա պարզապես կանչում՝ եկեք, և անմիջապես բոլոր հինգ ոչխարները, բարձրացնելով գլուխները, հետևում էին նրան: Չորս ոչխարները վազեցին նրա մոտ: Սիրալիր քնքշությամբ նա շոյեց չորսի գլուխը: Ոչխարները ճանաչում էին նրա ձայնը և սիրում էին նրան:

Սակայն հինգերորդ ոչխարը չմոտեցավ: Դա մի մեծ մաքի էր, որից նախկին տերը մի քանի օր առաջ հրաժարվել էր, ասելով, որ նա վայրենի էր, կամակոր և միշտ մյուս ոչխարներին շեղում էր ուղուց: Նոր տերը վերցրել էր այդ ոչխարին և մի քանի օր կապել էր ցցից, որ նա տեղում մնալ սովորեր: Նա համբերատար սովորեցնում էր նրան սիրել իրեն և մյուս ոչխարներին, մինչև որ մի օր նրա վզից միայն մի կարճ պարան էր կախված, բայց նա ցցից կապված չէր:

Այդ երեկո նրա ընտանիքը տեսավ, թե ինչպես այդ մարդը, մոտենալով դաշտի եզրին, կանգնած մաքիին՝ կրկին քնքշորեն ասաց. «Արի, դու այլևս կապված չես: Դու ազատ ես»: Ապա սիրալիր շոյեց նրա գլուխը և նրանք երկուսով քայլեցին դեպի փարախը:[1]

Այս պատմության ոգով, ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին օգնի մեզ այս երեկո միասին սովորել ուխտերը պահելու մասին: Կապել և պահել ուխտեր նշանակում է ընտրել՝ կապել մեզ մեր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Դա նշանակում է հետևել Փրկչին, վստահել Նրան և ցանկանալ մեր երախտագիտությունը ցույց տալ այն գնի համար, որը Քավության անսահման պարգևի միջոցով Նա վճարել է՝ ազատելով մեզ:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրել է, որ «ուխտը՝ կապող հոգևոր պայմանագիր է, հանդիսավոր խոստում՝ տրված մեր Հայր Աստծուն, որ կապրենք, կմտածենք և կգործենք՝ հետևելով Նրա Որդի Տեր Հիսուս Քրիստոսին: Փոխարենը, Հայրը, Որդին և Սուրբ Հոգին խոստացել են մեզ հավերժական կյանքն իր ողջ փառքով»:[2] Ըստ այդ կապող պայմանագրի, Տերն է սահմանում պայմանները, իսկ մենք համաձայնում ենք պահել դրանք: Կապելով և պահելով մեր ուխտերը մենք ցույց ենք տալիս, որ ցանկանում ենք դառնալ Փրկչի նման:[3] Մենք պետք է ձգտենք մեր վարքով առավելագույնս արտահայտել սիրելի օրիներգի խոսքերը՝ «Կգնամ, ուր կուզես *Դու* . . . Կասեմ այն, ինչ կուզես *Դու* . . . Կլինեմ, ինչ կուզես *Դու*»:[4]

Ինչո՞ւ ենք ուխտեր կապում և պահում:

1. Ուխտեր պահելը ամրացնում, զորացնում և պաշտպանում է:

Նեփին տեսիլքում տեսավ, ինչպիսի հրաշալի օրհնություններ է Տերը շնորհում ուխտերը պահողներին: «Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ . . . Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա . . . և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:[5]

Վերջերս իմ սիրելի նոր ընկերուհուն տեսա: Նա վկայեց, որ տաճարային օժտումը ստանալուց հետո զգում է, որ ուժ և զորություն ունի դիմակայելու գայթակղություններին, որոնց դեմ պայքարել էր նախկինում:

Պահելով մեր ուխտերը, մենք նաև ստանում ենք քաջություն և ուժ, որն օգնում է մեզ կրել միմյանց բեռը: Մի վշտահար քույր որդի ուներ, որը կյանքի դժվարություններով էր անցնում: Հավատալով, որ իր Սփոփող Միության քույրերը ուխտեր պահողներ են, նա խիզախորեն կոչ արեց նրանց ծոմ պահել և աղոթել իր որդու համար: Մեկ այլ քույր ասաց, թե որքան կփափազեր, որ

քույրերը նույնկերպ աղոթեին իր որդու համար: Մի քանի տարի առաջ իր որդին մաքառումների մեջ էր: Նա կուզենար խնդրել քույրերին, որ օգնեին իր ընտանիքին այդ բեռը կրելիս: Փրկիչն ասել է. «Սորանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե իրար վերայ սեր ունենաք»:[6]

Օ, քույրեր, մենք բոլորս էլ ունենք բեռներ՝ կրելու և բեռներ՝ կիսելու: Միմյանց բեռը կրելու հրավերը մեր ուխտերը պահելու հրավեր է: Առաջին Սփոփող Միության քույրերին ուղղված Լյուսի Մաք Սմիթի խորհուրդն առավել քան արդիական է այսօր. «Մենք պետք է փայփայենք, հսկենք, սփոփենք միմյանց և ուսուցանվենք, որ կարողանանք միասին նստել երկնքում»:[7] Դա կարող ենք անել լավագույնս պահելով ուխտերը և այցելությամբ ուսուցանելով:

Մորմոնի Գիրքը հիշեցնում է մեզ, որ անգամ մարգարե Ալման պետք է կրեր ըմբոստ որդի ունենալու բեռը: Բայց Ալման օրհնված էր ուխտ պահող ավետարանի եղբայրներով և քույրերով, ովքեր խորապես դարձի էին եկել առ Տերը և սովորել էին, թե ինչ է նշանակում կրել միմյանց բեռը: Մեզ քաջածանոթ է Մոսիայի այն հատվածը, որտեղ խոսվում է իր որդու համար ասված Ալմայի հավատքով լի աղոթքների մասին: Սակայն հիշատակարանն ասում է, որ «Տերը լսել էր *իր ժողովրդի* աղոթքները և նաև՝ իր ծառա Ալմայի աղոթքները»:[8]

Մենք գիտենք, որ Տերը միշտ ցնծում է «այն հոգու համար, որն ապաշխարում է»,[9] բայց մենք առավել քան ցանկանում ենք, որ մեր երեխաները հետևեն Նախագահ Հենրի Բ. Այրինգի խորհրդին՝ «վաղ սկսել և հաստատակամ լինել» ուխտերը կապելիս և պահելիս:[10] Վերջերս մտածելու տեղիք տվող անկեղծ հարց բարձրացվեց քահանայության և օժանդակի ղեկավարների խորհրդում. «Արդյո՞ք ակնկալում ենք, որ ութ տարեկանները պահեն իրենց ուխտերը»: Միասին խորհրդակցելիս առաջարկվեց, որ եթե ցանկանում ենք երեխաները պատրաստվեն սուրբ մկրտության ուխտը կապելուն և պահելուն, պետք է օգնենք նրանց սովորել տալ և պահել սովորական խոստումներ:

Բարեխիղճ ծնողները գիտեն ինչպես լավագույնս ուսուցանել, որ բավարարեն իրենց երեխաների կարիքները: Երբ ծնողները ձգտում են գործել անձնական հայտնությամբ, խորհրդակցում են միասին, ծառայում և ուսուցանում են ավետարանի պարզ սկզբունքները, նրանք զորություն կունենան ամրացնելու և պաշտպանելու իրենց ընտանիքները: Ընտանիքի մյուս անդամները ևս կօգնեն: Իմ խելացի պապիկը մեզ ուսուցանել է խոստումները պահելու կարևորությունը մի պարզ երգով: Այն այսպես էր հնչում. «Խոստում տալուց առաջ, այն կարևոր է, իմացիր: Ապա այն սրտիդ մեջ փորագրիր: Սրտիդ մեջ փորագրիր»: Այդ փոքր երգը ուսուցանվել է սիրով, համոզմունքով և զորությամբ, քանի որ պապիկը փորագրել էր իր իսկ խոստումներն իր սրտում:

Ինձ ծանոթ մի իմաստուն մայր դիտավորյալ ընդգրկում է երեխաներին իր ուխտերը պահելու գործում: Նա ուրախությամբ է կրում հարևանների, ընկերների և ծխի անդամների բեռը, և սփոփում է նրանց, ովքեր սփոփման կարիք ունեն: Զարմանալի չէր, երբ նրա փոքր դուստրը վերջերս մոտենալով հարցրել էր, թե ինչպես կարող էր սփոփել իր փոքր ընկերուհուն, որի հայրը նոր էր մահացել: Պահն օգտագործելով նա ուսուցանել էր դստերը, որ վերջինս պահում է իր մկրտության ուխտը, երբ ցանկություն ունի սփոփելու իր ընկերոջը: Ինչպե՞ս կարող ենք ակնկալել, որ երեխաները կկապեն և կպահեն տաճարային ուխտերը, եթե չենք ակնկալում, որ նրանք կպահեն իրենց առաջին ուխտը՝ մկրտության ուխտը:

Երեց Սքոթը նկատել է. «Մեծագույն օրհնություններից մեկը, որ կարող ենք առաջարկել աշխարհին, Քրիստոսակենտրոն տան զորությունն է, որտեղ ուսուցանվում է ավետարանը, պահվում են ուխտերը և թևածում է սերը»:[11] Ինչպե՞ս կարող ենք նման տուն ստեղծել, պատրաստելով մեր զավակներին տաճարային ուխտերը կապելուն և պահելուն:

- Միասին կարող ենք բացահայտել, թե ինչ է նշանակում

արժանի լինել տաճարային երաշխավորագրին:

- Միասին կարող ենք բացահայտել, թե ինչպես պետք է լսել Սուրբ Հոգուն: Մենք պետք է սովորենք այդ կարևոր հմտությունը, քանի որ տաճարային օժտումը ստացվում է հայտնությամբ:
- Միասին կարող ենք բացահայտել, թե ինչպես սովորել, օգտագործելով խորհրդանիշները՝ սկսած մկրտության և հաղորդության սուրբ խորհրդանիշներից:
- Միասին կարող ենք բացահայտել, թե ինչու է մարմինը սուրբ, ինչու են այն երբեմն անվանում տաճար, և համեստ հագուստն ու հարդարումը ինչպես է կապված տաճարային հագուստի սուրբ բնույթի հետ:
- Միասին կարող ենք բացահայտել երջանկության ծրագիրը սուրբ գրություններում: Որքան քաջատեղյակ լինենք Երկնային Հոր ծրագրին և Քավությանը, այնքան իմաստալից կլինի տաճարային երկրպագությունը:
- Միասին կարող ենք սովորել մեր նախնիների պատմությունները, հետազոտել ընտանիքի պատմությունը, ցուցիչը և կատարել տաճարային փոխարինող աշխատանք մահացած սիրելիների համար:
- Միասին կարող ենք բացահայտել տաճարային երկրպագությանը առնչվող *օժտում, ծես, կնքում, քահանայություն, բանալիներ* և այլ բառերի իմաստը:
- Կարող ենք ուսուցանել, որ գնում ենք տաճար Երկնային Հոր հետ ուխտեր կապելու, և վերադառնում ենք տուն՝ դրանք պահելու:[12]

Եկեք ուսուցանելիս հիշենք «լավ, ավելի լավ և լավագույն» հասկացողությունները:[13] Լավ է, երբ ուսուցանում ենք մեր զավակներին տաճարի մասին: Ավելի լավ է, երբ պատրաստում և սպասում ենք, որ նրանք կկապեն և կպահեն ուխտերը: Լավագույնը կլինի այն, որ օրինակով ցույց տանք նրանց, որ հավատարիմ ենք մնում մեր մկրտության և տաճարային ուխտերին: Քույրեր, արդյոք գիտակցո՞ւմ ենք փրկության աշխատանքում մեր կարևոր դերը, երբ դաստիարակում, ուսուցանում և պատրաստում ենք երեխաներին, որ առաջ գնան ուխտի ճանապարհով: Մենք ուժ կստանանք՝ պատվելով և պահելով մեր ուխտերը:

2. Ուխտերը պահելը կարևոր է իսկական երջանկության համար:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Ակնածանքով պետք է վերաբերվել սուրբ ուխտերին, իսկ դրանց հավատարիմ մնալը՝ երջանկության գրավականն է»:[14] 2 Նեփիում մենք կարդում ենք. «Եվ եղավ այնպես, որ մենք ապրեցինք երջանիկ»:[15] Այդ գլխի սկզբում մենք իմանում ենք, որ Նեփին և նրա ժողովուրդը նոր էին տաճար կառուցել: Անշուշտ նրանք ուրախությամբ էին ուխտերը պահում: Իսկ Ալմայում կարդում ենք. «Բայց ահա, երբեք չէր եղել ավելի երջանիկ ժամանակ Նեփիի ժողովրդի մեջ՝ սկսած Նեփիի օրերից, քան Մորոնիի օրոք»:[16] Ինչո՞ւ: Կրկին նախորդ հատվածում մենք իմանում ենք, որ նրանք «հավատարիմ էին Տիրոջ պատվիրանները պահելում»:[17] Ուխտեր պահողները պատվիրաններ պահողներ են:

Ես սիրում եմ այս սուրբ գրությունը. «Եվ այժմ, երբ ժողովուրդը լսեց այս խոսքերը [այսինքն մկրտության ուխտի վերաբերյալ խոսքերը], նրանք ուրախությունից ծափ տվեցին, և բացականչեցին. Ա՛յս է մեր սրտի իղձը»:[18] Ես սիրում եմ նրանց սրտերի ցանկությունը: Նրանք ուրախությամբ ցանկանում էին կապել և պահել իրենց ուխտերը:

Մի կիրակի մի երիտասարդ քույր ուրախությամբ բացականչեց. «Ես այսօր հաղորդություն եմ ընդունելու»: Ե՞րբ եք վերջին անգամ ուրախացել այդ արտոնությամբ: Իսկ ինչպե՞ս ենք արտահայտում դա: Դա անում ենք *միշտ* հիշելով Փրկչին և *միշտ* պահելով Նրա պատվիրանները, այդ թվում՝ սուրբ պահելով Նրա կիրակին: Մենք դա անում ենք *միշտ* հիշելով Նրան մեր անձնական և ընտանեկան աղոթքներում, *միշտ* սուրբ գրություններն ուսումնասիրելիս և ամեն շաբաթ ընտանեկան երեկո անցկացնելիս: Իսկ երբ շեղվում ենք կամ անփութորեն ենք վերաբերվում այդ կարևոր բաներին, մենք ապաշխարում ենք և կրկին սկսում:

Մեր ուխտերը կապելը և ուրախությամբ պահելը ուժ ու իմաստ է հաղորդում սուրբ և փրկող ծեսերին, որոնք պետք է ստանանք, որպեսզի ձեռք բերենք «այն ամենն, ինչ Հայրն ունի»:[19] Ծեսերն ու ուխտերը «հոգևոր նշակետեր են»: Նախագահ Հենրի Բ. Այրինգը անդրադարձել է դրանց, երբ ուսուցանել է. «Վերջին Օրերի Սրբերը ուխտյալ ժողովուրդ են: Մկրտության օրից ի վեր, անցնելով կյանքի հոգևոր նշակետերով, մենք խոստումներ ենք տալիս Աստծուն, իսկ Նա խոստումներ է տալիս մեզ: Նա *միշտ* պահում է Իր խոստումները Իր լիազորված ծառաների միջոցով, սակայն մեր կյանքի որոշիչ փորձությունն այն է, թե արդյոք Նրա հետ *մենք* ուխտեր կկապենք և կպահենք»:[20]

3. Մեր ուխտերը պահելը արտահայտում է մեր սերը Փրկչի և մեր Երկնային Հոր հանդեպ:

Մեր ուխտերը պահելիս ավելի ջանասեր լինելու համար բոլոր պատճառներից այս մեկն առավել

համոզիչ է՝ դա սերն է: Հին Կտակարանում մի հատված է հուզում սիրտս, երբ խոսքը վերաբերում է սիրո սկզբունքին: Ո՞ւմ չի հուզել Հակոբի և Ռաքելի աստվածաշնչյան սիրո պատմությունը, երբ կարդում ենք. «Եվ Հակոբը Ռաքելի համար յոթը տարի ծառայեց. և նորա աչքին մի քանի օրերի պես էր՝ նորան սիրելու պատճառով»:[21] Քույրեր, արդյո՞ք պահում ենք մեր ուխտերը այդպիսի խորը և նվիրված սիրով:

Ինչո՞ւ էր Փրկիչը ցանկանում պահել Հոր հետ Իր ուխտը և իրականացնել Իր աստվածային առաքելությունը՝ քավելով աշխարհի մեղքերը: Նա սիրում էր Իր Երկնային Հորը և մեզ: Ինչո՞ւ էր Հայրը ցանկանում, որ Իր Միածին և կատարյալ Որդին աննկարագրելի ցավ կրեր, քավելով աշխարհի մեղքերը, սրտի կսկիծը, հիվանդությունները, անկատարությունները և ամեն անարդարություն, որ կա այս կյանքում: Պատասխանը պարփակված է այս արտահայտության մեջ. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տուավ»:[22]

«Եթե լիարժեք գնահատում ենք փրկագնման միջոցով մեզ հասու դարձած բազում օրհնությունները, չի լինի մի բան, որ Տերը խնդրի մեզանից և մենք մեծ ցանկությամբ ու պատրաստակամորեն չանենք»:[23] Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի այս խոսքերի համաձայն, ուխտերը պահելով, մենք մեր սերն ենք արտահայտում առ մեր Փրկչի և Քավչի անըմբռնելի, անսահման Քավությունը և մեր Երկնային Հոր կատարյալ սերը:

Երեց Հոլլանդը սրտառուչ կերպով ասել է. «Ես ստույգ չգիտեմ, թե ինչ տեղի կունենա մեզ հետ Դատաստանի օրը, սակայն ես կզարմանամ, եթե այդ զրույցի ժամանակ Աստված չտա մեզ այն նույն հարցը, որը Քրիստոսը տվեց Պետրոսին. «Դու սիրե՞լ ես ինձ»:[24] Այսօր, ես հրավիրում եմ բոլորիս խորհել, թե որքան ենք սիրում Փրկչին, որպես չափորոշիչ ընդունելով, թե որքան ուրախությամբ ենք մենք պահում մեր ուխտերը: Փրկիչն ասել է. «Ով որ իմ պատվիրանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ սիրողը. և ինձ սիրողն իմ Հորիցը կսիրվի. և ես կսիրեմ նորան և ինձ կհայտնեմ նորան»:[25] Որքա՜ն շատ ունենք մեր առօրյա կյանքում մշտապես Փրկչի հայտնվելու կարիքը:

Եկեք հիշենք, որ անգամ նրանք, ովքեր կամակոր էին նախկինում, կամ ովքեր այժմ մաքառումների մեջ են, կարող են զգալ Բարի Հովվի ձեռքը իրենց գլխին և լսել Նրա ձայնը. «Արի, դու այլևս կապված չես: Դու ազատ ես»: Փրկիչն ասել է. «Ես եմ բարի հովիվը. բարի հովիվն իր անձը դնում է ոչխարների համար»:[26] Նա կարող է ասել դա, քանի որ սիրով է պահել Իր ուխտերը: Հարց է ծագում՝ իսկ մե՞նք: Կարո՞ղ ենք արդյոք հավատքով, ուրախ սրտով և մեծ ցանկությամբ առաջ գնալ և ուխտեր պահողներ լինել: Միայն այդպես ցույց կտանք մեր սերը մեր Երկնային Հոր և մեր Փրկչի հանդեպ, որոնց մասին ես մեծ սիրով վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես D. Todd Christofferson, “You Are Free,” *Լիահոնա,* մարտ 2013, 16, 18:
2. Jeffrey R. Holland, “Keeping Covenants: A Message for Those Who Will Serve a Mission,” *Լիահոնա,* հունվ. 2012, 49:
3. Տես “Understanding Our Covenants with God,” *Լիահոնա,* հուլիս 2012, 23:
4. “I’ll Go Where You Want Me to Go,” *Hymns,* no. 270; շեշտադրումն ավելացված է:
5. 1 Նեփի 14.14:
6. Հովհաննես 13.35:
7. Lucy Mack Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 25:
8. Մոսիա 27.14; շեշտադրումն ավելացված է:
9. Վարդապետություն և Ուխտեր 18.13:
10. Տես Henry B. Eyring, “Spiritual Preparedness: Start Early and Be Steady,” *Liahona,* Nov. 2005, 37–40:
11. Richard G. Scott, “For Peace at Home,” *Liahona,* May 2013, 30:
12. Տես D. Todd Christofferson, “The Gospel Answers Life’s Problems and Challenges” (worldwide leadership training meeting, Feb. 2012); lds.org/broadcasts:
13. Տես Dallin H. Oaks, “Good, Better, Best,” *Liahona,* Nov. 2007, 104:
14. Thomas S. Monson, “Happiness—the Universal Quest,” *Liahona,* Mar. 1996, 5:
15. 2 Նեփի 5.27:
16. Ալմա 50.23:
17. Ալմա 50.22:
18. Մոսիա 18.11:
19. Վարդապետություն և Ուխտեր 84.38:
20. Henry B. Eyring, “Witnesses for God,” *Ensign,* Nov. 1996, 30; շեշտադրումն ավելացված է:
21. Ծննդոց 29.20:
22. Հովհաննես 3.16:
23. Joseph Fielding Smith, “Importance of the Sacrament Meeting,” *Relief Society Magazine,* Oct. 1943, 592.
24. Jeffrey R. Holland, “The First Great Commandment,” *Liahona,* Nov. 2012, 84:
25. Հովհաննես 14.21:
26. Հովհաննես 10.11:

Քերոլ Մ. Ստեֆենս
Սփոփող Միության Գերագույն
Նախագահության երկրորդ խորհրդական

Մենք ուրախանալու մեծ պատճառ ունենք

Երբ սիրում եք, հոգ եք տանում և ծառայում եք մյուսներին փոքր և հասարակ ուղիներով, դուք ակտիվորեն մասնակցում եք փրկության աշխատանքին:

Երբ սկեսրայրս մահացավ, մեր ընտանիքը հավաքվեց միասին՝ ընդունելու մյուսներին, ովքեր գալիս էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու: Այդ երեկո ես հաճախ էի տեսնում մեր 10-ամյա թոռնիկին, Փորթերին, կանգնած սկեսրոջս՝ իր «տատիկի» կողքին: Երբեմն նա կանգնում էր նրա ետևում՝ հսկելով նրան: Մի անգամ նկատեցի նրանց ձեռքերը միասին, տեսնում էի, ինչպես էր նա շոյում տատի ձեռքերը, փարվում նրան և կանգնում կողքին:

Մի քանի օր անց դեռևս այդ պատկերն իմ առջև էր: Ես Փորթերին մի գրություն ուղարկեցի, որտեղ նշեցի այդ մասին: Ես նրան է-նամակ ուղարկեցի որտեղ գրեցի այն ամենի մասին, ինչ տեսել և զգացել էի: Ես հիշեցրեցի Փորթերին ուխտերի մասին, որ նա կապել էր մկրտվելիս, մեջբերելով Ալմայի խոսքերը Մոսիա 18 գլխում.

«Եվ այժմ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք՝ կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք՝ սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու, որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ՝ մինչև մահ, . . . որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ,

. . . Եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առջև, որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ դուք կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որ նա կարողանա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափել ձեզ վրա»:[1]

Փորթերին բացատրեցի, որ Ալման ուսուցանում էր, որ ովքեր ցանկանում են մկրտվել, պետք է ցանկություն ունենան ծառայել Տիրոջը՝ ծառայելով մյուսներին իրենց ողջ կյանքում: Ես ասացի. «Չգիտեմ, դու գիտակցո՞ւմ էիր, թե ոչ, բայց դու պահում էիր քո ուխտերը, երբ տատիկի կողքին էիր՝ ցույց տալով քո սերը և հոգ տանելով նրա մասին: Մենք պահում ենք մեր ուխտերն ամեն օր՝ լինելով բարի, սեր դրսևորելով և միմյանց համար հոգ տանելով: Պարզապես ուզում եմ իմանաս՝ ես հպարտանում եմ քեզանով, որովհետև դու ուխտեր պահող ես: Մկրտվելիս կապած քո ուխտը պահելով՝ դու կպատրաստվես կարգվելու քահանայությանը: Այդ հավելյալ ուխտը քեզ ավելի շատ հնարավորություն կտա օրհնելու և ծառայելու մյուսներին, և պատրաստվելու տաճարային ուխտերին: Շնորհակալություն ինձ լավ օրինակ ծառայելու համար: Շնորհակալություն, որ ցույց տվեցիր ինձ՝ ինչ է նշանակում լինել ուխտ պահող»:

Փորթերը պատասխանեց. «Շնորհակալություն, տատիկ: Երբ գրկում էի տատիկին, չգիտեի, որ պահում էի իմ ուխտերը, սակայն ջերմություն էի զգում իմ սրտում և, իրոք, ինձ լավ էի զգում: Ես գիտեմ, որ դա Սուրբ Հոգին էր իմ սրտում»:

Փորթերը (աջում) իր նախատատի հետ:

Ես ևս ջերմություն զգացի իմ սրտում, երբ հասկացա, որ Փորթերն իր ուխտերը պահելը համակցել էր «միշտ նրա Հոգին մեզ հետ ունենալու»[2] խոստումի հետ, խոստում, որը հնարավոր է դարձել Սուրբ Հոգու պարգևը ստանալու միջոցով:

Քույրեր, այցելելով ձեզ ողջ աշխարհում, ես նկատել եմ, որ շատերդ Փորթերի պես եք: Դուք անխախտ կանգնած եք որպես Աստծո վկաներ, սգալով նրանց հետ, ովքեր սգում են, սփոփելով նրանց, ովքեր սփոփանքի կարիք ունեն, չնկատելով, որ պահում եք ձեր ուխտերը՝ մկրտության ջրերում և տաճարում կապած ձեր ուխտերը: Երբ սիրում եք, հոգ եք տանում և ծառայում եք մյուսներին փոքր և հասարակ ուղիներով, դուք ակտիվորեն մասնակցում եք փրկության աշխատանքին՝ «մարդու անմահությունը և հավերժական կյանքը իրագործող»[3] Աստծո աշխատանքին:

Որպես «[Տիրոջ] արքայության դուստրեր»,[4] մենք սուրբ ուխտեր ենք կապել: Մենք քայլում ենք, ինչպես Նեփին է կոչել, «նեղ ու անձուկ ճանապարհով, որը տանում է դեպի հավերժական կյանք»:[5] Մենք բոլորս գտնվում ենք այդ ճանապարհի տարբեր մասերում, բայց կարող ենք միասին աշխատել՝ օգնելով միմյանց «առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն և սեր՝ Աստծո և բոլոր մարդկանց հանդեպ»:[6]

Ջինը ծառայում է որպես Երիտասարդ Կանանց խորհրդատու: Մի քանի ամիս առաջ նա իմացավ իր ծխի երիտասարդների գալիք միջոցառման մասին, որի ժամանակ պետք է մագլցեին Մալան կոչվող գագաթը: Նա ոգևորվեց, քանի որ նպատակ էր դրել բարձրանալ այն:

Երբ նա մոտեցավ լեռան ստորոտին, իր լավ ընկերուհի Էշլին մոտեցավ իրեն: Ձեռքը տալով Ջինին նա առաջարկեց, որ միասին մագլցեն, ասելով. «Ես կգամ քեզ հետ»: Էշլին, որ այդ ժամանակ 16 տարեկան էր, որոշ ֆիզիկական խնդիրներ ուներ և դժվարանում էր արագ բարձրանալ: Նրանք միասին դանդաղ քայլեցին դիտելով Երկնային Հոր արարչագործությունները՝ լեռան գագաթի քարերը, շուրջբոլոր ծաղիկները: Ավելի ուշ Ջինն ասաց. «Շուտով ես մոռացա գագաթը մագլցելու իմ նպատակի մասին, քանի որ այն վերածվեց մեկ այլ տեսակի վայելքի, երբ մենք մատնանշում էինք գեղեցկությունները, որոնցից շատերը ես չէի նկատի, եթե միայն մագլցեի դեպի Մալանի գագաթը»:

Երբ Ջինն ու Էշլին դանդաղ բարձրանում էին սարն ի վեր, բավականին ետ մնալով խմբից, նրանց միացավ ծխի մեկ այլ աղջիկ, Էմման, որը որոշել էր սպասել և քայլել նրանց հետ: Էմմայի հետ էլ ավելի ուրախ էր, նա երգ սովորեցրեց նրանց՝ օգնելով և քաջալերելով: Ջինը հիշում է. «Մենք նստեցինք և հանգստացանք, երգեցինք, զրուցեցինք և ծիծաղեցինք: Ես ավելի լավ ճանաչեցի Էշլիին և Էմմային: Այդ երեկո կարևորը ոչ թե սարն էր, այլ ճանապարհին քայլ առ քայլ միմյանց օգնելը»:

Երբ Ջինը, Էշլին և Էմման բարձրանում էին, միասին երգելով, հանգստանալով և ծիծաղելով, հավանաբար, չէին մտածում, որ այդ պահին պահում էին իրենց ուխտերը: Բայց նրանք պահում էին իրենց ուխտերը: Նրանք ծառայում էին միմյանց սիրով, կարեկցանքով և նվիրվածությամբ: Նրանք ամրացնում էին միմյանց հավատքը՝ քաջալերելով և ծառայելով միմյանց:

Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Երբ մենք հասկանում ենք, որ ուխտյալ զավակներ ենք, գիտենք, ով ենք մենք, և Աստված ինչ է ակնկալում մեզանից: Նրա օրենքը գրվում է մեր սրտերում»:[7]

Մարիա Կուզինան Աստծո ուխտյալ զավակ է, նա գիտի, թե ով է ինքը և թե Աստված ինչ է ակնկալում իրենից: Երբ նա հյուրընկալեց ինձ իրենց տանը Օմսկում, Ռուսաստան, ես մտածեցի, որ այնտեղ եմ, որպեսզի ծառայեմ իրեն, սակայն շուտով հասկացա, որ այնտեղ եմ, որպեսզի սովորեմ իրենից: Եկեղեցու նորադարձ Մարիան ապրում է Ղուկաս 22 գլխում տրված պատգամով. «Դու երբոր դարձի գաս, եղբայրներիդ հաստատիր»:[8] Նա հավատում է մեր կենդանի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի այս խոսքերին.

«Այժմ է ժամանակը, որպեսզի անդամներն ու միսիոներները համատեղ տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ: . . .

. . . Եթե հավատքով գործենք, Տերը ցույց կտա մեզ, ինչպես ամրացնենք Իր Եկեղեցու ծխերն ու ճյուղերը, որտեղ մենք ապրում ենք: Նա կլինի մեզ հետ և կդառնա մեր ակտիվ զուգընկերը միսիոներական աշխատանքում:

. . . Գործադրեք ձեր հավատքը . . . և աղոթքով խորհեք, թե ձեր ընտանիքից, ընկերներից, հարևաններից և ծանոթներից ում կուզենայիք հրավիրել ձեր տուն հանդիպելու միսիոներներին, որ լսեին Վերականգնման ուղերձը»:[9]

Մարիան հետևում է այս խորհրդին՝ հոգ տանելով և ծառայելով իր քույրերին, որոնց համար նա այցելող ուսուցիչ է և անում է իր հանձնարարությունից ավելին: Նա շատ ընկերներ ունի, որոնցից ոմանք ակտիվ չեն, իսկ ոմանք էլ դեռևս չեն լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը: Ամեն օր նա գործադրում է իր հավատքը և աղոթում է, որպեսզի իմանա՝ ով իր օգնության կարիքն ունի, և ապա հետևում է իր ստացած հուշումին: Նա զանգահարում է, արտահայտում է իր սերը և ասում է իր ընկերներին. «Մենք ձեր կարիքն ունենք»: Ամեն շաբաթ նա տնային երեկո է անցկացնում իր բնակարանում և հրավիրում է հարևաններին, անդամներին և միսիոներներին, և նա կերակրում է նրանց: Նա հրավիրում է նրանց եկեղեցի, սպասում է նրանց, իսկ երբ գալիս են, նստում է նրանց կողքին:

Մարիան հասկանում է Երեց Ռ. Հոլլանդի հետևյալ հիշեցումը. «Հրավերը, որ ծնվում է մյուսների և Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրուց . . . երբեք չի դիտվի վիրավորական կամ քննադատական»:[10] Նա պահում է այն մարդկանց ցուցակը, ովքեր ասում են, որ վիրավորվել են, և նա շարունակում է ծառայել նրանց: Քանի որ նրանք գիտեն, որ նա սիրում է իրենց, նա կարող է նրանց ասել. «Մի վիրավորվեք: Դա ծիծաղելի է»:

Մարիան Հիսուս Քրիստոսի ուխտ պահող աշակերտ է: Թեպետ իր տանը չունի քահանայություն կրող, նա զգում է Աստծո զորությունն ամեն օր՝ ի կատարումն իր տաճարային ուխտերի, երբ նա առաջ է մղվում՝ համբերելով մինչև վերջ և օգնելով մյուսներին մասնակցել փրկության աշխատանքին:

Երբ կիսվում էի այս պատմություններով, արդյոք տեսա՞ք ձեզ փրկության աշխատանքում: Մի պահ մտածեք Աստծո մեկ այլ դստեր մասին, ով քաջալերման կարիք ունի ուխտյալ ուղու վրա վերադառնալու համար, կամ ով մի փոքր օգնության կարիք ունի այդ ուղու վրա մնալու համար: Հարցրեք ձեր Երկնային Հորը նրա մասին: Նա Նրա դուստրն է: Նա գիտի նրան անունով: Նա նաև ճանաչում է ձեզ և կասի, թե ինչի կարիք ունի այդ քույրը: Եղեք համբերատար և հավատքով ու աղոթքով շարունակեք նրան օգնել և հետևեք ձեր ստացած հուշումներին: Եթե գործեք ըստ այդ հուշումների, Հոգին կհաստատի, որ ձեր զոհաբերությունն ընդունելի է Տիրոջ համար:

«Քույր Էլիզա Ռ. Մնոուն . . . խորապես գնահատում էր միմյանց ամրացնելու քույրերի ջանքերը: . . . Նա ասում էր նրանց, որ թե Եկեղեցին չի պահում ամեն մի նվիրատվության հաշիվը, որոնք նրանք կատարել են կարիքավորներին օգնելու համար, Տերը կատարյալ հիշատակարան է պահում նրանց փրկության աշխատանքի մասին.

«. . . Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասաց, որ այդ միությունը ստեղծվել է հոգիներ փրկելու համար: Ի՞նչ ենք մենք անում, որպեսզի ետ շահենք նրանց, ովքեր հեռացել են, ջերմացնելու համար նրանց սրտերը, ովքեր սառել են ավետարանի հանդեպ: Մեկ այլ գիրքը պահվում ձեր հավատքի, ձեր բարության, ձեր բարի գործերի և ձեր խոսքերի մասին: Մեկ այլ հիշատակարան է պահվում: Ոչինչ չի կորում»»:[11]

Մորմոնի Գրքում Ամմոնը խոսում է ուրախանալու մեծ պատճառի մասին: Նա ասում է. «Եվ այժմ, ես հարցնում եմ, ի՞նչ մեծ օրհնություններ է [Աստված] պարգևել մեզ: Կարո՞ղ եք ասել»:

Ոգևորված Ամմոնը չի սպասում պատասխանի: Նա ասում է. «Ահա, ես պատասխանում եմ ձեր փոխարեն . . . սա է օրհնությունը, որը պարգևեց մեզ, որ մենք Աստծո ձեռքում գործիքներ դարձվեցինք՝ իրականացնելու այս մեծ աշխատանքը»:[12]

Մենք ուխտյալ դուստրեր ենք Տիրոջ արքայության, և մենք կարող ենք գործիքներ լինել Նրա ձեռքում: Ամեն օր մասնակցելով փրկության աշխատանքին փոքր և հասարակ ուղիներով՝ հոգ տանելով, ամրացնելով և ուսուցանելով միմյանց, մենք կկարողանանք Ամմոնի հետ միահսն հայտարարել.

«Ահա, իմ ուրախությունը լիակատար է, այո, իմ սիրտը մինչև պռունկը լցված է ուրախությամբ, և ես կցնծամ իմ Աստծով:

Այո՛, ես գիտեմ, որ ես ոչինչ եմ. ինչ վերաբերում է իմ ուժին, ես թույլ եմ. հետևաբար, ես չեմ պարծենա ինձանով, բայց ես կպարծենամ իմ Աստծով, քանզի նրա ուժով ես կարող եմ անել բոլոր բաները»:[13]

Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 18.8–10:
2. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
3. Մովսես 1.39:
4. Վարդապետություն և Ուխտեր 25.1:
5. 2 Նեփի 31.18:
6. 2 Նեփի 31.20:
7. Ռասսել Մ. Նելսոն, «Ուխտեր», *Լիահոնա,* նոյ. 2011, 88:
8. Ղուկաս 22.32:
9. Թոմաս Ս. Մոնսոն, «Հավատք փրկության աշխատանքում» (Ղեկավարների համաշխարհային ուսուցման հեռարձակում, հունիս, 2013), lds.org/broadcasts.:
10. Jeffrey R. Holland, “Our Responsibility to Invite” (Ղեկավարների համաշխարհային ուսուցման հեռարձակում, հունիս, 2013), lds.org/broadcasts.:
11. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 83.
12. Այմա 26.2–3:
13. Այմա 26.11–12:



Լինդա Ս. Ռիվս
Սփոփող Միության Գերագույն Նախագահության երկրորդ խորհրդական

Հայցեք ձեր ուխտերի օրհնությունները

Նորացնելով և պատվելով մեր ուխտերը՝ մեր բեռը կթեթևանա, և մենք կարող ենք շարունակաբար մաքրվել և զորանալ:

Քույրեր, որքան հրաշալի է կրկին հանդիպել ձեզ:

Վերջերս հանդիպել եմ մի կնոջ, ով պատրաստվում էր մկրտվել: Այդ կիրակի օրը նա եկել էր եկեղեցի, մոտ 3կմ քայլելով ցեխի միջով: Նա անմիջապես գնաց և փոխեց իր ցեխոտ շորերը, լվացվելով և հագնելով կիրակնօրյա մաքուր հագուստը: Սփոփող Միության ժողովին նա պատմեց իր դարձի մասին: Ինձ հուզեց ապաշխարության և Փրկչի քավող զոհաբերության միջոցով մաքրվելու նրա անհագ ցանկությունը և իր «հին կյանքից» հրաժարվելու նրա պատրաստակամությունը, որպեսզի սուրբ ուխտեր կապեր մեր Երկնային Հոր հետ: Նա բաժանվել էր իր ընկերոջից, հաղթահարում էր հակումները, որպեսզի ապրեր Իմաստության Խոսքով, թողել էր իր կիրակնօրյա աշխատանքը և նրա կապը հարազատների հետ խզվել էր, երբ վերջիններս իմացել էին նրա մկրտվելու որոշման մասին: Նա ցանկանում էր թողնել իր բոլոր մեղքերը, որպեսզի մաքրվեր և զգար Փրկչի փրկագնող սերը: Ինձ ոգեշնչեց այդ առավոտ ֆիզիկապես և հոգեպես մաքվելու նրա փափագը:

Մենք գիտենք, որ ձեզանից շատերն են նման զոհաբերություններ կատարել՝ զգալով Սուրբ Հոգու վկայությունը և փափագելով ապաշխարել, մկրտվել և մաքրվել: Թերևս Փրկչի աստվածային սերն առատորեն զգում ենք միայն, երբ ապաշխարում ենք և զգում ենք Նրա սիրառատ ձեռքերը պարզած՝ պատրաստ գրկելու մեզ և արտահայտելու Իր սերն ու հավանությունը:

Մի քանի կիրակի առաջ, հաղորդության ժողովին, ես հուզվեցի, լսելով, թե ինչպես էր քահանան մեծ զգացմունքով արտասանում հաղորդության աղոթքի յուրաքանչյուր բառը: Ավելի ուշ զանգահարեցի այդ քահանային, որ շնորհակալություն հայտնեի հաղորդության ժամանակ ներկաներիս խորը հոգևոր զգացողություն պարգևելու համար: Նա տանը չէր, սակայն մայրը պատասխանեց. «Օ՜, նա շատ կուրախանա, երբ իմանա, որ դուք զանգահարել եք: Առաջին անգամ էր նա ասում հաղորդության աղոթքը, և մենք միասին ենք պատրաստվել՝ խոսելով հաղորդության կարևորության և Փրկչի հետ կապած մեր մկրտության ուխտերն արժանիորեն նորացնելու մասին»: Որքան եմ սիրում այդ թանկագին մորը, որ ուսուցանել է իր որդուն մկրտության ուխտերի զորության և այն հնարավորության մասին, որով նա կարող էր օգնել ծխի անդամներին զգալ այդ զորությունը:

Ճանաչում եմ մեկ այլ մոր, որը մի քանի տարի միայնակ է նստել եկեղեցում իր չորս փոքրիկների հետ: Հաղորդության ժողովներին հագվադեպ կարողանալով կենտրոնանալ Փրկչի վրա, նա որոշում կայացրեց: Այժմ, ամեն շաբաթ օր նա փորձում է ժամանակ հատկացնել՝ վերանայելով իր ողջ շաբաթը, խորհելով իր ուխտերի և այն մասին, թե ինչի համար պետք է ապաշխարի: «Ապա,- նա ասում է,- անկախ նրանից, թե կիրակի օրը ինչպես կպահեն իրենց երեխաները, ես պատրաստ եմ ճաշակել հաղորդությունը, նորացնել իմ ուխտերը և զգալ Քավության մաքրագործող զորությունը»:

Սիրելի քույրեր, ինչո՞ւ է Փրկիչն այդքան մեծ կարևորություն տալիս հաղորդությանը: Ի՞նչ կարևոր դեր է խաղում մեր մկրտության ուխտերի ամենշաբաթյա նորացումը մեր կյանքում: Գիտակցո՞ւմ ենք արդյոք, որ Փրկիչն ի զորու է լիովին մաքրագործել մեզ ամեն շաբաթ, երբ մենք արժանիորեն և խոհուն ընդունում ենք հաղորդությունը: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը վկայել է. «Դա է Հիսուս Քրիստոսի և Քավության

ավետարանի խոստումը. . . . որ [մեր կյանքի] վերջում վարագույրից այն կողմ անցնենք՝ մեր մեղքերից ապաշխարած և Քրիստոսի արյունով լվացված»:[1]

Մեր նախագահությունն անչափ ուրախանում է, երբ մեր քույրերն ու նրանց ընտանիքները կապում և պահում են ուխտերը, սակայն մեր սրտերը ցավում են նրանց համար, ովքեր մեծ նեղություն են կրում իրենց կյանքում ուխտերը դրժող սիրելիների պատճառով: Նեփիի եղբայր Հակոբ մարգարեին Տերը պատվիրել էր խոսել իր եղբայրների հետ իր օրերի արդարակյաց կանանց և երեխաների մասին: Ես վկայում եմ, որ նրա խոսքերը պահվել են հատուկ մեր օրերի համար: Նա խոսում է մեզ հետ այնպես, ասես Փրկիչն Ինքն է խոսում: Հակոբը նեղված և մտահոգ էր, երբ վկայեց ամուսիններին և հայրերին.

«Դա վշտացնում է ինձ, որ ես պետք է գործածեմ խոսքի այսքան շատ խստություն . . . ձեր կանանց և ձեր երեխաների առջև, որոնցից շատերի զգացմունքները չափազանց քնքուշ են, և մաքրաբարո ու նուրբ . . .

. . . Նրանց սրտերի հեկեկոցը բարձրանում է վեր՝ առ Աստված . . . Շատ սրտեր են մեռել՝ խոցված խորը վերքերով»:[2]

Ուխտ պահող կանանց, իր և մեր օրերի երեխաներին Հակոբը խոստանում է.

«Նայե՛ք առ Աստված մտքի կայունությամբ, և աղոթե՛ք նրան խիստ մեծ հավատքով, և նա կսփոփի ձեզ՝ ձեր չարչարանքների մեջ . . .

. . . Բարձրացրե՛ք ձեր գլուխները և ընդունե՛ք Աստծո հաճելի խոսքը և վայելե՛ք նրա սերը»:[3]

Քույրեր, ես վկայում եմ աղոթքի ուժի և զորության մասին, երբ հայտնում ենք մեր ամենախորը ցավերը և ցանկությունները մեր Երկնային Հորը, իսկ պատասխանները գալիս են, երբ մենք «վայելում ենք» սուրբ գրությունները և կենդանի մարգարեների խոսքերը:

Մոտ երեք տարի առաջ ավերիչ հրդեհից այրվեց սիրելի պատմական Թաբերնաքլը Պրովոյում, Յուտա: Թե համայնքը և թե Եկեղեցու անդամները մեծ ցավով ընդունեցին այդ փաստը: Շատերը զարմացան. «Ինչո՞ւ Տերը թույլ տվեց դա: Անշուշտ, Նա կարող էր կանխել հրդեհը կամ թույլ չտար այդ շինության կործանումը»:

Տաս ամիս անց, 2011թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին մի հիացական շշուկ տարածվեց, երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց, որ գրեթե ավերված թաբերնաքլը կդառնա սուրբ տաճար՝ Տիրոջ տուն: Հանկարծ մենք տեսանք այն, ինչ Տերը միշտ իմացել էր: Նա՛ չէր հրդեհ առաջացրել, բայց Նա թույլ էր տվել, որ հրդեհը կլաներ շենքի ողջ ներսի մասը: Նա տեսնում էր Թաբերնաքլը որպես հրաշագեղ տաճար՝ սուրբ, հավերժական ուխտեր կապելու մշտական տուն:[4]

Իմ սիրելի քույրեր, Տերը թույլ է տալիս, որ մենք փորձվենք և ստուգվենք, երբեմն մեր կարողության առավելագույն չափով: Մենք տեսել ենք՝ ինչպես է մեր սիրելիների և գուցե նաև մեր կյանքն «այրվել» մինչև վերջ և զարմացել ենք, թե ինչու է սիրող և հոգատար Երկնային Հայրը թույլ տալիս, որ դա տեղի ունենա: Սակայն Նա մեզ չի թողնում մոխիրների մեջ, Նա կանգնած է ձեռքերը պարզած՝ հրավիրելով մեզ՝ գալ Իր մոտ: Նա մեր կյանքը

վերածում է հրաշակերտ տաճարի, որտեղ կարող է Իր Հոգին հավերժ բնակվել:

Վարդապետություն և Ուխտեր 58.3–4-ում Տերն ասում է մեզ.

«Ներկայումս, դուք ձեր բնական աչքերով չեք կարող տեսնել ձեր Աստծո ծրագիրը, այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու, և փառքը, որը պիտի գա շատ նեղությունից հետո:

Քանզի շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները: Ուստի գալիս է օրը, երբ դուք պիտի պսակվեք մեծ փառքով»:

Քույրեր, ես վկայում եմ, որ Տերը ծրագիր ունի մեզանից յուրաքանչյուրի կյանքի համար: Ոչինչ չի կարող ցնցել կամ զարմացնել Նրան: Նա ամենագետ է և սիրում է բոլորին: Նա փափագում է օգնել ու սփոփել մեզ, մեղմել մեր ցավերը, երբ մենք ապավինում ենք Քավության զորությանը և պատվում ենք մեր ուխտերը: Ես գիտեմ դա: Փորձություններն ու դժբախտությունները, որոնց միջով անցնում ենք, կարող են առաջնորդել մեզ դեպի Նա, և կառչելով մեր ուխտերից կարող ենք վերադառնալ Նրա ներկայություն և ստանալ այն ամենը, ինչ ունի Հայրը:

Անցյալ տարի ես ցանկանում էի ավելի խորը զգալ Տիրոջ սերը, ստանալ անձնական հայտնություն, ավելի խորը հասկանալ իմ տաճարային ուխտերը և թեթևացնել իմ բեռը: Հատկապես այդ օրհնությունների մասին աղոթելիս զգացի՝ Հոգին առաջնորդեց ինձ, որ գնամ տաճար և ավելի ուշադիր լսեմ ինձ համար արտասանված օրհնությունների յուրաքանչյուր բառը: Ես վկայում եմ, որ ավելի ուշադիր լսելով և փորձելով գործադրել իմ հավատքը, Տերը ողորմած գտնվեց իմ հանդեպ՝ օգնելով թեթևացնել իմ բեռը: Նա օգնեց ինձ մեծ խաղաղություն զգալ դեռևս չպատասխանված աղոթքների համար: Պահելով մեր ուխտերն ու գործադրելով մեր հավատքը, մենք կապում ենք Տիրոջը, որ պահի Իր խոստումները:[5] Սիրելի քույրեր, եկեք տաճար և հայցեք ձեր օրհնությունները:

Ուզում եմ այս հարցին այլ կերպ անդրադառնալ, ինչը մեզ վստահություն և հավատք կներշնչի: Երբեմն, որպես կին, մենք միտված ենք քննադատել ինքներս մեզ: Այդ պահերին պետք է փնտրենք Հոգին և հարցնենք. «Արդյո՞ք Տերն է ցանկանում, որ ես այսպես մտածեմ իմ մասին, թե սատանան է փորձում ինձ հուսահատեցնել»: Հիշեք մեր Երկնային Հոր էությունը, որի սերը կատարյալ և անսահման է:[6] Նա ցանկանում է մեզ զորացնել, ոչ թե՝ տապալել:

Որպես Եկեղեցու անդամներ գուցե երբեմն զգանք, որ Տիրոջ կողմից ընդունվելու համար պետք է «կատարյալ ՎՕՍ ընտանիքի» մասը լինենք: Երբեմն զգում ենք, որ «այնքան էլ» արժանի չենք կամ չենք համապատասխանում արքայությանը, երբ չենք բավարարում որոշ պայմանների: Սիրելի քույրեր, երբ ամեն ինչ ասված և արված է, մեր Երկնային Հայրը կնայի, թե արդյոք մենք պահել ենք մեր ուխտերը և որքանով ենք հետևել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակին:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչը և Քավիչն է: Նրա քավող զոհաբերության շնորհիվ, մենք կարող ենք մաքրվել ամեն շաբաթ՝ արժանիորեն ընդունելով Նրա հաղորդությունը: Նորացնելով և պատվելով մեր ուխտերը՝ մեր բեռը կթեթևանա, մենք շարունակաբար կմաքրվենք և կզորանանք, իսկ կյանքի վերջում կարժանանանք վեհացմանը և հավերժական կյանքին: Ես վկայում եմ այդ ամենի մասին մեր սիրելի Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բոյդ Կ. Փաքեր, «Քավությունը», *Լիահոնա*, նոյ. 2012, 77:
2. Հակոբ 2.3, 7, 35:
3. Հակոբ 3.1–2:
4. Տես Մոսիա 23.21–22:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 82.10:
6. Տես Russell M. Nelson, “Divine Love,” *Liahona,* Feb. 2003, 12–17:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մենք երբեք միայնակ չենք քայլում

Մի օր դուք հետ կնայեք ձեր դժվար ժամանակներին և կհասկանաք, որ Նա միշտ եղել է ձեր կողքին:

Ամ սիրելի քույրեր, այն հոգին որ զգում ենք այս երեկո, դա ձեր ուժի, ձեր նվիրվածության և ձեր բարության արտահայտումն է: Մեջբերելով Վարպետին. «Դուք երկրի աղն էք . . .Դուք աշխարհի լույսն էք»:[1]

Երբ ես մտածում եմ ձեզ հետ խոսելու իմ հնարավորության մասին, հիշում եմ Սփոփող Միության հանդեպ իմ սիրելի կնոջ՝ Ֆրենսիսի սիրո մասին: Իր կյանքի ընթացքում Սփոփող Միությունում նա ծառայեց շատ կոչումներում: Երբ մենք 31 տարեկան էինք, ես կանչվեցի լինելու Կանադական միսիայի նախագահ: Այդ ծառայության երեք տարիների ընթացքում, Ֆրենսիսը նախագահում էր այդ հսկայական տարածքի ողջ Սփոփող Միության վրա, որն ընդգրկում էր Օնտարիոյի և Քվեբեկի տարածքները: Այդ ծառայության շնորհիվ մի շարք բարեկամական կապեր ստեղծվեցին, ինչպես նաև մեր ծխի Սփոփող Միությունում ծառայելու ընթացքում: Նա մեր Երկնային Հոր հավատարիմ դուստրն էր, իմ սիրելի զուգընկերը և իմ սիրելի ընկերը: Ես նրան այնքան շատ եմ կարոտում, որ բառերով չեմ կարող նկարագրել:

Ես նույնպես սիրում եմ Սփոփող Միությունը: Ես վկայում եմ ձեզ, որ այն ստեղծվել է ոգեշնչմամբ և այն Տիրոջ Եկեղեցու կարևոր մասն է այստեղ՝ Երկրի վրա: Անհնար է հաշվարկել այն բոլոր բարիքը, որը գալիս է այս կազմակերպությունից, և այն կյանքերը, որոնք օրհնվել են դրա շնորհիվ:

Սփոփող Միությունը կազմված է տարբեր կանանցից: Ձեր մեջ կան նրանք, ովքեր ամուրի են, միգուցե դպրոցում են կամ աշխատում են և կրում են լիարժեք և հարուստ կյանք: Ձեզանից ոմանք մեծացող երեխաների զբաղված մայրեր են: Նաև ձեզանից ոմանք բաժանության կամ մահվան պատճառով կորցրել են ամուսիններին և մաքառում են, դաստիարակելով երեխաներին առանց հոր և ամուսնու: Ձեզանից ոմանք մեծացրել են երեխաներին և զգում են, որ շարունակապես կունենա ձեր օգնության կարիքը: Ձեզանից ոմանք ունեն ծերացող ծնողներ, ովքեր ձեր հոգատար սիրո կարիքն ունեն:

Ուր էլ լինենք մենք կյանքում, կլինեն ժամանակներ, երբ մենք բոլորս էլ կունենանք դժվարություններ և մաքառումներ: Թեև յուրաքանչյուրի համար դրանք տարբեր են, ընդհանուր են՝ բոլորի համար:

Մեզ հանդիպած դժվարություններից շատերը գոյություն ունեն, քանի որ մենք ապրում ենք մահկանացու կյանքում, բնակեցված տարբեր տեսակի մարդկանցով: Երբեմն հուսահատության մեջ գտնվելով մենք հարցնում ենք «Ինչպե՞ս կարող եմ իմ հայացքը կենտրոնացնել սելեստիալի վրա, երբ ապրում եմ այս թելեստիալ աշխարհում»:

Կլինեն պահեր, երբ դուք կքայլեք փշոտ և մաքառումներով լեցուն ճանապարհով: Կլինեն պահեր, երբ դուք կզգաք առանձնացված, նույնիսկ մեկուսացված Աստծո տված բոլոր բարիքներից: Դուք վախենում եք, որ կքայլեք միայնակ: Վախը փոխարինում է հավատքին:

Երբ դուք հայտնվեք այդպիսի իրավիճակներում, ես աղերսում եմ, որպեսզի դուք հիշեք աղոթքը: Ես սիրում եմ Նախագահ Էրզրա Թավտ Բենսոնի խոսքերն աղոթքի մասին: Նա ասել է.

«Ողջ իմ կյանքի ընթացքում, աղոթքից կախված լինելու խորհուրդը միշտ գնահատվել է ավելին բոլոր այն խորհուրդներից, որ ես . . . ստացել եմ: Այն դարձել է իմ անբաժանելի մասնիկը՝ խարիսխը, ուժի մշտական աղբյուրը, և աստվածային բաների մասին իմ գիտելիքների հիմքը: . . .

. . . Անհաջողությունների ժամանակ աղոթքի մեջ մենք կարող ենք գտնել հավաստիացում, որ Աստված հոգու հետ խոսում է խաղաղությամբ: Այդ խաղաղությունը, այդ պարզության ոգին կյանքի ամենամեծ օրհնությունն է»:[2]

Պողոս Առաքյալը հորդորել է.

«Ձեր խնդրուածքները թող յայտնի լինեն Աստուծուն:

Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է, կ'պահպանէ ձեր սրտերն ու միտքերը Քրիստոս Յիսուսումը»:[3]

Ինչպիսի՜ փառավոր խոստում: Խաղաղությունը այն է, ինչ մենք փնտրում ենք, այն է, ինչին ձգտում ենք:

Մենք չենք եկել այս երկիր, որպեսզի միայնակ քայլենք: Զորության, ուժի և սփոփանքի ինչպիսի

հիանալի աղբյուր է մատչելի յուրաքանչյուրիս: Նա, ով գիտի մեզ ավելի լավ, քան մենք ինքներս գիտենք մեզ, Նա ով տեսնում է պատկերը ամբողջովին և գիտե ավարտը ի սկզբանե, հավաստիացրել է մեզ, որ կօգնի մեզ, եթե մենք հարցնենք: Մենք ունենք խոստում. «Փնտրեք ջանասիրաբար, աղոթեք անդադար և եղեք հավատացող, և բոլոր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար»:[4]

Երբ մեր աղոթքները բարձրանում են երկինք, եկեք չմոռանանք այն խոսքերը, որոնք ուսուցանել է Փրկիչը: Գեթսեմանի ու խաչելիության տառապալից հոգեվարքի մեջ Նա աղոթեց Հորը. «Ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի»:[5] Դժվարությունները, որոնք ժամանակ առ ժամանակ կլինեն, նույնպես մեզ համար են, որպեսզի վստահենք մեր Երկնային Հորը, թե ինչպես, երբ և ինչ ձևով տրամադրի մեզ անհրաժեշտ օգնությունը:

Ես սիրում եմ բանաստեղծի խոսքերը.

Ես չգիտեմ, որ ձևն է բացառիկ,
Բայց գիտեմ. Աստված պատասխանում է աղոթքներին:
Ես գիտեմ, որ նա տվել է Իր Խոսքը,
Որում ասվում է, որ աղոթքն է միշտ լավում,
Եվ այն կպատասխանվի՝ վաղ, թե ուշ,
Եվ այսպիսով ես աղոթում ու հանգիստ սպասում:
Ես չգիտեմ, թե փնտրած օրհնությունները
Կգան ուղղակի իմ մտածած ձևով,
Բայց ես միայն աղոթում եմ Նրան ,
Ում կամքը իմ կամքից է իմաստուն,
Գիտեմ՝ Նա կպատասխանի իմ աղերսին,
Կամ պատասխանը կլինի մեծ օրհնություն:[6]

Իհարկե, աղոթքը ոչ միայն դժվարին ժամանակների համար է: Սուրբ գրություններում պարբերաբար ասվում է «աղոթել միշտ»[7] և պահել աղոթքը մեր սրտերում:[8] Սիրելի և հայտնի օրհներգի բառերը առաջացնում է մի հարց, որին մեզանից յուրաքանչյուրը ամեն օր պետք է

պատասխան տա. «Մտածե՞լ աղոթելու մասին»:[9]

Ի հավելումն աղոթքի, մի բան, որը մեզ օգնում է հաղթահարել այս դժվարին կյանքը, դա սուրբ գրություններն են: Սուրբ գրություններում տեղ գտած ճշմարտության և ոգեշնչման խոսքերը թանկարժեք են ինձ համար: Ես երբեք չեմ հոգնում դրանք կարդալուց: Սուրբ գրություններն ուսումնասիրելիս ես միշտ լցվում եմ հոգեպես: Ճշմարտության և սիրո այս խոսքերը ուղեցույց են իմ կյանքում և ցույց են տալիս հավերժական կատարելիության ճանապարհը:

Երբ մենք կարդանք ու մեկնաբանենք սուրբ գրությունները, մենք կզգանք Հոգու քաղցր հուշումները մեր հոգում: Մենք կարող ենք գտնել մեր հարցերի պատասխանները: Մենք իմանում ենք այն օրհնությունների մասին, որոնք գալիս են Աստծո պատվիրանները պահելուց: Մենք ձեռք ենք բերում հաստատուն վկայություն մեր Երկնային Հոր և մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի և մեր հանդեպ Նրանց սիրո մասին: Երբ սուրբ գրությունների ուսումնասիրությունը և մեր աղոթքները զուգորդվում են, մենք կարող ենք հաստատ իմանալ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Թող որ Տերը օրհնի մեզանից յուրաքանչյուրին սնվելու իր սուրբ [խոսքերով] և ստանալու [նրանցից] այն ուժը, այն խաղաղությունը և այն գիտելիքը, որը «գերազանցում է ամեն հասկացությունը» (Փիլիպպ. 4.7)»:[10]

Երբ մենք աղոթենք ու ժամանակ գտնենք սուրբ գրությունները կարդալու համար, մեր կյանքը անսահման կօրհնվի և մեր բեռը կդարձվի թեթև:

Թույլ տվեք ձեզ հետ կիսվել մի պատմությամբ, թե ինչպես է Երկնային Հայրը պատասխանել մի կնոջ աղոթքներին և տվել նրան խաղաղություն և ապահովություն, որին նա այնքան ձգտում էր:

Տիֆանիի դժվարությունները սկսվեցին անցած տարի, երբ նա Շնորհակալության օրվա և ապա կրկին Սուրբ ծննդյան օրվա կապակցությամբ հյուրեր ընդունեց իր տանը: Նրա ամուսինը բժշկական ուսումնարանում էր սովորում և այժմ նրա երկրորդ տարին էր այդ հաստատությունում: Քանի որ նրա դասերը երկար էին տևում, նա չեր կարողանում կնոջը օգնել այնքան, որքան նրանք երկուսն էլ ցանկանում էին, և այն ամեն պատրաստությունները, որոնք անհրաժեշտ էին տոնական օրերին ի հավելումն իրենց չորս մանուկ երեխաների խնամքի, ընկած էին Տիֆանիի վրա: Նա շատ ծանրաբեռնված էր, իսկ հետո նա իմացավ, որ այն անձը, ում նա սիրում էր, քաղցկեղով հիվանդ էր: Սթրեսը և անհանգստությունը նրան մեծապես ճնշեցին և նա ընկավ հուսահատության և դեպրեսիայի մեջ: Նա ստացավ բժշկական օգնություն, բայց ոչինչ չփոխվեց: Նա կորցրեց ախորժակը և սկսեց նիհարել, ինչը նրա հյուծված մարմնում կարող էր հիվանդություն առաջացնել: Նա փնտրեց խաղաղություն սուրբ գրությունների միջոցով և աղոթեց իրեն պատած խավարից ազատման համար: Երբ, կարծես, ոչ խաղաղությունը, ոչ էլ օգնությունը չէր գալիս, նա զգաց

իրեն լքված Աստծո կողմից: Նրա ընտանիքն ու ընկերները աղոթեցին նրա համար և փորձեցին հուսահատորեն օգնել: Նրանք բերում էին նրա սիրելի ուտելիքը, որպեսզի փորձեին նրան առողջ պահել, սակայն նա չէր կարողանում ուտել:

Այդ դժվարին օրերից մեկի ժամանակ մի ընկեր զուր փորձեց հրապուրել նրան իր սիրած ուտելիքով: Երբ ոչինչ չօգնեց, ընկերն ասաց. «Պետք է լինի *մի բան*, որը դու ցանկանում ես»:

Տիֆանին մի րոպե մտածեց ու ասաց. «Միակ բանը, որ ես ցանկանում եմ, դա տան պատրաստած հացն է»:

Բայց այդ պահին այն չկար:

Հաջորդ առավոտյան Տիֆանիի դռան զանգը հնչեց: Նրա ամուսինը տանն էր և բացեց դուռը: Երբ նա վերադարձավ, իր ձեռքին ուներ մի բոքոն տնական հաց: Տիֆանին զարմացավ, երբ իմացավ, որ այն բերել էր Շերի անունով մի կին, ում նրանք հազիվ էին ճանաչում: Նա Տիֆանիի քրոջ՝ Նիկոլի ընկերուհին էր, ապրում էր Դենվերում, Կոլորադո: Շերիին ծանոթացրել էին Տիֆանիին և նրա ամուսնուն մի քանի ամիս առաջ, երբ Նիկոլը և նրա ամուսինը շնորհակալության տոնի առթիվ հյուրընկալվել էին Տիֆանիի մոտ: Շերին, ով ապրում էր Օմահայում, այցելեց Նիկոլին Տիֆանիի տանը:

Այժմ, մի քանի ամիս անց, համեղ հացը ձեռքին Տիֆանին զանգահարեց Իր քրոջը՝ Նիկոլին, շնորհակալություն հայտնելու Շերիին ուղարկելու համար, որն այդ գթասիրտ արարքն արեց: Փոխարենը նա իմացավ, որ Նիկոլը չեր կազմակերպել այդ այցելությունը և որ նա ոչինչ չգիտեր այդ մասին:

Ողջ պատմությունը բացահայտվեց, երբ Նիկոլը ճշտեց իր ընկերուհի Շերիից, թե ինչն էր նրան հուշել բերելու այդ մի բոքոն հացը: Այն, ինչ նա իմացավ, դարձավ ոգեշնչում Տիֆանիի և Շերիի համար, և այն ոգեշնչում է ինձ համար ևս:

Հացը բերելու առավոտյան, Շերին դրդվել է իր նախատեսված մեկ բոքոնի փոխարեն պատրաստել երկու բոքոն: Նա ասաց, որ այդ օրը ինքը զգացում էր ունեցել վերցնելու այդ երկրորդ բոքոնը իր հետ մեքենա, չնայած չէր իմանում, թե ինչու: Ընկերուհու տանը ճաշից հետո, նրա մեկ տարեկան դուստրը սկսեց լացել և պետք էր նրան տուն տանել քնացնելու համար: Շերին վարանեց, երբ ակնհայտ զգացում պատեց նրան, որ նա պետք էր տանել այդ լրացուցիչ բոքոն հացը Նիկոլի քրոջ՝ Տիֆանիի տուն, ով ապրում էր 30 րոպե հեռու, քաղաքի մյուս ծայրում, և ում նա հազիվ էր ճանաչում: Նա փորձեց հեռու վանել միտքը, ցանկանալով իր շատ հոգնած դստերը տանել տուն և միևնույն ժամանակ ամաչելով տանել բոքոն հացը այն մարդկանց, ովքեր գրեթե օտար էին իրեն: Այնուամենայնիվ, Տիֆանիի տուն գնալու զգացումը այնքան ուժեղ էր, որ նա հետևեց այդ դրդմանը:

Երբ նա եկավ, Տիֆանիի ամուսինը բացեց դուռը: Շերին հիշեցրեց նրան, որ նա Նիկոլի ընկերուհին էր, ում նրանք կարճ ժամանակով տեսել էին շնորհակալության օրվա ժամանակ, տվեց նրան բոքոն հացը և հեռացավ:

Այսպիսով, Տերն ուղարկեց անծանոթ օտարականի քաղաքի մյուս կողմը, որպեսզի առաքի ոչ միայն բաղձալի տնական հացը, այլ նաև Տիֆանիի հանդեպ սիրո պարզ ուղերձը: Այն, ինչ պատահեց նրա հետ, ոչ մի այլ կերպ չի կարելի բացատրել: Նա շտապ կարիք ուներ զգալու, որ միայնակ չէր, որ Աստված տեղյակ էր իրենից և չի լքել իրեն: Այդ հացը՝ այն, ինչ նա ցանկանում էր, առաքվեց իրեն այն մարդու կողմից, ում նա հազիվ թե ճանաչում էր, այն մարդու կողմից ով չգիտեր նրա կարիքների մասին, բայց ով լսեց Հոգու հուշումը և հետևեց դրան: Դա Տիֆանիի համար եղավ ակնհայտ նշան, որ նրա Երկնային Հայրը տեղյակ է նրա կարիքներից և այնքան է սիրում նրան, որ ուղարկում է օգնություն: Նա պատասխանեց նրա օգնության կանչերին:

Իմ սիրելի քույրեր, ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ՝ յուրաքանչյուրիդ: Այդ սերը երբեք չի փոխվում: Այն կախված չէ ձեր արտաքինից, ձեր ունեցվածքից կամ զումարի քանակից, որ դուք ունեք ձեր բանկային հաշվում: Այն կախված չէ ձեր տաղանդներից կամ ունակություններից: Այն ուղակի առկա է: Այն առկա է ձեզ համար, երբ դուք տխուր եք կամ ուրախ, հուսահատված կամ հույսով լեցուն: Աստծո սերը առկա է ձեզ համար, անկախ նրանից՝ դուք զգումեք, թե ոչ, որ արժանի եք դրանք: Այն ուղակի առկա է:

Երբ մենք փնտրում ենք մեր Երկնային Հորը եռանդուն, անկեղծ աղոթքի և սուրբ գրությունների ջանասեր, նվիրված ուսումնասիրության միջոցով, մեր վկայություններն ամրապնդվում են և ձեռք են բերում հզոր հիմք: Մենք զգում ենք Աստծո սերը մեր հանդեպ: Մենք հասկանում ենք, որ երբեք մենակ չենք քայլել: Ես խոստանում եմ ձեզ, որ մի օր դուք հետ կնայեք ձեր դժվար ժամանակներին և կհասկանաք, որ Նա միշտ եղել է ձեր կողքին: Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է, իմ հավերժական զուգընկերոջ՝ Ֆրենսիս Բեվերլի Ջոնսոն Մոնսոնի մահվան կապակցությամբ:

Ես իմ օրհնությունն եմ թողնում ձեզ: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում ձեզ այն բոլոր լավ բաների համար, որ դուք անում եք, և այն կյանքերի, որոնց առաջնորդում եք: Որ դուք օրհնվեք ամեն մի բարի պարգևով, իմ աղոթքն է մեր Փրկիչ և Քավիչ, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 5.13–14:
2. Ezra Taft Benson, “Pray Always,” *Tambuli,* June 1990, 4–5, 6:
3. Փիլիպպեցիս 4.6–7:
4. Վարդապետություն և Ուխտեր 90.24:
5. Ղուկաս 22.42:
6. Eliza M. Hickok, “Prayer,” in James Gilchrist Lawson, ed., *The Best Loved Religious Poems* (1933), 160.
7. Ղուկաս 21.36; տես նաև 2 Նեփի 32.9; 3 Նեփի 18:15; Վարդապետություն և Ուխտեր 10.5; 19.38; 20.33; 31.12; 61.39; 88.126; 93.49:
8. Տես 3 Նեփի 20.1:
9. «Աղոթեցի՞ր դու», *Hymns,* no. 140:
10. Gordon B. Hinckley, “Feasting upon the Scriptures,” *Tambuli,* June 1986, 4:

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական


Լինդա Ք. Բըրթըն
Նախագահ


Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոննի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նեյլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ


Շերիլ Ա. Էսփլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ


Ռանդալ Լ. Ռիդ
Երկրորդ Խորհրդական

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգաթորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նիլ Լ. Անդերսեն	(92) Բրազիլիացի հավատարիմ մի մայր, որին ամուսինն արգելում է հաճախել եկեղեցի, ուղարկում է եկեղեցի իր երեխաներին:
Մ. Ռասսել Բալլարդ	(43) Մի ընտանիք վայելում է միսիոներական հաջողությունը, երբ սրտանց արձագանքում է փրկության աշխատանքն արագացնելու կոչին:
Դեյվիդ Ա. Բեդնար	(17) Սյուզան Բեդնարի (որն այդ ժամանակ երիտասարդ կին էր) ընտանիքն օրհնվում է, ապրելով տասանորդի օրենքով:
Ջեռալդ Կոսե	(49) Ջեռալդ Կոսեն և նրա ընտանիքը հեշտ են ընտեկանում նոր քաղաքում ապրելուն ի շնորհիվ Վերջին Օրերի Սրբերի ջերմ ընդունելության:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(29) Աննա Դեյնսը միանում է կամավորների խմբին և օգնում է իր համայնքին հաղթահարել Վերջին Օրերի Սրբերի հանդեպ նախապաշարմունքը:
Քվենթին Լ. Քուք	(88) Քվենթին Լ. Քուքը և նրա ընկերության մյութ իրավաբանները որոշեցին ստեղծել ընտանիքի համար հարմար աշխատանքային միջավայր:
Էդվարդ Դյուբ	(15) Երիտասարդ Էդվարդ Դյուբի մայրը ասում է նրան նայել առաջ, ոչ թե հետ, երբ նրանք միասին աշխատում են դաշտում:
Տիմոթի Ջ. Դայչես	(37) Կորի Թեն Բումը ներում է նախկին նացիստ զինվորի, որն իր հսկողն է եղել համակենտրոնացման ճամբարում:
Հենրի Բ. Այրինգ	(58) Երիտասարդ Հենրի Բ. Այրինգը օրհնվում է, երբ ուղեկցում է իր եպիսկոպոսին կարիքավոր անդամներին այցելելիս: (69) Միլդրեդ և Հենրի Այրինգները միասնականություն են դրսևորում Յուտա տեղափոխվելու և Միլդրեդի ընտանիքին մոտ ապրելու իրենց որոշման մեջ:
Ռենդի Դ. Ֆանկ	(52) Լսելով Ջոզեֆ Սմիթի պատմությունը մի լեզվով, որը նա չի կարող հասկանալ, ունկնդիրը Հնդկաստանում որոշում է մկրտվել:
Քեվին Ս. Համիլտոն	(99) Ընտանիքը հեռանում է Եկեղեցուց, որոշելով հաղորդության ժողովի փոխարեն կիրակի օրը ուղևորություն կատարել:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(40) Մի քույր մայր լինելու նպատակ է գտնում նրանից հետո, երբ խորը վնասվածքներ է ստանում ավիավթարի հետևանքով:
Ռիչարդ Ջ. Մեյնզ	(79) Ռիչարդ Ջ. Մեյնզի նախապապը սրտի մահացու կաթված է ստանում միսիայում ծառայելիս:
Թոմաս Ս. Մոնսոն	(61) Հավատարիմ տնային ուսուցիչը լցվում է երախտագիտությամբ, երբ անձը, որին նա այցելում էր տարիներ շարունակ, միանում է Եկեղեցուն: (85) Թոմաս Ս. Մոնսոնը քահանայության օրհնություն է տալիս տարեց եղբորը, որն այլևս չի տեսնում և լսում:
Ս. Գիֆորդ Նիլսեն	(33) Ցցի նախագահը բրոնզապատում է հաջողակ միսիոների քրքրված կոշիկները:
Ադրիան Օչոա	(102) Ընտանիքի անդամներն ուրախանում են, երբ երիտասարդ Ադրիան Օչոան և նրա երկու եղբայրները վերադառնում են տուն ուժգին փոթորկից հետո:
Բոնի Լ. Օսկարսոն	(76) Ագնես Հոգանը թույլ չի տալիս իր 16-ամյա դստերը միանալ ՎՕՍ Եկեղեցուն չպատկանող ընտանիքին:
Բոյդ Ք. Փաքեր	(26) Բոյդ Ք. Փաքերը կոչ է անում մաքառող ցցի անդամներին կարդալ սուրբ գրությունները:
Լ. Թոմ Փերի	(46) Տղա հասակում Թոմ Լ. Փերին և Երեխաների խմբի մյուս երեխաները մագլցում են իրենց սիրված սարը իրենց ուսուցչուհու հետ:
Լինդա Շ. Ռիվս	(118) Մի կին մկրտության իր ճանապարհին առաջանալով քայլում է 3 կմ. ցեխի միջով՝ եկեղեցի հաճախելու համար:
Ուլիսես Սոարես	(9) Մովսես Մահլանգուն և ուրիշները Հարավային Աֆրիկայում նստում են եկեղեցուց դուրս և լսում ծառայությունները պատուհանից:
Քերոլ Մ. Սթեֆենս	(12) Հոնդուրասում հավատարիմ քույրերը ստանում են քահանայության օրհնություններ իրենց Եկեղեցու ղեկավարներից: (115) 10 տարեկան մի տղա պահում է ուրիշների վիշտը կիսելու իր ուխտը, երբ սփոփում է իր այրի դարձած նախատատիկին:
Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(21) Մի մարդ երազ է տեսնում, որի մեջ Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մի զույգ բացատրում է Եկեղեցում ծառայելու հնարավորությունները: (55) Դիտեր Ֆ. Ուխդորֆը վայր է ընկնում դահուկասահքի ժամանակ և կարողանում է ոտքի կանգնել միայն թոռնիկի օգնությամբ:
Առնուլֆո Վալենզուելա	(35) Քիչ ակտիվ քույրը վերադառնում է Եկեղեցի նրանից հետո, երբ զգում է Սուրբ Հոգու ազդեցությունը, երբ օրհներգ է երգում իր այցելող ուսուցիչների հետ:
Տերենս Մ. Վինսոն	(104) Պապուա Նոր Գվինեայի Եկեղեցու հավատարիմ անդամի աղոթքը ստացավ իր պատասխանը, երբ հանկարծակի եկած անձրևը հանգցրեց հրդեհը, որը սպառնում էր գյուղի հացահատիկի բերքին:

Գերագույն համաժողովին հայտարարվեց անդամության և միսիոներների թվի աճի մասին

Եկեղեցու անդամների թիվը հասել է 15 միլիոնի, հայտարարեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 2013թ. հոկտեմբերի 5-ին՝ 183-րդ կիսամյա գերագույն համաժողովի բացմանը: Նա նաև հայտարարեց, որ 2012թ. հոկտեմբերին միսիոներական ծառայության տարիքային շեմի պահանջի նվազեցման հետ ամբողջ աշխարհում ծառայող լիաժամկետ միսիոներների թիվը կտրուկ աճել է՝ 58500-ից մինչև 80333-ը:

«Եկեղեցին շարունակում է կայուն աճ ապրել և փոխել ավելի ու ավելի շատ մարդկանց կյանքեր ամեն տարի,- ասաց Նախագահ Մոնսոնը,- Այն տարածվում է երկրի երեսին, մինչ մեր միսիոներների բանակը փնտրում է նրանց, ովքեր որոնում են ճշմարտությունը»:

Նա խրախուսեց անդամներին և միսիոներներին միանալ ավետարանը քարոզելու գործին: «Այժմ ժամանակն է, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին, տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ», - ասաց Նախագահ Մոնսոնը, ով որպես Առաքյալ է ծառայում 50 տարի:

Շաբաթ ցերեկային նիստին Յոթանասունի Առաջին Քվորումի երեք անդամներ՝ Երեց Ջոն Բ. Դիքսոնը, Երեց Փոլ Ե. Քոլիքերը և Երեց Ֆ. Մայքլ Վաթսոնը, պատվով ազատվեցին և ստացան պատվավոր անդամների կարգավիճակ, ազատվեց նաև Երեց Քենթ Դ. Վաթսոնը՝ Յոթանասունի Երկրորդ Քվորումից: Հուլիո Ա. Անգուլոն՝ 45, Բոգոտայից, Կոլումբիա, Պիտեր Ֆ. Էվանսը՝ 54, Սոլթ Լեյք Սիթիից, Յուտա, ԱՄՆ և Գեննադի Ն. Պոդվոդովը, Դոնեցկ, Ուկրաինա, հաստատվեցին որպես Տարածքային Յոթանասունականներ: Հայտարարվեց, որ Սեզար Հ. Հուքերը և Քրեյգ Տ. Ռայթը ազատվեցին որպես Տարածքային Յոթանասունականներ:

Ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ դիտեցին կամ ունկնդրեցին համաժողովը հեռուստացույցով, համացանցով, ռադիոյով և արբանյակային հեռարձակմամբ: Առաջին անգամ շաբաթ երեկոյան քահանայության նիստը մատչելի էր հեռարձակմամբ հեռուստատեսությամբ և ուղիղ եթերով համացանցով: Ավելի քան 100000 մարդ մասնակցեցին հինգ նիստերին, որոնք տեղի ունեցան Համաժողովների Կենտրոնում Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, հոկտեմբերի 5-ին և 6-ին: Համաժողովը նաև մատչելի էր տարբեր մեդիա եղանակներով 95 լեզուներով և հեռարձակվում էր 197 երկրներ և տարածքներ:

Նախագահ Մոնսոնը փակեց համաժողովը, խնդրելով Եկեղեցու անդամներին ցուցաբերել բարություն միմյանց հանդեպ և «միշտ կատարել Տիրոջ գործը»: ■

Թոմաս Ս. Մոնսոնը Թաբերնաքլում, Տաճարային Հրապարակ, 1963թ., որպես Բարձրագույն Իշխանություն հաստատվելու որպեներ առաջ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԴԻՄԱՑԱՆԿԻՑ

ՆԱԽԱԳԱՀ ՄՈՆՍՈՆ՝ 50 ՏԱՐՎԱ ԱՌԱՔՅԱԼ

2013թ. հոկտեմբերի կիսամյա գերագույն համաժողովին լրացավ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կանչվելու 50 տարին: Նա հաստատվել է որպես Առաքյալ 1963թ. հոկտեմբերի 4-ին՝ 36 տարեկան հասակում: ■

Սոցիալական մեդիայի էջեր Եկեղեցու ղեկավարների կողմից

Էրիկ Մըրդըք
LDS.org լուրեր և իրադարձություններ

Եկեղեցին ստեղծել է սոցիալական պաշտոնական մեդիա էջեր Առաջին Նախագահության անդամների և Տասներկու Առաքյալների Քվորումի համար Facebook-ում և Google Plus-ում: Այս էջերը հանդես կգան որպես Եղբայրներից յուրաքանչյուրի պաշտոնական սոցիալական մեդիա ներկայություն, ովքեր կվարեն էջերը, որոնք նրանց համար կսպասարկի Եկեղեցին:

Facebook և Google Plus պաշտոնական հաշիվները կարելի է գտնել որոնում կատարելով facebook.com/lds and plus.google.com կայքում: Որպեսզի իմանաք, թե արդյոք սոցիալական մեդիայի տվյալ կայքը կամ էջը պաշտոնական է, փնտրեք Եկեղեցու լոգոն:

Այդ էջերին հետևողները կստանան պարբերական թարմացումներ Եղբայրներից յուրաքանչյուրի ծառայության մասին: «Եկեղեցին նրանց համար կտեղադրի կապուղիներ դեպի ելույթներ, հոդվածներ, տեսաֆիլմեր և առնչվող այլ նյութեր», - ասաց Դեյլ Ջոնսը՝ Եկեղեցու խոսնակը:

Այդ էջերը թույլ կտան մարդկանց ավելի հեշտությամբ գտնել կենդանի մարգարեների խոսքերը և էջերը «հավանելը» (“like”) թույլ կտա, որ նյութը հայտնվի հավանողի Facebook-ի լրահոսում, որտեղ այն արագ կարելի է տեսնել և կիսել մյուսների հետ:

Պաշտոնական էջեր ստեղծելն օգնում է անդամներին իմանալ, թե որ էջերն են սպասարկվում Եկեղեցու կողմից, և պաշտպանում է անհատներին կեղծ էջերից: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԴԻԿՈՂԱՍ ԿԱՐԱՍԱԿՈՅԻՑ, ՏՐԱՄԱԴՐԵԼ Է՝ *CHURCH NEWS*-Ը:

Տաճարային նորություններ

Քոնեկտիկուտում առաջին տաճարի շինարարության սկիզբը

Մեկնարկեց Քոնեկտիկուտում, ԱՄՆ, Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին տաճարի շինարարությունը, երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը օգոստոսի 17-ին, շաբաթ օրը, Հարթֆորդում վարեց անհրաժեշտ արարողակարգերը: Հարթֆորդ Քոնեկտիկուտ տաճարը կլինի երկրորդը Նոր Անգլիայում (մյուսը Բոստոնում է, Մասաչուսեթս) և հանդիսանում է ՎՕՍ 170 տաճարներից մեկը, որոնք գործում են, կառուցվում են կամ նախագծման փուլում են:

Երկրորդ տաճարը Կոլորադոյում

Օգոստոսի 24-ին, շաբաթ օրը, Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը՝ Յոթանասունի Նախագահությունից, արարողությամբ բացեց Կոլորադոյում, ԱՄՆ, երկրորդ տաճարի՝ Ֆորտ Քոլինս Կոլորադո Տաճարի շինարարության աշխատանքները: Մյուս տաճարը Դենվերում է՝ Ֆորտ Քոլինսից մոտ 95 կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ: ■

Հիմնվել են ցցեր Հռոմում և Փարիզում

Երեց Դալլին Հ. Օքսը և Երեց Մ. Ռասսել Բալարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հիմնեցին երկրորդ ցիցը Հռոմում, Իտալիա, և երրորդ ցիցը Փարիզում, Ֆրանսիա՝ 2013թ. սեպտեմբերին տարածաշրջան իրենց այցի ժամանակ, նաև ժողովներ անցկացրեցին Լիդսում և Մանչեստերում, Անգլիա, և Մադրիդում, Իսպանիա: Հռոմում տաճար է կառուցվում, մեկ տաճար շուտով կկառուցվի Փարիզում:

«Եկեղեցին կենդանի է և տպավորիչ քայլերով առաջ է ընթանում Եվրոպայում», - ասաց Երեց Օքսը: Երեց Բալլարդն ասաց Եվրոպայի անդամներին, որ Եկեղեցին պետք է «հասկանա, որ Տերն արագացնում է փրկության Իր աշխատանքը, և որ մենք բոլորս պետք է ներգրավված լինենք»: ■

Մեր ժամանակների ուսմունքները

2013թ. հոկտեմբերից մինչև 2014թ. մարտ ամիսը չորրորդ կիրակի օրը անցկացվող Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության դասերը պետք է պատրաստվեն 2013թ. հոկտեմբերյան գերագույն համաժողովի ելույթներից: 2014թ. ապրիլին ելույթները կարող են վերցվել կամ 2013թ. հոկտեմբերյան կամ 2014թ. ապրիլյան համաժողովից: Ցցերի և շրջանների նախագահները պետք է ընտրեն ելույթներ իրենց տարածքի համար, կամ կարող են այդ պարտականությունը հանձնարարել եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին:

Իմացեք ավելին «Մեր ժամանակների ուսմունքները» հոդվածից, 2013թ. մայիսի *Լիահոնա* կամ *Ensign*: ■

Ռանդալ Լ. Ռիդ

Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության նոր երկրորդ խորհրդական

Որպես շինարարի որդի՝ Ռանդալ Լ. Ռիդը վաղ տարիքից սովորել է ճիշտ ձևով աշխատանքը կատարելու կարևորությունը: Մի քանի առիթներով երիտասարդ Ռանդալը, ավարտելով իր գործը, լսել է իր հոր՝ Լեոն Ռիդի հայտարարությունը. «Դու դեռ չես վերջացրել»:

Այս հստակ վերաբերմունքը իր խորին հետքն է թողել մի մարդու վրա, ով ծառայում է որպես երկրորդ խորհրդական Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահությունում: Մինչ օրս նա երբեմն լսում է իր հոր հաստատուն, սակայն սիրով լի խոսքերը, երբ կատարում է իր մասնագիտական, ընտանեկան և հոգևոր պարտականությունները. «Դու դեռ չես վերջացրել, լավ արա գործդ»:

Երեց Ռիդն ասաց, որ իր ընտանիքի աշխատանքային էթիկան օրհնություն է եղել իր կյանքում: Ինչպես նաև այն ուսուցիչները և քահանայության ղեկավարները, ովքեր երբեմն հրել են իրեն ավետարանի ուղով: Թեև ավագ դպրոցի նրա համադասարանցիներից շատերը ընդունել են միսիոներական կանչը 19 տարեկանում, Ռանդալը որոշեց ընդունվել քոլեջ և զինվորագրվել բանակ: Ավելի ուշ նա սկսեց աշխատել որպես ռենտգենի տեխնիկական մասնագետ, միևնույն ժամանակ շարունակելով իր ուսումը Յուտայի Համալսարանում: Մի քանի իմաստուն մարդիկ այնքան համարձակ գտնվեցին, որ ասացին նրան, որ նրա տեղը միսիայի դաշտում է: Նա հետևեց նրանց խորհրդին և դիմում գրեց ծառայելու համար: Շուտով նա կիսվում էր ավետարանով Մեքսիկա Նորթ միսիայում: «Ես չեմ կարող պատկերացնել, թե ինչպիսին կլիներ իմ կյանքը, եթե ես չծառայեի միսիայում», - ասում է նա:

Նա վերադարձավ տուն, շարունակեց իր կրթությունը և ամուսնացավ Թամինա Ռոարկի հետ Սոլթ Լեյք Տաճարում 1975 թվին: Ռիդսերը մեծացրել են չորս զավակ, մինչ Եղբայր Ռիդսը զարգացնում էր իր մասնագիտական կարիերան առևտրային անշարժ գույքի բնագավառում և այլ գործարարական նախաձեռնություններում:

Միսիոներական աշխատանքի հանդեպ իր սերը դեռ մնայուն է: Նա նախագահեց Էկվադոր Գայաքիլ Նորթ միսիայում 2005-2008 թվերին և կրկին ականատես եղավ, թե ինչպես է լիաժամկետ միսիան փոխում երիտասարդ տղամարդկանց կամ կանանց կյանքը:

Եղբայր Ռիդը ծառայում էր որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն խորհրդի անդամ, երբ կանչվեց Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահություն 2013թ. մայիսին: ■

© MICHAEL T. MALM, ՊՐԱՍԱՐԿՈՒՄ Է ԻՆՅՈՒՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏ ՊԱՏԿԵՐԱՄԱՐԱՇԸ, ՇՐԱՅՄԱՑՈՒԼ

Խաղաղ սիրտ, Մայքլ Թ. Մալմ

«Եվ Հոգին լույս է տալիս ամեն մարդու, որն աշխարհ է գալիս. և Հոգին լուսավորում է ամեն մարդու, աշխարհով մեկ, որ ականջ է դնում Հոգու ձայնին» (ՎԿՈ 84.46):

«Թող որ միշտ ձգտենք մոտիկ լինել մեր Երկնային Հորը», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 183-րդ կիսամյա համաժողովի կիրակի առավոտյան նիստին: Այդ անելու համար մենք պետք է աղոթենք Նրան և լսենք Նրան ամեն օր: Մենք իսկապես Նրա կարիքն ունենք ամեն ժամ, լինեն դրանք արևափայլի ժամեր, թե անձրևի: Թող որ Նրա խոստումը լինի մեր նշանաբանը. «Քեզ չեմ թողիլ եւ քեզ անտես չեմ անիլ»»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021079 1201 7
10791 Nov '13